Ս. Ս. ՆԱԶԱՐՅԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ (1880 - 1917)

ԵՐԵՎԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

С. С. НАЗАРЯН

# ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ ЕРЕВАНА
## (1880—1917)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

01
Ն-15

Ս. Ս. ՆԱԶԱՐՅԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ
## (1880—1917)

22266

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1986

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

ԳՄԴ 7.6.1.
Ն 152

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Թ. ԻՇԽԱՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆԸ, պատմական գիտությունների թեկնածու Է. Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆԸ

Նազարյան, Ս. Ս.

Երևանի պարբերական մամուլը (1880—1917)
Ն 152 / Պատ. խմբ.՝ Ա. Թ. Իշխանյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986.- 207 էջ։

Աշխատությունը նվիրված է նախահեղափոխական շրջանում Երևանում լույս տեսած պարբերականների ուսումնասիրությանը։ Հայ հասարակական կյանքի ֆոնի վրա ներկայացված են յուրաքանչյուր օրգանի գաղափարական ուղղությունը, արծարծած խնդիրները, ինչպես և վերաբերմունքը ժամանակաշրջանի առաջադրած քաղաքական-հասարակական կարևոր հարցերի նկատմամբ։ Լուսաբանված են խմբագիր-հրատարակիչների կյանքն ու գործունեությունը, նրանց դավանած հայացքները և կատարած դերը հասարակական կյանքում։

Նախատեսված է պատմաբանների և մամուլի պատմությամբ հետաքրքրվողների համար։

4601000000
Ն ———————— 13—84
703(02)—86

ԳՄԴ 7.6.1
002

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բազմահարուստ հայ պարբերական մամուլը մեր ժողովրդի անցյալի ճակատագրի բերումով ծնունդ է առել ու զարգացել բուն Հայրենիքի սահմաններից դուրս, օտար երկրներում։ Իսկ Երևանում նրա ծննդից (1794) ութը տասնամյակ անց միայն ասպարեզ է եկել առաջին պարբերականը՝ «Պսակ» շաբաթաթերթը, որի լույս ընծայումով (1880) սկզբնավորվում է Երևանի մամուլի պատմությունը։

1880—1917 թթ. ընթացքում Երևանում հրատարակվել են տասնմեկից ավելի պարբերականներ (օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսագիր), որոնք լայն տարածում են գտել Երևանի նահանգի գրեթե բոլոր գյուղական վայրերում։ Մամուլի բոլոր օրգանների բովանդակությունը և արծարծած հարցերը սերտորեն առնչվում են հասարակական այն նոր տեղաշարժերին, որոնցով նշանավորվում է պատմական այդ ժամանակաշրջանը (1880—1917 թթ.)։

Նախահոկտեմբերյան շրջանի Երևանի մամուլը ներկայացրել է Երևանի նահանգի աշխատավոր գյուղացիության դառնացի կյանքի ու կենցաղի ճշմարիտ պատկերը, դառնալով նրա հույզերի ու հույսերի, ցանկությունների ու նպատակների լավագույն արտահայտիչը։

Հետռեֆորմյան հայ գյուղում առաջացած նոր պրոբլեմները կապված կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացման հետ, ինչպես և ազգային ճնշումը, հայկական հարցը, կրթական գործը և այլն իրենց յուրովի լուսաբանումն են գտել Երևանի մամուլի առաջին օրգաններում («Պսակ», «Անդրկովկասյան թերթ», «Երևանի հայտարարությունները»)։ Թերևս դրանք ժամանակի հասարակական

խնդիրներին անդրադարձել են համադեմոկրատական գրքերից և առաջադրել «գյուղափրկիչ» այնպիսի միջոցներ, որոնցով չէր կարող իրականացվել գյուղի սոցիալական առաջընթաց վերափոխումը։ Այնուհանդերձ, այդ պարբերականներն իրենց նպաստն են բերել նահանգի տնտեսական, հասարակական կյանքի զարգացմանը։ Հանդիսացել են ժամանակի գաղափարական այն խոսափողերը, որոնք դարի լուսավոր միտքը, ազատաշունչ ոգին հասցրել են Երևանի նահանգի ամենահեռավոր անկյունները և այս կամ այն չափով քաղաքակրթել գյուղի բնակչությանը, հատկապես աշխատավոր գյուղացիությանը։

Ռուսական առաջին հեղափոխությունից հետո Երևանի մամուլը հարստանում է նորանոր պարբերականներով։ Դրանց մեջ կան դումայական բոլշևիկյան տակտիկան պրոպագանդող («Ճակատ»), հեղափոխական շարժման գաղափարները տարածող («Խոսք»), ժամանակի դեմոկրատական միտքը առաջ տանող («Նոր ձայն», «Կռան», «Նոր ժամանակ» և այլն) մամուլի օրգաններ, որոնք միաժամանակ մասնակցություն են ունեցել հայ ազգայնական կուսակցությունների դեմ մղված պայքարին։

Երևանի մամուլի անցյալի օրգանները պարունակում են նաև փաստական հարուստ նյութ Երևանի նահանգի բնակչության կենցաղի, ապրելակերպի, սովորությունների և այլնի վերաբերյալ։

Հայ հասարակական մտքի և մամուլի պատմության ուսումնասիրման համար կարևորություն ներկայացնող այս պարբերականները լուսաբանվել են միայն մասնակիորեն։ Պատմաբանները, բանասերները, տնտեսագետները իրենց խնդրո առարկայի քննարկման առումով անդրադարձել են Երևանի մամուլի անցյալին։ Այսպես, Մ. Գ. Ներսիսյանը «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ (1850—1870)» աշխատության մեջ բացահայտում է Երևանի առաջին թերթի՝ «Պսակի» դերն ու նշանակությունը ազգային-ազատագրական պայքարի գաղափարների տարածման գործում։ Ծ. Պ. Աղայանը պատմա-



գիտական ժառանգությունից արժեքավորում է «Խոսք» բոլշևիկյան թերթը իր «Արշավիր Մելիքյան» գրքում։ «Խոսք» թերթի հասարակական և քաղաքական դերն ու նշանակությունը ընդհանրացված են նաև Մ. Վ. Արզումանյանի «Բոլշևիկների գործունեությունը և ագրարային շարժումները Հայաստանում 1905—1917 թվականներին» ուսումնասիրության մեջ։ «Ճակատ» ռուսերեն թերթի բնութագիրը և նրա դերը բոլշևիկների դումայական տակտիկան ընթերցողներին ծանոթացնելու գործում տրված է Խ. Հ. Բարսեղյանի «Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն» աշխատությունում։ Երևանի մամուլի յուրաքանչյուր օրգան սեղմ բնութագրված է Թ. Խ. Հակոբյանի «Երևանի պատմությունը 1879—1917 թթ.» գրքում։ Անցյալի հայ տնտեսագիտական մտքի լուսաբանման առումով Հ. Ն. Կարապետյանը հետազոտել է «Ճակատ» և «Խոսք» թերթերում արծարծված տնտեսագիտական հարցերը և լուսաբանել «Սոցիալ-տնտեսագիտական միտքը բոլշևիկյան հայ պարբերական մամուլում» աշխատության մեջ։ «Պսակ» թերթի տնտեսագիտական հայացքների ուսումնասիրությանը առանձին էջեր է նվիրել Ռ. Ն. Սարինյանը իր «Հայ տնտեսագիտական մտքի քննական վերլուծություն (19-րդ դ. 70—90-ական թվականներ)» գրքում։ «Առողջապահական թերթ» ամսագրի բժշկագիտական և առողջապահական հարցերի քննությանն առանձին գլուխ է հատկացված Ռ. Ս. Փարսադանյանի «Հայ բժշկության պատմությունից» գրքում։

Վերը նշված աշխատությունները չեն լրացնում այն բացը, որ կար Երևանի մամուլի պատմության ուսումնասիրման բնագավառում։ Չի գրվել 1880—1917 թթ. Երևանում լույս տեսած պարբերականների պատմությունը իրենց գլխավոր խնդիրների քննարկման և ամբողջական լուսաբանման առումով։ Մինչդեռ, Երևանի այդ պարբերականները հետաքրքրություն են ներկայացրել ինչպես բարձրացրած հարցերի, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքում ունեցած իրենց դերի և նշանակության տեսակետից։ Ուստի, սույն աշխատության նպատակն է՝ լուսաբանել

պատմական այդ ժամանակահատվածի (1880—1917 թթ.) հանգուցային խնդիրներին առնչվող Երևանի պարբերականների բարձրացրած հարցերը, միաժամանակ ցույց տալ այդ խնդիրների նկատմամբ դրանց ունեցած վերաբերմունքը և ըստ այնմ էլ ներկայացնել յուրաքանչյուր պարբերականի գաղափարական հիմնական ուղղությունը, քաղաքական դիմագիծը և գնահատել դերն ու տեղը հայ հասարակական մտքի ու մամուլի պատմության մեջ։

Հարկ ենք համարում նշել, որ չենք անդրադարձել XX դարի սկզբին Երևանում լույս տեսած պետական-պաշտոնական թերթիկներին («Էրիվանսկիե գուբերնսկիե վեդոմոստի», «Գորոդսկիե օբյավլենիա», «Էրիվանսկի վեստնիկ»), ինչպես նաև վիճակագրական նյութերի ու հոդվածների ժողովածուներին («Օբզոր Էրիվանսկոյ գուբերնիի», «Պամյատնայա կնիժկա Էրիվանսկոյ գուբերնիի»)։ Դրանցում պարունակվում են սոսկ պաշտոնական, վիճակագրական տեղեկություններ և հայտարարություններ, որոնք լավագույն դեպքում կարող են օգտագործվել որպես սկզբնաղբյուրներ Երևան քաղաքի ազգաբնակչության թվի, սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելիս։ Չենք անդրադարձել նաև 1910 թ. Երևանում լույս տեսած «Միտք» գիտական, փիլիսոփայական և «Ճառագայթ» գրական, գեղարվեստական ու քննադատական ժողովածուներին, քանի որ դրանք չեն եղել պարբերական հրատարակություններ։ 1915 թվականից Երևանում իր հրատարակությունն է շարունակել Վանում 1910 թվականին լույս տեսած «Աշխատանք» թերթը։ Այն փոխադրվել էր Երևան ժամանակավորապես։ Նկատի ունենալով այդ հանգամանքը, չենք անդրադարձել այդ պարբերականին։

Աշխատության համար փաստական հիմք են հանդիսացել Երևանի մամուլի օրգաններից բացի, ժամանակի հայ մամուլի մի շարք պարբերականների հավաքածուները, Հայկական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվում (ՀՍՍՀ ԿՊՊԱ), Վրացական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվում (ՎՍՍՀ ԿՊՊԱ), ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) արխիվային բաժնում, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի արխիվում, Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) արխիվում, ինչպես և ՍՍՀՄ Կենտրոնական պետական պատմական արխիվում (ՍՍՀՄ ԿՊՊԱ) թեմայի վերաբերյալ պահպանվող նյութերը։

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

## «Պսակ» շաբաթաթերթը (1880—1884)

Պարբերական մամուլը Երևանում ծնունդ է առել անցյալ դարի 80-ական թվականներին։ Պատմական այդ ժամանակահատվածում կապիտալիստական արտադրահարաբերությունների մուտքը Անդրկովկաս առաջ է բերում սոցիալական, տնտեսական, հասարակական կյանքի նոր տեղաշարժեր, որոնք էլ իրենց հերթին զարգացման նոր ընթացք և նոր ուղղություն են հաղորդում գրականությանը, արվեստին, գիտությանը, հրապարակախոսությանը։ Երևան են գալիս նոր, ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ մասնագիտական (տնտեսական, մանկավարժական, երաժշտական, բժշկական և այլն) պարբերականներ։ Երևանում առաջին պարբերականի հիմնադրման նախաձեռնությունը պատկանում է փիլիսոփայության դոկտոր Վասակ Պապաջանյանին։ Վասակ Պապաջանյանը ժամանակի այն գործիչներից էր, որ ակտիվ մասնակցություն էր ունեցել Երևանում գործող «Հայասեր-ազգասեր» գաղտնի կազմակերպության աշխատանքներին։ Հայտնի է, որ 1880—1881 թթ. Երևանում ձևավորվում և գործում է «Հայասեր-ազգասեր» կազմակերպությունը[1]։ Այդ կազմակերպության գաղտնի ժողովների մասին իր հիշողություններում դեմոկրատ մտածող, հրապարակախոս, խմբագիր, մասնագիտությամբ գյուղատնտես Աշոտ Աթանասյանը գրում է. «Ութսունական թվականներին հայերիս համար քաղաքական և հասարա-



կական ամենաակտուալ հարցը—դա Տաճկահայաստանում ռեֆորմներ մտցնելու և Տաճկահայաստանի ազատագրման հարցն էր, որը քննվում էր հայ մամուլի էջերում, իսկ ամենից շատ՝ այն գաղտնի կոնսպիրատիվ «ժողովներում», որոնք գոյություն ունեին Անդրկովկասի մի շարք հայաշատ քաղաքներում։ Այդ ժողովներին, որոնք կոչվում էին «ազգասերների ժողովներ», մասնակցում էին իրենց հասարակական գործունեությամբ հայտնի մարդիկ։ Երևանում դրանք կազմում էին հազիվ մի տասնյակ հոգի—այն է՝ հայտնի իրավաբան Ռուբեն Զալալյանը, մանկավարժ հավատարմատար Վասիլ Եղիազարյանը, բժիշկ Լևոն Տիգրանյանը, նոտար Տրդատ Վարդանյանը, Թիֆլիսից եկած որպես մանկական պարտեզի առաջին հիմնադիր Գայանե Հովհաննիսյանը (Արշակ Հովհաննիսյանի քույրը), իրավաբան Հայկ Մատակյանը, հայրս և էլի երկու-երեք հոգի[2]. «Հայասեր-ազգասեր» գաղտնի կազմակերպության աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին նաև Թովմաս Մհերյանը, Հովհաննես Տեր-Զաքարյանը և ուրիշներ։ Նրանք բոլորը սերտ կապերի մեջ էին Մոսկվայի «Հայրենասերների միություն» գաղտնի կազմակերպության անդամների[3] և Թիֆլիսում գործող Րաֆֆու խմբակի հետ։ Ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, կազմակերպության անդամներից Լևոն Տիգրանյանը և ուրիշներ զբաղվել են նաև Երևանում զենքի խանութներ բացելու և զենք վաճառելու հարցերով։ Այսպես, Լևոն Տիգրանյանի՝ Կարապետ Եզյանին հասցեագրված նամակում գրված է այն մասին, որ առաջին հերթին պետք է զենք տարածել ժողովրդի մեջ[4]։

Երևանում, ինչպես և Թիֆլիսում գործող այս գաղտնի կազմակերպությունների գոյության մասին հայտնի է եղել Կովկասի վարչական և ոստիկանական մարմիններին։ Այսպես, այդ առթիվ Մ. Գ. Ներսիսյանի գրքում գրված է. «Հատկանշական է, օրինակ, որ Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր պետ, իշխան, գեներալ-լեյտենանտ Ա. Դոնդուկով-Կորսակովը ներքին գործերի մինիստրի պաշտոնակատար գեներալ-լեյտենանտ Օրժևսկուն ուղղած իր 1883

թվականի սեպտեմբերի 7-ի թվակիր զեկուցման մեջ հայտնում էր, որ Կովկասում ստեղծված հայ ազգային-քաղաքական կազմակերպությունների գլխավոր նպատակն է՝ ազգային-հայրենասիրական շարժում ստեղծել փոքրասիական հայերի մեջ՝ ընդդեմ թուրքական տիրապետության»[5]։

1883 թ. մարտին բացահայտվում է «Հայասեր-ազգասեր» կազմակերպության գործունեությունը. կազմակերպություն, որի ղեկավարները ցարի հրամանով 1885 թ. աքսորվում են Կովկասի սահմաններից դուրս։

«Հայասեր-ազգասեր» կազմակերպության անդամները հայրենասիրական, ազատասիրական գաղափարները տարածում էին նաև իրենց հրապարակախոսական ակտիվ գործունեությամբ։ Նրանցից Վահան Պապազյանը օգտագործելով այն հանգամանքը, որ Երևանում այդ տարիներին արդեն գործում էին Զաքարիա Գևորգյանի (1874), Աբգար Գուլամիրյանցի (1879) տպարանները[6], կար տպագրական բավարար բազա, 1879 թ. նոյեմբերին դիմում է Կովկասի փոխարքայության գլխավոր վարչությանը՝ Երևանում հայերեն շաբաթաթերթ հրատարակելու խնդրանքով։ 1879 թ. դեկտեմբերի 26-ի հատուկ գրությամբ Կովկասի փոխարքան Վահան Պապազյանին թույլատրում է 1880 թ. հունվարի մեկից Երևանում լույս ընծայել հայերեն պարբերական՝ շաբաթը մեկ անգամ։ Միաժամանակ փոխարքան խմբագրին ներկայացնում է իր պահանջները, որոնցում նշված էին այն մասին, որ եթե թերթն ունենա կառավարության անցանկալի ուղղություն, և եթե այնտեղ նկատվի մամուլի մասին եղած որոշումների ու գրաքննության կանոնների խախտում, ապա այն անմիջապես կդադարեցվի[7]։

«Պսակ» թերթի լույս ընծայումը մի քանի ամսով հետաձգվում է։ Երևանի նահանգապետ Շալիկովը գործը խափանելու նպատակով խմբագրի առաջ պահանջ է դնում՝ թերթ հրատարակել միայն այն դեպքում, որ գրաքննիչը հրավիրվի Թիֆլիսից և որին վճարի տարեկան 500 ռ. աշխատավարձ։ Երկար բանակցություններից հետո միայն նահանգապետը համաձայնվում է թերթի գրաքննիչ նշա-



նակել նահանգային վարչության աստիճանավոր Տիգրան Վարդանյանցին[8]։

Երևանի առաջին պարբերականը՝ «Պսակ» թերթը լույս է տեսնում 1880 թ. մարտի 15-ին։ Այն հրատարակվում է շաբաթը մեկ անգամ։ Սկզբում ունենում է «Գրականական,


ՊՍԱԿ

«Պսակ» շաբաթաթերթի գլխագիրը

պատմական և մանկավարժական» ենթավերնագիրը, իսկ 1882 թ.՝ «Ազգային, քաղաքական և բանասիրական լրագիր» անվանումը։ Առաջին տարում թերթը ձեռք է բերում հազիվ 240 բաժանորդ, իսկ 1881 թ. բաժանորդների թիվը հասնում է 500-ի։ Նյութերը զետեղված են հետևյալ բաժիններում. «Գրականական», «Պատմական», «Մանկավարժական», «Մատենագրական», «Թղթակցություններ», «Զննական հայացք», «Խառն լուրեր», «Հայտարարություններ»[9]։ Թերթի առաջին երկու համարները տպագրվել են Զ. Գևորգյանի տպարանում, այնուհետև Վահան Պապազյանի նորաբաց տպարանում։

«Պսակի» առաջին տարվա առաջին համարի առաջնորդողում խմբագիր Վահան Պապազյանը մանրամասն մեկ-

նարանում է ընդհանրապես լրագրի լուսավորական, կրթական, հասարակական դերն ու նշանակությունը: Նա լրագիրը համարում է ժամանակի օրագրություն, որը ընթերցողին հաղորդակից է դարձնում ժողովրդի առօրյա հոգսերին, կարիքներին, պահանջներին: Վասակ Փափազյանցը իր առջև նպատակ է դնում հրատարակել մի թերթ, որը մասնակից լինի հասարակության բոլոր խավերին, հատկապես գյուղական բնակչությանը, ինչպես ինքն էր ասում «հասարակ ժողովրդին»:

«Պսակ» թերթի առաջին համարի լույս ընծայումից հետո խմբագրությունը ողջույնի նամակներ է ստանում ընթերցողներից: Հեռավոր գյուղի բնակիչներից մեկը գրում է. «Մեր ցանկությունն է, որ «Պսակը» լինի բերան ժողովրդի, խոսի հասարակության հոգով, առանց կրքի պատմի շինականի ու քաղաքացու ցավերը, նախանձախնդրությամբ հարվածի շահամոլներին, որոնք հասարակությանը կեղեքում են հարստահարելով»[10]: Մոսկվայի Պետրովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիայի մի խումբ հայ ուսանողներ ոգևորված Երևանում հրատարակվող թերթի նախընտրած ծրագրով, շտապում են իրենց ողջույնի խոսքն ասել խմբագրին: Նրանք չեն կասկածում, որ թերթը գլխավոր ուշադրությունը կդարձնի տեղական բնակչության սոցիալական, տնտեսական և մտավոր կյանքի խնդիրների վրա և կհրատարակվի «գավառական և գյուղական ժողովրդի համար»[11]: Այդ նույն ժամանակ հանդես է գալիս լիբերալ-բուրժուական «Մշակը» և փոխանակ ողջունելու, իր քննադատական խոսքն է ասում թերթի հասցեին. «Մշակի» խմբագրությանը դուր չէր եկել հատկապես «Պսակի» ծրագիրը: Ըստ այդ թերթի, «Պսակը» պետք է զբաղվեր միայն գավառում կատարվող անցքերի քննությամբ, իսկ հասարակական-քաղաքական ընդհանուր կյանքի հարցերն ամենևին չպետք է հետաքրքրեին նրան: Նման հարցերով պետք է զբաղվեին միայն կենտրոնական թերթերը[12]: Իհարկե, սխալ էր նման սահմանափակում մտցնելը: Երևանում բնակվող բուն հայ ժողովրդին հավասարապես



հուզում էին այն հարցերը, ինչ համընդհանուր մարդկությանը: Սակայն, Երևանում լույս տեսնող թերթը նույնպես չէր կարող չանդրադառնալ ժամանակի հասարակական-քաղաքական ընդհանուր հարցերին: Եվ եթե «Պսակը» չէր դասվում հասարակական որևէ հոսանք ներկայացնող օրգանների շարքը, ապա այն պարբերականներից էր, որոնց մասին տնտեսագետ Ռ. Ն. Սարինյանն իր գրքում գրում է. «Սակայն կային նաև բազմաթիվ այլ պարբերականներ, որոնք թեև ձև չէին տալիս ամբողջական և վերջնավորված ուղղության և, թերևս, աչքի չէին ընկնում սոցիալ-տնտեսական կյանքի խոր և համակողմանի վերլուծությամբ, այնուամենայնիվ, զբաղվում էին ժամանակի առաջադրած խնդիրներով»[13]:

«Պսակ» թերթը իր գաղափարական սնունդն ստանալով դեմոկրատական ակունքներից, ասպարեզ էր եկել կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացման հետևանքով քայքայվող գյուղի, աշխատավոր գյուղացիության ծանր իրավիճակն արտահայտելու և այդ իրավիճակի բարեփոխմանը նպաստող միջոցներ առաջադրելու նպատակներով: Այս կամ այն չափով կրելով նարոդնիկական հայացքների ազդեցությունը, «Պսակը» հետևում էր «ժողովրդապաշտական շարժման» գաղափարներին, հասարակական զարգացման գործում կարևոր տեղ հատկացնելով մտավորականությանը: Այդ ազգային-դեմոկրատ գործիչների նման ազգային-ազատագրական շարժման բարեհաջող ավարտի հետ էր կապում հայ ժողովրդի սոցիալական հարցի լուծման հեռանկարները: Միաժամանակ, դրսևորելով նաև ազգային-պահպանողական հայացքներ, թերթը ազգի գոյատևման հենարանը համարում է եկեղեցին: Այսպիսով, ինչպես նկատվում է, գաղափարական այն «էկլեկտիզմը», որ բնորոշ է եղել ընդհանրապես այդ ժամանակաշրջանի մտավոր կյանքին, հատկապես մամուլի որոշ օրգաններին, հատուկ է եղել նաև «Պսակ» թերթին:

«Պսակին» հիմնականում հետաքրքրել է գյուղի դեմոկրատական վերափոխման հեռանկարը: Այդ հանգաման-

քըն է հիմք հանդիսացել այն բանի, որ գրականության մեջ թերթը դասվել է «գավառական-դեմոկրատական ուրույն հայեցողություն ունեցող»[14] թերթերի շարքը:

«Պսակ» թերթի հրատարակության գործի կազմակերպումը դյուրին չի եղել խմբագրի համար: Թերթը չի ունեցել թղթակիցների մշտական ցանց: Առաջնորդողների ու հոդվածների մեծ մասը գրել է ինքը՝ խմբագիրը: Հոդվածներ թերթում տպագրել են Թովմաս Մհերյանը, Գրիգորիս Երզնկյանը, Հովհաննես Հեթումը, Արսեն Թոխմախյանը և ուրիշներ:

Գրաքննչական կոմիտեի հալածանքներից խուսափելու համար, ինչպես խմբագիրն է խոստովանել, շատ դեպքերում ստիպված է եղել «մտածածը, խորհածը ինչպես առանց մի անցաթղթի մարդի՝ փականքի տակ դնել ու միշտ բանտարկել. գրածը, շարադրածը ջնջել և հավիտյան անհետացնել»[15]:

* * *

«Պսակ» թերթը լույս էր տեսնում այն տարիներին (1880—1884), երբ ազգային-ազատագրական շարժումն իր տարածումն էր գտնում Վանում, Մուշում, Բիթլիսում, Կարինում և հայաշատ այլ գավառներում: Արևմտյան Հայաստանում գործում էին 1878—1879 թթ. Վանում ստեղծված «Սև խաչ», 1881 թ. Կարինում հիմնված «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունները: Արթնանում էր գավառը՝ դառնալով ազատագրական շարժման խթանող ուժ: Ազատագրական շարժման կազմակերպիչներին օգնության ձեռք էին կարկառում Մոսկվայում, Թիֆլիսում, Երևանում գործող գաղտնի խմբակները: «Պսակ» թերթի խմբագիրն ու աշխատակիցները (Ա. Թոխմախյան, Լ. Տիգրանյան, Թ. Մհերյան և ուրիշներ) առաջնորդվում էին Րաֆֆու երկերում հուշարկված այն նշանաբանով, թե արևմտահայ շարժումը արծարծելու համար անհրաժեշտ է հատուկ աշխատանք



ծավալել արևելահայ գավառներում: Եվ Վասակ Պապաջանյանը «Պսակ» թերթի էջերը այդ իսկ նպատակին էր ծառայեցնում: Նա սերտ կապերի մեջ լինելով Մոսկվայի «Հայրենասերների միության» կազմակերպության անդամների հետ, օգտագործում էր նրանց մշակած ծրագիրն ու կոչերը: Հայտնի է, որ «Հայրենասերների միությունը» կոչ էր անում «...արյունով գնել ազատությունը և ցույց տալ բազմաչարչարված աշխարհին, որ հայաստանցին ըմբռնել է ազատության գաղափարը և ընդունակ է այդ գաղափարին զոհել իր ունեցածի ամենաքաղցրը, ամենաազնիվը—իր սիրելի որդիների կյանքը»[16]: Այդ կոչի ոգով գրված են «Պսակի» հատկապես 1883 թ. համարներում տպագրված հոդվածները: Հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության հարցը, որ հանդես էր եկել իր ամբողջ սրությամբ, դառնում է «Պսակ» թերթի քննարկման կարևոր հարցերից մեկը: Ուշադրությունը առավել ևս դարձվում է արևմտահայության ազատագրության խնդրի վրա, քանի որ հայ ժողովրդի՝ Օսմանյան Թուրքիայի լծի տակ տառապող հատվածին սպառնում էր ֆիզիկական բնաջնջման վըտանգը:

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Սան-Ստեֆանոյի կոնֆերանսը և Բեռլինի կոնգրեսի պայմանագրերը համոզեցին, որ ազատության հասնելու համար պետք է ապավինել սեփական ուժին: Նույն եզրակացության էին հանգել նաև Վասակ Պապաջանյանն ու նրա թերթի շուրջ համախմբված մտավորականները: «Հայկական խնդիրը, ինքը ժողովուրդն է,—գրված է թերթում,—եթե մինչև այսօր հայն անծանոթ էր Եվրոպային, ապա այն պատճառով, որ նա—հայը—կորցրած էր պատվասիրության զգացմունքը. բայց, երբ փոքր ինչ ինքն իրեն ճանաչեց, փոքր ինչ ձայն հանեց, հայկական խնդիրը երևան դուրս եկավ: Ուրեմն ինչպես որ ինքն իր ինքնաճանաչության նորավառ նշույլներով առաջ բերեց իր խնդիրը, նույնպես էլ պետք է ինքն իր ինքնագործությամբ լուծումն տա այդ խնդրին»[17]: Եվ ժամանակն ու պայմանները հասունացած համարելով այդ



2—894

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

խնդրի իրականացմանը նախապատրաստվելու համար, Թերթը հորդորում է ժողովրդին՝ չհապաղել իր միտքը առաջ հասցնելու նպատակով անգին է գտնում մեջ բերել իմաստունի հետևյալ խոսքերը. «Ոչ թե համբերության օգնությամբ, այլ անհամբերության զորությամբն է ժողովուրդն ազատվում»[18]։ Եվ միանգամայն իրավացի է Թ. Հակոբյանը, որ իր գրքում Վաստակ Փափազյանի մասին գրում է. «Դժվար չէ տեսնել, որ հայրենասեր մտավորականը ճիշտ էր հասկացել 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո արևմտահայերի ազատագրության հարցի շուրջը միջազգային դիվանագիտության բարձրացրած աղմուկի անամեջ լինելը և այն միակ ելքի, համաժողովրդական պայքարի անհրաժեշտությունը, որն իրոք կարող էր հասցնել հաղթանակի, պայմանով, եթե ժողովուրդն իրեն ամբողջությամբ նվիրի այդ սուրբ գործին...»[19]։

Ազգային-ազատագրական պայքարի գաղափարներով ներծծված հոդվածներ Թերթի համար գրել են Վաստակ Փափազյանը, Արսեն Թոխմախյանը[20], Թովմաս Մհերյանը և ուրիշներ։ Հարցի բարեհաջող լուծման նախապայմանը նրանք տեսնում էին ազգի միասնական պայքարի մեջ։ Ըստ Թերթի «հայկական խնդրին օգտավետ կերպով լուծում տալու համար», «ազնոտը միշտ պետք է լինի ու լինի միությունը»։ «Հայ ազգը երկունքի մեջ է,—գրում է Թերթը,—որպեսզի նա անվտանգ և առողջ մնա, մեզանից մի զոհ է պահանջում, այն է զոհել մեր հին հաշիվները, մեր կամակորությունը, մեր ոխակալությունները ու թշնամանքները. նա մեզանից մի երդում է պահանջում. երդվել սիրել միմյանց և այդ սիրո համար նվիրել նաև կյանքը։ Նա մեզանից մի ուխտ է սպասում—ուխտել մի սիրտ, մի հոգի, մի միություն, մի անբաժան միություն կազմել և այսպիսի սիրտ միությամբ անվախ առաջ գնալ»[21]։ Եվ այդ միության, ազգի ամբողջության պահպանման հիմնական օղը համարվում է եկեղեցին։ Քաղաքական իշխանությունից զուրկ ազգի գոյությունն ապահովելու գործում կարևորությունը տրվում է եկեղեցուն, ժամանակի այն միակ հաստատությանը, որի



ձեռքում էր կենտրոնացված ազգի հոգևոր կյանքի ղեկը։ «Մեր ազգի պատմական պայմանները,—գրված է Թերթում,— դրել են նրան այնպիսի վիճակի մեջ, որ մեր կարծիքով յուրաքանչյուր հայ մարդ, որ սիրում է իր հայրենիքը, որի սրտին մոտ է իր հայրենակիցների ամբողջական մարմնավորությունը, պետք է անշուշտ մեր եկեղեցին իբրև ազգը մի միություն ներկայացնող հաստատություն, իբրև ազգության ամբողջությունը իր մեջ պահող ամուր օղ համարի»[22]։

Ազգապահպանման գործում եկեղեցու դերը գնահատելիս «Փասկը» արտահայտում էր ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող օրգանների հայացքներին համահունչ գաղափարներ։ «Ազգային-պահպանողականները,—ինչպես գրում է Մ. Հ. Մխիթարյանն իր գրքում,— սոցիալական հասարակ կողմն չանտեսելով, որին հանձնարարեին ազգի քաղաքական բախտի տնօրինումը, այդ խնդրի լուծումը վերապահում էին վաղուց իր դարն ապրած հայ եկեղեցուն»[23]։

Միաժամանակ ազգային ու քաղաքական ազատության հետ կապված խնդիրները բարեհաջող լուծելու նկատառումներով Թերթում ընդգծվում է էջմիածնի Աթոռի և պատրիարքարանի միասնաբար գործելու անհրաժեշտության հարցը։ Եվ որ կարևորն է այս հարցի բարեհաջող լուծման համար Թերթը ապավինում է Ռուսաստանից սպասվող օգնությանը։ Այսպես. «Առաջին և ամենագլխավոր խնդիրը,—գրում է Թերթը,— այն է՝ պետք է ամեն ճիգ թափել, անդուլ աշխատել, կազմել մեծ ժողով. Կաթողիկոսի գահը նստեցնել այնպիսիներին, որին հաջողի գեթ էջմիածնից հայերի կենտրոնը տարածելու իրավունքը, հայերի պետք լինել, որ այսպիսով մի հզոր կապ կազմենք, որ և կապի անցը լինի աթոռատեղին, որ միշտ ունենանք, որ անհապաղ Ռուսի շնորհով ձեռք բերենք ցանկալին, որ ամպի պես մի օր թնդանք Թյուրքիայում մեր թշնամիների գլխին կյանքի, դույլի մեր ցանկալին ձեռք բերելու»[24]։

Անհրաժեշտ է նշել, որ 1883 թ. № 7 և № 9, ինչպես և այլ համարներում տպագրված հոդվածները վերաբերում էին ոչ այնքան եկեղեցուն, որքան օտարի լծից, հիմնականում թուրքական տիրապետությունից հայ ժողովրդին ազատագրելու խնդրին: Այդ մասին ինքը՝ խմբագիրը խոստովանում է գրելով. «Ներկա թվականին մեր «Փասկը» երկու հոդված գրեց ազգային եկեղեցու վերաբերյալ: Դրանք ոչ այլ ինչ էին, եթե ոչ մի տեսակ նախապատրաստություն այն վճռական միտքն արտահայտելու համար, որ կազմում էր «Փասկի» իսկական նպատակը»[25]: Պարզ է, որ գրաքննության արգելքներից և կառավարության հետապնդումներից խուսափելու համար թերթում ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ մտքերը արտահայտվում են քողարկված ձևերով: Եվ իր ընթերցողներին այդ մասին անտեղյակ պահելու նպատակով խմբագիրը գրել է. «Թող ներեն մեզ հայ ընթերցողները, որ ոլոր մոլոր ճանապարհներով ներածում մեր պատմության ընթացքը, որ երբեմն էլ գուցե անտեղի ավելորդություններ ենք ներս բերում, բայց այդ ամենն էլ խորհրդով ենք անում և... միևնույն ժամանակ կխնդրենք, որ խելամտությամբ կարդան այն խորհրդավոր գրվածքը, որ դատապարտված է դուրս ու կցկտուր նախադասությունների միջոցով դուրս ցոլանալ»[26]:

Անկասկած, գրաքննչական մարմինները հետևել են թերթի քաղաքական ուղղությանը: Արգելել են առանձին հոդվածներ, առանձին նախադասություններ, կամ ամբողջ համարի մեկ կամ երկու էջը: Խմբագիրը հանված նյութերի տեղը բաց է թողել, երբեմն էլ գրել բազմակետեր, կամ էլ գրել. «չտպվեցավ», և «Մեզանից անկախ պատճառներով այս համարը կես թերթ է հրատարակվում»: Ինչպես վկայում են Վրացական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվում պահպանվող գրաքննչական կոմիտեի նյութերը, խմբագրի օգտագործած այդ ձևերը չեն վրիպել գրաքննիչ Մելիք Մեհրաբովի ուշադրությունից: Նա նկատել է, որ գրաքննության կողմից մերժված հոդվածների փոխարեն խմբագիրը գրել է բազմակետեր, հավանաբար, ընթերցողի ուշադրությունը գրավելու, հետաքրքրությունը շարժելու նպատակներով: Ուստի, գրաքննիչը 1882 թ. հուլիսի 12-ին հատուկ գրությամբ է ուղարկել խմբագրի հասցեով, մեղադրելով նրան գրաքննության օրենքներից շեղվելու մեջ: Միաժամանակ Մամուլի գործերի գլխավոր վարչության գրաքննչական կոմիտեի նախագահը կարգադրել է Երևանի նահանգապետին՝ ի ցույց դնել Երևանի գրաքննիչին[27]: Այսպես Կովկասի գրաքննչական կոմիտեն հատուկ զեկուցագիր է ուղարկել Երևանի նահանգապետին և հայտնել, որ «Փասկի» № 7-ում տպագրվել են անթույլատրելի հոդվածներ, մինչդեռ թերթի № 9-ում խմբագիրը կրկին անգամ անց է կացրել նույն այդ մտքերը: Ուստի, գրաքննչական կոմիտեն եզրակացրել է, որ «Փասկը» համարվում է «ծայրահեղ վտանգավոր ուղղություն ունեցող թերթ»[28]:

Հայտնի է, որ այդ շրջանում ցարական գրաքննությունը խիստ հետևում էր Արևմտյան Հայաստանի և հատկապես ազգային-ազատագրական շարժման վերաբերյալ գրված հոդվածների բովանդակությանը, ենթադրելով, որ նույն բողոքն ու պայքարը հետագայում կարող էին ուղղվել նաև ցարական կառավարության դեմ:

Չնայած նման հանգամանքներին ու պայմաններին, «Փասկ» թերթում այնուհանդերձ զգալի, թե բացահայտ բարձրացվում էր ազգային-ազատագրական պայքարի գաղափարը: Ահա թե ինչու Մ. Գ. Ներսիսյանը գրում է. «...«Փասկը» կանգնած էր ազգային-քաղաքական շարժման անհրաժեշտությունն ընդունող տեսակետի վրա և աշխատում էր ազգային-ազատագրական գաղափարների պրոպագանդա անել հայ իրականության մեջ»[29]:

«Փասկ» թերթը անդրադարձել է նաև Թուրքահայ գավառներում ապրող հայ ժողովրդի քաղաքական անապահով վիճակին: Թուրքական կառավարությունը հայ քրիստոնյա աշխատավորներից մի քանի տարվա տուրքը գանձում էր կանխիկ և դիմադրության հանդիպելիս նրանց առաջ բացում էր բանտի դռները: Թուրք և քուրդ հրոսակախմբերն անխնա ավերում էին հայկական գյուղերը: Այսպես, թերթը գրում է

այն մասին, որ Իգդիրում քրդերը գիշերով հարձակվել են Անտառ գյուղի վրա։ Բարեբախտաբար, հայերը վաղօրոք կռահած լինելով քրդերի միտքը, պատրաստված են լինում և զինագործելով, կարողանում են խուճապի մատնել նրանց։ Երբ այդ հարձակման մասին հայերը փորձում են բողոքել փաշային պարզվում է, որ նա նույնպես եղել է քրդերի գործակիցը։ Այդ փաստն ընդհանրացնելով, խմբագիրը եզրակացնում է. «...և թե ո՛ր աստիճանի խորամանկ քաղաքականություն է Տաճկի կառավարության կողմից այդպես վարվել անզգացի հայերի հետ, այդ ընթերցողը հեշտ կարող է հասկանալ։ Անօգնական, անպաշտպան մեր հայ եղբայրները չունեն մինչև անգամ ինքնապաշտպանության մի կտոր երկաթ, որ գոնե գող, հարստահարիչ քրդերից իրենց անձը, կայքը (եթե կա) պաշտպանեն»[30]։

Թուրքական կառավարությունը չափազանց խորամանկորեն է առաջ տարել իր հայահալած քաղաքականությունը։ Առաջին հերթին սկսել է փակել հայկական դպրոցները։ «...այսօր Թուրքիան անամոթաբար ձեռք է կարկառում և հայոց դպրոցներին,—գրում է թերթը,—ուզում է իր ձեռքերի մեջ առնել հայոց դպրոցները, ուրիշ խոսքով, հայոց ազգության այդ ծնելարանը, հայոց սերնդի այդ արգանդը, որ ճմլի, որ մզի իր վայրագ ձեռքերի մեջ այդ ծնելարանը, որ ավերի, փչացնի այդ մայրական, այդ կենսագործ արգանդը»[31]։ Հավանաբար, այս խոսքերը գրելիս թերթը նկատի ուներ 1880-ական թվականներին սուլթան Աբդուլ Համիդի հրամանով հայկական դպրոցների ու թերթերի փակումը։ Հենց այդ տարիներին էին, որ թուրքական կառավարող շրջաններում առանց քաշվելու հայտարարում էին, թե հայկական հարցը պետք է լուծել հայության ոչնչացման ճանապարհով[32]։ «Պսակ» թերթը համարձակորեն, ի լուր ազգի թշնամիների, հայտարարում էր. «Թող Թուրքիան և իր փաշաները խորին ուշադրությամբ կարդան հայոց պատմությունը և կտեսնեն, որ հայերը Սահակ և Մեսրոպներ են ունեցել, որոնք դպրոցներ հիմնելով, հինգերորդ դարում հայ կանանց պես հայ մայրեր պատրաստեցին, որ հայերը Վար-



դանանց պես անմահ նահատակներ են ունեցել, որ հայերը Ավարայրի ընդարձակ դաշտի պես դաշտեր արյունով են ներկել միմիայն ազգային եկեղեցին, ազգային դպրոցները պաշտպանելու համար»[33]։ Տպագրելով այս խոսքերը, թերթը նպատակ է ունեցել փառաբանելու հայ ժողովրդի ազատասիրական ավանդական ոգին։ Միաժամանակ թերթը գրել է հայրենասեր գործիչների կյանքի և գործունեության նկարագրություններ։ Այսպես, թերթի 1884 թ. առաջին համարը ամբողջովին նվիրված է ազատատենչ ոգով տոգորված, հարազատ ժողովրդին թուրքական բռնակալական լծից ազատագրելու գործի համար պայքարող Ներսես Վարժապետյանի, Խրիմյան Հայրիկի, Մելքիսեդեկ եպիսկոպոսի կյանքին ու գործունեությանը։

«Պսակ» թերթը ժամանակին առաջադեմ մտավորականության հետ միասին ակտիվորեն մասնակցել է ազգային-ազատագրական շարժման գաղափարները ժողովրդի մեջ տարածելու, ժողովրդին հասցնելու մեծ գործին։

* * *

Հայտնի է, որ հայ իրականությունում անցյալ դարի 80-ական թվականներին մամուլի մի շարք օրգաններ դառնում են հասարակական այս կամ այն հոսանքի գաղափարախոսները։ Կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացմամբ շահագրգռված լիբերալ-բուրժուական հոսանքի գաղափարախոսն էր Գր. Արծրունու «Մշակ» թերթը։ Ինչ խոսք, լիբերալ մտավորականության մեծ մասը տնտեսական հարցերը մշակելիս ելնում էր ժամանակի նորույթ պահանջներից։ Գրիգոր Արծրունին իր թերթի էջերում մշակում է ազգային տնտեսության զարգացումը կապիտալիստական ուղու վրա փոխադրելու ծրագրեր։ «Մշակի» միջոցով նա բարձրացնում է տեղական կապիտալի հիման վրա արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների ստեղծման հարցը։ Այդ խնդրի հաջող լուծման համար առաջարկվում է կազմակերպել քաղաքի և գյուղի մանր արտադրող-

ների «ընկերակցությունները», ինչպես նաև ակտիվացնել վաճառականության դերը արդյունաբերության ասպարեզում և ընդհանրապես հասարակական կյանքում: Վաճառականությունը՝ «միջին դասակարգը», ըստ Թերթի, համարվում է ազգի նյութական հենարանը, որի միջոցով պետք է մշակվի երկրի հարստությունը:

«Մշակը» Թերթը կողմնակից լինելով կապիտալիզմի զարգացման պրուսական ուղուն, գյուղացիության կյանքի վերափոխման լավագույն միջոցը համարում է բուրժուական ռեֆորմների կիրառումը: Առաջ է քաշում գյուղական արդյունաբերական ընկերակցությունների ստեղծման հարցը, մի հարց, որը կարող է իրականացվել միայն փոխատու և խնայողական ընկերությունների օգնությամբ:

Անտեսվում է զարգացող բուրժուազիայի և աշխատավորության միջև ստեղծված արմատական հակասությունը: «Ցանկանալով հասարակության երկու ծայրագույն դասակարգային բևեռների միջև հավասարակշռություն ստեղծել, Արծրունին իրեն ցուցաբերում էր հասարակության միջին խավերի շահերի արտահայտիչ միայն. երբեմն այս կամ այն հարցում կանգնելով աշխատավորների շահերի «պաշտպանի» դիրքերում, նա հիմնականում այդ անում էր որպես բուրժուազիայի գաղափարախոս»[34]:

Այդ նույն տարիներին ազգային-պահպանողական «Մեղու Հայաստանին» գյուղացիության հարցի լուծումը նույնպես կապում էր ռեֆորմների հետ, սակայն այնպիսի ռեֆորմների, որոնք եկեղեցու ձեռքում թողնեին ազգային կյանքի բոլոր տեսակի բարեփոխությունների նախաձեռնությունը:

«Փսակը» ելնելով կապիտալիզմի ուղին թևակոխած երկրամասի տնտեսության ու սոցիալական կյանքի զարգացման պահանջներից, փորձում է առաջադրել գյուղի դեմոկրատական վերափոխման իր ծրագիրը: «Փսակը» ազգի նյութական ու հոգևոր ուժերը տեսնում է աշխատավոր գյուղացիության, ինչպես Թերթում է գրված «հասարակ ժողովրդի» մեջ: «Հասարակ ժողովուրդը,—գրում է Թերթը,—



մեկ ազգի, իսկ ընդհանուր հասարակ ժողովուրդը, մարդկության հասարակական շինվածքի հիմքն է»[35]: «Նա,— շարունակում է Թերթը,—մի ազգի կորիզն է, իսկ առաջադեմ ու լուսավորված դասը, նրա ծաղիկն ու հասած պտուղը: Նա պարունակում է իր մեջ բոլոր սքանչելիքները մարդկության կամ մեկ ազգի: Արհամարհել կորիզը, սիրել ծաղիկն ու պտուղը, կնշանակի չճանաչել, անծանոթ լինել ծառի գոյության, նրա ծնման, աճման ու զարգացման հետ: Չէ՞ որ պտղի սաղմը կորիզումն է: Դուրս նետել կորիզը, նույնն է, որ ձեռք քաշել պտղից: Առանց կորիզի պտուղ և առանց հասարակ ժողովրդի ուրիշ ավելի բարձր դասակարգ չկա, այստեղից է, որ բոլորն իր սկիզբն է առնում: Նա ծնողն է բոլոր մեկ ազգին պատկանող դասակարգերի, նա այն առատ ու պարարտ հողն է, որ ում ինչ ցանես, այն և անշուշտ կհնձես: Սորանից է կախված բարգավաճություն, բարօրություն մեկ ազգի կամ ընդհանուր մարդկության»[36]:

Այս հոդվածում, որ պատասխան-խոսք է ուղղված Մոսկվայի Պետրովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիայի ուսանողների խմբագրությանն ուղարկած ողջույնի նամակին, մեջ են բերված Միքայել Նալբանդյանի «Նկատողությունք» հրապարակախոսական հոդվածից քաղվածքներ, որոնք առանձնացված են հոդվածի տողատակում և նշված է հեղինակի անուն ազգանունը[37]: Անարդարացի կլիներ չնշել, որ «Փսակը» մի շարք հոդվածներում կան օգտագործված առանձին նախադասություններ, պարբերություններ Միքայել Նալբանդյանի ինչպես «Նկատողությունք» հոդվածից, այնպես էլ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունից: Սակայն, Միքայել Նալբանդյանի գործերից մեջբերումներ անելը դեռ բավական չէր: «Փսակը» հասարակական զարգացման վերաբերյալ առաջադրած իր ծրագրերով չէր հասնում Նալբանդյանի հեղափոխական ըմբռնմանը և չէր էլ կարող հասնել, քանի որ խմբագրի աշխարհայացքում գերիշխող տեղ էր գրավում ազգային-պահպանողական մտայնությունը:

Ինչպես, Վասակ Դաղդաղանյանի «Պասկ» թերթը ամենայն հարազատությամբ ներկայացնում էր գյուղի աշխատավորության անտեսական և սոցիալական անապատ, թշվառ իրավիճակը։ «Գյուղացին՝ մեր ազգի արյունն ու մարմինը,— գրում է թերթը,— անտեր ու անտիրական է, անտուն ու անտեղ է. որ ուտում է, որ չի ուտում, համարյա գիշեր ու ցերեկ է աշխատում, բայց ի՞նչ—աղան, բախտի որդին, ուտում ու մաշում է»[38]։ Թերթի էջերում ցցուն օրինակներով պատկերված է գյուղում տիրող սոցիալական անհավասարությունը։ Թերթը բացահայտ ու համարձակորեն գրում է այն անարդարացի բռնությունների ու կամայականությունների մասին, որ կատարվում էին հայկական գյուղերում։ «Աղա ես, ապա և ունես իրավունք առնել-տալ, ուտել-խմել, պառնել-անարգել, հափշտակել, բամբասել, զրկել, սպանանել, կողոպտել և այլն, և այլն»[39]։ Թերթը հատկապես ցավով է անդրադառնում այն փաստին, որ աշխատավոր գյուղացիությունը ճանաչելով շահագործողին, գալով, որ նրա կողմից անիրավացիորեն հալածվում է, կողոպտվում է, դարձյալ «անմիտ ոչխարի նման հետևում է նրան և նրա մտադրությունների, նրա դիտավորությունների գործակատարն ու գործակիցը հանդիսանում»[40]։ Նա այնքան խեղճացել ու սարկացել է, ինչպես գրում է թերթը, որ երբ չինովնիկներից կամ գյուղի աղաներից մեկը. մի ոչինչ բանի համար սպառնալիք է կարդում հայ գյուղացուն, վերջինս էնպես է կարծում, թե շուտով չինովնիկից կստանա պատիժ և բանտարկություն»[41]։ «Պասկը» գյուղում տիրող սոցիալական անարդարության մասին գրելիս հաճախ դիմում է ֆելիետոնի ժանրին։ Այսպես. «Եթե պատահեմ գիշեր-ցերեկ տանջվող, ջանասեր գյուղացու արյուն քրտինքով վաստակած հացով, պատրաստած պանրով ու յուղով, սեր ու կարագով, խոտով ու գարով հարստացած կալվածատերերին իրենց գյուղացիներին ճնշելիս ու հալածելիս, անիրավաբար նրանց չնչին սեփականն էլ խլելիս, հափշտակելիս, ծեծելիս ու թքելիս, անգամ նրանց սրբությունը բռնի արատավորելիս, «ազգային» կանգառ ու



խեղճեր եկողներին կոշիկների կրունկներով իրենց տանից արյուն կոխել դուրս անելիս, իսկ նրանց—այդ իրենց ջանասիրությամբ պատժված արարածների տանջանքների ու քրտնքի, վշտի ու զրկանքի տված փողերը լոտոների ու բալերի վրա շռայլելիս, կպցնեմ աչքերիս արցունքը, ներս-սրտիս մեջ կլլեցնեմ. թող այնտեղ սրտիս աչքերից կարկուտ թափեն, որքան ցեխեր թող վազեն, դեմքիս մի ծաղիկ ժպիտի տակ հոգու վրդովմը կծածկեմ, աղայի ձեռքից ընկած դագանակը կբարձրացնեմ, կամ ձեռքում կտրված ասեղ՝ մի նոր ու ավելի պինդը կմատուցանեմ»[42]։ «Մուրճ» ստորագրությամբ տպագրված այս ֆելիետոնում ճշմարտացիորեն ու միաժամանակ դառնորեն ներկայացված է կալվածատիրոջ վերաբերմունքը աղքատ գյուղացու նկատմամբ։ «Գյուղացու տեր, գյուղացու սատված,— շարունակում է թերթը,— ես նրան կասեմ—խփի՛ր, պինդ խփի՛ր, գյուղացին ի՞նչ է, որ համարձակվում է լեզու լինել, ցավ զգալ, բան խնդրել, բեղ անհանգիստ անել. իր կեղտոտ ոտներով տանդ փայլուն պոլերն աղտոտել, նա մարդ չէ, հայվան է, աղա կալվածատեր, քո կթի կովն է—բեռնակիր գրաստն է. մորթի՛, պլոկի՛, արյունը ծծի, իրան զեն շպրտե...»[43]։

Ինչպես նկատում ենք, թերթը բողոք է հայտնում կապիտալիստական հասարակության արատավոր երևույթների դեմ։ Սակայն միաժամանակ հորդորում է գյուղացիությանը՝ չլռել, պայքարել մարդկային արժանիքների ու իրավունքների պաշտպանության համար, գրելով. «Ճանաչեցեք Ձեզ, Ձեր պատիվը, մի թափիլ Ձեր մարգարիտը խոզերի առաջ»[44]։

«Պասկում» բացահայտորեն ցույց է տրվում նաև, որ աղաներից ու չինովնիկներից բացի, պակաս վտանգավոր չեն նաև «դիմակակիր» գործիչները, այսինքն, «կեղծ ուսումնական-կրթվածները», որոնք «հիմնահատակ են անում ամեն մի հասարակական գործ, եթե այն չի ծառայում իրենց անձնականներին։ Թերթը հորդորում է երես թեքել նմաններից, քանի որ այսպես միայն կկարողանան վերջ տալ «դիմակակիր» ապականների գոյությանը։ «...այդ է մեր միակ ամե

տապարը,— գրված է Թերթում,— որ պետք է ուղղենք այդ շահամոլ անհատների կյանքի արմատին»[45]։

Գյուղի աշխատավորությանը պակաս չէր կեղեքում նաև հոգևորականությունը։ Թերթը գրում էր գյուղական քահանաների կաշառակերության, անօրինական գործերի մասին։ Այսպես. «Բարձր աստիճանի հոգևորականը, քահանան, քարոզիչը եկեղեցում ամենայն օր կարդում են սուրբ գիրքը, խրատում են ուրիշներին, խոստովանեցնում, մեղաց թողություն շնորհում, փող վեր առնում, կեղծում, օրինականի տեղ անօրինակ բաներ գործում,— վերջապես և ուրիշ հազար ու մի տեսակ դրպարտանքներ, օրինազանցություններ, ոճրագործումներ գործում, կաշառքներ առնում... իսկ հետո... իրենց արդարացնում. այս ամենը դիմակ չէ՞, բաս ինչ է»[46]։ Էջմիածնից Դոն Էստեան դը Բարկաս ստորագրությամբ ուղարկված հոդվածում պահանջվում է «Պոլոժենիայով» հոգևորականությանը տրված իրավունքները վերանայել և այնպիսի օրենքներ սահմանել, որ հասարակության «ձայների առավելությունը լինի տիրապետողը»։ Հոդվածում այն միտքն է առաջ տարվում, թե գյուղացիությունը բոլոր տեսակ շահագործողների դեմ ինքը՝ իր սեփական ուժերով պետք է պայքարի։ «Ահա արդեն հասել է ժամը, որ քեզ համար զարթնես...»[47]։ Դեմոկրատական այս սուրբ միտումը արտահայտված է Թերթի էջերում։ Ժողովուրդն ինքը պետք է լինի իր դատավորը և նրանց չար գործերի քննողն ու մերկացնողը։ «Ժողովուրդ, եթե ունես զգացմունք, եթե ցավում ես քեզ, խղճում ես քեզ, եթե սիրում ես Լուսավորչի Գրիգորին, այդ քո բազմերախտ պապիդ կոթողը՝ վեր կաց և քննիր մանրամասնին կերպով և դատիր. բայց չար ու նենգ գործողներին ցանկալուց առաջ— նրանց գործերը ծածկող ազատ այրերին, նրանց համակրող շողոքորթներին դատիր... բավական է...»[48]։ «Պսակը» հանդես է գալիս իր «գյուղափրկիչ» ծրագրերով։ Նախ ժամանակի ազգային-դեմոկրատ մտածողների նման համոզված, թե ազգային ճնշման վերացումը լայն հեռանկարներ է բացում սոցիալական հարցի լուծման համար, անհրաժեշտաբար ապավինում է ազգային-



ազատագրական պայքարին։ Այս մտայնությունը արտահայտված է հետևյալ այլաբանության մեջ. «Ժամանակով ազատ հափշտակեց Պարկը[49], կամենում էր հափշտակել Զամախը[50], բայց չհաջողվեց։ Անթիվ ու անհամար աշխատանքներ գործ դրվեցին, որ այդ վերջինը ևս նորանից խլեն, բայց անհնարին էր։ Գյուղացին չավեց, նորան հարկավոր էր այդ Զամախը։ Բանականությունը նրան ասում էր. տուր Պարկը, բայց պահիր Զամախը։ Զամախով կարող ես ձեռք բերել Պարկ, բայց Պարկով երբեք Զամախ։ Նա լսեց բանականությանը, տվեց հափշտակողին Պարկը և պաշտեց սրբի տեղ Զամախը, Զամախը... անգին Զամախը։ Այժմ մեր գյուղացին ունի միայն մի Զամախ, որինակ է փայտյա, որով լինի արդարությունն»[51]։ Մեկնաբանելով այս այլաբանությունը, Մ. Գ. Ներսիսյանը գտնում է, որ «Պապաջանյանի Թերթը կարծում էր, որ հասարակական կյանքում վճռական դերը վերապահվում է զենքի ուժին, ազատագրական պայքարին»[52]։ Ապավինելով ազատագրական պայքարին, Թերթը միաժամանակ առաջադրում է ազգի նյութական ու սոցիալական կյանքի բարեփոխմանը նպաստող իր միջոցները։ Ըստ Թերթի, ազգի «անսպառ առատ աղբյուրներն են երկրագործությունը և վաճառականությունը», իսկ «նորա կրթության միակ աղբյուրն է ուսանողությունը»[53]։ Այս նախադասությունների դիմաց թվեր են դրված և տողատակում մեջ են բերված Միքայել Նալբանդյանի ստեղծագործություններից հատվածներ։ Այսպես, «Միայն դատողություն է վաղուց արմատացած մեր ազգի մեջ, թե հայոց կաթողիկոսը կամ առաջնորդքը պիտի լինեին լուսավորության առաջնորդ և պատասխանատու. ոչ Մարկոսը և ոչ Կիրակոսը, այլ ինքը ազգը յուր ձեռքով պարտական է սերմանել, եթե կամենում է մի որևէ և սուրբ հունձ հնձել»[54]։ Իհարկե, «Պսակը» չի ընդունում առաջադրված հարցի նալբանդյանական լուծումը։ Հայտնի է, որ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը ելնելով իր այն դրույթից, թե «Ով անկարելի է հայոց ազգի հիմքը նորոգել, ուժ և զորություն դնել նորա մեջ, քանի որ ազգը, հասարակ ժողովուրդը, կարոտ է օրա-

կան հացի, քանի որ նրա տնտեսական խնդիրը կարգի չէ դրվում»[55], եզրակացնում է. «Եթե, վաղորոք խելք գործ չդրվի, առանց յուր հողով հանդերձ կատարելապես ազատ չթարգվի, և այս կերպով այն կնճիռը չլուծվի, առանց կացինով կվճռեն գործը»[56]։ Այնինչ, Միքայել Նալբանդյանը «Ստրկության մեջ, աղքատության մեջ չկա և չէ կարող լինել լուսավորություն» մատերիալիստական դրույթը զարգացնելով, հասցնում էր մինչև տնտեսական հեղափոխության գաղափարին, հող և ազատություն ձեռք բերելու համար միապետության դեմ գյուղացիության մղած հեղափոխական պայքարի տեսակետին։ Մինչդեռ «Փաստը» բարձրացնելով այն դրույթը, թե «...ազգի մտավոր առաջադիմությունը կախում ունի նրա նյութական կացությունից»[57], փորձում է տնտեսական կյանքի բարեփոխման միջոցները գտնել տնտեսության կազմակերպման այն ձևերի մեջ (գյուղատնտեսական ֆերմաներ, փոխատու-խնայողական ընկերություններ, հացի շտեմարաններ և այլն), որոնք արդեն կիրառվում էին ռուսական և արևմտաեվրոպական երկրներում։

«Գյուղատնտեսության բարվոքման նպաստելու միջոցները»[58] ծավալուն հոդվածաշարում այն միտքն է զարգացվում, որ գյուղատնտեսական ֆերմաները գյուղացիության հնարավորություն կտան տնտեսության մեջ ներդնելու տեխնիկական կատարելագործված միջոցներ։ Եվ այդ միջոցները ճիշտ օգտագործելու համար առաջարկվում են հետևյալ պայմանները.

ա) Բնակչության մեջ մատչելի գներով տարածել գյուղատնտեսության վերաբերյալ հանրամատչելի գրքեր։

բ) Գյուղական դպրոցներում ազատ ժամերին ուսուցիչների ուժերով կազմակերպել գիտա-մասսայական դրույցներ գյուղական տնտեսության տարբեր ճյուղերի վերաբերյալ։

գ) Ժողովրդական ուսումնարանների աշակերտներին հաղորդել գյուղատնտեսության վերաբերյալ գիտելիքներ։

դ) Գյուղերում ստեղծել գյուղատնտեսական շրջիկ դպրոցներ և այլն։



Մեկ այլ՝ «Գյուղական կրեդիտ»[59] (հեղինակ Գրիգորի Արզնեկյան) հոդվածաշարում կարևոր դեր և նշանակություն է տրվում գյուղական վարկին։ Կրեդիտը (փող փոխառնելու միջոցը) համարվում է «կանոնավոր տնտեսական կյանքի անհրաժեշտ պայմաններից մեկը»։ Առաջարկվում է Ռուսաստանում գործող փոխատու-խնայողական ընկերությունների օրինակով Երևանի նահանգում ևս կազմակերպել նման ընկերություններ։ Հոդվածագիրը մանրամասն ծանոթացնում է ընկերության անդամների պարտականություններին։ Պարզ է, որ ընկերության փայատեր անդամ էին դառնում նրանք, որոնք որոշ գումարներ էին մուծում ընկերությանը։ Չքավոր գյուղացիները, որ գումար չունեին մուծելու համար, արդեն փայատեր դառնալ չէին կարող։ Ուստի, փոխատու-խնայողական ընկերության ունևոր անդամը իր ձեռքում կենտրոնացնելով նյութական միջոցները, դրանք օգտագործում էր իր շահադիտական ու շահագործողական նպատակների իրականացման համար։ «Փաստ» թերթը չխորանալով նման հարցերի մեջ, շարունակում է պրոպագանդել նման ընկերություններ ստեղծելու վերաբերյալ իր կարծիքը։ «Հողագործական և արհեստագործական ընկերությունների կարևորությունը մեր ազգի համար»[60] հոդվածում թերթը դարձյալ շարունակում է պրոպագանդել իր միտքը, խրախուսել արևմտաեվրոպական երկրներում տարածում գտած կոոպերատիվ ընկերությունների նման ընկերությունների ստեղծման գաղափարը։ «Ամեն մի լուսավորված և քաղաքակրթված ազգի մեջ,— գրում է թերթը,— երբ մեկ անհատի ուժը չի բավականանում որևէ գործ գլուխ բերել, միանում են մի քանի անհատներ, կազմում ընկերություն և սկսում գործել միասին»[61]։ «Փաստը» տնտեսական կյանքի բարեփոխման հեռանկարներ է ակնկալում հողագործական ընկերություններից։ Մինչդեռ, հայտնի է, որ նման ընկերությունները, լինելով կապիտալիստական կոլեկտիվ հիմնարկություններ, նպաստում էին կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը։ Իսկ «Փաստը» պաշտպանելով կոոպերատիվ ընկերություններին, փոր-

ձում էր դրանց միջոցով բարելավված տեսնել գյուղացիության սոցիալ-տնտեսական իրավիճակը։

«Մշակը» ընդհանրապես չէր ժխտում ընկերավարական գաղափարների դերը հասարակական կյանքում։ «Ընկերավարական գաղափարները,— գրում է թերթը,— ապրում են այնքան ժամանակ, որքան տարիներ արդեն ապրում է աշխարհը։ Նրանք արտահայտվում են ավելի մեծ ուժով ամեն անգամ, երբ հասարակական ու տնտեսական պայմանները չեն լցուցանում ժողովրդի մեծ մասի պահանջը։ Բարեհաջող պայմանների մեջ նրանք ներգործում են օրենսդրական իշխանության, իրավաբանական ու տնտեսական փոփոխությունների վրա, բայց և այստեղ վերջանում է և պետք է վերջանա նրանց օգտավետ գործունեության իրավունքը»[62]։ Այս նշանակում է, որ թերթը «ընկերավարական» գաղափարների դերը սահմանափակում է միայն տնտեսական բարեփոխումների համար մղած պայքարի շրջանակներում։ Թերթը, չհասնելով դասակարգային պայքարի անհրաժեշտության ըմբռնմանը, սոցիալական հարցի լուծումը կապում է խաղաղ վերափոխումների հետ, հասարակական զարգացման գործում կարևորությունը տալիս է ռեֆորմին։ Ահա ինչու «Ժամանակակից քաղաքական անցքերի վրա»[63] հոդվածում թերթը դեմ է արտահայտվում եվրոպական երկրներում և Ռուսաստանում տարածում գտած հասարակական և քաղաքական ըմբոստ երևույթներին, որոնց, ինչպես թերթում է գրված, «հետևում են անգութ մահը և սարսափելի կախաղանը»[64]։

* * *

«Մշակ» շաբաթաթերթը լույս էր տեսնում այն ժամանակաշրջանում, երբ ցարական կառավարությունը վախեցած նոր ծավալ ստացած ազատագրական շարժումներից, ճնշում, ոչնչացնում էր այն ամենը, ինչ նոր ու առաջավոր էր, ինչ կարևոր ու անհրաժեշտ էր հայ ժողովրդի ազգային



կյանքի զարգացման համար։ Հետապնդումներն առանձնապես ուժեղացան հայկական դպրոցների նկատմամբ։ Արքունական դպրոցներից հանվում էր հայոց լեզվի դասավանդումը, արգելվում էր մայրենի լեզվով դասագրքերի հրատարակումը։ Հալածանքը դպրոցի նկատմամբ բացահայտ դարձավ հատկապես 1883 թ. մարտին, Երևանի «Հայասեր-ազգասեր» գաղտնի կազմակերպության հայտնաբերումից հետո։

1884 թ. հունվարին Պետերբուրգում կայացավ պետական խորհրդակցություն, ուր լուսավորության մինիստր Ի. Դ. Դելյանովի առաջարկով ընդունվեցին հայկական եկեղեցական դպրոցների նոր կանոնները։ 1885 թ. սկզբին ցարական կառավարությունը փակեց նոր կանոններին չենթարկվող հայկական բոլոր դպրոցները[65]։

Դեռ 1883 թ. «Մշակ» թերթի խմբագիրը կանխազգալով հայկական դպրոցների փակման մոտալուտ վտանգը, իր թերթի էջերում լայն քննարկման էր ենթարկում ազգային դպրոցների պահպանման, հայոց լեզվի դասաժամերի ավելացման, մատաղ սերնդի դաստիարակության հարցերը։ Ցարական բյուրոկրատիայի՝ հայ դպրոցի դեմ ծավալած պայքարը մեծ աղմուկ է առաջ բերում, սրվում են հակացարական տրամադրությունները և իրենց արտահայտությունը գտնում առաջադեմ մտավորականության մոտ ու «Մշակ» թերթի էջերում։

«Մշակում» դպրոցական հարցերի շուրջ և մանկավարժական թեմաներով հոդվածներ են տպագրել Սարիբեկ Տեր-Մելքիսեդեկյանցը, Հովհաննես Հեթումը, Թովմաս Մհերյանը, Սարգիս Բեկնազարյանը և ուրիշներ։ Անդրադառնալով հայոց ուսումնարանների պահպանման հարցերին, թերթը գրում է. «Բայց մենք բուն ազգային ուսումնարան չունենք. մեր ուսումնարաններն օտարներին նմանեցրածներն են...։ Մեզանում առարկաները դասավանդվում են ոչ ըստ կարևորության, ոչ ըստ նպատակահարմարության, այլ ըստ ձևի. այս ամենից եզրակացնում ենք, որ ազգային դպրոցներ մենք չունենք, որ եղածները ազգային անուն են լոկ կրում, այնինչ իրենց ուղղությամբ, իրենց ծրագրերով հետևողա-

թյուններ, նմանողություններ են մեկը մյուսին։ Եվ այս է պատճառը, որ մեր ապագա սերունդը ազգային կրթությունից, ազգային ոգուց, ազգային առանձնահատկություններից զուրկ է մեծանում...»[66]: Ըստ Թերզիի դպրոցը մատաղ սերնդից պետք է պատրաստի նրբին էությամբ բարի ու առաքինի, հայրենասեր ու ազգօգուտ գործերով զբաղվող սերունդ ապագա հասարակության համար։ Իսկ դրա համար խոսքը և քարոզը բավական չեն, այլ կարևոր է նաև կենդանի օրինակը։ Մինչդեռ դպրոցներում, հատկապես Գեորգյան ճեմարանում, ինչպես նկատում է Թերզին, «խոսքը և գործը չեն բռնում իրար»։ Այնտեղ ուսուցիչների մոտ իշխում է սուտը, կեղծիքը, շահամոլությունը։ «Այն ժամանակ, երբ ճեմարանում դաստիարակը իր սաներին քարոզի, թե մարդուս առանձին հարստությունը, մեծ գանձը, մեծ արժանավորությունը ճշմարտասիրության, ազնվության մեջ է, արդյոք այս խոսքերը լսող աշակերտը չի՞ ասիլ, կամ գոնե չի՞ մտածիլ, թե եթե այդ բացի լոկ հավակնալուց, պետք է և իրագործել, բաս դուք ինչու՞ չեք այդպես լինում։ Ինչո՞ւ եք ասում, խոսում, ընկերանում, բարեկամանում, կեղծավորում, շողոքորթում այնպիսուն, որին դուք և ամենքը ճանաչում եք ինչպես կաշառակեր, ստախոս, անպիտան»[67]: Ընդհանրացնելով նման փաստերը, Թերզին եզրակացնում է, որ քանի դեռ «անձնապաշտությունն է» իշխում այդ գործիչների մոտ, ազգը «խաբված ու խեղճ կլինի»։ Եվ քանի դեռ հայ ազգի առաջնորդները գործում են «անձնական օգուտներն ու շահերը պաշտպանելով ու պահպանելով», ապա հայը կշարունակի մնալ նույն խաբված ու խեղճ վիճակում։ Եվ մինչև նրանք չփոխվեն դեպի լավը, ապա միշտ կհալածվեն մեր ազգի զավակները[68]:

«Պսակ» թերթում բարձրացվում է գյուղական վայրերում կյանքի համար պիտանի սերունդ պատրաստող ուսումնարանների կազմակերպման հարցը, ուսումնարաններ, որտեղ սաներին կտրվեին գյուղատնտեսության զանազան ճյուղերի վերաբերյալ (անասնապահության, թռչնաբուծության, կաթնատնտեսության և այլնի) գիտելիքներ։ «Պսակ-



կը» ուսումնական վարչության և տեղական գործիչների ուշադրությունն է հրավիրում նման ուսումնարանների բացման հարցերի վրա։ Թերթում խրախուսանքի է արժանանում Կովկասի ուսումնարանների հոգաբարձու Յանովսկու՝ Երևան քաղաքից դուրս «Քալարի» կոչված ընդարձակ այգում երկրագործական ուսումնարան բացելու վերաբերյալ մտադրությունը։

«Պսակը» իր էջերում հոդվածներ է տպագրում նաև աղջիկների դաստիարակության հարցերի շուրջ։ Հովհաննես Հեթումյանն իր «Ի՞նչ ենք պատրաստում մենք մեր աղջիկներից»[69] ծավալուն հոդվածում նշում է, թե աղջիկների և կանանց դաստիարակության գործում որ հանգամանքների վրա պետք է առավել ուշադրություն դարձնել։ Դրանք են. «բարոյական ուսում, տնտեսագիտություն, մանկավարժություն, արհեստագիտություն և վերջապես տարրական մտավոր ուսումն»։ Ըստ հեղինակի, ուսուցիչները միաժամանակ պետք է սովորեցնեն աշակերտուհիներին՝ հեռու մնալ սնոտյա, աչք շլացնող պճնասիրություններից, պարզասիրություն ունենալ, մաքրասեր լինել և այլ նման դասեր։ Առաջարկվում է օրիորդաց ուսումնարաններում սահմանել առանձին բաժանմունքներ խոհանոցի համար, ուր «...բոլոր կենսական մթերքները և հարկավոր իրեղենները լինելով, աշակերտուհիները փորձերով սովորեն, թե ինչպես պետք է եփել այս ինչ ու այն ինչ կերակուրը, ինչպես պատրաստել այս ինչ ու այն ինչ ուտելիքը»։

Իգական սեռի դաստիարակություն ասելով, հոդվածագիրը հասկանում էր «ապագա մայրերի իրենց զավակների վերա ունենալիք խնամատարությունն ու բարոյական կրթությունը»։ Իսկ արհեստագիտություն սովորեցնել, նրա կարծիքով, նշանակում էր ուսումնարանների ծրագրերի մեջ մտցնել արհեստների ուսուցումը։ Այսինքն, պահանջվում էր իգական դպրոցներում աղջիկներին սովորեցնել ասեղնագործություն, կար ու ձև, անգամ ջերմապահություն, թռչնապահություն և այլն։ «Այս այսպիսի կրթություններից հետո,—գրում է նա,—հուսալի է, որ մեր աղջիկները կլինեն

կատարյալ մայրեր և մենք կունենանք կերպարանափոխված, ազնվացած գերդաստաններ ու ժողովուրդ»[70]։ Հոդվածագիրը համոզմամբ կրթված աղջիկներն ու կանայք միաժամանակ պետք է զինված լինեն հասարակական բարձր գաղափարներով, նույնիսկ այդ գաղափարները «ավելի բարձր, թանկ պետք է լինեն նրանց համար, քան կնությունը, մայրությունը, զավակներ մեծացնելը»։ Ընդհանրապես Թերթը գտնում է, որ աղջիկների ու կանանց կրթությունը չափազանց կարևոր նշանակություն ունի հասարակության քաղաքական կյանքի վերափոխման գործում։ Թերթը տպագրել է ուսուցիչ Արամ Մելյանի՝ Գայանյան օրիորդաց ուսումնարանի 16-րդ տարեդարձի առթիվ արտասանած ճառը, որտեղ նշված է. «...կնոջ կրթությունը պետք է համարել ծայրահեղ կարևոր գործ հասարակության համար»։

«Մշակը» առանձին կոչով դիմել է հայ կանանց ու աղջիկներին՝ ներգրավվել ազգօգուտ գործերի մեջ և Երևանում կազմակերպել կանանց մի ընկերություն։ Այդ կոչի արդյունքը լինում է այն, որ 1882 թ. ապր. Սրբուհի Խուդաբաշյանը կազմակերպում է հայ կանանց ընկերություն, որի վարչության անդամներ ընտրվում են Սրբուհի Խուդաբաշյանը, Աշխեն Եղիազարյանը, Վարվառա Օրբելին և Աննա Բայարդինյանը։ Թերթի էջերում սիստեմատիկաբար լուսաբանվում է ընկերության գործունեությունը։

«Մշակը» հանդես էր գալիս նաև մայրենի լեզվի դասավանդման դրվածքի բազմակողմանի քննարկմամբ։ Այսպես, Վասակ Փափազյանն իր «Երկու խոսք տեղական լեզուների դասատվության առթիվ» առաջնորդող հոդվածում քննադատաբար անդրադառնալով լեզուների դասավանդման հարցերին, ընդգծում է այն հանգամանքը, որ Երևանի, ինչպես նաև Կովկասի մյուս նահանգների դպրոցներում տեղական լեզուների դասավանդման ժամերը չնչին են։ Դեռ ավելին, «...տեղական լեզուների ուսուցիչները, օրինակ հայոց լեզվի ուսուցիչը ստանում է շատ աննշան ռոճիկ, 250 ռ., այնպես որ փոքրիշատե ընդունակ, փոքրիշատե բան իմացողը չի ցանկանում վարել այդ պաշտոնը և հայոց



լեզվի դասերը հետևաբար ակամա ընկնում են բախտախնդիր ու անընդունակ մարդկանց ձեռքը»[71]։ Ելնելով այս հանգամանքից, խմբագիրը դիմում է Երևանի գիմնազիայի դիրեկտոր Բրաժնիկովին, խնդրելով կարգավորել այդ գործը։ Նա նշում է նաև, որ նման գործում մեծ հաջողությունների են հասել վրացիները։ Ընթերցողներին դրանում համոզելու համար Թերթը տպագրում է «Վրացիների մասին»[72] հոդվածը և բացվածաբար մեջբերում ռուսական «Մտրանա» լրագրում վրաց լեզվի դասատվության վերաբերյալ Քութայիսի վրաց ազնվականության և ուսուցիչների բողոքի խոսքը՝ ուղղված ուսումնական շրջանի կառավարչին։ Այդ բողոք-խոսքում նշված էր այն մասին, որ վրաց հասարակությունը ոչ մի միջոց բաց չի թողնում իրեն «հետաքրքրող հարցը դրական ու գործնական հիմքի վրա դնելու համար»։ Հոդվածում միաժամանակ նշված է, որ ազգային լեզուն ժողովրդի «ամենասրբազան» և «անբռնաբարելի սեփականությունն է» և չի կարելի նրա փոխարեն «պատրաստել» օտար լեզու, «օտար ազգայնության հոգին»։ Եվ համոզված, որ «առանց մայրենի լեզվի չկա առաջադիմություն», հեղինակը կոչ է անում՝ հետևել վրացիների օրինակին, «այդ նախանձ շարժող գործին» և ձայն բարձրացնել ազգային լեզվի դասաժամերը հայկական դպրոցներում ավելացնելու համար։

Կրթական հարցերից զատ, Թերթը բարձրացրել է նաև թատրոնի, ժողովրդական գրադարան-ընթերցարանների բացման, մանկական ծաղկոցների ստեղծման և մշակութային այլ օջախների կազմակերպման հարցերը։ «Կրկնում ենք,— գրված է Թերթում,— որ մանավանդ այնպիսի մի ժողովրդի համար, ինչպիսին Երևանինն է, որ մինչև ի կոկորդ թաղված է տգիտության մեջ, նախանձկոտության ու նախապաշար միտումների մեջ, որ մինչև անգամ դպրոցների վրա նա է կասկածական աչքով նայում, որ բացի իր կոպեկն ու իր եսը ավելի ոչինչ չէ ճանաչում աշխարհիս վրա, անպատճառ հարկավոր են ուրիշ աղբյուրներ, որոնք առաջնորդի, ղեկավարի պաշտոն կատարեին»[73]։ Այդ կարևոր աղ-

բյուրներից են համարվում ժողովրդական մատենադարանը, Թատրոնն ու կուլտուր-կրթական այլ հաստատությունները։ Եվ քանի որ այդ տարիներին Երևանում գոյություն չուներ Թատերական մշտական խումբ[76], ուստի Թերթը հանդես էր գալիս տեղական ուժերից Թատերական մշտական խումբ կազմակերպելու առաջարկներով։

«Պատկեր» Երևանի երիտասարդության ուշադրությունը հրավիրում է նաև հասարակական գրադարան-ընթերցարանի բացման հարցի վրա։ Հորդորում է մտավորականությանը՝ այդ կարևոր գործին մասնակից դարձնել հենց իրեն՝ ժողովրդին։ Թերթը պահանջում է կազմակերպել ժողովրդի սրտին ու հոգուն մոտ գրքերի հրատարակության գործը, ինչպես և ստեղծել մի առանձին ընկերություն, որի նպատակը լինի «ձրի լինելուն չափ արժան գներով տարածել հայ ժողովրդի մեջ օգտավետ գրքեր»։

«Պատկեր» ուներ նաև «Մատենախոսություն» բաժինը։ Այստեղ տպագրվում էին գրքերի տեսություններ, գրախոսություններ, Թարգմանչական արվեստի վերաբերյալ տեսական հոդվածներ և այլն։ «Պատկեր» տպագրել է նաև գեղարվեստական գործեր, ինչպես նաև Ալֆոնս Էսկիրոսի «Տասն և իններորդ դարի էմիլ» մանկավարժական վեպը[77] (Գ. Սիմոնյանի և Ա. Մելյանի Թարգմանությամբ)։ Որպես բացատրություն տպագրված է հետևյալ ծանոթագրությունը. «Այդ գիրքը տասնութերորդ դարի ամենահռչակավոր հանճարներից մեկի՝ Ժան Ժակ Ռուսոյի գրած «ԺԸ դարու էմիլ»-ի շարունակությունն է և կատարելագործումը։ Ալֆոնս Էսկիրոսի գրքի նպատակն է՝ գեղարվեստական խոսքի միջոցով ցույց տալ դաստիարակներին, Թե ինչպես պետք է կրթել եռանդուն, հաստատակամ և ազնիվ մշակ՝ մարդկության բարօրության համար»։

Վասակ Պապաջանյանն իր Թերթի ծրագրին և ուղղությանը հոգեհարազատ համարելով «Արևելյան մամուլում» արտատպված Սրբուհի Տյուսաբի մի նամակը, տպագրում է այն ամբողջովին իր Թերթում[78]։ Տյուսաբի նամակում ասված է. «Բավական փչեց ատելության փուքը. բավական քանդեց,



բավական ավերեց։ Արդ դիրար սիրենք, մեկ հոգի ունենանք առաջադիմության ձգտելու և ծառայելու համար։ Հաստատելով այս միտքը, Թերթը գրում է. «Թո՛ղ մեր մամուլը, մեր հրապարակախոսությունը անուշադիր չմնան հայասեր տիկին Տյուսաբի այս երկրորդ առաջարկին ևս. Թող արծարծեն այս միտքը։ Այս դժվարին մտքի իրագործման մեջ մենք տեսնում ենք ազգի միության մեծ խնդիրը»[77]։

«Պատկեր» գեղարվեստական գործերում, հատկապես ֆելիետոններում, նշավակվում են ազգային գործիչների արգահատելի արարքները, ազգի մեծատունների ցոփ ու շվայտ կյանքը։ Այսպես, «Դժոխքի Թագավորներ» պատկերաշարում, որ տպագրված է «Ազգային կյանքից» ենթավերնագրի տակ, հերոսներից յուրաքանչյուրը կրում է իր վարքագծին համապատասխան ազգանուն, մեկը՝ Դիմակավորյան, մյուսը՝ Անամոթյան, երրորդը՝ Անպատկառելյան և այլն։ Նրանք բոլորն էլ ազգային ու հասարակական գործիչներ են, որ ամեն անգամ համարվում են շքեղ պալատներում՝ իրենց ժողովրդի ցավերը իբր հոգալու, սակայն ճարպկորեն լուծում են անձնական հարցեր։ «Տեսնում ես այս դահլիճը,— գրում է հեղինակը,— այստեղ կտեսնես ժողովված այն ավազակների խումբը, որի մասին ես քեզ քանի քանիցս պատմել եմ. դու կտեսնես այն խումբը, որ մեր ազգի հետադիմության, մեր մտավոր խավարության պատճառն է եղել»[78]։ Սակայն այս պատկերաշարի շարունակության տպագրությունը արգելվում է, հավանաբար պաշտոնյա անձանց (դատավոր, նահանգապետ և ուրիշներ) հասցեին ասված քննադատական խոսքերի համար։

Գեղարվեստական մի շարք պատկերներում («Որբի խնամակալը», «Սարգիս աղան», «Ագահության զոհը» և այլն) ճշմարտացիորեն ներկայացված են հարուստ վերնախավի տմարդի կերպարները։ Հատկանշական են աղայի բնութագրող հետևյալ տողերը. «Նա կեղեքում, մաշկում էր խեղճ ժողովրդին—սա ոտքի էր կանգնում, երբ նա անցնում էր, խոնարհ գլուխ էր իջեցնում, երբ նրան պատահում էր... Նա ամենախաբեբա, անարգանք, զզվելի մի հրեշ էր. Նա ճզմում

էր միամիտ ամբոխին, մզում, քամում ու խմում նրա արյունը-միսն ու ոսկորը գեն գցելով, բայց և դեպուտատ ասես նա էր ընտրվում, պատգամավոր՝ նա, պատվավոր՝ նա...»[79]։

* * *

Ինչպես նկատվեց, «Պսակը» չէր բավարարվում դեպքերի լոկ արձանագրությամբ։ Եվ չանսալով «Մշակի» այն խորհրդին, թե գավառական թերթը չպետք է համարձակվի քննելու ընդհանուր հարցեր[80], անդրադառնում էր ժամանակի հուզող գրեթե բոլոր հարցերին։ Թերթն իր ուշադրության կենտրոնում էր պահում նաև եկեղեցու և կրոնի հարցերը։ Այն քաղաքական անկախությունը կորցրած հայ ժողովրդի համար անհրաժեշտ է գտնում հոգևոր կենտրոնի գոյությունը։ Նման կենտրոնի դերը թերթի կարծիքով կարող էր կատարել եկեղեցին, քանի որ «չկա մի ուրիշ տեղ, որի հետ այնքան բարոյական, միևնույն ժամանակ համազգային հիշատակներ լինեն կապված»։

Իհարկե, թերթի խմբագիր Վասակ Պապազյանցը կրոնին և եկեղեցուն անսահման իրավունքներ չէր վերապահում։ Նա ժխտում էր կրթության ու դաստիարակության գործում եկեղեցու և հոգևոր դասի ղեկավար դերը, գրելով. «...կրթել, դաստիարակել ժողովուրդը կարող է միայն կրթվածն ու դաստիարակվածը», կամ «ժողովուրդը ինքը պետք է հոգա իր կրթության մասին»։

«Պսակը» անտարբեր չէր հոգևորականների շրջանում և ընդհանրապես եկեղեցու ներսում կատարվող անարդարացի գործերի նկատմամբ։ Ամենաամոթալին համարում էր էջմիածնի գանձարանի և Գևորգյան ճեմարանի փողերի վատնումը, որ կատարվում էր եպիսկոպոս Մանկունու միջոցով։ Վահրամ Մանկունին համարվում էր «ազգային հրեշը», որ բնակություն հաստատած լինելով ազգի սրբատեղում և օգտվելով Գևորգ IV կաթողիկոսի հիվանդությունից, «գողանում ու հափշտակում էր ազգի թանկագին հիշատակները»։ Թերթը տպագրում է վարդապետ Բարդուղիմեոս Գևորգյանի բողոքնամակը՝ ուղղված հոգևորականներին։ Նամակի պատճենը հեղինակը ուղարկում է կաթողիկոսին։ Նամակում մեղադրվում են այն հոգևորականները, որոնք իրենց իսկական պարտականությունները թողած, սուտ ու քսու գործերով են զբաղված։ «Մեր հոգևորականությունը,—գրված է այնտեղ,— իբրև հոտած-նեխած, գեշ՝ զզվելի է դարձած, ժողովուրդը երեսը դարձնում է և խորշում»[81]։ Նամակագիրը միաժամանակ կոչ է անում հոգևորականությանը՝ վերափոխվել, վերակրթվել։ Պետք է նշել, որ այդ բողոք-նամակի համար վարդապետ Գևորգյանը հալածանքների է ենթարկվում ինչպես կաթողիկոսի, այնպես էլ հոգևորականության կողմից։



Ընդունելով եկեղեցու և կրոնի դերն այն չափով, որ չափով այն սատար էր կանգնում ազգի միասնության ու ազգի գոյատևման գործին, «Պսակը» բանավեճի մեջ է մտնում «Մշակի» և «Մեղու Հայաստանի» թերթերի հետ։ Եթե «Մշակը» հոգևորականության բոլոր արատները վերագրում էր նաև եկեղեցուն, իսկ «Մեղու Հայաստանի» թերթը աշխատում էր ծածկել եկեղեցու պատերի ներսում կատարվող արատավոր երևույթները, ապա «Պսակը» քննադատելով հոգևորականներին, ինչպես վերը նշվեց, պահանջում էր վերակառուցել եկեղեցին ազգային կյանքի պահանջների համեմատ։ «Թո՛ղ հայը ամեն կերպ աշխատի իր եկեղեցին լավացնել, բայց երբեք նրանից չհրաժարվի։ Թո՛ղ հայը հալածի, պարսավի վատ հոգևորականին, թո՛ղ պատռի նրա երեսի դիմակը, թո՛ղ նրան պատժի, սպանի, երբ նա գող է, կաշառակեր է, չարագործ է, անպիտան է, բայց երբեք վատ հոգևորականներից զզվելով, նրանց արարքներից վիրավորվելով, դավաճան չհանդիսանա ազգի միության օղի, կապի դեմ, որոնց մեջ է պայմանավորված իրենց միության խորհուրդը...»[82]։

«Պսակը» էջմիածինը համարում է հայ ժողովրդի համար մի «սրբություն», որի անունը պետք է «պատկառանքով հիշել», առավել այնպիսի պայմաններում, երբ ազգը «կարոտ է այնպիսի հզոր մի կենտրոնի, որպիսին միայն էջմիածինը կարող է լինել»։ «Պսակը» հակադրվում է «Մշակին» այն բանի համար, որ վերջինս աշխատում է եկեղեցու դերը ընդհանրապես նսեմացնել։ Այսպես, Մանկունու սուտ և ամբարշտ

արարքները նկարագրելիս «Մշակը» փորձում է ստվեր գցել նաև Էջմիածնի հեղինակության վրա։ Իհարկե, աղանդավորականությունը իր գերիշխանությունը տնտեսական և քաղաքական գործերում հաստատելու համար պետք է ունենար կրոնի և եկեղեցու դերը սահմանափակելու, կրոնը ազգային գործերից զատելու, ազգությունը կրոնից տարբերակելու նկրտումներ։ Մինչդեռ, «Փսակը», որի խմբագրի հայացքներում նկատվում էին ազգային-պահպանողական միտումներ, պաշտպանում էր եկեղեցուն, համարելով այն «ազգի ամբողջությունը մարմնացնող հաստատություն»։ «Փսակը» հարցի նման ըմբռնումով էլ հակադրվում էր «Մշակին»։ Իհարկե «Փսակի» պայքարը «Մշակի» դեմ այն ընթացքը չունեցավ, ինչ «Մշակի» ու «Մեղու Հայաստանի» թերթերի միջև եղած բանավեճը։ «Մշակը» տարբերակում էր կրոն և ազգություն հասկացողությունները։ «Կրոնի արտաքին ձևերը, կամ հավատը, որ ամեն մարդու համոզմունքից է կախված,—գրում էր «Մշակը»,—ոչինչ կապ չունեն ազգության հետ, իսկ մեզ բոլորիս միմյանց հետ կապողը և մի ամբողջ ազգ դարձնողը՝ հայությունն է»[83]։ Ինչպես նկատվում է, «Մշակը» ազգության կապող օղը համարում է հայությունը, իսկ կրոնը և հավատը՝ «մարդու ցեղական հատկություն», «համոզմունք», որ օրգանապես կապված չեն «ազգության» կամ «հայրենի հողի հետ»։ Մինչդեռ, «Փսակը», որ նույնպես չէր հրաժարվում «կրոնը մարդուս ներքին համոզմունք» համարելուց, գտնում էր, որ «ազգության հիմունքը կազմում են գլխավորապես հողը և լեզուն. բայց մեզ նման այդ բաներից զրկված ազգերի կապը ազգային եկեղեցին է»[84]։ «Եկեղեցին է միայն այժմ մեր ազգի համար այն զորավոր տարրը,—գրում է թերթը,—որ շատ գյուղերի և ամբողջ գավառների արաբախոս, թրքախոս, քրդախոս, պարսկախոս, հնդկախոս, ռուսախոս և վրացախոս հայերին, իհարկե, Հայրենիքից էլ դուրս, միության կապով ցայսօր հայ է պահել»[85]։

«Փսակը» իր պայքարի սկզբն առաջին հերթին ուղղում էր «Մշակում» տպագրված այն հոդվածների դեմ, որոնցում պրոպագանդվում էր կրոնական դավանանքների ազատու-



թյունը, պաշտպանության տակ էր առնվում բողոքականների գործունեությունը։ Իհարկե, «Մշակը» նպատակ չուներ քարոզելու մեկ դավանանքի առավելությունը մյուսի հանդեպ։ Թերթի համար բոլոր կրոններն էլ «հավասարապես լավ ու օգտավետ էին»։ «Մշակի» կարծիքով ազգի յուրաքանչյուր անդամ կարող էր ցանկացած կրոնը պաշտել, միայն թե այս կամ այն դավանանքի առիթով թշնամություն և պառակտում չառաջացներ ազգի ներսում և պահպանվեր ազգի միասնությունը։ Ակնառու է, որ այս հարցում «Մշակը» և «Փսակը» միևնույն նպատակն են հետապնդում։ Բայց այդ նպատակին հասնելու ձևերի նախընտրության մեջ տարանջատվում են։

«Մշակը» միսիոներական գործիչներին պաշտպանելու գործում, անտարակույս, սխալվում է և արժանանում «Փսակի» իրավացի քննադատությանը։ «Մշակը» ընկնելով ծայրահեղության մեջ, հայտարարում է. «այսօր ավետարանական քարոզիչներն են, որ ս. գիրքը թարգմանելով 226 լեզուներով, գրականության նշույլն ու գաղափարն անգամ չունեցող վայրենի, կիսավայրենի ցեղերի մեջ տառեր, գրեր, գրականություն ու դպրություն են ստեղծել»[86]։ Այդ նույն թերթը գրում է, թե քարոզիչներն են Տաճկահայաստանում աշխարհաբար լեզվի առաջին հիմնադիրները ու մշակողները։ «Փսակը» հակադրվելով նման մտքերին, հայտարարում է, որ հոդվածի հեղինակ, հայ բողոքական գործիչ Ամիրխանյանը հավանաբար անտեղյակ է եղել այն փաստին, թե քարոզիչներից դեռ 120 տարի առաջ՝ 1685 թ. հայ ժողովուրդն ունեցել է աշխարհաբար լեզվով գրված գիրք։ Հայտնի է, որ ավետարանական քարոզիչները գործել են գաղութատիրական քաղաքականության իրականացման նպատակներից դրդված և ոչ միայն նպաստել են ազգային փոքրամասնության մշակութային կյանքի զարգացմանը, այլ ընդհակառակը, ետ են պահել այն, ներարկելով ժողովրդի մեջ ստրկամտություն, կույր հնազանդության ոգին։

«Փսակ» թերթը լայն տարածում է գտնում ինչպես Երևանի նահանգում, այնպես էլ նահանգից դուրս։ Այսպես, Ճամախի քաղաքից խմբագրությանն ուղարկված նամակում

գրված է. «Մեծ համակրություն են վայելում Շամախում պատվական «Պսակի» համարները։ Էջմիածնի սուրբ աթոռում ղանադան կողոպուտ և հափշտակություն՝ կորզողների սև պատկերների ճիշտ նկարագրություններ հրատարակող «Պսակի» անցյալ տարվա 31, 32, 33, 34, 35 և ներկա տարվա երկու համարները քաղաքումս տանից տուն և փողոցէ փողոց են պտտացնում»[87]։

«Պսակ» թերթը արժանացել է նաև օտար ափերում ցանվող հայության ուշադրությանը։ Փարիզում բնակվող հայ մշակութային գործիչ Վահրամ Թորգոմյանը «Պսակ» թերթին ուղղած իր նամակում գրել է. «Անկեղծորեն կըսեմ, ես, թե ինձ հասած թերթերուն մեջ Ձեր «Պսակն» իմ մտանավոր համակրությունն է գրաված։ Ուշադրությամբ կվերծանեմ նրա ամեն մի էջերը, որոնցում չեն տեսնվիր թեև ոչ գրագիտական բարձր խորհրդածություններ, ոչ գիտական կամ քաղաքական խորին տեսություններ, որ թեև ոչ Դանթեն կխոսի, կամ Լամարթինը կնվագի, սակայն հերիք է, որ նոցա մեն մի տողերն հայրենիք կբուրեն, և հայրենյաց դառնացի ցավերը կողբան և մեր հեռավոր հայ գյուղացու ազգային կենաց վրա ծանոթություններ մեզ կհաղորդեն»[88]։

«Պսակ» թերթը լայն տարածում գտնելով Երևանի նահանգի բնակչության մեջ, ժամանակին կարողացավ տեղ հասցնել դարի լուսավոր միտքն ու գաղափարները։ Այն աշխատավոր ժողովրդի սոցիալական-տնտեսական կյանքի բարվոքման, ազգային ու քաղաքական ազատության վերաբերյալ առաջադրած ծրագրերով, թեև հեռու էր կյանքի արմատական վերափոխման ուղիները նշելուց, այնուհանդերձ, իր առաջադիմական գաղափարներով ուրույն տեղ է գրավում հայ հասարակական մտքի ու մամուլի պատմության մեջ։

Գյուղի տերերին՝ կալվածատերերին, ինչպես թերթում է գրված, «նոր աղաներին», նահանգային վարչության անդամներին, ղեկավար այլ մարմինների գործունեությանը քննադատող հոդվածների համար «Պսակը» ձեռք է բերում վարչական օրգանների թշնամանքը։ Սկսվում է բամբա-



սանքի, ծաղրի, սպառնալիքի մի ամբողջ շարան թերթի ու նրա խմբագրի՝ Վասակ Պապաջանյանի դեմ։ 1883 թ. մարտին, երբ բացահայտվում է Երևանի «Հայասեր-ազգասեր», գաղտնի կազմակերպության գործունեությունը, կասկածի տակ է առնվում Պապաջանյանը և 1884 թ. դադարեցվում է նրա թերթի հրատարակությունը։

Հարկ է նշել, որ մինչ այսօր կենսագրական համառոտ տվյալներ անգամ չեն հրատարակվել «Պսակ» թերթի խմբագիր Վասակ Պապաջանյանի, այդ երախտավոր գործչի կյանքի, անցած ուղու մասին։ Աշոտ Աթանասյանի արխիվում եղած և անցյալի մամուլի էջերում տպագրված նյութերի հիման վրա փորձում ենք համառոտ լուսաբանել Երևանի առաջին թերթի խմբագրի կյանքն ու նրա՝ իր հարազատ ժողովրդին մատուցած ծառայությունները։

Վասակ Պապաջանյանը[89] ծնվել է Երևանում, 1847 թվականին։ Թիֆլիսի ռուսական գիմնազիան ավարտելուց հետո, նա ուսումը շարունակել է Գերմանիայում։ Սովորել է Հեյդելբերգի, Բոննի, ապա Լայպցիգի համալսարաններում, լսել Կանտի, Ֆիխտեի, Ֆայերբախի դասախոսությունները։ Փիլիսոփայության դոկտորի աստիճան ստացած նա վերադառնում է հայրենիք և Ղարաբաղի թեմական փոխանորդ Արիստակես Սեդրակյանի առաջարկով ստանձնում է Շուշու թեմական դպրոցի տեսչի պարտականությունները։ Վասակ Պապաջանյանին առաջին հերթին մտահոգում են դպրոցը ժամանակի առաջադեմ մանկավարժության պահանջների համեմատ վերակառուցելու խնդիրները։ Նա արևմտաեվրոպական ականավոր մանկավարժների կազմած ծրագրերի օրինակով մշակում է դպրոցական նոր ծրագիր։ Ըստ այդ ծրագրի հայկական դպրոցներում պետք է կարևորություն տրվեր հին լեզուների (հունարեն, լատիներեն) ուսուցմանը, բարձրացվեր ուսուցիչների աշխատավարձը և այլն։ Ծրագրում նախանշված խնդիրներն իրականացնելու նպատակով Պապաջանյանը դիմում է ուսումնական հոգաբարձությանը, գրելով. «Դուք միայն փող բաց թողեք (այն է տարեկան 2000 ռ.) և թույլ տվեք ինձ Տփխիս գնալ և ուսուցիչներ հրա-

վիրել և ինձանից սեպտեմբերի մեկին ձեր սրտի կամեցած դպրոցը պահանջեցեք»[90]: Նա թույլտվություն ստանում է և մեկնում Թիֆլիս: Պապաջանյանի միջնորդությամբ Շուշի են հրավիրվում առաջադեմ գաղափարներով ներշնչված, հայրենասեր, գործունյա ու բանիմաց ուսուցիչներ Արսեն Թոխմախյանը (հայոց լեզու և պատմություն), Զավադբեկ Իշխանյանը (ռուսաց լեզու), Գրիգոր Պապյանը (ընդհանուր պատմություն), Հովհաննես Լալայանը (մաթեմատիկա և գծագրություն) և ուրիշներ: Հրավիրելով նման ուսուցիչների, Պապաջանյանը նպատակ ուներ իրականացնել նախնիների վաղեմի երազանքը՝ դպրոցը դարձնել ժողովրդական մասսաների սեփականություն: «Ամեն ժամանակ, ամեն ազգաց մեջ հասարակական կրթությունն եղել է հայելին ազգային հանճարի և հասարակական սովորության,— գրում է նա,— բայց այդպիսի մի հայելի նա կարող է դառնալ միայն այն ժամանակ, երբ նա չէ լինել միայն կառավարչական գեն, այլ կդառնա ազգային սեփականություն, այսինքն, երբ նա կարող կլինի թափանցել ժողովրդի բոլոր դասակարգը, կազմելով ոչ միայն կառավարչական հոգացողության ու հսկողության առարկան, այլ շարժելով համակրություն և կոչելով ամեն տեսակ զոհաբերություն, կդառնա չափահաս ազգի առարկան»[91]:

Դաստիարակության և կրթության վերաբերյալ Պապաջանյանի նման հայացքները դուր չեն գալիս Արիստակես Սեդրակյանին: Նա փոխում է իր վերաբերմունքը կրթված ու զարգացած երիտասարդի նկատմամբ, ավելին, սկսում է հալածել նրան, պատճառաբանելով, թե «Պապաջանյանը չէ կատարել այնքան գրականապես արտահայտած իր խոստումը և առհասարակ պարտաճանաչ չէ իր պաշտոնի վերաբերմամբ»[92], նրանց հարաբերությունները այնքան են սրվում, որ Արիստակես Սեդրակյանը Պապաջանյանի դեմ 13 կետից բաղկացած մի մեղադրական բողոք է գրում և ուղարկում Հոգաբարձությանը: Էջմիածնի Սինոդը 1878 թ. մայիսի 8-ին Վասակ Պապաջանյանի՝ տեսչի պաշտոնից ազատելու մասին արձակում է հրաման[93], հանիրավի մեղադրելով նրան: Հոգա-



բարձությունը շտապում է կատարել Էջմիածնի Սինոդի հրամանը: Վասակ Պապաջանյանը ազատվում է աշխատանքից:

Վասակ Պապաջանյանի տեսչության շրջանը թեև մեկ տարի տևեց, այնուհանդերձ Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի կյանքում նշանակալի եղավ: Նրա օրոք գումարված ուսուցչական ժողովների շնորհիվ կարգի բերվեց դպրոցական գրադարանը, հիմնվեց թատերական խումբ, կազմակերպվեցին ներկայացումներ, կարգի բերվեց դպրոցի տպարանը, կանոնավորվեց աշխատանքային կարգապահությունը: Լեոն բարձր գնահատելով Վասակ Պապաջանյանի կատարած գործը, գրում է. «Ինչ որ պարտավոր է արձանագրել պատմությունը, դա այն է, որ Վասակ Պապաջանյանի միամյա տեսչությունը, եթե միանգամից ամենքին գոհացնող մի ուսումնարանական դրություն չստեղծեց, բայց և հին իրականության շարունակությունը չէր: Ընդհակառակն, դա մի բոլորովին նոր կյանքի առաջին տարին էր: Դպրոցն սկսում է կազմակերպվել նոր հիմքերի վրա»[94]:

Թողնելով Շուշու թեմական հոգևոր դպրոցը, Վասակ Պապաջանյանը վերադառնում է Երևան: Նա խմբագրում է «Հայկական աշխարհ» ամսագրի 1879 թ. Երևանում լույս տեսած միակ համարը: Այստեղ միաժամանակ Պապաջանյանը տպագրում է աշխատավորության տնտեսական ու սոցիալական թշվառ իրավիճակի մասին պատմող մի շարք հոդվածներ: Ապա նա հրապարակախոսական իր գործունեությունն ընդլայնելու նպատակով ձեռնարկում է «Պսակ» թերթի հրատարակության գործը: Խմբագրական, հրապարակախոսական աշխատանքից զատ, նա հասարակական կարգով վարում է նաև մի շարք պաշտոններ: 1881—1883 թթ. եղել է Երևանի քաղաքային ինքնավարության անդամ, 1883 թ.՝ քաղաքային վարչության անդամը, ապա նաև քաղաքագլխի պաշտոնակատարը: 1882—1883 թթ. Պապաջանյանը միաժամանակ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում վարել է փիլիսոփայության և մանկավարժության դասընթացները:

1885 թ. Վասակ Պապաջանյանը, ինչպես մեկ անգամ նշվել է արդեն, մեղադրվում է Երևանում գործող «Հայասեր-

ազգասերը» գաղտնի կազմակերպության աշխատանքներին մասնակցելու մեջ և աքսորվում Կովկասի սահմաններից։ Այդ առթիվ Աշոտ Աթանասյանն իր հուշերում գրում է. «Եվ երևանցիք կարծես ուրախացան, չէ որ դրանով արդարացավ նրանց այն կարծիքը, որ Վ. Փափազյանը «գժված է», որ նրանից միևնույն է ոչինչ չի դուրս գա, և Երևանի քաղաքային այգուց վերացավ ցիլինդրը գլխին, երկայն սև մորուքով այն անհանգիստ քաղաքացին, որը նյարդային շարժումներով այս ու այն կողմն էր վազվզում և որն այնքան պարզամիտ էր, որ կարծում էր, թե իր «Փասկով» նա իր հայրենի քաղաքին ու նրա քաղաքակրթությանը որևէ օգուտ է տալու»[95]։

1889 թ. աքսորավայրից վերադառնալուց հետո Փափազյանը Երևանում չգտնելով հոգեհարազատ միջավայր, հեռացավ հասարակական ասպարեզից։ Նա բնակության մշտական վայր ընտրեց Տաշկենդը, որտեղ էլ 1893 թ. վախճանվեց։



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ «ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ» ԱՄՍԱԳԻՐԸ (1881—1884)

Առողջապահության և բժշկական գիտության հարցերը հայ ժողովրդին հետաքրքրել են վաղ ժամանակներից։ Սակայն բնակչության բուժսպասարկման գործը և հայկական գավառների սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման հարցերը ուշադրության են արժանացել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո։

Անցյալի հայ գործիչների հիշողությունները վկայում են այն մասին, որ ռուսական զորքերի Երևան մտնելուց որոշ ժամանակ անց ձեռնարկվում են մի շարք միջոցներ՝ բնակչության առողջական վիճակի բարելավման ուղղությամբ։ XIX դարի 50-ական թվականներին Երևանում սահմանվում են նահանգական բժշկի, քաղաքային բժշկի, քաղաքային բժշկի օգնականի պաշտոններ։ 1880 թ. յուրաքանչյուր գավառում հիմնվում է չորս մահճակալանոց հիվանդանոց՝ բուժարանով և դեղատնով։ Երևանում կառուցվում է նոր շենք զինվորական հոսպիտալի համար։ Հետագայում նման հոսպիտալներ բացվում են նաև Ալեքսանդրապոլում, Ջալալօղլիում, Աշտարակում և այլ վայրերում[1]։ 1890 թ. Երևանում բացվում է առանձին բուժարան, ինչպես նաև 12 մահճակալանոց հիվանդանոց՝ թերապևտիկական և վիրաբուժական բաժանմունքներով[2]։ 1880 թ. սեպտեմբերին քաղաքային վարչությանը կից ստեղծվում է առողջապահական հանձնաժողով, որի նախագահ ընտրվում է Դորպատի համալսարանի բժշկական ֆակուլտետի շրջանավարտ Լևոն Տիգրանյանը։ Այդ հանձնաժողովին տրամադրվում է ընդամենը երկու սայլ, երեք

սանիտար և երկու բանվոր։ Հանձնաժողովը մշակում է առանձին կանոններ՝ շուկայի մաքրման, փողոցների բարեկարգման, բաղնիքների բարելավման, առուների ծածկման վերաբերյալ[3]։

Առողջապահական հանձնաժողովի նախագահ Լևոն Տիգրանյանը հաճախ հանդես է գալիս հրապարակային դասախոսություններով։ Նա բնակչության բուժսպասարկման գործը կարգավորելու իր բոլոր պահանջները ներկայացնում է քաղաքային դումայի քննարկմանը։ Սակայն նրան հաջողվում է այդ պահանջների միայն չնչին մասը իրականացնել, քանի որ «քաղաքային վարչությունը ոչ թե համակրում է և օգնում է, այլ երբեմն աշխատում է խանգարել առողջապահական հանձնաժողովի գործունեությանը»[4]։ Վերջապես զգալով, որ անօգուտ է նման պայմաններում իր գործը շարունակել, Տիգրանյանը հրաժարական է տալիս։ Այդ առթիվ նա գրում է. «Մնալով անօգնական վարչությունների կողմանէ և տեսնելով, որ առանց դրանց օգնության ես անկարող եմ առողջապահական գործը կանոնավոր կերպով Երևանում առաջ տանել, հրաժարվեցի առողջապահական հանձնաժողովի աշխատանքներից, որ ես սիրահոժարությամբ ընդունել էի ձրիապես կատարելու, ինչպես իրավասու, ինչպես Երևանի որդի»[5]։

Լևոն Տիգրանյանի հրաժարականից հետո քաղաքագլուխ Ղորղանյանցը հանդես է գալիս «Մշակ» թերթում առանձին հոդվածով։ Նա փորձում է հերքել Տիգրանյանի՝ քաղաքային դումայի հասցեին արված մեղադրանքները։ «Եթե նա (Լ. Տիգրանյանը— Ա. Ն.), —գրում է նա,— ունենար համբերություն կշռադատել միջոցների այն սակավությունը, որոնցով վարչությունը գործ է կատարում և այն անհաջող հանգամանքները, որոնցով պատած է քաղաքային կառավարությունը, շատ կարելի է հավանար, որ վարչությունից սրանից ավելի պահանջելը կատարյալ անարդարություն է և նրա անգործությունից մեռելահոտություն զգալը՝ դիակահատության հետևանք է, որն որ բնական է դրանով պարապողների հոտոտելիացը»[6]։



Լևոն Տիգրանյանի հրաժարականից հետո քաղաքի ու նրա բնակչության համար այնքան օգտաշատ գործունեություն սկսած առողջապահական հանձնաժողովը կազմալուծվում է։ Գրեթե բոլոր հայ բժիշկները պրակտիկ գործունեության համար չունենալով լայն հնարավորություններ, ավելի շատ զբաղվում էին բժշկական-լուսավորական աշխատանքներով, բժշկական գիտելիքների պրոպագանդայով։ Լևոն Տիգրանյանը նույնպես նախընտրում է բժշկական-լուսավորական աշխատանքը և հրապարակախոսական գործունեությունը։ Նման պայմաններում առաջ է քաշվում բժշկական պարբերականի հրատարակության հարցը։ Երևանում այդ գործի առաջին ձեռնարկողը բժիշկ Լևոն Տիգրանյանն էր։ Նա 1881 թ. դիմում է Կովկասի մամուլի գործերի գլխավոր վարչությանը Երևանում «Առողջապահական թերթ» անունով ամսագրի հրատարակության իրավունքը ձեռք բերելու համար։ Նույն թվականին նրան հաջողվում է ստանալ ամսագրի հրատարակության թույլտվությունը[7]։

Լևոն Տիգրանյանի ձեռնարկած գործը մամուլի և առանձին մտավորականների կողմից խրախուսանքի է արժանանում։ «Մեղու Հայաստանի» թերթը գրում է. «Հաստատ աղբյուրից լսում ենք, որ մեծ պ. բժիշկ Լևոն Տիգրանյանը մտադիր է հրատարակելու «Առողջապահական թերթ» անունով բժշկական օրագիր Երևանում։ Հասկանալի է այդպիսի թերթի օգուտը, երբ աչքի առաջ ունենանք այն հակաառողջապահական պայմանները, որոնց մեջ գտնվում է հայ ժողովրդյան կյանքը, ուստի և ցանկանում ենք պարոնին կատարյալ հաջողություն այդ հասարակաօգուտ ձեռնարկության մեջ»[8]։

«Առողջապահական թերթ» ամսագրի առաջին համարը լույս է տեսնում 1881 թ. հուլիսի մեկին։ Այն հրատարակվում է ամիսը մեկ անգամ, յուրաքանչյուր համարը՝ 1—2 տպագրական մամուլ ծավալով։ Առաջին համարի առաջին էջի վրա գրված են հետևյալ խոսքերը. «Բժշկականությունը գործադրվում է նաև վայրենի ազգերի մեջ, իսկ առողջապահորեն ապրում են միայն լուսավորյալ ազգերը»։


ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԹԵՐԹ
ՄԻԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ
№ 1 ՅՈՒԼԻՍ № 1
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
ԵՐԵՒԱՆ
1881

«Առողջապահական թերթ» ամսագրի շապիկը

«Առողջապահական թերթ» ամսագրի հրատարակման աշխատանքներին ակտիվ մասնակցում էին բժիշկներ Ա. Հովհաննիսյանը, Ա. Բաբայանը, Գ. Տեր-Գրիգորյանը, Ա. Շահադիզյանը, Բ. Նավասարդյանը և ուրիշներ։ Ամսագիրը լույս էր ընծայում հետևյալ ծրագրով։ 1 Գիտական կարգադրություններ ժողովրդի առողջության վերաբերյալ։ 2 Առողջապահական հոդվածներ աշխարհիկ ոճով[9], ժողովրդի առողջապահական պայմանները, բժշկական արհեստը ժողովրդի մեջ, բժշկականությունը ժողովրդականացած։ 3 Բժշկական մասնախոսություն։ 4 Խառն լուրեր և հայտարարություններ։

«Առողջապահական թերթը» առաջին իսկ համարից մեծ տարածում է գտնում Երևանի նահանգի բնակչության մեջ։ Առաջին տարում բաժանորդների թիվը հասնում է մոտ 480-ի։ Այդ փաստը խրախուսում է խմբագրին։ Նա համոզվում է, որ եթե «Առողջապահական թերթն» երկրորդ տարվա ընթացքում ունենա նույնքան բաժանորդ, դա կլինի ապացույց, որ մեր ժողովուրդն այնքան հասուն է, որ հարկավոր է համարում «Առողջապահական թերթի» կարևորությունը[10]։

Գերմանացի գիտնական և միաժամանակ հնագետ Ռ. Շ. Վիրխովը, որ 1881 թ. սեպտեմբերին հնագիտական ժողովին մասնակցելու առիթով գտնվում էր Թիֆլիսում, ծանոթանալով «Առողջապահական թերթին», գրել է. «Եթե այդ թերթը հաջողություն ունենա ձեր ժողովրդի մեջ, դա կլինի ապացույց, որ հայոց ազգում կա մի դասակարգ, որ գտնվում է կարգացման մի որոշ բարձր աստիճանի վրա»[11]։

Ամսագրի առաջին համարն արժանանում է նաև հայ հրապարակախոսների բարձր գնահատականին։ Գրիգոր Արծրունին իր շնորհավորական խոսքն է ուղղում բժիշկ Լևոն Տիգրանյանին, գրելով. «Մենք հավատացած ենք, որ բժիշկ Տիգրանյանի գործը կաջողվի, որովհետև նա հանձն է առել այնպիսի գործ, որին անշմարիտ անդյակ է։ Շնորհավորում ենք բժիշկ Լևոն Տիգրանյանին իր սկսած գեղեցիկ գործի համար և խորհուրդ ենք տալիս հայ հասարակությանը շատ գովել «Առողջապահական թերթը» միամսյա հանդեսին»[12]։

«Առողջապահական թերթը» լայն տարածում էր գտնում ինչպես Երևանում, այնպես էլ Մոսկվայի, Թիֆլիսի, Կիևի, Էրզրումի և այլ վայրերի հայության մեջ։

Ամսագրի առաջնահերթ խնդիրն էր՝ պայքար կազմակերպել ժողովրդի մեջ դարերով արմատացած անցյալի այն սովորությունների դեմ, որոնք խոչընդոտում էին առողջապահական կանոնների և բժշկական գիտելիքների տարածմանը։ Դրա համար անհրաժեշտ էր կենցաղում պարտադիր դարձնել բժշկի կողմից բնակչությանը արված խորհուրդների կատարումը։ Եվ այն բանի համար, որ ժողովուրդն անտեղյակ է մնացել «առողջապահության» գիտությանը, Լ. Տիգրանյանը մեղադրում է բժիշկներին։ «Այո,— գրում է նա,— մենք հայ բժիշկներս,— մենք ենք մեղավոր ազգի առաջ, որ հայերը չգիտեն պահպանել ոչ իրենց առողջությունը, ոչ իրենց հիվանդին։ Մեր այս պակասությունը լրացնելու համար մի քանի հայ բժիշկների օգնությամբ ես ձեռք զարկեցի հրատարակել առողջապահական այս ամսաթերթը, որ սովորեցնենք հայերին, թե մարդ ինչպես պետք է ապրի, ինչ կանոնների պետք է իրեն ենթարկի առողջ կամ հիվանդ ժամանակ, որ առողջ ժամանակ նրա առողջությունը սակավ խանգարվի, միշտ զվարթ լինի, իսկ հիվանդ ժամանակ կարողանա պահպանել իրեն, որ պակաս տանջվի ու շուտ առողջանա։ Այս նպատակին կհասնենք տպագրելով թերթիս մեջ աշխարհիկ, հասկանալի ոճով առողջապահական գիտությանը վերաբերյալ հոդվածներ ու խորհուրդներ, որպեսզի տարածենք ժողովրդի մեջ առողջապահության գիտության գաղտնիքը, որ բժշկականության ամենապտղատու ճյուղերից մեկն է։ Կարդացե՛ք, սովորե՛ք, հետևեք առողջապահությանը և դուք կլինեք ավելի հարուստ, որովհետև աշխատանքից ետ չեք ընկնի, կլինեք ավելի առողջ ու զվարթ...»[13]։

«Առողջապահական թերթ» ամսագիրը լուրջ ուշադրություն է դարձնում շրջապատի ու միջավայրի սանիտարական վիճակին, վարակիչ հիվանդությունների կանխմանը, մատաղ սերնդի բուժսպասարկմանը, ֆիզիկական դաստիարակությանը, դպրոցական հիգիենային, մոր և մանկան առողջությանը, նորածին երեխայի խնամքին վերաբերող հարցերի վրա։



Բնակչության առողջության համար չափազանց կարևոր համարելով անձնական հիգիենայի և շրջապատի սանիտարական վիճակի պահպանումը, խմբագիրն առաջին հերթին պայքար է կազմակերպում հակահիգիենիկ երևույթների դեմ։ Վարակիչ հիվանդությունների փոխանցման աղբյուրներին ծանոթացնելու համար նա բացատրական լայն աշխատանք է տանում բնակչության մեջ։ «Հիվանդին պետք է բժշկել, այլ նաև հիվանդության առաջն առնելու։ Այս է եղել նրա գործունեության նշանաբանը։ «Պետք է հիվանդության առաջն առնել» հոդվածում գրում է. «Գիտությունը պահանջում է մաքրությամբ ու հոգացողությամբ հիվանդությունների առաջն առնել»[14]։

Ուշագրավն այն է, որ առողջապահության հարցերը քննարկվում էին բնակչության տնտեսական, սոցիալական հարցերին սերտորեն կապակցված։ Այդ տարիներին, ինչպես յուրաքանչյուր առաջադեմ մտավորական, առավել ևս Լևոն Տիգրանյանը հիվանդությունների առաջացման ու տարածման դրդապատճառները տեսնում էր աղքատության ու տգիտության մեջ։ Անդրադառնալով նյութական միջոցներից զուրկ հայ համալսարանականների կյանքին, նա գրում է. «Աղքատությունը և իբրև հետևանք վատ սենյակը, վատ սնունդը, չափազանցությունը աշխատության կամ զվարճության մեջ, ֆիզիկական ու բարոյական հազար ու մեկ տանջանքները թուլացնում են պանդուխտ ուսանողին և ինչպես ասում են, պարարտացնում են նրա մարմինը թոքախտի թույնը ստանալու»[15]։

Տպագրելով Ցյուրիխի համալսարանի դոկտոր Հաարի «Կրթություն և հիվանդություն» դասախոսությունից մի հատված, ուր արտահայտվում է այն միտքը, թե քաղաքակրթված ազգերի մոտ ավելի պակաս են տարածում գտնում հիվանդությունները, Տիգրանյանը «հոգևոր կամ մարմնավոր ղեկավարների» ուշադրությունը հրավիրում է ժողովրդի միջից

ազնվությունը և ազգասիրությունը վերացնելու հարցերի վրա։ Սակայն չհանդիպելով արձագանքի, նախատում է նրանց «միշտ անսիրտ ու փողապաշտ լինելու», «միշտ բարիքի հակառակ ընթացք բռնելու» համար։ Թերթում մեջ են բերված Ցյուրիխի համալսարանի դոկտոր Հասրի խոսքերը. «Երբ մեկ ազգ վարում է մտավոր կյանք, աշխատասեր է, նրա առողջապահական դրությունն էլ բարվոքվում է, ամրանում է նրա ֆիզիկական կազմվածքը, որովհետև անհետանում են աղքատությունը, աղտոտությունը, նույնպես և վատ սովորությունները»[16]։

Լևոն Տիգրանյանը միաժամանակ լինելով քաղաքային բժիշկ, չէր կարող չանդրադառնալ Երևանի բնակչությանը խմելու մաքուր ջրով ապահովելու, ճահիճները վերացնելու, ընդհանրապես քաղաքի սանիտարական վիճակը բարելավելու հարցերին։ «Երևանը առողջապահական կետից» Գայանյան օրիորդաց ուսումնարանում կարդացած իր դասախոսության մեջ նա առաջարկում է խմելու մաքուր ջուրը Երևան բերել Բաշգեղից, որը գտնվում էր Երևանից ոչ հեռու։ Իսկ «Զրույցներ առողջապահության մասին» թարգմանական հոդվածում զարգացվում է այն միտքը, թե քաղաքային առողջության պահպանման նախապայմանը սնունդն է։ Աշխատանքի ընթացքում կորցրած ուժերը աշխատավոր մարդը վերադարձնում է միայն սննդարար նյութերի միջոցով։

Ամսագրի էջերում քննարկման նյութ են դառնում նաև Երևանի փողոցներում թափառող աղքատներին կացարաններով ապահովելու և աշխատանքի տեղավորելու հարցերը։ Այդ հարցերի լուծման վրա է բևեռում խմբագիրը հասարակության ուշադրությունը, գրելով. «Յուրաքանչյուր հասարակություն, թե՛ քաղաքի, և թե՛ գյուղի, ունի իր աղքատները, որոնց մասին նա պետք է հոգա, որովհետև այդ հոգացողությունը նրա բարոյական պարտականությունն է։ Բացի այդ, հասարակության օգուտը պահանջում է, որ նա հոգա իր աղքատների մասին»[17]։ Տիգրանյանը առաջարկում է աղքատների համար հիմնել ուսումնարաններ, տալ նրանց համապատասխան աշխատանք։ Եվ նման միջոցներով նա ցանկանում



է բարեփոխված տեսնել ազգի և՛ նյութական, և՛ հոգևոր կյանքը։ Նա շեղվելով բժշկական և առողջապահական հարցերից, քննադատում է բուրժուական աշխարհի նորամուտ բարքերը։ Փորձում է ցույց տալ, որ ժամանակի հասարակության մեջ փողը ապականում է մարդկանց, մեկին հոգով է աղքատացնում, մյուսին՝ մարմնով տկար դարձնում։ Իսկ ուսում առած ճարպիկ երիտասարդն իր գիտելիքները ծառայեցնում է միմիայն հարստանալու գործին։ Ուսումնավոր երիտասարդը վերադառնում է հայրենիք՝ «ճարպիկության» առաջ տանելու իր անբարոյական գործերը։ «Հասարակության մեջ ավելանում է մեկ խելոք անպիտան, որ բարոյականության դեմ ապականում է հասարակությունը և կրթության գործը մի քանի քայլ ետ մղում»[18]։ Իսկ որոշ երիտասարդներ էլ ուսումնառության տարիներին ցոփ ու շվայտ կյանք վարելով, հայրենիք են վերադառնում ֆիզիկապես հյուծված, առողջությունը կորցրած, «նրանց ոգին հոժար է գործելու, բայց մարմինը տկար է»։ Ուրեմն, ինչպես հեղինակն է եզրակացնում, հանրօգուտ աշխատանքով զբաղվող, ֆիզիկապես ու հոգեպես առողջ սերունդ դաստիարակելու համար անհրաժեշտ է նյութական ապահով կյանք և մտավոր ու հոգևոր բավարար կրթություն։ Սակայն թե՛ մեկը, և թե՛ մյուսը այդ տարիներին բացակայում էին հայ իրականությունում։

Խմբագիրն իր առաջնահերթ խնդիրն է համարում ամսագրի էջերում կոնկրետ միջոցներ մշակել դպրոցները սանիտարական ու առողջապահական վատ վիճակից դուրս բերելու համար։ Նա նամակներով դիմում է ժամանակի ականավոր մանկավարժների օգնությանը, օգտվում նրանց տպագիր և ձեռագիր աշխատություններից։ Այսպես, Երևանի թեմական դպրոցի տեսուչ Սարգիս Բեկնազարյանի «Առաջնորդ մարմնական, մտավոր և բարոյական կրթության, ուսուցիչների և հասկացող ծնողների համար» անտիպ աշխատության համառոտ տեքստը տպագրված է հետևյալ ծանոթագրությամբ. «Աշխատասիրողը հասկացել է, որ մտավոր և բարոյական կրթությունը կախումն ունի մարմնի առողջության հետ և աշխատել է շոշափելի դարձնել առողջապահության վերաբեր-

յալ այն կետերը միայն և այն չափով, որքան հարկավոր են եղած իր նպատակին. այդ պատճառով էլ՝ թեև ընտրած նյութերը բացատրված են համառոտ, բայց բոլորովին համապատասխան են գիտությանը, ուստի և կրկնում ենք, որ մեր ընթերցողներն իմաստասիրեն և ոչ լոկ կարդան»[19]: Սարգիս Բեկնազարյանի աշխատությունը, որ տպագրված է «Մեր մարմինը առողջ պահելու ընդհանուր պայմանները, կամ մի համառոտ հայացք մարմնական (ֆիզիկական) կրթության մասին» վերնագրով, բացատրում է գլխավորապես դպրոցական առողջապահության կազմակերպման հարցերը: Պահանջվում է դպրոցներում ունենալ ուսուցչական և հոգաբարձական խորհրդարան, ընթերցարան, մատենադարան և ամենակարևորը՝ մարզարան, որ «կարելի լինի ձմեռվա ընթացքում մարմնամարզական վարժությունները շարունակել»: Այս հեղինակը նկատում է, որ անչափ կարևոր է ֆիզիկական դաստիարակության լավագույն ձևով կազմակերպումը մատաղ սերնդի՝ ապագա քաղաքացիների «մտքի առողջության» և «մարմնի առողջության» համար: Հոդվածում նշված է նաև այն մասին, որ մանուկների համար հրատարակվող դասագրքերը պետք է լինեն դյուրըմբռնելի ոչ միայն բովանդակությամբ, այլ նաև արտաքին ձևավորմամբ: «Զոր օրինակ, տիպը, նկարը և բոլոր գծերը այնքան պարզ, այնքան պայծառ ու մեծ լինեն, որ առանց դժվարության՝ աչքից մի կանգունաչափ հեռու եղած ժամանակը ճիշտ տեսնվին նրա յուրաքանչյուր մասերը»[20]:

Մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության գործում կարևորությունը տրվում է հատկապես մարմնամարզությանը: Շրեբերի «Տնային բժշկական մարմնամարզություն» գրքի լույս ընծայման առթիվ տպագրված հոդվածում, բարձր գնահատելով մարմնամարզության դերն ու նշանակությունը, Լևոն Տիգրանյանը գրում է. «Մարմնամարզությունով առողջացվում են շատ հիվանդություններ և հարկավոր է ամեն մարդի, ով որ կամենում է միշտ զվարթ լինել, կանոնավոր մարսողություն ունենալ, կարողանալ ընդդիմադրել շատ հիվանդություններին»:



Ամսագրում կարևոր տեղ է տրվում աշխատանքային դաստիարակության հարցերին: Գյուղական դպրոցներում, ուր ամառները վնասվում էին դասասենյակները, գույքը, պարտադիր էր համարվում հյուսնի աշխատանքի ուսուցումը: Ամսագրի կարծիքով աշակերտներն իմանալով հյուսնություն, նախ կվերանորոգեն դպրոցական գույքը, ապա հետագայում, օգտակար կլինեն աշխատանքի վայրում, տանը և այլուր: Մյուս կողմից ֆիզիկական աշխատանքը կամրապնդի նրանց մարմինը: Այդ իսկ պատճառով ամսագրի խմբագրությունը դիմելով ուսուցիչներին, գրում է. «Որեմն պատվելի գյուղական ուսուցիչներ, եթե ցանկանում եք ժողովրդի բարօրությունը, որը կայանում է մատաղ սերնդի լավ դաստիարակումը և որը ձեզ է հանձնված, աշխատեցեք ուրեմն թարմ պահել և զարգացնել նույն ֆիզիկական ուժերը, որպեսզի ձեր ցանած սերմերը արմատ բռնել կարողանան»[21]:

Ֆիզիկական և աշխատանքային դաստիարակության հարցերը հայ մանկավարժների կողմից քննարկվել են և նախորդ տարիներին: Նրանց ստեղծած մանկավարժական ամբողջ սիստեմը, հատկապես Խաչատուր Աբովյանի հայացքները համակված են արևմտաեվրոպական ու ռուսական մանկավարժության առաջադեմ գաղափարներով: Առաջադեմ մանկավարժության սկզբունքների կիրառումը նկատելի է նաև «Առողջապահական թերթ» ամսագրում: Այստեղ խմբագիրը ելնելով իր ժամանակի պայմաններից ու հանգամանքներից, հետապնդում է մի այլ կարևոր նպատակ ևս: Աբովյանական գաղափարներով տոգորված խմբագիրը չէր կարող չմտահոգել օտար լծի տակ տառապող հայրենի ժողովրդի բախտը: Ուստի, ազգային ազատագրական պայքարի ծավալման տարիներին նրա հեռահար նպատակն էր՝ մատաղ սերնդից պատրաստել ֆիզիկապես կոփված և ազգի ազատագրության գործին նվիրված հայրենասեր քաղաքացիներ:

Նկատելով, որ դպրոցներում ուսումնական ծրագրերի մեջ մտցված չեն առողջապահության վերաբերյալ և ոչ մի դասընթաց, նա «Ուսումնարանների գլխավոր թերությունը»[22] հոդվածում առաջ է քաշում առողջապահական առարկա-

կան կանոնների ուսուցման անհրաժեշտության խնդիրը: Խնդրի իրականացման համար նա դիմում է ծնողներին, գրելով. «Հայրեր ու մայրեր, պահանջեցեք դաս տալ ուսումնարաններում առողջապահություն, եթե սիրում եք ձեր զավակներին»[23]: Իր այդ պահանջը Տիգրանյանը ներկայացնում է 1882 թ. կայացած ուսուցչական ժողովի կարգադրիչ հանձնաժողովին: Լևոն Տիգրանյանն առաջինը գրում և հրատարակում է «Մարդակազմություն» գիրքը, որը տարիներ շարունակ որպես դասագիրք օգտագործվում է հայկական դպրոցներում:

«Առողջապահական թերթ» ամսագրի կողմից պակաս ուշադրության չեն արժանանում նաև մոր և մանկան առողջության պահպանման հարցերը: Երևանում, ուր այդ տարիներին մեծ չափերի էին հասնում երեխաների մահացության դեպքերը և ձեռք չէին առնվում լուրջ միջոցներ, անչափ կարևոր էր դառնում ծնողների շրջանում բժշկական և հիգիենիկ գիտելիքների տարածման գործի կազմակերպումը: Լևոն Տիգրանյանի «Առողջապահական թերթ» ամսագիրը առաջինն էր, որ մատչելի ձևերով, պարզ ու հասկանալի լեզվով օգտակար խորհուրդներ էր տալիս մայրերին՝ երեխաների առողջության պահպանելու վերաբերյալ: Մոր և մանկան առողջության պահպանման հարցերի վերաբերյալ հոդվածներ են տպագրում Լևոն Տիգրանյանը, Արտեմ Հովհաննիսյանը, Վահան Արծրունին:

Ամսագրի հիմնական նպատակն էր՝ ժողովրդի կենցաղում արմատավորել բժշկական այն միջոցները, որ գործադրվում էին վաղուց արդեն քաղաքակիրթ երկրներում այս կամ այն տարափոխիկ հիվանդությունների ու նրանց տարածումը կանխելու համար: Ժողովրդի լայն խավերի, հատկապես գյուղացիության մեջ որևէ հիվանդության դեմ պատվաստում կատարելիս բժիշկները հաճախ հանդիպում էին դիմադրության: Ամսագրի խնդիրն էր՝ կազմակերպել պայքարը նման նախապաշարմունքների դեմ: Հիվանդությունների առաջացման պատճառների, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների բուժման վերաբերյալ հոդվածներ են տպ-



տագրվում նաև ռուսական («Մեդիցինսկի վեստնիկ», «Ռուսկի նարոդնի ուչիտել», «Վեստնիկ կրասնոյե կրեստա»), արևմտաեվրոպական („La medecine populaire") և այլ ամսագրերից:

Անցյալ դարի 80-ական թվականներին Երևանի բնակչության մեծ մասը դեռևս չգիտեր գնահատել բժշկի աշխատանքը: «Ժողովուրդը չգիտեր, թե ինչ կարելի է և ինչ պետք է պահանջել բժշկից: Նա մի կողմից չէր կատարում բժշկի խորհուրդները, մյուս կողմից էլ՝ նրանից պահանջում էր աստվածային զորություն»: Այդ առթիվ ամսագիրը գրում էր. «Բոլոր դասակարգի մարդկանց հետ իրավունքով են բանում, բայց բժշկի վերաբերմամբ մեր հայերը իրավունք չեն ճանաչում»[24]: Բնակչության լայն խավերի մեջ բժշկի դերը բարձրացնելու նպատակով քննության են առնվում բժշկի և հասարակության միջև եղած փոխհարաբերության հարցերը:

Առողջապահական կանոնների մասսայականացման, բժշկական գիտելիքների տարածման գործում Լ. Տիգրանյանը մեծ դեր է հատկացնում կանանց ու աղջիկներին: Հորդորում է նրանց՝ զինվորագրվել առողջապահական գործին, որով և մեծ օգուտ բերած կլինեն ազգին ու հասարակությանը: Նրանց խրախուսելու համար նա վկայաբերում է արևմտաեվրոպական երկրների կանանց անձնուրաց ու հերոսական արարքները, ինչպես և վաղ անցյալում կուսանաց վանքերում հայ աղջիկների՝ հիվանդների նկատմամբ ցուցաբերած խնամատար վերաբերմունքի մասին վկայող ապացույցները: «Առողջապահական թերթ» ամսագրի էջերում առաջարկվում է Երևանում նույնպես ստեղծել գթասիրտ քույրերի ընկերություն, որի նմանը վաղուց արդեն գործում է քաղաքակիրթ երկրների յուրաքանչյուր գավառում: «Ապահովված օրիորդներ, այրի ու անզավակ կանայք կան մեր հասարակության մեջ,— գրված է ամսագրում,— բայց չկա գթասիրտ քույրերի ընկերություն: Ահա մի լայն ասպարեզ ապահովված կանանց համար, որտեղ կարող են ազգային ու միևնույն ժամանակ մարդասիրական գործունեությամբ զբաղվել»[25]: Ամսագիրը ոգևորում, խրախուսում է այն կանանց, որոնք աշխատակցում են

ամսագրին։ «Տիկին Նունե Մելյանը և օրիորդ Փառանձեմ Մելյանը օգնում են «Առողջապահական թերթին»,— գրում է նա,— խմբագրությանն ներկայացնելով առողջապահական հոդվածների թարգմանություններ, որոնք հետզհետե տպագրվելու են։ Ցանկալի է, որ մյուս տիկնայք և օրիորդք նմանապես օգնեին, գցելով իրենց լուման օգուտ հայ գրականության»[26]։

Առողջապահական բնագավառի աշխատողներին, հատկապես բժիշկներին օգնած լինելու նպատակով Լևոն Տիգրանյանն իր հանդեսում սիստեմատիկաբար տպագրում էր լույս տեսած բժշկական գրքերի վերաբերյալ համառոտ ծանոթագրություններ։ Իսկ իր կազմած «Բժշկական բույսերի բառարանը» որպես հանդեսի հավելված ուղարկում էր այն բաժանորդներին, որոնք մասնագիտությամբ բժիշկներ ու բնագետներ էին։

Ինչպես նկատվեց, ամսագրում տպագրված հոդվածների մեծ մասը պատկանում էր Լևոն Տիգրանյանի գրչին։ Մինչդեռ, երբ նոր էր սկսել հրատարակվել ամսագիրը, խմբագիրը մեծ հույսեր էր կապում հայ բժիշկների ու հայ ուսանողների հետ, կարծելով, թե նրանք իրենց հոդվածներով կաջակցեին ամսագրի աշխատանքներին։ Սակայն երկու տարվա ընթացքում բժիշկների ուղարկած թղթակցությունների թիվը հանրագումարի բերելով, խմբագիրը նկատում է, որ նրանք գրել են ընդամենը 15 հոդված (Ա. Հովհաննիսյանը՝ 8, Ա. Բաբայանը՝ 4, Ա. Ճահապիկյանցը՝ 1, Ա. Միրիմանյանցը՝ 1)։ Այս հանգամանքը չի վհատեցնում խմբագրին։ Նա շարունակում է խիզախորեն առաջ տանել իր ձեռնարկած գործը։ Նրա գործի հաջողությանը նպաստում է նաև այն, որ նա կարողանում է ամսագրի գոյությունը պահպանել առանց պարտքի, մի բան, որ շատ քիչ հրատարակիչ-խմբագիրների է հաջողվում այդ տարիներին հայ իրականության։ Ամսագիրը նույնիսկ դրամական եկամուտ է ունենում (առաջին տարում՝ 17 ռուբլի, երկրորդ տարում՝ 48 ռուբլի, ընդամենը՝ 65 ռուբլի)։

«Առողջապահական թերթ» ամսագիրը մեծ տարածում է գտնում բնակչության մեջ։ Ընթերցողներն անհամբեր սպա-



սում էին ամսագրի յուրաքանչյուր համարին։ Այդ մասին են վկայում խմբագրությանն ուղարկված հետևյալ նամակում գրված խոսքերը. «Այն օրից, երբ սկսվել է հրատարակվել «Առողջապահական թերթ» միամսյա հանդեսը, ամեն մի կարդացող ու լսող մարդը սկսել է ճանաչել կյանքի ապրելու կանոնները-հետևում է առողջապահական կետերին ու միջոցներին։ Նախապաշարական կռշտ ու կոպիտ-անտաշ ապրելու ձևը կարծես նա օրեցօր մոռանում է։ Նոր հարսը գաղտնի սկեսուրի աչքից վարագույրի տակ նստած կարդում է և տալերին բացատրում։ Նոր օրիորդը իրեն ազատամիտ համարելով, տան մեջ համարձակ կարդալով, առողջապահական խորհուրդներ է տալիս ծնողներին ու մյուսներին, պառավ տատի ու պապի փնթփնթոցը բանի տեղ չի դնում։

Մինչև հիմա շատերը չէին հասկանում այն կյանքի վերաբերությամբ, ինչ որ այժմ հասկանում են քրքրելով «Առողջապահական թերթը», ծծում են նրա հյութը»[27]։

Երևան քաղաքի ու նրա բնակչության սանիտարահիգիենիկ պայմանների բարելավման, առողջապահական վիճակի պահպանման գործում այնքան կարևոր նշանակություն ունեցող ամսագրին չի վիճակվում երկար շարունակել իր գոյությունը։ 1885 թ. հունվարի 18-ին Երևանի ոստիկանական վարչությունը հրաման է արձակում Լևոն Տիգրանյանին արտաքսելու մասին՝ «Հայասեր-ազգասեր» խմբի աշխատանքներին մասնակցելու համար։ Ինքնաբերաբար դադարում է ամսագրի հրատարակությունը։ Ամսագրի վերջին համարը լույս է տեսնում 1884 թ. դեկտեմբերին։

«Առաջինից ամսագիրը «անշառ» բժշկագիտական էր,— գրում է Թ. Հակոբյանը,— բայց բուն էության «Փակ» թերթի նման «Առողջապահական թերթն» էլ յուրօրինակ ձևով մերկացնում էր ցարական իրականության նեխված կարգերը»[28]։

Ինչպես նկատվեց, «Առողջապահական թերթ» ամսագրի նպատակը սոսկ բժշկական գիտելիքների տարածումը չէր։ Այնտեղ առողջապահական հարցերը քննարկվում էին բնակչության առօրյա հուզող հարցերի հետ միասին։ Ուստի, ամ-

տագրի ուսումնասիրությունը կարևորություն է ներկայացնում ինչպես բժշկության պատմության, այնպես էլ հայ հասարակական մտքի հետ կապված խնդիրները լուսաբանելու տեսանկյունից։

«Առողջապահական թերթ» ամսագրի խմբագրի՝ Լևոն Տիգրանյանի կյանքի և գործունեության մասին հավաստի տեղեկություններ կան նրա իսկ ձեռքով գրված «Իմ հիշատակարանը» ձեռագիր աշխատությունում[29], ինչպես նաև ՀՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվի ֆոնդերում, մամուլի էջերում ու անցյալի գործիչների հիշողություններում (ձեռագիր)։

Լևոն Տիգրանյանը ժամանակի սակավաթիվ այն մտավորականներից էր, որ իր կյանքի մեծ մասը անց էր կացրել Երևան քաղաքում, հարազատ ժողովրդին նվիրաբերելով իր գիտելիքները, հասարակական-կազմակերպչական շնորհքը ու կարողությունները։

Լևոն Տիգրանյանը ծնվել է 1842 թ. դեկտեմբերի 10-ին, Երևանում[30]։ Նրա պապը՝ Տեր-Հովհաննեսը եղել է ջուղայեցի։ Հայրը՝ Հակոբջանը 1827 թ. ռուսական զորքերի հետ մասնակցել է գեներալ Պասկևիչի հրամանատարությամբ Երևանը պարսիկներից ազատագրելու համար մղված մարտերին։ Նա մահացել է 1852 թ., երբ Լևոնը եղել է ընդամենը տաս տարեկան։ Մայրը՝ Կատարինեն լինելով ժամանակի կրթված կանանցից, իր վրա է վերցնում որդու խնամքի և դաստիարակության գործը։ Գրաճանաչությունը սովորելով մորից, պատանի Լևոնը ընդունվում է Երևանի նահանգական դպրոցը։ Սակայն այնտեղ չհանդուրժելով աշակերտների նկատմամբ ուսուցիչների անհոգի և անիրավացի վերաբերմունքը (ծեծ, ծաղր և այլն), թողնում է դպրոցը։ Մայրը նրան տեղափոխում է Թիֆլիս, ուր նա բնակվում է հորեղբոր՝ բժիշկ Հարություն Հովհաննիսյանի տանը։ Այստեղ Լևոնը մնում է վեց տարի, մինչև 1859 թ.։ Նա երեք ամիս նախ սովորում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, վեց ամիս՝ գիմնազիայում։ Այնուհետև մեկուկես տարի սովորում է Գաբրիել Խատիսյանի պանսիոնում։ Այստեղ էլ նա բավարար



գիտելիքներ չի կարողանում ձեռք բերել։ «Կար մի գիրք,— գրում է նա,— «Դրուգ դետեյ», ձեռքս էի առնում, ոչինչ չէի հասկանում և վերջապես դեն էի ձգում, սովորելու ձևը լավ չէին սովորեցրել, բառարանի մասին հասկացողություն չունեի»[31]։

1858 թ. Պետերբուրգից Թիֆլիս է գալիս Լևոնի քեռին՝ մեծահարուստ Մկրտիչ Սանասարյանը։ Նա իր նյութական միջոցներով ուսանողներ էր պահում Պետերբուրգում, Մոսկվայում, Դորպատում, դպրոցներ ուներ Վանում, Էրզրումում։ Նա բարեկամական սերտ կապերի մեջ էր գտնվում հայ մտավորականության և բարձրաստիճան հասարակության հետ։ Առանձնապես մտերիմ էր Կարապետ Եզյանի հետ։ Սանասարյանը Լևոնին իր հետ տանում է Պետերբուրգ և ընդունել տալիս Կարապետ Եզյանի պանսիոնը։ Այստեղ Լևոնը զբաղվում է ընթերցանությամբ, սովորում լեզուներ։ Եզյանի հանձնարարությամբ նա զբաղվում է նաև թարգմանությամբ։ Եզյանից ստացած իր տպավորության մասին Լևոն Տիգրանյանը գրում է. «Եզյանը շատ վարպետ մարդ էր կրթության գործում։ Նա ինձ հետ վարվում էր մեղմ, ընկերաբար, որպես սիրող մեծ վարպետ, ամեն օր էքսկուրսիայով գնում էինք գրոսանքի, և այդ միջոցին ինձ ամեն բան ցույց էր տալիս, բացատրում էր (սոկրատական ձևով), աշխատում էր հարուցանել իմ մեջ հետաքրքրություն գիտության վերաբերմամբ և սովորեցնել աշխատասիրություն»[32]։

Լևոն Տիգրանյանի հետ Եզյանի պանսիոնում սովորում էին նաև Լևոնի հորեղբոր՝ Հարություն Հովհաննիսյանի որդին՝ Արգարը (Թիֆլիսից), եղբայրներ Մերուժան և Արշակ Խալաթյանները (Մոսկվայից), Մկրտիչ և Կարապետ Էգիխանյանները (Աստրախանից), Միքայել Բուրջալյանը (Մոզդոկից) և ուրիշներ։ Պանսիոնը ուներ երկու վերակացու. նրանցից բացի աշակերտներին հսկում էին Եզյանի մայրը, քույրը, եղբայրը։ Եզյանը դասավանդում էր պատմություն և աշխարհագրություն։ Պանսիոնական հայացքների, տեր

Եղյանը աշխատում էր իր սաներին հեռու պահել հեղափոխական գաղափարների ազդեցությունից, գաղափարներ, որ այդ տարիներին արդեն տարածում էին գտել երիտասարդության մեջ։ Պանսիոնում տիրող խիստ ռեժիմի դեմ առաջինը ըմբոստանում է Լևոն Տիգրանյանը։ Նա 1863 թ. հրաժեշտ է տալիս պանսիոնին և Դորպատի գիմնազիայի լատիներեն լեզվի դասախոս Ֆրենկելին հասցեագրված Ստեփանոս Նազարյանի նամակով մեկնում Դորպատ։ Այստեղ ընդամենը երկու շաբաթ մնալուց հետո, Սանասարյանի պահանջով վերադառնում է Պետերբուրգ։ Ապա 1864 թ. նորից մեկնում է Դորպատ։ Այստեղ կարճ ժամանակում նա սովորում է գերմաներեն և բնագրով կարդում դասականներին։ Մեկուկես տարի հետո Լևոնը հաջողությամբ քննություններ է հանձնում և ընդունվում Դորպատի համալսարանի բնագիտական ֆակուլտետ։ Լևոն Տիգրանյանը լինելով հետաքրքրասեր ու անհանգիստ բնավորության տեր երիտասարդ, չի սահմանափակվում միայն համալսարանական նեղ կյանքով։ Նա ժամանակի առաջադեմ գործիչների հետ ծանոթանալու նպատակով ընդգրկվում է Դորպատում գործող «Էստլանդացվոց կորպորացիա» կոչվող ուսանողական ընկերության մեջ։ Կորպորացիան ուներ իր առանձին օրենքներն ու կանոնները։ Կորպորացիայի յուրաքանչյուր անդամից պահանջվում էր՝ չկատարել անազնիվ քայլ, ամեն դեպքում և ամեն տեղ, հասարակական վայրում, թե տանը հարգել մեծին, լինել ասպետ հանդեպ կանանց շրջապատում։ Կնոջ հանդեպ ցուցաբերած անքաղաքավարի վերաբերմունքի, վիրավորական արարքի դեպքում ուսանողը հեռացվում էր կորպորացիայից։ Հեռացվածը իրավունք չուներ մնալու նույն վայրում և ուսումը կարող էր շարունակել այլ քաղաքում։ Կորպորացիան նման ուսանողին դատում էր և հարցը լուծում ուսանողական դատարանում։ Հեռացվածին ոչ մի ընտանիք չէր ընդունում, նրա հետ ոչ մի օրիորդ չէր ամուսնանում։ Բարոյական բարձր կարգապահություն, ինչպես և կենցաղում ու ընկերական շրջապա-



տում կարգ ու կանոնի պահպանումը պարտադիր էր համարվում յուրաքանչյուր անդամի համար։ Լևոն Տիգրանյանի բարոյական կերպարը ձևավորվում է հենց այդ տարիներից սկսած։

1875 թ. բժշկի դիպլոմ ստացած Լևոն Տիգրանյանը հրաժեշտ է տալիս Դորպատին և վերադառնում հայրենիք։ Հետագայում որպես երախտագիտության տուրք նա հոդվածաշար է գրում Դորպատի համալսարանի ու նրա հայ ուսանողների մասին և տպագրում «Լումա» ամսագրում[33]։ Այդ հոդվածաշարը պարունակում է ուշագրավ տեղեկություններ Դորպատի համալսարանում 1830—1892 թթ. սովորած գրեթե բոլոր հայ երիտասարդների (Խ. Աբովյան, Ստ. Նազարյան, Խ. Ավագյանց, Գ. Աբիմյան, Գ. Խատիսյան, Գ. Աղաֆիրյան, Հ. Փափազյան, Գ. Միրիմանյան, Պ. Սիմոնյան, Ք. Պատկանյան, Ռ. Պատկանյան, Գ. Բարխուդարյան, Մ. Փրիտանյան, Հ. Տեր-Միքայելյան, Գ. Դոլուխյան, Ա. Ռոտինյան, Վ. Ասկարյան, Փ. Նազարբեկյան, Մ. Ամատունի և ուրիշներ) կյանքի և գործունեության մասին։

Դորպատից վերադառնալուց հետո Լևոն Տիգրանյանը աշխատանքի է անցնում Պետերբուրգի քաղաքային ոստիկանատանը որպես բժշկական չինովնիկ։ 1878 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նա Պետերբուրգից մեկնում է Էրզրում և որպես զինվորական բժիշկ մասնակցում պատերազմին։ Իր հոգատար վերաբերմունքով և կազմակերպչական շնորհքով մեծ համբավ է ձեռք բերում և գրավում առաջին սակրավոր գումարտակի հրամանատար իշխան Թումանովի ուշադրությունը։ Վերջինի հրամանով Տիգրանյանը դառնում է սակրավոր գումարտակի բժիշկը։

1879 թ. հունիսին Տիգրանյանը թողնում է զինվորական ծառայությունը և հաստատվում Երևանում, ստանձնելով քաղաքային բժշկի պաշտոնը։ Երևանը անհրապույր էր ինչպես արտաքին տեսքով, այնպես էլ ներքին կյանքով։ Երևանից ստացած առաջին տպավորության մասին նա գրում է. «Երբ եկա Երևան կրթված հայ մարդկանց թիվը շատ

փոքր էր, դրանք էլ միացել էին վաճառականների հետ և ընդօրինակել էին նրանց վարքն ու բարքը: Նրանք կարտ էին խաղում, քաղեբում քեֆ էին անում, ռամկական սրամտություններ էին անում ու հանաքներ, այն էլ զզվելի հանաքներ»[34]: Գեղարվեստական գրքեր սակավ էին լույս տեսնում Երևանում: Բժիշկ Տիգրանյանն առաջինն իր առանձնատնյակում բացում է գրադարան-ընթերցարան: Նա անվճար գրքեր է բաժանում բնակչությանը: Այդ հիմնարկի նախաձեռնությունը նորություն էր Երևանի բնակչության համար: Տիգրանյանի գրադարան-ընթերցարանը գովասանքի է արժանանում ժամանակի մամուլի և մտավորականության կողմից: Ռաֆայել Պատկանյանը, որ այդ ժամանակ գտնվում էր Երևանում, այցելում է Տիգրանյանին և հիանում նրա գրադարանով: Իր ստացած տպավորությունների մասին նա գրում է. «Ընթերցողների թիվը այնքան մեծ է, որ մեծաբանություն չէ, երբ ասում են, որ պ. Տիգրանյանցի գրադարանը հասարակական մանկական գրադարանի դեր է կատարում»[35]: Ռ. Պատկանյանը բարձր է գնահատում նրան նաև որպես բժշկի, գրելով. «Գերմարդկային համբերությամբ հարցնում ու ականջ էր դնում հիվանդների ցավերու մանրամասնությունը, երկարորեն խրատներ էր տալիս, թե ինչպես պետք է դարմանելի ցավը, խոցը, վերքը, պալարը և այլն: ...Նրա համար անտարբեր էր՝ աղքատ մարդը հայ է, ռուս է, թուրք է, պարսիկ է, սիրուն կին է — նա ամենին քաղաքավարությամբ, ծանրագեմ, առանց զոռոզության հուսադրում և բժշկում էր: Զարմացած մնացի: Շատ բժիշկներ տեսել էի, բայց նրա նման յուր արվեստին սիրահար, յուր գիտության կույր հավատող, բժշկական գիտության պարզամիտ ամբոխի աչքումը կշիռ տվող (ուրիշին և հիվանդի սրտումը հավատ ներշնչող) բժիշկ գրեթե տեսած չէի»[36]:

Երկու տարվա ընթացքում նա կարողանում է իր շուրջը համախմբել քաղաքի մտավորականներ Ռուբեն Ջալալյանի, Սիմեոն Աֆանասյանի, Հայկ Մատակյանի, Օհաննես Տեր-



Զաքարյանի, Վասիլ Եղիազարյանի, բժիշկ Անանեի և մյուսների ուշադրությունը: Մտավոր կյանքի որոշ աշխուժացում է ապրում Երևանը: «Մենք մեր հասարակական գործերը այնպես տարանք,— գրում է Լ. Տիգրանյանը,— որ Թիֆլիսի ինտելիգենցիան մեծ մասամբ հարցերի մասին խոսում և ասում էր. «իսկ երևանցիք ինչպես են գործում»[37]:

Լևոն Տիգրանյանն առաջինը Երևանում լույս է ընծայում բժշկական մանկագիտական գրքեր: Նրա կազմած «Անատոմիական բառարանը» հրատարակվում է 1879 թ., «Մարդակազմություն հայոց ուսումնարանների համար» դասագիրքը՝ 1881 թ., «Բառարան բժշկական բույսերի (լատիներենից հայերեն և ռուսերեն)»՝ 1883 թ.: Լևոն Տիգրանյանի հրատարակած գրքերի մասին ժամանակին գովասանքի խոսքեր են ասվել մամուլի էջերում: Այսպես, «Մշակը» գրել է. «Մարդակազմություն հայոց ուսումնարանների համար» դասագիրքը մեր կարծիքով լիակատար է, նաև ներկայացված է նրա մեջ ամենահասկանալի կերպով մարմնի մի քանի հարկավոր գործարանների միկրոսկոպիական կազմվածքը»[38]:

1881 թ. Լևոն Տիգրանյանը կարճ ժամանակով կառավարության հանձնարարությամբ մեկնում է Պարսկաստան՝ ժանտախտի համաճարակի դեմ պայքար կազմակերպելու համար: Այստեղ գործն ավարտելուց հետո, նա առանց պաշտոնական օրգանների թույլտվության, ինչպես ինքն է գրում, «ինքնագլուխ», Ուրմիա լճի հյուսիսային ափերով ճանապարհվում է դեպի Վան: Այստեղ մեկ ամիս մնալուց հետո Բայազետով և Իգդիրի վրայով վերադառնում է Երևան: Հասկանալի է այս ճանապարհորդության նպատակը, որի մասին նա բացահայտորեն չի նշում: Տիգրանյանը տեսակցում է հյուպատոս Կ. Կամսարականին, երկար զրույց ունենում Խրիմյան Հայրիկի հետ: Իր այդ ուղևորությունից ստացած տպավորությունների մասին նա առանձին հոդվածով հանդես է գալիս «Մշակ» թերթում: Հոդվածաշարը, որ տպագրված է «Ճանապարհորդական տպավորություններ

Պարսկաստանում»[39] և «Ռամկապետական տպավորություններ Տաճկահայաստանում»[40] վերնագրերով, ընթերցողին ներկայացնում է ինչպես հայ, այնպես էլ թուրք և քուրդ աշխատավոր ժողովուրդների կյանքի, կենցաղի տխուր պատկերը։ Թուրքիայում ամենուրեք նա լսում է հայ գյուղացիների գանգատն այն մասին, որ «նրանց կյանքը և կայքը յուրաքանչյուր րոպե վտանգի է ենթարկված, որովհետև քրդերը 100—200 ձիավորով, զինված մարտինի հրացաններով հարձակվում են գյուղի վրա, կողոպտում նրանց»[41]։ Նրանք սպանում, ոչնչացնում են հայերին և այդ զազրելի հանցանքի համար չեն պատժվում։ «Տաճկական կառավարությունը ամենասիստեմատիկ կերպով աշխատում էր աղքատացնել և բնաջինջ անել հայերին, և որ այդ նպատակին նա ձգտում էր հասնել քրդերի միջոցով»[42]։ Ավելի մոտ ծանոթանալով հայ աշխատավոր գյուղացիության կյանքին ու կենցաղին, Տիգրանյանը միաժամանակ նկատում է. «Խեղճ ժողովրդի ամենասարսափելի հարստահարիչները հայ ագա վաճառականներն են»։ Նա գրում է. «Հայ վաշխառուն գյուղացու արդյունքը ժողովում է և թողնում այնքան, որ գյուղացին սովից չմեռնի»[43]։

Պահպանողական «Մեղու Հայաստանի» թերթը գտնում է, որ Տիգրանյանի այս հոդվածաշարում նկատվում է ոչ այլ ինչ, եթե ոչ պարսկահայ և տաճկահայ կյանքում վերափոխություն տեսնելու ցանկություն։ Ըստ այդ թերթի, Տիգրանյանի հոդվածաշարը կարդացող ամեն մի անձնավորություն կարող է ենթադրել, թե Պարսկաստանը մի դժոխք է, որտեղ «անխտիր կերպով խեղճ մարդկային սեռը զոհ է գնացել ստրկության, հարստահարության, օրինաց բռնավորության և ուրիշ շատ բարոյական ճնշումների»[44]։ Թերթը Տիգրանյանին մեղադրում է սեփական տերերի ու օտար բռնակալների դեմ ապստամբական պայքարի կոչ անելու մեջ։ «...ուղղակի ասել և խրախուսել էլ ունենք բացարձակ ասելու,— գրում է թերթը,— որ սա իր ներքին ձգտումների տեր մարդ է, որ սա ոչ թե եկած է Ատրպատական իր բժշկա-



կան հետազոտություններով մի որևէ օգուտ բերելու տեղացի հասարակության, այլ նա իր հետ մի նոր էպիդեմիա էր բերել ամբողջ Ատրպատականը վարակելու համար»[45]։ Հավանաբար «էպիդեմիա» ասելով, թերթը հասկանում էր այն առաջադիմական գաղափարները, որոնցով համակված հասարակական լայն գործունեություն էին ծավալում Տիգրանյանն ու նրա համախոհները։ Որ Լևոն Տիգրանյանը եղել է Երևանում գործող «Հայասեր-ազգասեր» կազմակերպության ակտիվ անդամներից մեկը, քաջ հայտնի է եղել «Մեղու Հայաստանի» թերթի խմբագրին։ Ահա թե ինչու նա գրում է. «Տիգրանյանը ձգտում էր պարսկահայերի մեջ գրգռել մոլեռանդ խռովություններ, անկարգություններ, բռնաբարություն և ուրիշ շատ տխուր անցքեր»[46]։

Տիգրանյանն իր հոդվածաշարում անդրադառնում է նաև Պարսկաստանի թագաժառանգի հարեմում տիրող այլանդակ բարքերին, չի կոծկում, չի ծածկում այնտեղ կատարվող տգեղ ու անհարգի արարքները։ Մինչդեռ, «Մեղու Հայաստանի» թերթի խմբագրությանն այս ամենը թվում է զրպարտություն։ Թերթը գրում է. «Թավրիզի հայերը պ. Տիգրանյանի՝ թագաժառանգի և նրա հարեմի վերաբերությամբ գրած զրպարտություններն ամեն ջանքով աշխատում են իրանց մեջ որքան կարելի է գաղտնի պահել, ի նկատի առնելով, որ դրա հետևանքը կարող է շատ գեշ լինել, ինչպես, քաղաքագիտական հեռատեսությունը այսպես է ստիպում վարվել, այլ ոչ թե պ. Հայասեր, ազգասեր, մամուլում նոր հանդես եկող համալսարանական բժշկի նման»[47]։

Լևոն Տիգրանյանը «Հայասեր-ազգասեր» կազմակերպության բացահայտումից հետո որպես նրա ղեկավարներից մեկը, 1885 թ. երեք տարով աքսորվում է Դորպատ։ Աքսորից վերադառնալուց հետո նա զբաղվում է գրական-հրապարակախոսական գործունեությամբ։ Նա թարգմանում է (բնագրից) և «Մուրճ» ամսագրում տպագրում է Գյոթեի «Ֆաուստ»[48], «Հերման և Դորոթեա»[49] անմահ գործերը։ Նա թարգմանել է նաև Գոգոլի «Ռևիզորը», Ֆրեոբելի «Մանկական պարտեզ»

(տեսական մաս) աշխատությունը[50] և այլ գործեր։ Առանձին ուշադրության արժանի են նաև նրա հրապարակախոսական հոդվածները՝ տպագրված «Մշակում», «Պսակում», «Լումայում» և այլ պարբերականներում։

Լեոն Տիգրանյանը ժամանակի այն կուլտուրտրեգերներից էր, որն իր կյանքը նվիրաբերեց հարազատ ժողովրդի առողջության պահպանման և հայրենի երկրի հասարակական-քաղաքական կյանքի զարգացման գործին։

Լեոն Տիգրանյանը մահացավ 1906 թ., ապագա սերունդներին թողնելով իր կյանքի ու գործունեության հարուստ և օգտակար փորձը, որն արժանի է գիտական ուսումնասիրության։



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# «ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (1883—1885) ԵՎ «ԷՐԻՎԱՆՍԿԻԵ ՕԲՅԱՎԼԵՆԻՅԱ» (1900—1917) ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Անցած դարավերջին «Պսակ» և «Առողջապահական թերթ» պարբերականների հետ միաժամանակ Երևանում 1883 թ. լույս է տեսնում նաև «Երևանի հայտարարություններ» կիսաերգիծական երկշաբաթաթերթը՝ Էմին Տեր-Գրիգորյանի խմբագրությամբ։ Թերթի նպատակն է եղել ընթերցանության սեր առաջ բերել քաղաքի ազգաբնակչության ճնշող մեծամասնության մեջ։ «Թերթիս նպատակը չէ եղել,— գրում է խմբագիրը,— նոր նոր մտքեր արծարծել, նոր ծրագրեր ու պրոգրամներ կազմել, այս կամ այն մասին նոր հարցեր զարթեցնել մերայինների մեջ-ոչ դոցա համար ունենք ավելի ընդարձակ և իմաստալից պարբերական հրատարակություններ. այլ գլխավորապես նորա նպատակն է եղել ընթերցասիրություն մտցնել մեր հասարակ դասակարգի մեջ, այն դասակարգի մեջ, կրկնում ենք, որի ամեն մի անդամը հազիվ թե, իր երախայության ժամանակ Սաղմոսը ավարտելուց հետո մի որևէ գիրք կամ հրատարակություն կարդացած լինելու»[1]։

«Երևանի հայտարարություններ» թերթը բաղկացած էր երկու էջից։ Հրատարակվում էր շաբաթը երեք անգամ։ Այնտեղ հիմնականում տպագրվում էին կենցաղային թեմաների շուրջ գրված զրույցներ, ծիծաղաշարժ պատմություններ։ Հոդվածների մեծ մասը պատկանում էր խմբագրի

գրչին։ Նա հանդես էր գալիս «Դող», «Բոյանի», «Դամբաշ», «Նաղարաշի» և այլ ծածկանուններով։ Փոքրածավալ զրույցների, պատկերների միջոցով թերթը փորձում էր վեր հանել Երևանի կյանքում տեղ գտած արատավոր երևույթները, քննադատության ենթարկել քաղաքի ղեկավար կազմակերպությունների թույլ տված սխալները, տիրապետող դասակարգի ներկայացուցիչների կամայականությունները, նրանց արգահատելի արարքները։


ԵՐԵՒԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Երևանի հայտարարություններ» թերթի գլխագիրը

Էմին Տեր-Գրիգորյանի թերթը լույս էր տեսնում հետևյալ ծրագրով. 1 Քաղաքային և նահանգային նորություններ։ 2 Անեկդոտներ, հարցեր ու ծիծաղաշարժ զրույցներ։ 3 Առևտրական լուրեր, տեղական շուկան։ 4 Հայտարարություններ՝ երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, թուրքերեն)։

Թերթում տպագրված փոքրածավալ պատկերներն արտաքուստ կարծես շոշափում էին ոչ էական հարցեր։ Սակայն խոր ընթերցողը, երբ ըմբռնում էր դրանց իմաստն ու նշանակությունը, նկատում էր, որ թերթը նպատակ է ունեցել ծաղր ու ծանակի ենթարկել կաշառակեր դատավորնե-



րին, տգետ հոգևորականներին։ Այսպես, պատկերներից մեկում հարց ու պատասխանի միջոցով մերկացվում է դատավորի կաշառակերությունը։ Անազնիվ ճանապարհով հարստացած մեկը դատի ժամանակ պատասխանում է. «Այո, ոչ պ. դատավոր, ես այնպես վատագործ չեմ, առանձին չեմ, ինչպես պ. պրոկուրորը...»[2]։ Կամ մեկ այլ զրույցում ասված է. «Պ. Մ-ի բակից գողացան պարանի վրա եղած սպիտակեղենը։ Պոլիցիան հաջողացրեց չբռնել մեղավորներին»[3]։

«Երևանի հայտարարություններ» թերթում ծաղրվել են ձևապաշտ քաղքենի կանայք, նրանց սնապարծությունը, ձևապաշտությունը։ Այդ առթիվ խմբագիրը գրել է. «Երանի թե մեր հայերի մեջ այնքան սեր ու միաբանություն լիներ, որքան սեր ու միաբանություն կա մոդայի ու կանանց հասարակության մեջ»[4]։

Մանր-մունր կենցաղային թեմաներով գրված հոդվածներից զատ, թերթը տպագրում է նաև ժամանակի կյանքում տիրող հասարակական ոգին երևույթները մերկացնող փոքրածավալ նյութեր։ Դրանցից մեկում գրված է. «Մեղքը մեռած է։ Արդարությունը այրված։ Ազնվությունը դուրս եկած աշխարհից։ Անկեղծությունը թաղված է։ Առաքինությունը աշխարհն աշխարհ մուրանում է։ Բարերարությունը գրված է բանտում։ Ճշմարտությունը արդարության փլատակների տակ է թաղված։ Վաճառականների հավատարմությունը բանկրոտացել է։ Խիղճը խելքից դուրս է եկել»[5] և այլն։

Թերթի լույս ընծայման երկրորդ տարվա հունիս ամսից խմբագրությունը քննադատական հոդվածները զետեղում է «Բամբասանք» խորագրի տակ։ Նյութերը ստորագրված են «Ներկարար» կեղծանունով։ «Բամբասանք» բաժինը ժուռնալիստական հնարանք էր, որ հմտորեն օգտագործվել էր խմբագրի կողմից կյանքի արատավոր երևույթները բամբասանքի ձևով ներկայացնելու համար, քանի որ, ինչպես խմբագիրն էր գրում, բամբասողը որքան էլ ցածր, անլսելի

ձայնով է խոսում, բայց ականջ չի մնում, որ նրան լսի. նրա ամեն մի խոսքը կայծակից էլ արագ է թռչում, խոսելուց էլ շուտ է տարածվում[6]։ «Բամբասանք» բաժնում տպագրված նյութերի հետապնդած նպատակների մասին գրված է. ««Բամբասանքը» ինչպես մի փոքրիկ քար, ձգում ենք անշարժ լճի մեջ և մենք մեր նպատակին հասած պիտի լինենք, եթե կարողացավ նա հոսած ջրի անշարժությունը քիչ վրդովել»[7]։ Այս բաժնում ծաղր ու ծանակի են ենթարկվել Երևանի նահանգի բնակչության մեջ պահպանվող վատ բարքերը, հետամնացությունն ու տգիտությունը։ Այսպես, «Հային կինը կարծում է գիր անելով, իրա հիվանդը կառողջանա, կամ մարդը իրան կսիրի»։ Կամ «Հայ պառավը կարծում է, որ բժիշկը առողջին հիվանդացնում, հիվանդին սպանում է» և այլն։ «Բամբասանքում» շոշափվել են նաև սոցիալական թեմաներ։ Այսպես, «Հայ վաճառականը կարծում է, որ աշխարհս միշտ գմակ է և ինքը դանակ»։ Մի շարք նյութեր էլ հետապնդել են դաստիարակչական նպատակներ։ Այսպես, «Դավիթ Անհաղթին հարցրեցին մի օր, թե ինչպե՞ս է նա իմաստություն ձեռք բերել. նա պատասխանել է. ես երբեք չեմ ամաչել հարցնել այն, ինչ որ չեմ իմացել»։

«Երևանի հայտարարությունները» թերթը միաժամանակ իր վերաբերմունքն է արտահայտել ժամանակի մամուլի օրգանների նկատմամբ, համարձակ արտահայտել իր կարծիքը այս կամ այն պարբերականի մասին։ Կարևորն այն է, որ թերթը ճիշտ է բնորոշում յուրաքանչյուր օրգանի ուղղությունն ու դավանած հայացքները։ «Մեղու Հայաստանի» թերթի մասին գրում է. «...Հների սերը, նորերի ատելությունը շահեց, 1000 բաժանորդների ձայներ լսեց, հոտն առավ ու ինքը երբեք չտեսավ, այդպիսով այսօր 28 տարին մտավ և խոստովանեց, որ կարծեմ 250 բաժանորդից ավելի չունի, բայց էլի գլուխը բարձր գնում է, ու իր հին զուռնան մեր ականջին փչում, նույնահանգ և շատ անգամ նույնավանկ ֆելիետոններով ու երկդիմի խոսքերով իր գաղափարն առաջ տանում...»[8]։



Այն հանգամանքը, որ բուրժուական հասարակարգում մարդիկ հոգեպես սնանկանում են, որ ամեն ինչում իշխողը փողն է, միանգամայն իրավացիորեն քննադատվում է թերթում։ «...Հիմի ի՞նչ պաս, ի՞նչ բարեկենդան, մարդիկ նյութական օրգիներ են դարձել, միանգամայն անտարբեր են դեպի ամեն ինչ և միայն փող և փող են պտռում»[9]։

1884 թ. քաղաքային վարչությունը պատրաստվում էր նոր քաղաքագլխի և խորհրդականների ընտրություններին։ Նույն թվականի հունիսին Երևանի քաղաքային խորհրդարանում քաղաքագլուխ է ընտրվում Վասիլ Դեղամյանցը։ Ընտրությունների արդյունքների մասին մանրամասն տեղեկություններ են տպագրվում թերթում։ Թերթի միջոցով օգնություն է ցույց տրվում քաղաքային վարչությանը այս կամ այն հարցը լուծելու գործում։ Քաղաքային խորհրդարանում որոշում է կայացվում Երևանում երթևեկների հիվանդանոց բացելու մասին։ Թերթը դիմելով հայ վաճառականներին, հորդորում է նրանց՝ մասնակցել հիվանդանոցի կազմակերպման աշխատանքներին իրենց նվիրատվություններով։

«Երևանի հայտարարությունները» թերթում պաշտպանվում են և խրախուսվում հասարակական կյանքում տեղ գտած նոր երևույթները։ Այսպես, թերթը ողջունում է Երևանում հայ կանանց նորաստեղծ ընկերության երևան գալը։ Ընկերության աշխատանքների մասին թերթում հաճախ հանդես էր գալիս Կանանց բարեգործական ընկերության նախագահ Սրբուհի Խուդաբաշյանը։ Նա բարձր էր գնահատում կնոջ դերն ու նշանակությունը հասարակական կյանքում։ «Իգական սեռը,— գրում է նա,— թողած նահապետական ամոթխածությունը, արհամարհած տգետների վայրախոսությունը, խմբված մի տեղ, ժողով է կազմակերպում ու խորհում իր ազգի աղջիկ զավակների կրթության ու ապագայում պիտանացու մայրեր պատրաստելու վերա»[10]։ Հոդվածում նշված է նաև այն մասին, որ ընկերությունը որոշ դժվարությունների է հանդիպում դրամական միջոցներ ժողովելու հարցում, հաճախ «արհամարհական նկատողություններ է ստանում» հասարակության կողմից։ Ուստի թերթը դիմում է Երևանի

բնակչությանը, խնդրելով «պահպանել այս օգտավետ հիմնարկությունը և չթողնել, որ մատաղ հասակի մեջ մեռնի»։ Ապա պահանջվում է քաղաքացիներից «հաճախել ընկերության ժողովներին, ծանոթանալ նրա ելից ու մտից հաշիվներին, վճարել տարեկան 5-ական ռուբլի տուրք»։

«Երևանի հայտարարությունները» թերթի էջերում լույս են տպագրվում թատերական մի շարք ներկայացումների մասին (Մուրացանի «Ռուզան» և այլն)։ Այսպես, բարձր գնահատելով Սաֆրազյանի շրջիկ թատերախմբի դերասանուհի Ալմանի խաղը «Լյուսի-Դիգիե» պիեսում, թերթը գրում է. «Տիկին Ալման իր դերում (Լյուսի) գերազանցեց։ Նրա խաղը շատ բնական էր, պարզ երևում էր, որ նա իր խաղը չէր նմանեցնում այս ինչ, կամ այն ինչ հայտնի դերասանուհու, այլ սեփական մտքի արտահայտություն էր»[11]։ Օգտագործելով առիթը, թերթը նախատինքի խոսք է ասում Երևանի մտավորականության այն ներկայացուցիչների հասցեին, որոնք չէին հաճախում թատրոն։ Այնուհետև թերթը անդրադառնում է ներկայացումների ժամանակ դահլիճում եղած կարգապահության, բեմի լուսավորության և կազմակերպչական այլ հարցերի քննարկմանը։ Հարցեր, որոնցով, ըստ թերթի, պետք է զբաղվեր նաև յուրաքանչյուր քաղաքացի։

Թերթի խմբագիր Էմին Տեր-Գրիգորյանին պակաս չէր հետաքրքրում նաև մամուլի և հրապարակախոսության հանդեպ մտավորականության ունեցած անտարբեր վերաբերմունքը։ Այսպես, 1884 թ., երբ վտանգի տակ է դրվում «Մշակ» թերթի գոյության հարցը և Գր. Արծրունին մտադրվում է փակել այն, «Երևանի հայտարարությունները» թերթը դիմելով հայ մտավորականությանը, գրում է. «Նրանք, որոնք այդ ծանր պայմաններում անտարբեր էին համարում «Մշակի» խմբագրի լռությունը, այսօր, երբ խնդրի լուծումն իրենց է թողնված՝ ինչո՞ւ այժմ խորին լռություն են պահպանում, ինչո՞ւ ձայն չեն հանում»[12]։ Հաջորդ համարում հիմնավորվում է «Մշակի» գոյության անհրաժեշտությունը։ «Մշակը» համարվում է նոր, թարմ օրգան, որը «շատերին համակրելի և օգտակար է»։



Միաժամանակ նշվում է, որ «օգտակարը կապանքից դուրս բերելու և առաջ դիմել կարողանալու համար անհերքելի է զանազան ուղղությունների գոյության փաստը։ «Ճշմարտությունը,— գրված է այնտեղ,— իր նախնական միությունից դուրս գալ և անհրկյուղ և վստահ միայն այն ժամանակն է սկսում առաջ շարժվել, երբ նա ենթակա է եղել զանազան հայացքների, խորհուրդների, կարծիքների, քննությունների և հերքումների»[13]։ «Մշակը» «Հյուսիսափայլից» հետո համարվում է այն երկրորդ օրգանը հայ իրականությունում, որ «առանց երկընչելու ճակատ առ ճակատ կռվել է տգիտության դեմ, չի քաշվել ասելու ճշմարտությունը, չի խնայել հօգուտ հայ հասարակության նրա գործիչների վնասակարությունը մատնել»[14]։ Գր. Արծրունու մասին թերթը գրում է. «Նազարյանից հետո հասարակական շահերի գլուխ կանգնած ղեկավարներից ոչ մեկը չի ունեցել այն կտրուկ լեզուն, վառ եռանդը, խոսքի ուժը, ժողովրդականի չափ դյուրըմբռնելի ոճը, բնական խմբագրին վայել մտավոր պատրաստությունը, որպիսին ունեցել է «Մշակի» խմբագիրը՝ պ. Գր. Արծրունին»[15]։ Ժամանակին այս խոսքերը հնչել են անչափահասներից, անկողմնապահ գրքերից, գուցե մի փոքր էլ չափազանցված, բայց այդ էլ ի հեճուկս այն չարալեզու հակառակորդների, որոնցով շրջապատված է եղել Արծրունին։

Հայ հասարակական խավերի, հատկապես մտավորականության անտարբեր վերաբերմունքի արդյունք է համարվում «Վարժարան» ամսագրի փակումը։ «Ի՞նչ կնշանակի,— գրում է թերթը,— «Վարժարանի» պես ամսագիր ունենա ուսուցիչ բաժանորդներ—50, իսկ մնացեալ դասակարգերից 115»[16]։ Եվ մեջ է բերվում Ռ. Պատկանյանի հետևյալ քառատողը.

Ախ, ինչպես կուզեմ, որ հայի երկիրն
Ճեմարան, դպրոց, դրամատուն ունենար,
Ունենար թատրոն և շատ լրագիր...
Լոկ նա ինձ փողի անունը չի տար[17]։

«Երևանի հայտարարությունները» թերթը անդրադարձել է նաև հայոց դպրոցների փակման հարցին։ 1885 թ. մարտի

17-ի համարում ցարական իշխանության կարգադրությամբ հայոց դպրոցների փակման վերաբերյալ տպագրված հոդվածում նշված է այն մասին, որ Երևանի նահանգապետը հրավիրել է հատուկ խորհրդակցություն՝ հայոց ուսումնարանները փակումից փրկելու համար որևէ միջոց մշակելու նպատակով։ Խորհրդակցությունում առաջարկվել է հոգևոր և ծխական դպրոցները ժողովրդական ուսումնարանների վերածելու և շարունակ դրանց գոյությունը պահպանելու հարցը։ Սակայն մասնակիցները համաձայնության չեն եկել, համոզված լինելով, որ քաղաքի հայերը չեն կարող տարեկան մոտ 10000 ռուբլի հատկացնել այդ ուսումնարանների պահպանման համար։ Նույն համարում տպագրվել է հաղորդում այն մասին, որ Երևան քաղաքի բոլոր հայոց դպրոցները, բացառությամբ մի քանիսի, փակված են։

Հայկական դպրոցների փակմանը հետևեցին ազգային մշակույթի գործիչների հալածանքը, մայրենի լեզվով գրքերի ու թերթերի արգելումը։ Ցարիզմի վարած այս քաղաքականությունից ելնելով, Մամուլի գործերի գլխավոր վարչությունը 1885 թ. դեկտեմբերի 20-ին հրաման է արձակում «Երևանի հայտարարություններ» թերթի փակման մասին[18]։ Այդ հրամանի համաձայն Էմին Տեր-Գրիգորյանը Երևանի քաղաքային ոստիկանական վարչությանը գրավոր հաղորդում է հետևյալը. «Ես՝ ներքոստորագրող կոլեգիական ռեգիստրատոր Էմին Տեր-Գրիգորյանս սույն ստորագրությամբ տալիս եմ Երևանի քաղաքային ոստիկանական վարչությանն այն մասին, որ նորին գերազանցության 1885 թ. դեկտեմբերի 20-ի № 4320 գրավոր կարգադրությունն ինձ հայտարարված է, որի համար ստորագրում եմ»[19]։

1885 թ. մարտի 17-ի համարի լույս ընծայումից հետո դադարում է «Երևանի հայտարարություններ» թերթի գոյությունը։ Ինչպես նկատում ենք, թերթը փակվում է ոչ թե խմբագրի նյութական միջոցներից զուրկ լինելու պատճառով, այլ կառավարության հատուկ որոշմամբ։

«Երևանի հայտարարություններ» թերթի փակումից հետո, մոտ տաս տարի անց, 1896 թ. ապրիլի 30-ին Էմին Տեր-



Գրիգորյանն առանձին գրությամբ դիմում է Մամուլի գործերի գլխավոր վարչությանը՝ խնդրելով թույլ տալ իրեն Երևանում հրատարակելու «Երևանյան թերթիկ» ռուսերեն և հայերեն նոր պարբերական։ Խնդրագրի հետ նա ուղարկում է նաև առաջա թերթի ծրագիրը։ Բայց նրա խնդրանքը մերժվում է Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր պետի պարտականությունները կատարող իշխան Ամիլախվարու 1895 թ. սեպտեմբերին ուղարկված № 681 գրությամբ։ Այնտեղ գրված էր. «Պատիվ ունեմ հայտնելու, որ նկատի ունենալով անբարեհույս տեղեկությունները ք. Երևանում բնակվող պաշտոնաթող նահանգային քարտուղար Էմին Տեր-Գրիգորյանի անձնավորության մասին, ես հարմար եմ գտնում հետաձգել Երևանում նրա խմբագրությամբ «Երևանյան թերթիկ» վերնագրով ռուսաց և հայոց լեզուներով թերթի հրատարակումը»[20]։




«Էրիվանսկիե օբյավլենիյա» թերթի գլխագիրը

1900 թ. հոկտեմբերի 24-ին բժիշկ Լևոն Տիգրանյանին հաջողվում է ձեռք բերել այդ թերթի հրատարակության իրավունքը, սակայն միայն ռուսաց լեզվով։ Ստանալով թույլտվությունը, նա միջնորդագիր է ուղարկում Մամուլի գործերի գլխավոր վարչություն և հայտնում, որ Էմին Տեր-Գրիգորյանին վստահում է և նրան է հանձնում թերթի խմբագրի պարտականությունները։ 1900 թ. № 1431 վկայականով Էմին Տեր-Գրիգորյանը հաստատվում է «Էրիվանսկիե օբյավլենիյա» թերթի խմբագրի պաշտոնում։ Թերթը լույս է տեսնում 1900 թ. դեկտեմբերի 8-ին, ռուսերեն, շաբաթը մեկ, երբեմն էլ երկու անգամ։ Յուրաքանչյուր համար բաղկացած էր եր-

կու էլիզ։ Թերթը տպագրվում էր Էմին Տեր-Գրիգորյանի տպարանում։ 1907 թ. խմբագրին՝ Էմին Տեր-Գրիգորյանին հաջողվում է ստանալ թերթում հայերեն հոդվածներ տպագրելու իրավունքը[21]։

Թերթի համար հաստատվում է հետևյալ ծրագիրը.

1. Հոդվածներ Երևան քաղաքի ամենօրյա կյանքի մասին։

2. Օրվա կարևոր նորությունները։

3. Ներկայացումների և համերգների մասին համառոտ գրախոսություններ։

4. Համառոտ ֆելիետոններ։

5. Հասարակական կյանքի վերաբերյալ արտատպություններ տարբեր թերթերից։

6. Հայտարարություններ։

7. Թերթին կից հավելվածի ձևով Պետերբուրգի հեռագրական գործակալության հաղորդումների հրապարակումներ[22]։

Նման ծրագիրը Էմին Տեր-Գրիգորյանին հնարավորություն է տալիս մանր-մանր լուրերից ու հայտարարություններից բացի, իր թերթում տպագրել նաև հոդվածներ՝ քաղաքի բարեկարգմանը վերաբերող ու քաղաքի բնակչությանը հուզող կենսական հարցերի մասին։ «Այսօրվանից,—գրում է նա,—մենք իրավունք ենք մեզ համարում ձայն տալ «Էրիվանսկիե օբյավլենիյա» թերթիկում։ Եվ մեր առաջին ձայնն է. «Ջո՞ւր, ջո՞ւր տվեք մեզ»[23]։ Այդ տարիներին Երևանում գործում էր ընդամենը երկու աղբյուր։ Կոյուղի չլինելու պատճառով կեղտոտ ջրերն անցնում էին գետնի տակ և աղտոտում խմելու ջրերը։ Թերթի 1908 թ. համարներից սկսած տպագրվում է «Խմելու ջուր տվեք մեզ» ընդհանուր խորագիրը կրող հոդվածաշարը, որտեղ համարձակ քննադատվում են տեղական իշխանությունները, որոնք շարունակ խոսել են ջրանցքի կառուցման մասին, բայց գործնական ոչ մի քայլ չեն կատարել։ Ամենից շատ նա մեղադրում է քաղաքային վարչությանը (ուպրավային), ապա և քաղաքային դումային։ «Եթե ընդունենք ուպրավան թույլ է,— գրում է նա,— անուշադիր



է, դուման անշուշտ, պետք է լինի ուժեղ, հեռատես և ուշադիր։ Իսկ ի՞նչ է անում դուման»[24]։ Թերթը մեղադրում է դումայի իրավասուներին, որոնք երբ ստանում են կոնցեսիոներների համաձայնությունը ջրանցքի կառուցման վերաբերյալ, դումայի նիստում «սև քվե են տալիս», փոխանակ կողմ քվեարկելու։ Այսպես, ինժեներ Միրզոևը 7—8 տարի առաջ համաձայնվել էր կոնցեսիայով կառուցել ջրանցք Երևանում, սակայն քաղաքագլուխն ու իրավասուները չեն հաստատում նրա ներկայացրած պայմանագիրը, և այդպես գործը հետաձգվում է ու ձգձգվում։ Թերթը տպագրում է մի խումբ քաղաքացիների՝ քաղաքագլխին ուղղված դիմում-նամակը, որտեղ գրված է. «Դուք, պ. քաղաքագլուխ, ի՞նչ եք անում հիմա այդ հարցի շուտափույթ լուծման համար, կամ մինչև ե՞րբ կարելի կլինի հուսալ, որ մեր քաղաքը իր ուզած գեթ հիշյալ փոքրիկ ջուրը կունենա»։ Ապա մեղադրվում է քաղաքագլուխը այն բանի համար, որ նա «չի նայում գործի վրա իբրև մի անհրաժեշտության, չի հրավիրում Միրզոևին գոնե մասնավոր խոսակցության այդ հարցի առթիվ և չի աշխատում կարելույն չափ նպաստել գործին և տալ նրան ցանկալի լուծումն, այլ նա՝ այս դեպքում ավելի շատ դատավորի, վճռաբեկողի դեր է կատարում, քան թե հոգատարի ու այդպիսով առաջանում են նոր խոչընդոտներ»[25]։

Խորամուխ լինելով հարցի մեջ, թերթը գտնում է, որ ջրանցքի ձգձգման պատճառներից մեկն էլ մի խումբ իրավասուների (Համբարձում Եղիազարյան, Բարսեղ Եղիազարյան, Գր. Ամիրյան և ուրիշներ) թշնամական վերաբերմունքն է ինժեներ Միրզոևի նկատմամբ։

Որոշ ժամանակ անց թերթում տպագրվում է հայտարարություն այն մասին, որ Ղրխբուլաղի ջրանցքը կառուցելու համար կազմվել է մի ընկերություն և որը նպատակ ունի ձեռք բերել ինժեներ Միրզոևի՝ մեծ ջրանցքի կառուցման կոնցեսիայի իրավունքը։ Շուտով նահանգային ներկայացուցչության կողմից հաստատվում է ընկերության կազմը (12 մարդ)։ Այդ ընկերության շնորհիվ էլ վերջապես սկսվում և ավարտվում է Ղրխբուլաղի ջրանցքի կառուցումը[26]։ Թերթի

1912 թ. հունվարյան համարում տպագրվում է «Մեր ջրանցքը և նոր տարի» հոդվածը, որտեղ խմբագրությունն իր շնորհավորանքներն ուղղելով քաղաքացիներին, գրում է. «Այսօր ահա, միայն այսօր իրավունք ենք համարում մեզ ասելու մեր քաղաքացիներին լիառատ սրտով և ոչ շաբլոնական ձևով, շնորհավոր նոր տարի։ Այսօրվանից քաղաքի համար սկսվում է մի նոր դարաշրջան, նոր դարագլուխ՝

Դարագլուխ՝ առողջապահական տեսակետից
Դարագլուխ՝ կուլտուրական տեսակետից
Դարագլուխ՝ ինքնաճանաչության տեսակետից»։

«Էրիվանսկիե օբյավլենիյա» թերթն իր էջերում հիշատակում է ընկերության նախաձեռնողների անունները (Կ. Աֆրիկյան, Ա. Թամամշյան, Բ. Եղիազարյան, Ալ. Ազիզյան և ուրիշներ)։

Ավարտելով իր պայքարը ջրանցքի կառուցման համար, Էմին Տեր-Գրիգորյանն այսպես է գրում. «Արգելքներն ի վերջո խորտակվեցին և դրանց փլատակների տակ ընկան մեր ճշմարտությունները ու բողոքը սրա-նրա երեսին ասելու»[27]։ Հայտնի է, որ ջրանցքի կառուցման ձգձգման գործում քաղաքագլխին մեղադրելու համար Էմին Տեր-Գրիգորյանը դատի է տրվել։

Էմին Տեր-Գրիգորյանը որպես խմբագիր վհատվել չգիտեր։ Նա նույն ոգով շարունակում է բարձրացնել Երևան քաղաքի բարեկարգման հետ կապված մյուս բոլոր հարցերը։ «Անհրաժեշտ ձեռնարկություններ» հոդվածում առաջարկվում է Երևանում կառուցել էլեկտրակայան, կոյուղի, հեռախոսային ցանց և այլն։ Նա անգամ հաշվումներով ցույց է տալիս, թե որքան գումար է հարկավոր այդ կառուցումներն իրականացնելու համար։ Եվ եթե նրա բոլոր ծրագրերը իրականություն դառնային, ապա, ինչպես ինքն է գրում. «Քաղաքը այնպիսի առաջադիմություն կունենա, մի այնպիսի կլիմայական և առողջապահական ներդաշնակություն կստանա, որին կնախանձեն շատ ու շատ կուլտուրականապես զարգացած ու առաջադիմած քաղաքները և մեր քաղաքը օրինակելի կդառնա շատ շատերի համար»[28]։



Թերթում բարձրացվում է նաև Երևանում կուլտուր-կրթական օջախների ստեղծման, բարեգործական հիմնարկների կազմակերպման հարցը։ Եվ ցանկալի է համարվում, որ այդ ձեռնարկությունները չընկնեն մասնավոր մարդկանց ձեռքը, քանի որ դրանք կգործեն ի վնաս քաղաքի ու քաղաքացիների։ «Ինչպես այսօր, նույնպես և միշտ մեր ամենից նշանաբանը պետք է լինի—քաղաքը քաղաքացիների համար։ Երջանիկ է այն քաղաքը, երբ նրա ղեկավարներն էլ այդ միակ նշանաբանով կառաջնորդվեն»[29]։

Եվ դիմելով քաղաքի ունևոր խավի ներկայացուցիչներին, գրում է. «Մենք կարծում ենք, որ նրանք, իսկական հասարակության անդամները, իսկական բարեգործները շնորհակալությամբ պիտի ընդունեն մամուլի առաջարկությունը, մամուլի հիշեցումը և օր առաջ արձագանք պիտի տան հրավերին իրենց պատրաստակամությամբ, իրենց հոգու գեղեցկությամբ։ Թող չմոռանան, որ անհատների մեծագործությունները ազգերի, ժողովուրդների, հասարակության պարծանքն են, իսկ նրանց անտարբերությունը՝ քայքայումը, ոչնչացումը։

Ազգերը կենդանի կմնան հավիտյան իրենց անհատների ըմբռնողությամբ, գիտակցությամբ և զոհաբերությամբ»[30]։

Թերթը առաջարկում է մեկ միլիոնի չափ փոխառություն վերցնել քաղաքում կոյուղի անցկացնելու, էլեկտրակայան կառուցելու և հեռախոսային ցանց ստեղծելու համար։ Անգամ նշվում է այն մասին, թե որ փողոցներով կոյուղու խողովակները հարմար է անցկացնել և դիմում է ներկայացվում դումային՝ կոյուղու կառուցման նախահաշիվը կազմելու համար։ Հաղորդելով այն մասին, թե դումայի նիստերից մեկում ձախողվել է էլեկտրակայանի կառուցման հարցի քննարկումը, թերթը հորդորում է քաղաքացիներին՝ չընկճվել, այլ կրկին ու կրկին նույն հարցը դնել դումայի քննարկմանը։

1910—1911 թթ. Էմին Տեր-Գրիգորյանը լինելով քաղաքային դումայի անդամ իր պարտքն է համարում նորից բարձրացնել էլեկտրակայանի կառուցման հարցը։ Երևանում էլեկտրակայանի աշխատանքները կաղ-

մակերպելու համար Թերթը առաջարկում է ստեղծել մի առանձին ընկերություն: Խմբագիրը մերժում է բժիշկներ Կիրակոսյանի հետ 20 տարվա պայմանագիր կնքելու մասին քաղաքագլխի կարծիքը, քանի որ նման դեպքում կարող էր չլուծվել հարցը:

Էմին Տեր-Գրիգորյանը համարձակորեն իր Թերթի էջերում բարձրացնում է այն հարցերը, Թե ինչպե՞ս է ապրում Երևանցին, ովքե՞ր են Թալանում ու կողոպտում նրա օրվա արդար վաստակը և այլն: «Ամեն օր,— գրում է նա,— կարդում ենք Թուրքաստանի զանազան դրամաշորթների ու ավազակների մասին: Երևանում մենք էլ ունենք մեր դրամաշորթները: Միայն օրինավոր հոգի վրա դրած. մեզանում կատարվածները ոչ պակաս վատ են, ոչ պակաս զզվելի»[31]: Այստեղ նշում է, Թե ովքեր են նրանք. «Դրանք փոթթրաթչիները, զանթարչիները, խարջ հավաքողները, այադչիներն են, որ քաղաքային վարչության հետ պայմանավորված, օրը ցերեկով հաղարավոր խեղճերի աչքարա ծեծում, ջարդում, Թալանում են, իսկ ողորմելի ու անպաշտպան գյուղացիներին շատ անգամ դատարկ տուն են ետ դարձնում»[32]: Այստեղ ավելացվում է, որ այդ բոլոր անարդարությունները կատարվում են դումայի ու վարչության դիմաց, նրանց իմացությամբ: Էմին Տեր-Գրիգորյանի Թերթում տպագրված քաղաքային դումայի և քաղաքային վարչության դեմ ուղղված հոդվածները ոչ այլ ինչ են, եթե ոչ ցարական բյուրոկրատական ապարատին հասցեագրված քննադատական հոդվածներ: Այդ առթիվ Թ. Հակոբյանը գրում է. «Հայտնի են «Էրիվանսկիե օբյավլենիյա» Թերթի խմբագրի և քաղաքային ինքնավարության օրգանների ու դրանց ներկայացուցիչների միջև գոյություն ունեցող տարաձայնություններն ու պայքարը, որոնք արտաքնապես լոկ կոմունալ հարցերին վերաբերող վեճեր էին, բայց ըստ էության Թերթիկի կողմից պրոպագանդա էր՝ ուղղված քաղաքային բուրժուական դումայի և նրա վարչության դեմ»[33]: Պետք է ավելացնել, որ այդ



վեճերը միայն կոմունալ շինարարության հարցերին չէին վերաբերում: Դումայի և խմբագրի միջև տարաձայնություններ էին լինում նաև ազգային մշակույթի գնահատման, անցյալի կուլտուրայի հարցերի բարձրացման վերաբերյալ: Այսպես, քաղաքային դուման մերժում է հայոց գրերի գյուտի և տպագրության տոնակատարությանը մասնակցելու համար Երևան քաղաքից պատվիրակ ուղարկելու մասին դումայի անդամ Ս. Տեր-Մարտիրոսյանի առաջարկը, հետևյալ պատճառաբանությամբ. «Նկատի ունենալով, որ նախապատրաստվող տոնակատարությունը ունի պատմական ու հասարակական կարևոր նշանակություն միայն հայերի համար, ուստի քաղաքային դուման որոշում է Տեր-Մարտիրոսյանի առաջարկը չմտցնել դումայի քննարկմանը»[34]: Դրա համար Տեր- Մարտիրոսյանը բողոքում է, հայտնելով, Թե Բաքվից տոնակատարությանը մասնակցելու համար ուղարկված են երեք ներկայացուցիչ, մինչդեռ Երևանից և ոչ մեկը: Թերթը արձագանքելով նրա բողոքին, տպագրում է այն և իր քննադատական խոսքն ասում քաղաքային դումայի հասցեին:

Եվ ընդհանրապես այն հարցերը, որոնք ընԹացք չէին ստանում դումայի նիստերում, Թերթը փորձում էր լուծել իր էջերի միջոցով: Թերթը առաջարկում է Երևանում ստեղծել արհեստավորական վարչություններ (ուպրավաներ), որոնք կկարգավորեին արհեստավորների վարձատրման գործը և արհեստավորի աշխատանքի կազմակերպման վերաբերյալ այլ հարցեր: Առաջարկվում է կանանց ևս ներգրավել արհեստավորների շարքը, կառուցել առանձին արհեստանոցի շենք կանանց համար և սովորեցնել նրանց կար ու ձև, ջուլհակություն, կարպետ-խալի գործել և այլ արհեստներ: Այստեղ նշվում է այն մասին, որ քաղաքի մի շարք ունևոր անձինք (Երվանդ Աֆրիկյան և ուրիշներ) արդեն դրամական միջոցներ են տրամադրել նման արհեստանոցի շենքի կառուցման օգտին: Գործին հաջող ընթացք տալու համար Թերթը հուսադրում է, ոգևորում, խրախուսում է նրանց, գրելով. «Մենք չենք կարծում, որ պ. Ե. Աֆ-

րիկյանը կհրաժարվի իր ունեցած տրամադրություններից գեթ այսպիսի մի կենտրոնակ, հասարակաօգուտ գործի համար նվիրաբերություններից, ինչպես և մեծահոգյա եմ, որ հոգաբարձությունն էլ իր կողմից ի տրիտուր նրա արածին, կկնքե արհեստանոցի ճակատին «Ալյամալյան—Ն. Աֆրիկյան արհեստանոց» վերնագիրը»[35]։

Թերթն իր էջերում բարձրացնում է նաև որբ ու աղքատ երեխաների համար ապաստարան-արհեստանոց կառուցելու հարցը։ Ուրախությամբ արձանագրում է այն փաստը, որ տ. Մ. Միրզոյանը նման ձեռնարկություն կազմակերպելու ուղղությամբ արդեն գործնական միջոցներ է դիմել։

«Էրիվանսկիե օբյավլենիյա» պարբերականի էջերում աչքաթող չեն արվում նաև կրթության և լուսավորության հարցերը։ Հոդվածներ են տպագրվում Երևանի թեմական դպրոցի, Գայանյան ուսումնարանի մասին։ Բարձր գնահատելով Երևանի թեմական դպրոցի դերը մատաղ սերնդի դաստիարակության գործում, թերթը գրում է. «Գտնվելով Երևանյան նահանգի կենտրոնում, Արարատյան դաշտի սրտում, շրջապատված հարյուր հազարավոր աշխատավոր հայությամբ, սա է միակ կանթեղը, որի պլպըլացող ճառագայթները պիտի տարածվեն հայ շինականի ամենախուլ խրճիթները լուսավորելու»[36]։

«Էրիվանսկիե օբյավլենիյա» թերթում իրենց արժանի գնահատականներն են ստացել արվեստի և կուլտուրայի նշանավոր գործիչները։ Այսպես, լինելով Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի առաջին գնահատողներից մեկը, թերթը գրում է. «Պ. Տիգրանյանին մենք պետք է շնորհավորենք իր վաստակ գործով. մի խիստ դժվարին գործ, որ մեր Կովկասի մեջ հայ օպերայի առաջնությունն է կազմում։ Երաժշտագետը կգտնի անշուշտ իրեն հետևողներ։ Դժվարը առաջին օրինակն է։ Նա գցեց իր առաջին հատիկը մի բարգավաճ հողի վրա և այդ հատիկը կծլի, կզորանա անշուշտ»[37]։



Լինելով օրվա նորությունների լրաբերը, «Էրիվանսկիե օբյավլենիյա» թերթը չի խուսափել նաև հասարակական-քաղաքական անցուդարձերը նկարագրելուց։ Այն արձագանքել է 1914 թ. Առաջին համաշխարհային պատերազմի, ինչպես նաև 1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության անցքերին։ Միաժամանակ արտահայտել է և իր վերաբերմունքը այդ պատմական խոշոր իրադարձությունների նկատմամբ։ «Մանիֆեստացիան Երևանում» հոդվածում հանգամանորեն նկարագրված է այն ցույցը, որ կազմակերպվել է Երևանում Համաշխարհային պատերազմի ահարկու լուրը ստացվելուց հետո։

Ռուսական և արևմտաեվրոպական երկրներում լույս տեսնող թերթերից սիստեմատիկաբար, գրեթե յուրաքանչյուր համարում տպագրվում էին լուրեր պատերազմի ընթացքի և կարևոր իրադարձությունների մասին։ Այդ լուրերի մեծ մասը տպագրվում էր ռուսերեն։ Թերթը դատապարտում էր պատերազմի հրձիգներին, հատկապես գերմանական կայսրությանը և հույս հայտնում, թե պատերազմը շուտով կավարտվի։

1914—1917 թթ. համարները ողողված են ռազմաճակատին նվիրատվություններ կազմակերպելու հորդորներով։ Թղթակցություններից մեկում ընդգծված է, որ պատերազմում ամենից շատ տուժողը պրոլետարիատն է։ «Այնտեղ, պատերազմի դաշտում,—գրված է հոդվածում,—մեծ չափերով զոհեր տվողն էլ այդ դասակարգն է, այստեղ նրա թիկունքում, ամենից շատ հարվածներ կրող և զրկվողն էլ նա է»[38]։

1915 թ. Թուրք ջարդարարների կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով քաղաքը լցվում է հայ գաղթականներով։ Թերթը դիմում է Երևանի բնակչությանը, խնդրելով ինչով կարելի է օգնել գաղթականությանը։ «Մարդիկ կոտորվում են իբրև ճանճեր,—գրված է այնտեղ։—Հաց չկա քաղցածներին բաժանելու, չկա դեղ ու միջոց նրանց բժշկական օգնություն հասցնելու»։ Ապա շարունակում է. «Ժամանակն է վերջապես, որ երևանցին էլ սթափվի, թո-

թափի իր վրայից անգթության ու ստրկության ոստայնը և կարելույն չափ առատ նվերներով ու անկեղծ աշխատակցությամբ դա օգնության մի այսպիսի աշխարհավեր աղետին...։ Առաջ եկեք և դուք, քաղաքացինե՛ր։ Ահա այս վայրկյանին, քանի ուշ չէ, ամեն ոք՝ թե՛ կին, և թե՛ տղամարդ, թե՛ օրիորդ, և թե՛ երիտասարդ, թե՛ մեծ, և թե՛ փոքր, թե՛ ինտելիգենտ, և թե՛ բանվոր դասակարգ—մի խոսքով ամեն մի կարող անձն և մեր ուժերի չափ աշխատեցեք թեթևացնել այդ թշվառների դառնության բաժակը»[39]։

Հայ ժողովրդի կյանքի օրհասական այդ օրերին օգնության ձեռք են մեկնում վրաց և այլ ժողովուրդների աշխատավորները։ Թերթը տպագրում է վրաց բանվորների նամակը՝ ուղարկված Սուխումից հենեյալ վերնագրով. «Վրաց բանվորների ընծայաբերությունը հայ գաղթականների օգտին»։ Նամակում նշված էր, որ «Պայքար» հայոց թերթի խմբագրությանը Սուխումի մի խումբ վրացի բանվորներ՝ հօգուտ հայ գաղթականների ուղարկել են 27 ռուբլի։ Նրանք միանգամայն պատապարտում են ազգայնական կուսակցություններին, որոնք ազգամիջյան կռիվներ են հրահրում երկու բարեկամ ժողովուրդների միջև։ «Դեմոկրատիայի ճշմարիտ բարեկամներս,—գրում են նրանք,—բանվորներս Սուխումից, միանգամայն դատապարտում ենք շովինիստների քաղաքականությունը և ձեռք ենք մեկնում անտուն հայ ժողովրդին, հայտնում ենք նրան մեր խոր ցավակցությունը և համակրանքը։ Մենք հավատում ենք, որ հայ ժողովուրդը ենթարկվելով պատմական դառն փորձության, վերջ ի վերջո երես կթեքի ինքնակոչ պաշտպաններից, սեփական ուժերով հանդես կգա իր դեմոկրատական ձգտումների իրականացման համար»[40]։

Թերթը հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական օրինակներով ցույց է տալիս, որ հայն իր դժբախտության օրերին դիմացել ու տարել է»։ Ուստի, հույս է հայտնվում, որ այս անգամ էլ նա անպայման կկարողանա



ընդդիմանալ թշնամու սև ուժերին, քանի որ նրա մեջ ազատ ապրելու, ազատ շնչելու հոգին չի մեռել։

1917 թ. փետրվարին, երբ տեղի ունեցավ բուրժուադեմոկրատական հեղափոխությունը, տապալվեց միապետությունը, թերթն անդրադարձավ պատմական այդ իրադարձությանը[41]։

Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո թերթը երկար չգոյատևեց։ 1917 թ. հուլիսի 22-ին լույս տեսավ թերթի վերջին համարը։

«Էրիվանսկիե օբյավլենիյա» թերթը համեմատաբար երկար կյանք ունեցավ, շուրջ 17 տարի։ Այդ ընթացքում պաշտոնական լուրերից զատ, թերթը տպագրել Երևան քաղաքի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի շուրջ գրված հոդվածներ։ Թերթում առաջին անգամ բարձրացվեցին Երևանում ջրմուղի, կոյուղու, էլեկտրականության անցկացման և այլ հարցեր։ Այդ հարցերի իրականացման ուղղությամբ բավական ջանքեր գործադրեց խմբագիրն անձամբ։ Մեծ է խմբագրի՝ Էմին Տեր-Գրիգորյանի ավանդը Երևան քաղաքի կառուցապատման, բնակիչների կենցաղային պայմանների բարելավման գործում։ Ուստի և հարկ է անդրադառնալ այդ երախտավոր երևանցու կյանքի և գործունեության լուսաբանմանը։

«Երևանի հայտարարությունները» և «Էրիվանսկիե օբյավլենիյա» թերթերի խմբագիր-հրատարակիչ Էմին Տեր-Գրիգորյանը հայտնի է որպես ոչ միայն խմբագիր, այլև գերասան, դրամատուրգ, հասարակական ակտիվ գործիչ, որպես առաջավոր հայացքների տեր ազնիվ քաղաքացի։

Էմին Տեր-Գրիգորյանը[42] ծնվել է 1855 թ. հունվարին, Երևանում։ Սկզբնական կրթությունն ստացել է Աստրախանի Հայոց Աղաբաբյան ուսումնարանում։ Ապա հոր՝ Հովակիմ Տեր-Գրիգորյանի[43] միջնորդությամբ պատանի Էմինը ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարանը, որը դեռ չավարտած, ընտանիքի հետ տեղափոխվում է Էջմիածին։ Այստեղ նա ընդունվում է Գևորգյան ճեմարան։ Ճեմարանն ավարտելուց հետո նա ընդմիշտ հաստատվում է Երևանում։

16-ամյա պատանի էր, երբ նշանակվում է նահանգային վարչության թարգմանիչ: Աշխատանքային կյանքի առաջին իսկ օրերից նա զննող հայացքով ուսումնասիրում է իր շրջապատը, ընկերների նիստուկացը և հանգում այն եզրակացության, որ նրանց կյանքը աննպատակ է անցնում, որ նրանք ապրում են հոգևոր աղքատ կյանքով, անհաղորդ բարձր ու վեհ գաղափարներին: Նրանց հետաքրքրում է միայն, թե «ինչպես այս կամ այն իրենց սեկրետարին, դելոպրոիզվոդիտելին շողոքորթեն, կեղծեն, գլուխ խոնարհեն և ստրկական պատրաստակամությամբ կատարեն նրանց ամեն մի տեղի, թե անտեղի պահանջները, որպեսզի հաջողացնեն մի կերպ, մի կամ երկու ռուբլով իրենց ռոճիկներն ավելացնել տան, կամ մի որևէ ամենաչնչին իրավունք, նույնիսկ պաշտոն ձեռք ձգել կարողանան»[44]: Նման միջավայրը չէր կարող բավարարել Էմինին: Նա իր խառնվածքով և էությամբ չէր նմանվում իր շրջապատի մարդկանց: Էմին Տեր-Գրիգորյանին հանգիստ չէր տալիս շրջապատի մարդկանց հոգևոր կյանքը բարեփոխելու, նրանց միտքն ու սիրտը կրթելու, դաստիարակելու հարցերը: Ինչը կարող էր հարստացնել երևանցու, նրա հոգին ու միտքը: Այս հարցն էր նրան ամենից շատ հետաքրքրում: Նա գտավ այդ հարցի պատասխանը: Նրա կարծիքով այն լավագույն ասպարեզը, որը կարող էր կրթել երևանցուն, դա թատրոնն էր: Ասես, նրան գիշեր, թե ցերեկ հանգիստ չէր տալիս Երևանում թատրոն հիմնելու միտքը: «Իմ գլխում,— գրում է նա,— շարունակ պտտում էր այն միտքը, թե ինչպես կարողանամ մի խումբ կազմակերպել և սկսել թատրոնական գործը»: Այդ տարիներին Երևանի հոգևոր թեմական դպրոցում գործում էր թատերական ինքնագործ խումբ, որի անդամներն էին ուսուցիչներ Նահապետ Աթանասյանը, Առուսյակ Բաբայանը, Արտաշես Հակոբյանը: Խումբը բեմադրում էր գլխավորապես պատմական թեմաներով պիեսներ («Վասագան», «Շուշանիկ», «Արշակ Երկրորդ» և այլն): Այդ խմբի ներկայացումներին որպես հանդիսատես մի քանի անգամ մասնակցում է նաև Էմինը: Մոսկվայում Շումսկու, Սադովսկու



և մյուս նշանավոր դերասանների խաղին ծանոթ Էմին Տեր-Գրիգորյանին չէին կարող բավարարել ինքնագործ խմբերի ներկայացումները: Նրա միակ լավագույն ցանկությունն էր՝ մտնել այդ խմբի մեջ և աշխատել իր սիրած ասպարեզում: 1873 թ. խմբի լավագույն անդամ, Լազարյան ճեմարանի շրջանավարտ Արտաշես Հակոբյանի միջոցով նրան հաջողվում է ընդունվել խմբի անդամների շարքը: Այս խմբի ուժերով էլ Երևանում առաջին անգամ բեմադրվում է Էմին Տեր-Գրիգորյանի «Խնչոյի թուղթը» պիեսը[45]: Խնչոյի դերը կատարում էր ինքը՝ Էմին Տեր-Գրիգորյանը: Պիեսը լավ ընդունելություն է գտնում Երևանում: «Այսպես սկսվեց,— գրում է նա,— Երևանում թատրոնասիրական իմ առաջին գործունեությունը: Այնուհետև ես դարձա մի անհրաժեշտ անդամ: Ինչ անել կուզե, որ խաղում էի և ողբերգական դերեր»[46]: Այդ նույն տարիներին Էմին Տեր-Գրիգորյանը միաժամանակ որպես ուսուցիչ աշխատում էր Երևանի Գայանյան օրիորդաց դպրոցում, որի տեսուչն էր Հովսեփ Մելյանը: Դպրոցում թատերական բեմ ստեղծելու վերաբերյալ ստանալով Մելյանի համաձայնությունը, նա թատերական պարագաները թեմական դպրոցից տեղափոխում է Գայանյան դպրոց: Առաջին ներկայացումը («Արշակ Երկրորդ») անցնում է չափազանց հաջող: Ստացված եկամուտները բավարարում են Էմին Տեր-Գրիգորյանին և նա աստիճանաբար սկսում է իրականացնել դպրոցին կից բեմ կառուցելու իր մտադրությունը: Դրամական որոշ գումար ձեռք բերելու նպատակով նա իր ծառայությանն է առաջարկում Երևանի առաջին տպարանի տնօրեն Զ. Գևորգյանին, որն իր տպարանը կառավարելու համար օգնական էր փնտրում: Էմին Տեր-Գրիգորյանը դառնում է Զ. Գևորգյանի գործընկերը[47], հույս ունենալով, որ «դա կլինի այն միակ երևակայական գործը, որ հնարավորություն և միջոց կտա օգտակար լինելու թատրոնին»: Եվ իրոք, նրա նախագծի համաձայն Գայանյան դպրոցում կառուցվում է թատերական բեմ՝ իր օժանդակ սենյակներով: Այդ առթիվ Հովսեփ Մելյանը «Մեղու Հայաստանի» թերթին ուղարկած թղթակցության մեջ գրում է. «պ. Տեր-

Գրիգորյանի և նրա ընկեր բարեմիտ երիտասարդների ազգօգուտ գործունեությունը ի լուր մեր ազգային ընթերցողաց նորա ոչ միայն իրենց ազնիվ զգացողությամբ վճարեցին դպրոցին պարզ հաշվետվությամբ ծախքից դուրս բոլոր իրենց վաստակած կոպեկներն, այլև բորբոքեցին մեր սրտի մեջ մի սեր, հիմնել և շինել բավականաչափ ծախքով դպրոցիս արժանի դահլիճի գլխում մի համարավոր բեմ իրեն վերաբերյալ սենյակներով, ուր ամեն անձնազոհությամբ պատրաստ են խմբովին հիշեալ երիտասարդները, իրենց խոստման համաձայն, շարունակելու դպրոցիս օգուտի համար նույնպիսի ներկայացումներ»[48]։

1880 թ. Գայանյան օրիորդաց դպրոցի թատերական խմբի ղեկավարն ու ռեժիսորն է դառնում Էմին Տեր-Գրիգորյանը։ Ներկայացումները տրվում են բարեգործական նպատակներով և դերասաններից ոչ մեկը չի վարձատրվում։ Էմին Տեր-Գրիգորյանը բեմադրում է կենցաղային թեմաներով գրված իր պիեսները, որոնցից ուշադրության արժանի են «Դամոկլյան սուր», «Բարեգործի դիմակի տակ» և այլ դրամաները։

Էմին Տեր-Գրիգորյանն իր «Բարեգործի դիմակի տակ» պիեսը գրել է 1891 թ.։ Սակայն ցարական գրաքննությունը թույլատրել է այն տպագրել ու բեմադրել 1894 թ.։ 1893 թ. պիեսը արգելվել է «որոշ տենդենցիոզ բնավորության պատճառով»[49]։ Գրաքննության կոմիտեի պահանջով պիեսը որոշ փոփոխությունների ենթարկելուց հետո հեղինակին հաջողվում է վերջապես բեմադրել այն։ Առաջին անգամ բեմադրվում է Թիֆլիսում, 1895 թ.։ Ներկայացումը ավարտվելուց հետո, Գաբրիել Սունդուկյանը, որ ներկա էր, անձամբ ողջունում է հեղինակին և հաջողություններ ցանկանում նրան։ Էմին Տեր-Գրիգորյանի այս պիեսը բարձր է գնահատվել նաև մամուլի էջերում, «Թատրոն» հանդեսն այն համարել է «մեր թատերական գրականության և հայկական թատրոնի պատմության զարգացման մեջ լուրջ տեղ գրաված պիես», որը պատկերում է «գավառը մաշող ցեցերին, որոնց թիվը, մանավանդ երկրագործությամբ



ապրող ժողովրդի մեջ, միշտ առատ է եղել»[50]։ Դերենիկ Դեմիրճյանը բարձր գնահատելով պիեսը, գրել է. «Բարեգործի դիմակի տակ» դրաման, որը ներկայացնում է գյուղացիության ազատական բողոքը կալվածատերերի դեմ, միաժամանակ լավ բնորոշում է և՛ հեղինակին, և՛ նրա աշխարհայացքը, ուղղությունը, պատկերացնում է նրա հասարակական էությունը գավառի խուլ անկյուններից մեկում, Երևանում։ Դա ժողովրդին մոտ կանգնած մարդու, կուլտուրայի համար պայքարողի և իր ժամանակվա համար համարձակ քաղաքացու տիպն է, որոնցից շատ սակավներն են դիմացել և առավել սակավները հաղթել»[51]։

Պատմաբան Լեոն (Ա. Բաբախանյան) անդրադառնալով Էմին Տեր-Գրիգորյանի պիեսներին, առավել ուշադրության արժանի է համարում նրա այդ երկու պիեսները։ Նա գրում է. «Կան երկուսը, որոնք բավական են, որ պ. Էմին Տեր-Գրիգորյանը մնա մեր թատերագրության մեջ. «Դամոկլյան սուրը» և «Բարեգործի դիմակի տակ»[52]։ Իսկ Ալեքսանդր Աբելյանը Էմին Տեր-Գրիգորյանի 80-ամյակի առթիվ հղած իր ողջույնի նամակում գրում է. «Դուք առաջինն եք եղել, որ Ձեր պիեսների միջոցով տվել եք հայ գյուղացու չարքաշ կյանքը և «բարեգործության դիմակի» տակ թաքնված նրան հարստահարող քաղաքացի բուրժուաների կեղտոտ արարքների նկարագիրը»[53]։

Ինչպես հայտնի է, Էմին Տեր-Գրիգորյանի «Դամոկլյան սուր» պիեսը դերասաններ Արմեն Արմենյանը և Դուրյան-Արմենյանը բեմադրել են Կահիրեում։ Եգիպտոսի հայ մամուլը գովասանքի բարձր խոսք է ասել պիեսի մասին[54]։

Էմին Տեր-Գրիգորյանն իր իսկ վկայությամբ եղել է Գայանյան ուսումնարանի թատերական խմբի և՛ ռեժիսորը, և՛ ղեկավարը, և՛ հանդերձապահը, և՛ ներկայացման կարգադրիչն ու տոմսավաճառը։

1892 թ. Գայանյան ուսումնարանին կից գործող թատերական խումբը նախորդ խմբակների նման անցնում է պատմության գիրկը։ Սակայն, ինչպես միշտ, այս անգամ էլ Էմին Տեր-Գրիգորյանը չի հրաժարվում թատերական մշտական

խումբ ստեղծելու մտքից: Նա մի քանի անգամ մասնակցում է Ա. Ն. Տիգրանյանի ստեղծած խմբի ներկայացումներին: Իսկ 1906—1907 թթ. լինելով քաղաքային ակումբի ավագների խորհրդի անդամ, անմիջականորեն ղեկավարում է քաղաքային ակումբի (Զանփոլադյանի շենքում) թատրոնի դահլիճի և շարժական բեմի կառուցման աշխատանքները: Այստեղ առաջին ներկայացման ժամանակ, ինչպես Էմին Տեր-Գրիգորյանն է գրում. «Վարագույրները բարձրացվում են ցնծագին օվացիաներով»:

Էմին Տեր-Գրիգորյանը խմբագիր-հրատարակիչ, դրամատուրգ և Երևանում թատրոնի հիմնադիրներից մեկը լինելուց բացի, եղել է նաև պետական պաշտոնյա անձ, հասարակական-կազմակերպչական լայն աշխատանք է կատարել իր ծննդավայրում՝ Երևանում: Նա սկզբում եղել է նահանգային վարչության քարտուղար, 1890 թվականից՝ քաղաքային վարչության անդամի պաշտոնի թեկնածու և հետո Երևանի քաղաքային դումայի անդամ, ինչպես նաև քաղաքային ակումբի ավագների խորհրդի անդամ և այլն: Օգտագործելով պետական ծառայությունները, նա համարձակորեն բարձրացրել է Երևան քաղաքի ու նրա բնակչության համար կարևոր նշանակություն ունեցող հարցեր: Այդ հարցերի շուրջ (ջրմուղ-կոյուղու, հեռախոսային ցանցի, էլեկտրակայանի կառուցում, փողոցների բարեկարգում և այլն) պետական-պաշտոնական անձանց հետ ունեցած վեճերը նրան կանգնեցրել են անգամ դատի առաջ: Քաղաքագլուխ Իվան Մելիք-Ագամալյանը «Էրիվանսկիե օբյավլենիյա» թերթում իր հասցեին տպագրված քննադատական խոսքերի համար բողոք է ներկայացրել Երևանի նահանգի դատարանի իրավարարին[55], Էմին Տեր-Գրիգորյանը հրավիրվել է դատարան: Օրենքի համաձայն սկզբում պետք է հաշտություն կնքվեր երկուսի միջև, սակայն քանի որ այդ հաշտությունը չի կնքվում, գործը նորից է ներկայացվում դատարան: Էմին Տեր-Գրիգորյանը չի լռում, նա համարձակորեն շարունակում է մեղադրել քաղաքագլխին՝ ջրանցքի կառուցումը ձգձգելու համար: «Եթե նույնիսկ նստելու լինենք բանտում, այնուամենայնիվ մենք



կգոռանք նրա լուսամուտներից, որ մեզ խմելու ջուր էր հարկավոր և որ այդ ունենալու հնարավորությունից զրկեց մեզ մեր քաղաքագլխի «խորին համոզմունքը»......»[56]:

1911 թ. մայիսի 24-ին նահանգային դատարանում լսվում է Էմին Տեր-Գրիգորյանի դեմ քաղաքագլխի կողմից հարուցված դատական գործը: Էմին Տեր-Գրիգորյանն արդարացվում է[57]: Այս վճիռը չի բավարարում քաղաքագլխին: Նա գործը ներկայացնում է Թիֆլիսի դատարանին: 1916 թ. Էմին Տեր-Գրիգորյանի դեմ հարուցված գործը նորից է լսվում Թիֆլիսի դատական պալատում, որտեղ և Էմին Տեր-Գրիգորյանը վերջնականապես արդարացվում է[58]:

Իր ամբողջ գործունեության ընթացքում Էմին Տեր-Գրիգորյանը հաղթահարել է շատ ու շատ դժվարություններ, խոչընդոտներ: Գիտակցելով իր ձեռնարկած գործի կարևորությունը հարազատ քաղաքի ու նրա բնակչության համար, նա գրել է. «Պայքարել եմ Երևանի դեմ Երևանի համար»: Եվ այդ բոլորը նա արել է առանց վարձատրության: «Իմ բոլոր ձեռնարկումները և նորամուծությունները կատարել եմ բառիս բուն իմաստով առանց մի որևէ վարձի կամ կողմնակի օժանդակության, շատ հաճախ զոհ բերելով իմ առանց այն էլ վատ առողջությունս, իսկ վարձը եղել է միմիայն քաղաքիս հասարակության գիտակցությունը, շարունակական գնահատությունը և անպայման սրտակցումը»[59]:

Էմին Տեր-Գրիգորյանը լինելով համեստ բնավորության տեր անձնավորություն, ամեն անգամ մերժել է իր հոբելյանը կազմակերպելու վերաբերյալ ընկերների առաջարկը: Առաջին անգամ, 1899 թ. Գ. Ջմշկյանը հանդես է եկել «Տարազում» և բարձրացրել Էմին Տեր-Գրիգորյանի թատերական գործունեության 25-ամյա հոբելյանը նշելու հարցը: Ահա թե ինչ է գրում նա. «... պետք է, արժանի է և անհրաժեշտ է հիշել ու տոնել մի այնպիսի անձնավորության քսան և հինգամյա գործունեությունը, որ բոլոր իր պատանեկան և երիտասարդական օրերը նվիրել է հայ թատերական բեմի առաջադիմության, ենթարկվելով հազար ու մեկ թե բարոյական, և նյութական զրկանքների»[60]: 1899 թ. մի խումբ ընկերներ

հանձնաժողով են կազմում և նրա հոբելյանը անցկացնելու համար թույլտվություն խնդրում նահանգապետ կոմս Տիզենհաուզենից։ Սակայն վերջինս մերժում է նրանց խնդրանքը, պատճառաբանելով, թե հոբելյանը նշելը առժամանակ աննպատակահարմար է»[61]։

1911 թ. նորից «Կայծ», «Նոր ձայն» և այլ թերթերի խմբագրությունների կողմից առաջարկվում է նշել Էմին Տեր-Գրիգորյանի հասարակական ու բեմական գործունեության 40-ամյակը։ Այս անգամ արդեն ինքը՝ Էմին Տեր-Գրիգորյանը շտապում է հանդես գալ և հայտարարել, որ կտրականապես հրաժարվում է իր հոբելյանը նշելուց, քանի որ, ինչպես ինքն է գրում, «Իր հասարակական-բեմական- գրական գործունեությունը իր ավելի քան համեստ չափերով չի կարող դուրս գալ կուլտուրական մարդու գործունեության սահմաններից, ուրեմն և չի կարող լինել հոբելյանական հանդեսների առարկա»[62]։

Թեև Էմին Տեր-Գրիգորյանի հոբելյանը չի նշվում, սակայն նրա մասին հոդվածներ են տպագրվում թերթերում, ամսագրերում։ «Հուշարար» ամսագրի խմբագիր Արամ Վրույրը բարձր գնահատելով նրա կատարած գործը, գրում է. «Նա անսպառելի եռանդով, անձնվեր գործչի մի այնպիսի տիպ է, որոնք գավառում մեկ մեկ լուսատու ջահեր են և դրդապատճառ գեղեցիկ ձեռնարկությունների, որպիսիների կարիքը զգալի է նաև Թիֆլիսի նման կենտրոններում»[63]։

Եվ իրոք, իր ամբողջ գիտակցական կյանքի ընթացքում Էմին Տեր-Գրիգորյանը երազել է Երևան քաղաքի բարեկարգման մասին։ Եվ եղել են մարդիկ, որոնք նրա երազանքները համարել են ֆանտազիա, անիրագործելի։ Բայց նա համառորեն պայքարել է և սպասել այն օրվան, երբ վերջապես հայ ժողովուրդն էլ կկարողանա ապրել «մարդավայել, անցնելով քաղաքակիրթ ազգերի շարքը»։ Խանդավառված նման հույսերով, նա համոզված էր, որ եթե ինքը անձամբ արժանի չլինի գոչելու վերջապես հասանք այդ օրվան, ապա, ինչպես ինքն է գրում. «Կբացականչե այդ ամբողջ սրտով, անհուն բերկրությամբ ամեն մի հայ, համայն հայությունը։ Եվ



չունեցած որոշ ժամանակ նա ինքը բացականչեց այդ վերջապեսը։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո, շարունակելով ապրել ու գործել Սովետական Հայաստանում և լինելով ականատես Երևան քաղաքի հետ կապված իր բոլոր ցանկությունների իրականացմանը, ոգևորությամբ գրել է. «Ինչ իմ հակառակորդները 1909 թ. ֆանտազիա էին համարում, այսօր այդ ամենը բարեբախտաբար խորհրդային իրավակարգում, որը չէր բավականանում միայն ցանկություններով, իրականացած են շատ ավելի մեծ մասշտաբներով»[64]։

Սովետական կառավարությունը բարձր գնահատեց Էմին Տեր-Գրիգորյանի ծառայությունները Երևան քաղաքի համար և նշանակեց նրան թոշակ։ Նա դարձավ Սովետական Հայաստանի անդրանիկ թոշակառուն։ Այդ առթիվ նա գրել է. «Ինձ հայտնեցին, որ Նարկոմն ընդունել է ինձ իբրև իր անդրանիկ թոշակառուն և որոշել է տալ ինձ առաջիկա ամսվանից ամսական 25 ռուբլի ոսկու հաշվով։ Բացի այդ ուշադիր վերաբերմունքից, իմ առաջ բացվեցին մեր պետական բոլոր թատրոնների, մինչև իսկ վերջերում նաև օպերայի դռները՝ նրա սկսած օրից»[65]։

Էմին Տեր-Գրիգորյանի գործունեության արժանին մատուցելու համար 1935 թ. սովետական պետական ու հասարակական օրգանների կողմից տոնվեց նրա ծննդյան 80-ամյակը։ Այդ առթիվ երախտագիտության խոսքեր ասվեցին մտավորականության կողմից, հոդվածներ տպագրվեցին հանրապետական մամուլում («Խորհրդային Հայաստան», «Կոմունիստ», «Գրական թերթ» և այլն)։ Դերենիկ Դեմիրճյանը հանդես գալով «Գրական թերթում», արժանին է հատուցում երախտավոր երևանցուն։ «Էմինը այն բացառիկ մարդկանցից էր,— գրում է նա,— որ պետք է կռիվ մղեր հասարակական ցեցերի դեմ։ ... Էմին Տեր-Գրիգորյանը այն տիպի ընկնող անձնավորություններից էր, որոնց հնում կոչում էին «գավառական գործիչ»։ Նա գիտակցաբար և կամավորապես մնացել է գավառում։ Նա սիրել է գավառը, Երևանը որպես ծննդավայր, որպես գործունեության վայր»[66]։ Ապա Դեմիրճ-

յանն իր խոսքն ավարտում է այսպես. «Ընկ. Տեր-Գրիգորյանը հանդիսացել է համարձակ քաղաքացու, կուլտուրտրեգերի, թատերական գործչի տիպն իր ծննդավայրում՝ Երևանում և պայքարել է «Երևանի դեմ Երևանի համար», ձգտելով այս քաղաքը դնել կուլտուրական ճանապարհի վրա։ Նա իր գործունեությունը կատարել է անշահախնդիր, ձրի, հաճախ վնասելով իրեն, համառ հետապնդելով «լավագույն Երևանին» հասնելու։ Այդ լավագույն Երևանը ուրիշ ոչ մի ուժ չէր կարող իրականացնել, բացի Խորհրդային իշխանությունից, դա իրականացավ ներկա օրերում, բայց ներկա սերունդը և պատմությունը չեն կամենում մոռանալ մի անձնավորության, որն իր կամքով և գործով, իր չափով և մի մարդու համար մեծ չափով հարթել է ներկա Երևանի կուլտուրականության և գրականության ուղին։ Հարգանք այդ անձնավորությանն իր 80-ամյակի օրը»[87]։

Հոբելյանի տոնակատարությունից չորս տարի անց, 1939 թ. էմին Տեր-Գրիգորյանը կնքում է իր մահկանացուն։ Նա իր ապրած ազնիվ կյանքով ու կատարած բարի գործով արժանի տեղ ունի հայ մշակույթի պատմության մեջ։



## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

## «ԶԱՆԳԻ» ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԹԵՐԹԸ (1907)

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում սկսված բանվորական շարժման ալիքը լայն տարածում էր գտնում նաև Անդրկովկասում։ Այստեղ անջատ-անջատ տարերային ելույթներից հետո, բռնկվում են բանվորական հեղափոխական շարժումները։ Դրանց ուղղությունն տվողն ու ղեկավարողը մարքսիզմի գաղափարներն յուրացրած այն բանվոր-հեղափոխականներն էին, որոնք հեղափոխական իրենց առաջին մկրտությունն ստացել էին Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» մեջ և ռուսական սոցիալ-դեմոկրատական խմբակներում։ Նրանց անմիջական նախաձեռնությամբ Թիֆլիսում և Բաքվում կազմակերպվում են մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական խմբակներ։ 1898 թ. Թիֆլիսում հիմնվեց հայ բանվորների առաջին մարքսիստական խումբը, որի կազմի մեջ մտան բանվորներ Հայկ Փիլոսյանը, Մելիք Մելիքզյանը (Դեդուշկա), Աստատուր Կախոյանը (Բանվոր Աշոտ), սոցիալ-դեմոկրատ Գևորգ Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեդ) և ուրիշներ։ Խումբը պրոպագանդիստական լայն աշխատանք էր ծավալում բանվորական շրջաններում։ Իրենց աշխատանքներն էլ ավելի ընդարձակելու նպատակներով խմբի ակտիվ անդամները (Հ. Փիլոսյան, Գ. Կողիկյան և Ա. Կախոյան) 1900 թ. ձեռնամուխ եղան «Բանվոր»[1] ձեռագիր թերթի լույս ընծայմանը։ Թերթը հիմնականում պրոպագանդում էր միասնական քաղաքական կուսակցություն ստեղծելու և ցարիզմի

դեմ քաղաքական պայքար մղելու գաղափարը։ Այդ շրջանում, ինչպես հայտնի է, մարքսիստական նոր տիպի կուսակցության ստեղծման համար վճռական պայքար էր մղում լենինյան «Իսկրա» թերթը։ Մեծ էր թերթի դերը Անդրկովկասում հեղափոխական շարժման կազմակերպման գործում։ «Իսկրայի» գաղափարական ազդեցության տակ Անդրկովկասում բանվորների ու գյուղացիների հեղափոխական ելույթները ստանում էին քաղաքական բնույթ։ 1901 թ. ապրիլի 22-ին Թիֆլիսում կազմակերպված քաղաքական ցույցը «Իսկրայի» կողմից գնահատվում է որպես «ամբողջ Կովկասի համար պատմական նշանակալից իրադարձություն»[2]։ Քաղաքական ցույցեր էին տեղի ունենում նաև Բաքվում ու Բաթումիում։ Ինչպես Թիֆլիսում, այնպես էլ Բաքվում, Բաթումիում ու Երևանում լայն աշխատանք էր տարվում իսկրայական սոցիալ-դեմոկրատական խմբակներ ստեղծելու ուղղությամբ։ Կազմակերպվում են լենինյան-իսկրայական կոմիտեներ 1901 թ. ամռանը Բաքվում, 1901 թ. նոյեմբերին՝ Թիֆլիսում, 1902 թ. հունվարին՝ Բաթումիում։ Այդ կոմիտեների աջակցությամբ 1901 թ. վերջին Երևանում ստեղծվում է սոցիալ-դեմոկրատական առաջին խմբակը (բջիջը)։ Խմբակում ընդգրկված էին տասներկու հոգի, որոնց մի մասը երկաթուղու և Շուստովի գործարանի բանվորներ էին։ Խմբի անդամներից էին՝ Շ. Լեժավան, Լ. Տեր-Հովսեփյանը, Ա. Ջանտուրիան, Մ. Մաղալաշվիլին, Մելքումյանը, Բուրջուլաձեն և ուրիշներ[3]։ Երևանի խմբի համար Ավստրիայից ստացվում էին «Իսկրայի» համարները։ Շուտով Բաքվում լույս է տեսնում «Բրձոլա» իսկրայական անլեգալ թերթը։ Հրամայաբար զգացվում է հայերեն լենինյան, իսկրայական թերթ ստեղծելու պահանջը։ 1902 թ. Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Թիֆլիսի կոմիտեի նախաձեռնությամբ և Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Զուրաբյանի, Ա. Խումարյանի, Մ. Մելիքյանցի ակտիվ մասնակցությամբ ձևավորվում է «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը», որի առաջին խնդիրն է լինում մարքսիստական տպագիր անլեգալ թերթի ստեղծումը։ «Միությունը» Թիֆլիսում հիմնադրում է գաղտնի



տպարան, ուր 1902 թ. հոկտեմբերին շարվում է «Պրոլետարիատ» հայերեն լենինյան, իսկրայական թերթի առաջին համարը։ Թերթը հիմնականում պայքար էր մղում բանվոր դասակարգի քաղաքական գիտակցությունը բարձրացնելու, հեղափոխական պայքարում պրոլետարիատի ղեկավար դերը ապահովելու, ցարիզմի տապալումը իրականացնելու, ինտերնացիոնալիզմի գաղափարները տարածելու համար։ Շուտով եղբայրական ազգերի միասնական պայքարը առաջ է բերում մեկ ընդհանուր և համախմբված կենտրոն ունենալու հարցը։ 1903 թ. մարտին անլեգալ կերպով հրավիրվում է ՌՍԴԲԿ Կովկասյան կազմակերպությունների I համագումարը, որը և հիմք է դնում ՌՍԴԲԿ Կովկասյան միությանը։ Համագումարում լուծվում է նաև Կովկասյան միության օրգանի ստեղծման հարցը։ Համագումարի որոշմամբ վրացական «Բրձոլա» և հայկական «Պրոլետարիատ» թերթերը միավորվում են։ Լույս է տեսնում «Պրոլետարիատի կռիվը» թերթը, որը գոյատևում է 1903 թ. ապրիլ-մայիս ամիսներից մինչև 1905 թ. հոկտեմբերը (հայերեն լույս է տեսնում ընդամենը 9 համար)։ Թերթը հեղափոխական գաղափարները տարածելու, դասակարգային պայքարի կարևորությունն ու անխուսափելիությունը ընդգծելուց բացի, մեծ աշխատանք էր տանում նաև հայ ազգայնական կուսակցությունների (դաշնակցություն, հնչակյան) նացիոնալիստական ձգտումները մերկացնելու ուղղությամբ։ Ազգայնական կուսակցությունները, հատկապես դաշնակցությունը, ձգտում էին աշխատավորությանը շեղել համառուսաստանյան հեղափոխական շարժումներից և նրա ուշադրությունը բևեռել միայն ազգային հարցի վրա։

Հայաստանում քաղաքական-բացատրական լայն աշխատանք էր տանում ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը։

1905 թ. մայիսին Երևանում Ստ. Շահումյանի ղեկավարությամբ գումարված ՌՍԴԲԿ Երևանի բոլշևիկյան կազմակերպության ժողովը ընտրում է ՌՍԴԲԿ Երևանի բոլշևիկյան կազմակերպության քաղաքային կոմիտե։ Կոմիտեի կազմում մտնում են Գ. Սոկոլովսկին, Ա. Մալխասյանը, Կ. Ալավերդովը, Մ. Միրաքյանը (Շանթ), Վ. Բարժանսկին,

Ա. Մռավյանը, Վ. Նինուաշվիլին (Նինուա), Լ. Տեր-Հովսեփյանը, Լ. Ցաղուրյանը և ուրիշներ[4]։

Հայտնի է, որ հեղափոխության վայրէջքի պայմաններում, ժամանակավոր դադարի տարիներին բոլշևիկները փոխեցին իրենց դումայական տակտիկան։ Նրանք որոշեցին մասնակցել Երկրորդ պետական դումային, օգտագործել նրա ամբիոնը՝ հեղափոխական ագիտացիա մղելու, ինքնակալության ու հակահեղափոխական բուրժուազիայի մերկացնելու համար։ Նախընտրական կամպանիայի ժամանակ Երևանի կազմակերպությունը նույնպես որոշում ընդունեց Պետական դումային իր ներկայացուցչի մասնակցությունն ապահովելու և Դուման կուսակցության քաղաքական ծրագրի պրոպագանդման նպատակով օգտագործելու մասին։

Երևանի կազմակերպությունից Երկրորդ պետական դումայի ընտրություններին որպես ներկայացուցիչ առաջադրվում է Գ. Ն. Սոկոլովսկու թեկնածությունը։ Սակայն պատգամավորների ընտրության համար հրավիրված լիազորների ժողովի նախօրյակին նահանգական իշխանությունները Սոկոլովսկու անունը հանել են տալիս ցուցակներից, նրա թեկնածությունը ձախողելով։ Տրված բացատրագրի համաձայն Սոկոլովսկին հանված էր ցուցակներից բնակարան վարձողի «սոցիալական» դրության իսկությունը հաստատող պայմանագիր չունենալու համար։ «Այսպես կուրյոզային կերպով,— գրում է Սոկոլովսկին,— ավարտվեց մեր մասնակցությունը Երկրորդ պետական դումայի ընտրական հանձնաժողովին»[5]։

Գ. Ն. Սոկոլովսկին թեև անձամբ չմասնակցեց Երկրորդ պետական դումայի ընտրություններին, սակայն լայն աշխատանք ծավալեց բոլշևիկյան ֆրակցիայի դումայական տակտիկայի պրոպագանդման ուղղությամբ։

Նախընտրական կամպանիայի ժամանակ Երևանի կազմակերպության աշխատանքներն ինչ-որ չափով «լեգալացնելու» անհրաժեշտությունն առաջացավ։ Հրամայաբար զգացվեց թերթ ունենալու պահանջը։ «Հարցը միայն այն էր,— գրում է Սոկոլովսկին,— թե ի՞նչ լեզվով հրատարակել»[6]։



Հայաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվում պահպանվում է Երևանի նահանգապետի գրությունը Երևանում «Ֆակտի» անունով ռուսերեն թերթ հրատարակելու թույլտվության մասին։ Գրության մեջ նշված է, որ Երևանի նահանգային քարտուղար Վ. Ի. Բոգատիրյովին թույլ է տրըվում Երևան քաղաքում հրատարակել «Ֆակտի» ռուսերեն թերթը շաբաթը վեց անգամ, հետևյալ ծրագրով. 1 Առաջնորդող հոդվածներ բոլոր հարցերի շուրջ։ 2 Գիտական հոդվածներ։ 3 Կառավարական հրամաններ։ 4 Խրոնիկա և կյանք։ 5 Նամակներ։ 6 Մամուլի տեսություն։ 7 Ֆելիետոն։ 8 Դատական բաժին և այլն[7]։ Լրացուցիչ գրության մեջ հայտնվում է, որ «Ֆակտի» թերթը լույս կտեսնի շաբաթը մեկ անգամ[8]։




«Ֆակտի» թերթի գլխագիրը

1907 թ. փետրվարի 2-ին լույս է տեսնում «Ֆակտի» թերթը՝ ռուսերեն։ Այն, ինչպես հիշատակում է Սոկոլովսկին, իր գոյությունը պետք է պահպաներ կազմակերպության միջոցներով, որոնք կազմում էին ընդամենը 120 ռուբլի անդամավճար։ Ի դեպ, այդ գումարը կազմում էր թերթի ծախսերի միայն 50 տոկոսը[9]։ Ուստի, կազմակերպվում է հատուկ հանգանակություն, հավաքվում է մոտ 200 ռուբլի գումար, որով և լույս է տեսնում թերթի առաջին համարը[10]։

«Ֆակտին» հատուկ թարգմանիչների օգնությամբ ընթերցվում էր բանվորների համար գործարաններում, հիմնարկ-ձեռնարկություններում և այլուր։ Թերթի պաշտոնական խմբագիր-հրատարակիչն էր Վ. Ի. Բոգատիրյովը, իսկ փաստական խմբագիրն ու գաղափարական ուղղության ավագը Գ. Ն. Սոկոլովսկին էր, որն առաջնորդողների ու հոդվածների տակ ստորագրում էր «Յուրի Մոլոտով»։ Թերթին աշխատակցում

էին Գևորգ Ղարաջյանը (Արկոմեդ), Արշավիր Մելիքյանը, Ա. Զիսենկելին, Կ. Ալավերդովը և ուրիշներ։ «Ճակատն» հիմնականում բոլշևիկյան թերթ էր, թեև աշխատակիցների մեջ կային նաև մենշևիկներ։ Թերթի շնորհիվ բարձր էր պահվում Երևանի բոլշևիկյան կազմակերպության հեղինակությունը աշխատավորության լայն շրջաններում։ «...Մեր «Ճակատին»,— գրում է Սակոլովսկին,— իր առջև խնդիր էր դրել՝ ժամանակին արձագանքել երկրի և մեր նահանգի ընթացիկ կյանքի մոմենտներին, իսկ ընթացիկ կյանքն այն ժամանակ հագեցած էր սպասումներով, թե Երկրորդ պետական դուման կհաջողվի՞ մոբիլիզացնել երկրի ակտիվ ուժերը՝ ցարիզմի հետ վերջնական գոտեմարտի բախվելու համար, քանի որ 1905 թ. հեղափոխության ճնշումը դիտվում ու գնահատվում էր որպես կառավարության պյուրոսյան հաղթանակ... Սակայն պետք է ընդունել, որ այն ժամանակվա լեգալ թերթը փաստորեն զրկված էր, այսպես կոչված, ներկուսակցական տարաձայնությունները ամենայն մանրամանությամբ լուսաբանելու հնարավորություններից, տարաձայնություններ, որոնք (Լոնդոնի) համագումարին նախապատրաստվելու շրջանում բացառիկ սրությամբ ծառացած էին կուսակցության յուրաքանչյուր անդամի առջև»[11]։

«Ճակատ» թերթի առաջին համարը լույս է տեսել 1907 թ. փետրվարի 2-ին, երկրորդ համարը՝ փետրվարի 18-ին, իսկ երրորդը՝ մարտի 4-ին։ Խմբագիրը ձգտել է այն դարձնել ամենօրյա լրագիր, բայց այդ նրան չի հաջողվել։ «Ճակատն» ուներ հետևյալ բաժինները. 1 Կյանքի և մամուլի հարցեր։ 2 Մատենագիտություն։ 3 Կովկասի շուրջ։ 4 Փաստեր։ 5 Կենսագրական։ 6 Արտասահմանում։ 7 Տեղական բաժին։ 8 Ֆելիետոն։

«Ճակատ» թերթը համոզված, որ 1905 թ. բուրժուադեմոկրատական հեղափոխության պարտությունը ժամանակավոր դադար էր, որ նրան հաջորդելու է հեղափոխության վերջնական հաղթանակը, գրում է. «Երկու տարվա հեղափոխությունը չանցավ ապարդյուն։ Այն տեղի ունեցավ ոչ այնքան նպաստավոր իրադարձություններում, որքան ժողովրդական



լայն մասսաների գիտակցության ու հոգեբանության վերափոխման պայմաններում»[12]։

«Ճակատ» թերթն այն համոզմունքն էր արտահայտում, որ դասակարգային պայքարում հաղթողն այնուհանդերձ ժողովրդական լայն մասսաներն են լինելու։ Ժողովուրդը քաղաքականապես արթնանում է և նրան այլևս ոչ մի ուժ չի կարող ետ կանգնեցնել։ Նա անպայման կհասնի իր նպատակին։

Հայտնի է, որ 1906 թ. ամռանը ցարական կառավարությունը ցրում է Առաջին պետական դուման և հայտարարում Երկրորդ պետական դումա հրավիրելու վերաբերյալ իր որոշումը։ Բոլշևիկյան կուսակցությունը պատրաստվում է մասնակցելու Դումային, օգտագործելով այն որպես տրիբուն աշխատավոր մասսաների քաղաքական ինքնագիտակցությունը բարձրացնելու, բուրժուական ֆրակցիաների հակահեղափոխական էությունը մերկացնելու համար։ Վ. Ի. Լենինը իր «Երկրորդ պետական դումայի բացումը» հոդվածում գրում է. «Սոցիալ-դեմոկրատիան, որպես առաջավոր դասակարգի կուսակցություն, այժմ ավելի, քան երբևիցե, պետք է ստանձնի ամբողջ հասակով մեկ ուղղվելու, ինքնուրույն, վճռական ու համարձակ խոսելու նախաձեռնությունը։ Հանուն պրոլետարիատի սոցիալիստական և զուտ դասակարգային խնդիրների, նա պետք է իրեն ցույց տա որպես ամբողջ դեմոկրատիայի ավանգարդ»[13]։ «Ճակատ» թերթը ելնելով այդ նույն սկզբունքներից, կազմակերպում է համարձակորեն տեղի ղեկավար մարմիններին քննադատող, բուրժուական դեմոկրատիայի մերկացնող նյութեր։ «Տեղական բաժին» խորագրի տակ տպագրվել են հոդվածներ, որոնցում քննարկվել է Երևանի նահանգից Երկրորդ պետական դումայի ընտրությունների համար առաջադրված պատգամավորության թեկնածուների հարցը։ Միանգամայն իրավացիորեն թերթը բողոք է հայտնում Երկրորդ պետական դումայի պատգամավորության թեկնածու առաջադրված Մահմեդ աղա Շախտախտինսկու դեմ։ Վերջինս առաջադրվել էր ադրբեջանական բնակչության կողմից։ «Ճակատն» իր բողոքի մեջ այն միտքն է հայտնում, թե պրոլետարիատն իր քաղաքական մակարդակով այնքան բարձր է, որ

կարող է ժողովրդի շահերը պաշտպանող թեկնածուներ առաջադրել իր միջից։ «Չենք ցանկանում բեկերին ու խաներին,— ընտրողների անունից գրում է թերթը,— որոնք մեզ կողոպտում են ու մեր կաշին են քերթում»[14]։

Թերթը միանգամայն իրավացիորեն, պարզորոշ գրում է, որ դումայական ընտրությունների նախօրյակին յուրաքանչյուր կուսակցություն ցույց տվեց իր իսկական դեմքը, և որ բանվոր դասակարգի իսկական շահերը պաշտպանող միակ կուսակցությունը սոցիալ-դեմոկրատականն է։

«Ծակոտի» թերթը Երևանի բոլշևիկները օգտագործում էին կուսակցության դումայական տակտիկան պարզաբանելու նպատակներով։ «Դումայի առաջին քայլերը» հոդվածում այն միտքն է առաջ քաշվում, որ Դուման պետք է օգտագործվի որպես լավագույն տրիբուն կառավարության հակաժողովրդական էությունը մերկացնելու համար։

«Փաստեր» ընդհանուր խորագրի տակ տպագրվում էին լուրեր Երկրորդ պետական դումայի ընտրությունների վերաբերյալ։ Կենտրոնական հարց դարձնելով ընտրությունները, թերթը միաժամանակ բացահայտում էր մանրբուրժուական դեմոկրատիայի իսկական դեմքը։ Ծանոթացնելով 1907 թ. փետրվարի 6-ին Մոսկվայում կայացած քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ բանվորների ու կադետների միջև ծագած վեճին, թերթը փորձում է ներկայացնել կադետների երկերեսանի քաղաքականության վնասակար էությունը։ Հայտնի է, որ կադետների հասցեին քննադատական խոսք է ասել Վ. Ի. Լենինը, գրելով. «Առաջին դուման բավականաչափ ցույց տվեց, որ կադետը չի պայքարում սևհարյուրակային վտանգի դեմ, այլ աներևակայելի ստոր ճառեր է ասում միապետի՝ սևհարյուրակայինների ակնհայտ առաջնորդի, անմեղության և անպատասխանատվության մասին»[15]։

«Ծակոտի» թերթն անդրադառնալով կադետների և սևհարյուրակայինների փոխհարաբերություններին, գրում է. «Կազմակերպված պրոլետարիատը վաղուց արդեն գիտի ժողովրդական ազատության բուրժուական պաշտպանների ճշմարիտ գինը։ Այժմ ներկայանում է առիթը բացահայտելու ձեր հակառակ երեսն այնպես պարզ, որ կտեսնեն ձեզ և վերջին կույրերը, կհասկանան ձեզ և բոլոր դյուրահավատ ու երկչոտ հոգիները, որոնք հրապուրված սևհարյուրակային վտանգի մասին առված ձեր երեսպաշտ ու կեղծ կոչերով ձայն տվեցին ձեզ... Դուք պայքարում էիք ոչ թե սևերի, այլ կարմիր պրոլետարիատի դեմ»[16]։ Մերկացնելով կադետների կազմալուծիչ քաղաքականությունը, թերթը գտնում է, որ կադետներն այլևս հիմք չունեն պնդելու, թե իրենք արտահայտում են ժողովրդի ձգտումները։ Նրանք իրենց նախընտրական տակտիկայով արդեն ապացուցեցին, որ կապերը խզել են դեմոկրատիայից։

«Ծակոտի» թերթը իր էջերում բարձրացնում է նաև այն միտքը, որ Դուման չի կարող բավարարել ժողովրդի պահանջները, քանի դեռ իշխանությունը ազատության թշնամիների ձեռքին է և քանի դեռ Դումայում մեծամասնությունը կազմում են կադետները, սևհարյուրակայինները, որոնք պաշտպանում են ինքնակալական միապետությունը։ Թերթը կոչ է անում՝ քվեարկել սոցիալ-դեմոկրատների թեկնածուների օգտին, որպեսզի Դումայում մեծամասնությունը կազմեն սոցիալ-դեմոկրատները։ Այն ժամանակ միայն Դուման դեպի իրեն կգրավի ժողովրդական լայն մասսաների համակրանքը և կլինի ոչ միայն համաժողովրդական տրիբուն, այլ նաև կազմակերպող կենտրոն[17]։ Դուման նախապատրաստական աշխատանքներ վարող մի միջոց էր, ժողովրդական լայն մասսաներին մեծ մարտի ոգեշնչող հրապարակային ամբիոն։ Հայտնի է, որ անդրադառնալով այդ հարցին, Վ. Ի. Լենինը գրել է. «Մենք կրկին նոր ուժեր կհավաքենք, նոր, էլ ավելի ահեղ, վճռական ելույթի համար, երբ ձախ Դումայի խարույկը բորբոքվելով՝ կվերածվի համառուսաստանյան հրդեհի։ Պետք է բոլոր ուժերը հավաքել և կենտրոնացնել գալիք վճռական ճակատամարտի համար»[18]։ «Առջևում հաղթանակն է,— կարդում ենք «Ծակոտի» թերթում,— իսկ ներկայում այդ հաղթանակի ապահովման նպատակին ուղղված բոլոր ուժերի լարումը։ Մենք գտնվում ենք հեղափոխության մեծագույն գործողության՝ ստեղծարար գործողության նախօրյակին»[19]։

Ուշագրավն այն է, որ ցարական կառավարության կազմակերպած խիստ հետապնդումների պայմաններում Թերթը կարողանում էր ընթերցող լայն հասարակայնությանը ծանոթացնել բոլշևիկների դումայական տակտիկային։

«Ծակոտի» թերթը միաժամանակ հանդես էր գալիս ժողովրդական լայն մասսաների հեղափոխական ակտիվությունը բարձրացնելու, նրանց հեղափոխական ուժերը կազմակերպելու անմիջական կոչերով։ Թերթի քաղաքական թեմաներով գրված հոդվածները ներծծված են լավատեսությամբ։ «Ականատես» ստորագրությամբ հոդվածը նվիրված է Գուրիայում տեղի ունեցած հեղափոխական ելույթներին։ Գուրիայում Գոլիցինի օրոք կիրառված ռեպրեսիաներն ավելի էին բորբոքում ժողովրդի զայրույթը։ Հոդվածում ցարական բյուրոկրատիայի ներկայացուցիչները համարվում են XX դարի չինգիզ-խաներ, որոնք թալանում են ու կողոպտում ժողովրդին։ «XX դարի չինգիզ-խաներն ամբողջ Գուրիան կրակի և սրի մատնեցին,— գրում է թերթը,— կողոպտվում և ոչնչացվում է բնակչության ամբողջ բարիքը»[20]։ Գուրիացիները համառորեն դիմադրում էին, հավատալով, որ ճշմարտությունը վերջ ի վերջո կհաղթանակի։ Նրանք ուշիուշով հետևում էին հեղափոխական դեպքերի ընթացքին, չկորցնելով պայծառ ապագային հանդեպ իրենց հույսն ու հավատը։ Ցարական պատժիչ ջոկատները որքան ուժեղացնում էին իրենց հալածանքները, այնքան ժողովրդի մեջ ավելի էր ամրապնդվում պայքարը մինչև վերջ հասցնելու ձգտումը։ «Նրանք,— գրում է թերթը,— լավ գիտեն, որ բյուրոկրատիան իր գործողություններով իր դեմ ագիտացիա է մղում և ավելի մոտեցնում իր անկման պահը»[21]։

«Ծակոտի» թերթում տեղ են գրավում Ֆելիետոն խորագրի տակ տպագրված թերթոնային հոդվածները, որոնք պատկանում են խմբագրի՝ Գ. Սոկոլովսկու գրչին և ստորագրված են «Յուրի Մոլոտով»։ Այդ հոդվածները վերաբերում են քաղաքական հարցերին։ Դրանցից մեկը, որ նվիրված է Գուրիայում ծագած հեղափոխական շարժումներին, ամբողջովին ներծծված է ժողովրդասիրությամբ, եղբայրասիրությամբ, ինտերնացիոնալիզմի գաղափարներով։ Գուրիայում ժողովուրդը ըմբոստացել



է, կյանքն այնտեղ դաժանորեն այլանդակել է մարդու կերպարանքը։ Գուրիայում աշխատավորներն իրենց սեփական կաշվի վրա զգացել են ցարական զենքի ուժն ու բռնակալ ինքնակալության լծի ծանրությունը։ Եվ այդ իսկ պատճառով, ինչպես հեղինակն է նկատում, ամբողջ Գուրիայում շշուկ անգամ չեք լսի ցարական իշխանության հանդեպ եղած բարեհամբույր վերաբերմունքի մասին, ընդհակառակը, ամենուր չարության ու ատելության խոսքեր կլսեք՝ ուղղված ռուսական կայսրության հասցեին։ Ցարական բյուրոկրատիայի հանդեպ ատելության բաժակն արդեն լցվել է և համարձակ կարելի է ասել, թե «ինչ-որ բան կլինի, ինչ-որ բան կլինի...»։ Մեկ այլ հոդվածում հեղինակը (Յուրի Մոլոտով) բացահայտ քննադատում է 1861 թ. փետրվարի 19-ի գյուղացիական ռեֆորմը, ռեֆորմ, որը գյուղացիներին չտվեց ոչ հող, ոչ ազատություն։ Այն համարվում է բուրժուական ռեֆորմ, որը գյուղացիներին գցեց տնտեսապես ավելի ծանր դրության մեջ, քան նրանք ռեֆորմից առաջ էին։ Ապա մանրամասն հաշվարկների հիման վրա հեղինակը ցույց է տալիս, որ ռեֆորմից հետո գյուղացիները միայն իրենց անձի ազատագրման համար պետք է վճարեին 219 միլիոն ռուբլի[22]։

«Ծակոտի» թերթը 1861 թ. գյուղացիական ռեֆորմը համարում է մի «կոմպրոմիս» բյուրոկրատիայի չափավոր ծրագրերի և ճորտատերերի ռեակցիոն պահանջների միջև։

«Ծակոտին» միաժամանակ անդրադառնում է նաև Երևանի նահանգից դուրս, Ռուսաստանի քաղաքներում տեղի ունեցած հեղափոխական շարժումներին։ Այսպես, «Լոձի լոկաուտը» հոդվածում նշվում է այն մասին, թե երբեմն ինչպիսի ծանր հետևանքներ են ունենում լոկաուտները։ Լոձի լոկաուտի պատճառով Պոզնանում փակվում է հինգ գործարան։

«Ծակոտի» թերթը քննադատաբար է անդրադառնում գերմանական բանվորական շարժման վաղ շրջանի գործիչ Վիլհելմ Վեյտլինգի (1808—1871) «Մարդկությունը ինչպիսին նա կա և ինչպիսին նա պետք է լինի» ծրագրային աշխատությանը։ Հոդվածագիրը (Կ. Ալավերդով) քննադատում է աշխատության հեղինակին այն բանի համար, որ նա բոլորովին ն-

կատի չի ունեցել դասակարգային պայքարը՝ որպես հիմնական միջոց հասարակության վերափոխման: «Վեյտլինգը,— գրված է հոդվածում,— շատ բան չի ենթադրում այն ամենից, ինչ Մարքսի շնորհիվ ընկած է սոցիալիզմի հիմքում»[23]: Վիլհելմ Վեյտլինգը ընդունում էր կոմունիստական հասարակարգի ստեղծման հեղափոխական ճանապարհը, սակայն հեղափոխությունը դիտում էր որպես տարերային պրոցես, որտեղ գլխավոր դերը հատկացնում էր ապադասակարգային տարրերին: Եվ երբ վեյտլինգականությունը գիտական կոմունիզմի ծագման կապակցությամբ սկսում է ետ պահել բանվորական շարժման զարգացումը, արժանանում է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի խիստ քննադատությանը[24]:

«Ճակատ» թերթը շարունակում է բարձրացնել ամնիստիայի հարցը, կառավարությունից պահանջելով ազատել քաղաքական բանտարկյալներին, ռուսական առաջին հեղափոխության ժամանակ բանտարկված ազատագրական պայքարի մարտիկներին:

Վերը բերված փաստերը և մեջբերումները վկայում են այն մասին, որ «Ճակատ» թերթն առաջինը լինելով ձևով Երևանի ընթերցող լայն հասարակայնության մեջ տարածել է հեղափոխական գաղափարներ, պայքար ծավալել ինքնակալության տապալման համար: Թերթը մոբիլիզացնելով աշխատավորության ուժերը դասակարգային պայքարի շուրջ, ապացուցանում է այն գաղափարը, որ միայն բանվոր դասակարգն ու գյուղացիությունը դաշնակցած կարող են հեղափոխությունը հասցնել հաղթական ավարտի, ստեղծելով ազատ, անկաշկանդ ժողովրդական իշխանություն:

Տեղական կառավարությունն իսկույն նկատում է թերթի հեղափոխական բնույթը և խմբագրին տալով խիստ զգուշացում, կարգադրություն է անում թերթի փակման մասին:

«Ճակատ» թերթի խմբագիր Գ. Ն. Սոկոլովսկին ծնվել է 1879 թ., Թիֆլիսում, դատական ատյանի ծառայողի ընտանիքում: 1880 թ. ծնողների հետ տեղափոխվում է Երևան: Այստեղ ավարտում է տեղի արական գիմնազիան և մեկնում Մոսկվա, ընդունվում Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Ուսանողական տարիներին նա ակտիվորեն մասնակցում է մարքսիստական խմբակների աշխատանքներին և ուսանողական շարժումներին: Մի քանի վարչական տույժերից հետո նա 1902 թ. փետրվարին կալանքի տակ է առնվում: Իսկ 1903 թ. դեկտեմբերին Վ. Գ. Կորոլենկոյի 50-ամյակին նվիրված երեկոյին կարդացած զեկուցման համար 1904 թ. մայիսին արտաքսվում է Երևան: Այստեղ Գ. Ն. Սոկոլովսկին ամբողջովին նվիրվում է կուսակցական աշխատանքին, ծավալում հեղափոխական գործունեություն: Նրա ջանքերով Երևանում ստեղծվում են բանվորների ու սովորողների կուսակցական առաջին բջիջները: Երևանի Շուստովի և Սարաջևի սպիրտոկոնյակի գործարանի գործադուլի մասին նահանգային ժանդարմական վարչության 1905 թ. ապրիլի 23-ին ոստիկանության դեպարտամենտի հատուկ բաժնին ուղարկված հաղորդման մեջ ասված է. «Մեր ունեցած գաղտնի տեղեկությունների համաձայն այս գործադուլի կազմակերպիչն է նախկին ուսանող Գեորգի Նիկոլաևիչ Սոկոլովսկին, որի արտաքսումը Երևանից չափազանց ցանկալի է, որովհետև նա նաև գլխավորն է սովորող մարդկանց շրջանում հավաքույթներ կազմակերպելու ուղղությամբ»[25]:

1906 թ. Գ. Ն. Սոկոլովսկին մտնում է ՌՍԴԲԿ Մոսկվայի կոմիտեին կից զինվորական կազմակերպության կազմի մեջ:

1907 թ. ապրիլին ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության կողմից Գ. Սոկոլովսկին առաջադրվում է ՌՍԴԲԿ V համագումարի պատգամավորության թեկնածու: Ապրիլի 30-ից մինչև մայիսի 19-ը Գ. Ն. Սոկոլովսկին մասնակցում է Լոնդոնում գումարված կուսակցության V համագումարի աշխատանքներին:

Համագումարից վերադառնալուց հետո նա համալրում է ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության քաղաքային կոմիտեի կազմը:

Մինչև 1910 թ. Սոկոլովսկին կարողանում է հաջողությամբ զուգորդել աշխատանքը լեգալ և անլեգալ օրգաններում: Իսկ 1910 թ. նա տեղափոխվում է Մոսկվա, հեռանում է





8-894

քաղաքական գործունեությունից և զուրկ մնում կուսակցության շարքերից[26]։

1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո նա աշխատում է Մոսկվայի միլիցիայում։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Սոկոլովսկին իր ուժերն ու եռանդը նվիրաբերում է սոցիալիստական տնտեսության տարբեր բնագավառների համար կադրեր պատրաստելու գործին, զբաղվում մանկավարժական գործունեությամբ։

Լինելով կրթված մարքսիստ և սովետական իշխանության չերմ պաշտպան, Գ. Ն. Սոկոլովսկին գրում է մի շարք հրապարակախոսական գործեր՝ նվիրված Ռուսաստանի XIX դարի վերջի և XX դարի սկզբի քաղաքական կյանքին, Մաքսիմ Գորկու, Կորոլենկոյի և ուրիշ այլ գրողների ստեղծագործություններին։

Իր կյանքի վերջին տարիներին Սոկոլովսկին դասախոսում է Մոսկվայի բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատություններում, գրում աշխատություններ սննդարդյունաբերության մասին։

Գ. Ն. Սոկոլովսկին վախճանվում է 1933 թ., Մոսկվայում։



ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԸ ՍՏՈԼԻՊԻՆՅԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

### («Հրազդան», 1908—1909)

Ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության պարտությունից հետո, 1907 թ. հունիսի 3-ի պետական հեղաշրջումով ցարական կառավարությունը դաժան դատաստան տեսավ հեղափոխական բանվորների և գյուղացիների հետ։ Բնութագրելով այդ ժամանակաշրջանը, Վ. Ի. Լենինը գրել է. «Ցարիզմի կողմից հալածանքների այդպիսի սանձարձակություն Ռուսաստանում դեռ երբեք չէր եղել։ Այդ հինգ տարվա ընթացքում կախաղանները ռուսական պատմության երեք հարյուրամյակների ռեկորդն են խփել։ Աքսորավայրերը, տաժանավայրերը և բանտերը լեփլեցուն են քաղաքական գործիչներով, ինչպես երբեք, և հաղթվածների նկատմամբ երբեք այնպիսի խոշտանգումներ ու տանջանքներ չեն գործադրվել, ինչպես Նիկոլայ II-ի ժամանակ»[1]։

Ստոլիպինյան ռեակցիան ծանր ազդեց նաև Անդրկովկասի աշխատավորության վրա։ Կովկասի փոխարքայի 1907 թ. հունիսի 4-ին Երևանի նահանգապետին ուղարկած հատուկ գրությամբ պահանջվում էր խստորեն պահպանել կառավարության սահմանած ռեժիմը և արգելել միտինգներն ու ցույցերը։

Ռեակցիայի տարիներին ծանրացավ հատկապես Հայաստանի բանվորների և գյուղացիների դրությունը։ Նրանց աշխատանքային օրը երկարաձգվեց մինչև 12—18 ժամ։ Տնտե-

ռական ճնշման, ազգային հալածանքների, սոցիալական և քաղաքական իրավազրկության պայմաններում աշխատավոր զանգվածները չհաշտվեցին:

Երևանում, Էջմիածնում, Նոր Բայազետում, Զանգեզուրում և այլուր շարունակվեցին գյուղացիական հուզումները: Զանգեզուրում գյուղացիները ելույթներ էին ունենում պահանջելով կալվածատերերից խլել հողը և հանձնել իրենց: Գյուղական վայրերում պրոպագանդիստական լայն աշխատանք էին կատարում Հայաստանում գործող բոլշևիկները:

Ռեակցիայի ծանր տարիներին կուսակցական ընդհատակյա կազմակերպություններ և խմբակներ կային Երևանում, Կարսում, Ալավերդում, Ղափանում, Ալեքսանդրապոլում, Նոր Բայազետում, Իգդիրում և այլուր[2]: Գյուղում սրվում էր դասակարգային պայքարը: Կարևոր և հրատապ հարցերից մեկն էր դարձել ագրարային հարցը: Այն իր վրա էր բևեռել քաղաքական կուսակցությունների, հասարակական հոսանքների և ուղղությունների ուշադրությունը: Վ. Ի. Լենինը և նրա զինակիցները պրոպագանդում էին հողի ազգայնացման ծրագիրը, որը կարող էր իրականացվել ցարիզմի և կապիտալիզմի տապալմամբ, աշխատավոր մասսաների հեղափոխական պայքարի հաղթանակով միայն: Մինչդեռ, բուրժուական և մանրբուրժուական գաղափարախոսները տուրք տալով նարոդնիկական, ուտոպիստական հայացքներին, փորձում էին անցկացնել գյուղական համայնքի գաղափարը և գյուղական համայնքը դիտել որպես գյուղացիության փրկության միջոց:

Հայ իրականությունում ևս լիբերալ-բուրժուական և ազգայնական կուսակցությունների ներկայացուցիչները կոոպերացիան դիտել են որպես կապիտալիստական շահագործումից ազատագրվելու միջոց: Կոոպերացիայի տեսաբաններն առանց մասնավոր սեփականության վերացման և տիրող կարգերի հեղաշրջման ցանկացել են արմատական փոփոխություն մտցնել աշխատավոր զանգվածների կենսավիճակում: Հայտնի է, որ նման ուտոպիստական հայացքների դեմ ինչպիսի պայքար են մղել հայ բոլշևիկ գործիչները (Ստ. Շահումյան, Ս. Սպանդարյան և ուրիշներ): Ս. Սպանդարյանն իր «Մեր գերը



գյուղում» հոդվածում գրել է. «Գյուղացին պիտի հասկանա, որ առանց քաղաքական ազատության, առանց ժողովրդի լիակատար իշխանության, նա չի ստանա իր փափագած «հողը», նրա համար պիտի պարզվի քաղաքական կարգերի և նրա տնտեսական դրության անխախտելի կապակցությունը, նա պիտի համոզվի, որ դրությունը չի փոխվի անձնավորության փոխվելով, այլ պետք է ամբողջ սիստեմը հեղաշրջել ներքևից մինչև վերև»[3]:

Երևանում համախմբված առաջադիմական հայացքներ ունեցող մտավորականներից ոմանք ևս հրապուրվեցին կոոպերացիաներով և գյուղի փրկության հիմնական միջոցը համարեցին տնտեսական այդ միությունները: Կոոպերացիաների պաշտպանությամբ Երևանում հանդես եկավ նաև «Հրազ-


ՀՐԱԶԴԱՆ

«Հրազդան» թերթի գլխագիրը

դան» թերթը, որի հիմնադիրն էր մասնագիտությամբ գյուղատնտես Պողոս Կանդուրալյանը: Նա ավարտել էր Մոսկվայի Պետրովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիան: 1901—1905 թթ. աշխատել էր որպես Երևանի նահանգային ուսումնարաններին կից գյուղատնտեսական բաժանմունքի գյուղատնտես[4]: Ի դեպ հայտնի է, որ այդ ակադեմիայի ուսանողները կրել են լիբերալ-նարոդնիկների տնտեսագիտական հայացքների ազդեցությունը:

«Հրազդան» գրական, հասարակական, տնտեսական եռօրյա թերթը լույս է տեսել 1908 թ.: Առաջին երկու համարները խմբագրել է Պողոս Կանդուրալյանը, իսկ հաջորդ մնացած համարները՝ Ա. Տեր-Հակոբյանը, որը նույնպես պաշտպանել

է նախորդ խմբագրի հայացքները։ Թերթի հոդվածների մեծ մասը ստորագրված են ծածկանուններով (Ձահրատ, Նա, Մուրին, Հ., Սուրիկ, Ա., Շահմար, Սարաճ և այլն)։ Թերթը ստեղծել է հետևյալ բաժինները. խմբագրության կողմից, Երևանի կյանքից, գավառական կյանքից, Ռուսաստան, Պարսկաստան, Տաճկաստան, բանասիրական և այլն։ «Հրապարակ» անդրադարձել է ժամանակի հուզող գրեթե բոլոր հարցերին։ Այնտեղ զետեղված են գյուղացիության սոցիալական ու տնտեսական իրավիճակին, հողային հարցին, դպրոցին, գրականությանը, թուրքահայ ու պարսկահայ կյանքին, Ռուսաստանում ու արևմտաեվրոպական երկրներում կատարված իրադարձություններին նվիրված հոդվածներ։

Գավառի ընթերցողները մեծ հույսեր են կապել այդ թերթի հետ։ Ողջունելով թերթի լույս ընծայումը, նրանցից Վ. Աֆրիկյանը Նոր Բայազետից գրում է. «Վաղուց, շատ վաղուց է, որ հայ աշխատավոր մասսան համակված մեկ դարդով, տանջված մեկ ցավով, սպասում էր գավառի ցավերն արտահայտող թերթի, որտեղ հնարավորություն ունենար ավելի լայն չափով բաց անելու իր անհուն ցավերով լի սիրտը, երևան հանելու իր փտած ու հոտած կյանքը, և այդ թերթը դու ես լինելու մեզ համար «Հրապարակ» սիրելիս»[5]։ Նա հուսով էր, որ թերթը անդադրաբար կքննադատեր գյուղացու «արյունը ծծող», նրա «կենսական վերջին հյութը ծծող», «դավթարը ձեռքին» վաշխառուին, «աշխատավորի արտասուքի գնով ապահովություն ձեռք գցող» կաշառակերներին[6]։

«Գավառական կյանքից», «Կյանքը գավառներում», «Ո՞նց է հարկավոր անել», «Զոռբաները» և այլ խորագրերով տպագրված հոդվածներում ցույց են տրված խեղճ ու անօգնական գյուղացու չարքաշ առօրյան, նրա սոցիալական ու տնտեսական ճնշված իրավիճակը։ «Զոռբաները» վերնագրով հոդվածում (հեղինակ՝ Շահմար) գրված է. «Մեր այս դառն իրականության մեջ, ամեն մի քայլափոխում հանդես է գալիս խեղճ գյուղացիությունն իր բազմատեսակ ցավերով, որը փոխանակ օրավոր պակասելու, ավելի մեծ ծավալ է ստանում շնորհիվ



այն «զոռբաների», որոնց բռնությունները Դամոկլյան սրի նման կախված են գյուղացիության գլխին և թույլ չեն տալիս, որ նա մի դրական քայլ անի իր տնտեսական վիճակը բարելավելու համար»[7]։ Թերթը միաժամանակ նկատում է, որ գյուղացիությունն արդեն այնչափ համարձակ է դարձել, որ ռուսական առաջին հեղափոխության դասերը նրան սովորեցրել են կռվել, ինչպես թերթում է նշված. «Երեկվա խաղաղ գյուղացին հանգամանքների բերումով խոփի, արոր-գութանի հետ միասին, գործածել սովորեց և զենքը»[8]։ Հետևապես, եզրակացնում է թերթը, նա կարող է դիմադրել և ոչ թե «գլուխ խոնարհել» հարստահարիչների առաջ։ Իսկ դիմադրելու համար, ինչպես թերթն է գտնում, գյուղացիները պետք է միավորվեն։ «Թող փորձեն նրանք,— գրում է թերթը,— խմբվել իրար հետ և փոխանակ լացի ու գանգատի, այդ միացյալ ուժով դիմադրեն գյուղերում գիշատիչ ոհմակների նման թափառող և գյուղացու արյան քրտինքով ապրող սրիկաներին, թող մի քանի անգամ անխնա և աներկյուղ կերպով դիմադրեն նրանց և կտեսնեն, որ այդ ավազակների հոտն անգամ կըկորչի իրանց գյուղերից ու սահմաններից»[9]։

Թերթը աշխատավոր գյուղացու կյանքի արմատական վերափոխման հույսեր է ակնկալում համայնական աշխատանքի կազմակերպումից, գրելով. «.... ինչ է մնում անել, մնում է միայն առաջ մղել համայնական աշխատանքի սկզբունքը, կյանքի մեջ կիրառության մտցնել և այդպիսով հասած կլինենք մեր համայնականության սահմանին, որից հետո մնում է մի փոքրիկ քայլ միայն, որը սպասում է ընդհանուր հասարակարգի վերջնական փոփոխվելուն»[10]։ Թերթում աշխատանքի համայնական կազմակերպման ձևերից մեկն է համարվում կոոպերացիան, որը հաջողությամբ կիրառվում էր արևմտաեվրոպական երկրներում։ «Աշխատավոր դասը երկրագնդի բոլոր անկյուններում,— գրում է թերթը,— իր անողոք շահագործման ասպարեզում կեղեքվում է երկու կողմից և՛ որպես արտադրող, և՛ որպես սպառող։ Ահա հենց այդ կեղեքման և շահագործման դեմ պայքարելու և աշխատավորական այդ մեծ պատուհասը վերացնելու համար քաղաքակիրթ երկրներում

աշխատավորությունն արդեն կիրառության մեջ է մտցրել մի ավելի քան գործնական միջոց, որը նրան ազատում է թե որպես արտադրողի, թե որպես սպառողի:... Այդ միջոցը աշխատակցական սկզբունքի կիրառությունն է, որը եվրոպական լեզվով կոոպերացիա է կոչվում»[11]: Միաժամանակ պետք է նշել, որ թերթը չի ժխտում գյուղում տիրող սոցիալական հակասությունը, այլ տեսնելով այն, գրում է. «Գյուղն ունի երկու դասակարգ-աշխատող և վաշխառու: Առաջինը, որ իր ամբողջ ուժն ու միտքը տրվել է գյուղական կյանքում աշխատանքի միջոցով արդյունաբերելու ձեռքի տակ եղած միջոցները, իսկ երկրորդը, որ մի պատմական ճակատագրությամբ ծնվել և ապրում է վաշխելու և ուրիշի աշխատանքի տեր դառնալու՝ հղփանալու համար: Այլևս կասկած չկա, որ գյուղական աշխարհում նա աշխատանքը դեպի իրեն է գրավել դասակարգային պայքարը (որոշ տեղերում թույլ և քիչ չափով) և որպիսի խրամատը պիտի լայնանա, իր մի կողմն ունենալով կեղեքվող մեծամասնությունը: Ահա այս կարևոր գիծն ի նկատի ունենալով հենց, մի առանձին հրամայական պահանջ է տրվում մտածողության և հոգատարության առարկա դարձնել գյուղական աշխատավորությունը»[12]:

Թերթը գյուղացիությանը ճանաչում է որպես հասարակական ուժ: Եվ այդ առթիվ անհրաժեշտ է դառնում վերլուծելու Առաջին ինտերնացիոնալի կոնգրեսներում գյուղացիության և հողային հարցերի վերաբերյալ ընդունած բանաձևերը: Հայտնի է, որ հողը ամբողջ հասարակության սեփականությունը դարձնելու հարցը մանրամասն քննարկման է ենթարկվել Առաջին ինտերնացիոնալի 1867 թ. նոյեմբերի 2-ին Լոզանում, 1868 թ. սեպտեմբերի 6—13-ին Բրյուսելում, 1869 թ. սեպտեմբերի 6—11-ը Բազելում կայացած կոնգրեսներում: Թերթում մեջ են բերված նաև Առաջին ինտերնացիոնալի Բազելի կոնգրեսում բելգիացի սոցիալիստ Ս. դը Պապի արտասանած զեկուցումից հատվածներ, որտեղ ասված է. «Կարևոր է ընդգծել, որ դանդաղ և աստիճանական էվոլյուցիայի տեսակետը, որի վրա սովորաբար կանգնած են տնտեսագետները, չպիտի ղեկավարեն մարդկանց գործողու-



թյունները, որոնք գիտեն, որ տնտեսական զարգացման օրենքները բոլորովին արտոնյալ և անխախտ չեն հանդիսանում և որ մարդկանց միջամտությունը կարող է նրանց փոխել...: Հենց այդ կոլեկտիվ միջամտությանն էլ տրված է հեղափոխություն անունը: Այդ պատճառով հավանական է, որ սեփականության վերափոխումը կկատարվի ոչ թե կույր ճակատագրական զարգացման ճանապարհով, այլ կծամանի մարդկանց խելացի միջամտությամբ: Այն կլինի ոչ թե էվոլյուցիայի, այլ ռևոլյուցիայի հետևանք»[13]: Բացի դրանից, «Հրազդան» թերթը տպագրել է նաև Առաջին ինտերնացիոնալի Ժնևյան սեկցիայի 1869 թ. նոյեմբերի 11-ին հրապարակած Ի. Ֆ. Բեկկերի կազմած «Երկրագործական բանվորներին ուղղված մանիֆեստը» (լրիվ տեքստը): Հայտնի է, որ այդ մանիֆեստում կոչ է արվում բատրակներին ու մանր արտադրողներին՝ գիտակցել իրենց մարդկային իրավունքները, հրաժարվել հին տրադիցիաներից ու նախապաշարմունքներից և հեղափոխական ճանապարհով լուծել բոլոր առաջացած հարցերը[14]: Մանիֆեստի 5-րդ պարագրաֆում ասված է. «Այդ երկրագործական կոոպերացիաները հասարակության մեջ են մտնում ինչպես իրար հետ, այնպես էլ քաղաքային բանվորների արտադրողական և սպառողական ընկերությունների հետ և բոլոր մյուս բանվորական միությունների հետ կազմում են միությունների սերտ-կազմակերպված ֆեդերացիա՝ բարոյական և նյութական պաշտպանության համար, կատարյալ փոխադարձ համերաշխության հիմունքներով և ամեն տեսակ քաղաքական ու տնտեսական հարստահարության դեմ ընդհանուր կռվի համար»[15]: Հաջորդ պարագրաֆում պարզեպարզ գրված է, որ գյուղական բանվորները կոոպերացիաների միջոցով պետք է ծանոթանան տնտեսության վարման բոլոր ձևերին, որպեսզի գոյություն ունեցող կարգերի տապալմամբ, երբ հողատերերի դեսպոտ իշխանությունը կոչնչանա, նրանք ընդունակ լինեն տնտեսությունը դեմոկրատիկ ընկերակցությունների սկզբունքներով վարելու[16]:

«Հրազդան» թերթը թեև տպագրում է Առաջին ինտերնացիոնալի կոնգրեսների բանաձևերը, «Երկրագործական բան-

վորներին ուղղված մանիֆեստը», սակայն չի կարողանում հասնել դրանցում արտահայտված հեղափոխական խմորի ըմբռնմանը: Այն դարձյալ շարունակում է հասարակական զարգացման գործում կարևոր և վճռական դեր վերագրել կոոպերատիվ ընկերություններին: «Մոտիկ ապագան ցույց կտա,— գրում է թերթը,— թե որքան օգտավետ և կարևոր հիմնարկություն է գյուղական բանկը, և որ գյուղական ցեցերից ու վաշխառուներից ազատվելու և իրանց ընկած տնտեսությունը բարձրացնելու միակ արմատական միջոցը գյուղական փոխատու խնայողական բանկն է, որին և պետք է ամեն կերպ աջակցել»[17]:

«Հրազդան» թերթը չհրաժարվելով իր հայացքների սահմանափակվածությունից, շարունակում է կապիտալիստական շահագործումից ազատվելու ելքը կապել կոոպերացիաների և ոչ թե սոցիալական հեղափոխության հետ: Հայտնի է, որ նման մտահայեցողության դեմ ինչպիսի պայքար է մղել Վ. Ի. Լենինը: Նա գրել է. «Ո՞ր կոոպերատիվները, կապիտալի դեմ անմիջականորեն պայքարող կազմակերպությունները չլինելով, կարող են առաջացնել և առաջացնում են պատրանքներ, թե իբր նրանք սոցիալական հարցի լուծման միջոց են»[18]:

«Հրազդան» թերթի էջերում տեղ են գտել նաև թուրքական բանակալ տիրապետության տակ գտնվող հայ ժողովրդի կյանքին նվիրված հոդվածներ: «Տաճկաստանի հեղափոխությունը»[19] հոդվածաշարում հեղինակը անխնա մերկացնում է սուլթան Աբդուլ Համիդի վարած ազգահալած քաղաքականությունը հայերի և ընդհանրապես այլազգիների նկատմամբ: «Եվ տաճիկ կառավարությունը,— գրված է այնտեղ,— որն իր հայրենասիրությունը գտնում էր միայն իր երկրում եղած ստարազգիներին ու այլադավաններին ոչնչացնելու, նրանց անմեղ արյան մեջ լողալում և որը սակայն ամենահանգիստ խղճով դրսի ստարազգիներին ու այլադավաններին էր ծախում իր հարազատ ժողովրդի քրտինքն ու աշխատանքը, նրա ձեռքն էր տալիս կառավարչական ղեկը, որ խեղդում էր նոր-նոր զարգանալ ցանկացող հողագործությունը և այլն և այլն, շատ հեշտությամբ կարողացավ իր դեմ լարել ու ատել



բարձրացնել երկրի գիտակից և հայրենիքի համար սրտացավ հասարակության խավերը»[20]:

1908 թ. վերջապես սուլթան Աբդուլ Համիդը գահընկեց արվեց, «Երիտասարդ թուրքերի» բուրժուանացիոնալիստական կուսակցությունն իր ձեռքը վերցրեց իշխանությունը, հաստատելով սահմանադրական կարգեր: Երիտթուրքերի հաղթանակի առաջին օրերին «Հրազդան» թերթը հանդես եկավ, գրելով. «Բռնության ավերակների վրա կանգնեց ազատության դրոշակը և ամենքը ոգևորված նրա հաղթանակով, շունչ առան, նոր կյանք ստեղծեցին»[21]: Սակայն որոշ ժամանակ անց, երբ լուրեր ստացվեցին հայկական գյուղերում թուրքերի կատարած վայրագությունների մասին, թերթը հուսախաբ գրեց, որ սահմանադրությունը իր կիրառությունը չգտավ թուրքական գյուղերում, որ օսմանյան պառլամենտի կազմը վստահություն չի ներշնչում և չի արդարացնում իրեն: Երիտթուրքերը դավաճանելով իրենց խոստումներին, վարում են ռեակցիոն քաղաքականություն: Հայտնի է, որ 1909 թ. ապրիլին երիտասարդ թուրքերը Կիլիկիայի Ադանա քաղաքում կազմակերպում են հայկական նոր ջարդեր: Թերթը լուրեր է տպագրում և հայտնում, որ քրդական մի շարք գյուղերում գումարվում են քուրդ բեգերի խորհրդակցություններ՝ հայկական նոր ջարդեր կազմակերպելու նպատակներով:

Չվստահելով բուրժուանացիոնալիստական «Երիտասարդ թուրքերի» կուսակցությանը, թերթը հորդորում է մասսաներին՝ զարթուն կերպով հսկել, որ սահմանադրության ազդարարած սկզբունքները դառնան կենդանի իրականություն»[22]: «Հրազդան» թերթը դեմ չէր սահմանադրական կարգերին, ընդհակառակը այն մեծ հույսեր էր կապում սահմանադրության հետ:

«Հրազդան» թերթը անդրադարձել է ժամանակի հուզող գրեթե բոլոր հարցերին: Կաթողիկոսական ընտրությունների ժամանակ այն պաշտպանել է Մատթեոս Իզմիրլյանի թեկնածությունը, նկատի ունենալով նրա անձնավորությունը, բարոյական բարձր կերպարը:

Հայտնի է, որ ռեակցիայի տարիներին աշակերտական հուզումներ են սկսվում Էջմիածնում, Երևանում և այլուր։ Աշակերտները ցույցեր են անում՝ բողոքելով դպրոցական խիստ ռեժիմի դեմ, պահանջելով հեռացնել այս կամ այն ուսուցչին։ Նման համարձակ ելույթներով աչքի են ընկնում Երևանի թեմական դպրոցի 4—6-րդ դասարանների աշակերտները։ Նրանք 1908 թ. սկսած գրություններով դիմում են դպրոցի հոգաբարձությանը՝ պահանջելով տարվա վերջին քննությունները վերացնել։ Հոգաբարձական խորհուրդը հարգում է նրանց խնդրանքը։ Դրանից հետո 1908 թ. նոյեմբերի 24-ին, երբ դպրոցի տեսուչ Տիգրան Եղամալյանը մտնում է 6-րդ դասարան, աշակերտները հայտարարում են, որ չեն ցանկանում լսել նրա դասերը։ Եղամալյանը հեռանում է և դիմում հոգաբարձու Արզությանին։ Մինչ այդ աշակերտներն արդեն դիմում էին հանձնած եղել թեմական դպրոցի հոգաբարձու Պողոս Կանդուրյանին։ Թերթը տպագրում է այդ դիմումի լրիվ տեքստը։ Այնտեղ նշված է, որ տեսուչ Տիգրան Եղամալյանը վարում է հակամանկավարժական գործունեություն, չի վայելում աշակերտների հարգանքը ու համակրանքը և անընդունակ է դպրոցի տեսուչը լինելու։ Բողոքելով, աշակերտները պահանջում են հեռացնել ուսուցչության և տեսչության համար անպետք դաշնակցական Եղամալյանին, հակառակ դեպքում դասադուլով կպաշտպանեն իրենց իրավունքները։ Հոգաբարձու Կանդուրյանն առաջարկում է աշակերտներին ետ վերցնել իրենց դիմումը, աշակերտները չեն համաձայնվում։ Հրավիրվում է հոգաբարձական ժողով, որը որոշում է չեղյալ համարել այդ դիմումը և խիստ պատժել աշակերտներին՝ նման քայլի դիմելու համար։ Սակայն աշակերտների դժգոհությունը գնալով սաստկանում է։ Դպրոցի տեսուչ Տիգրան Եղամալյանը դիմում է տալիս և ազատվում աշխատանքից։ «Հրազդան» թերթը կրկին անգամ հանդես է գալիս և այս անգամ իր չափավոր դիրքերից փորձում հաշտարարի դեր կատարել։ «Սթափվեցեք» հոդվածում խորհուրդ է տրվում աշակերտությանը՝ ետ կանգնել սխալ քայլից, շարունակել նախկին խաղաղ կյանքը։ Ինչ խոսք, «Հրազդան» թերթը ընդհանրապես դեմ էր աշակերտական նման համարձակ բողոքներին ու դասադուլներին, քանի որ դրանց մեջ տեսնում էր ծայրը հեղափոխական ելույթների, ելույթներ, որ արդեն լայնորեն տարածված էին սովորող երիտասարդության մեջ, այդ թվում նաև Երևանի աշակերտության մեջ։



Իհարկե, «Հրազդան» թերթը չէր հանդուրժում այն հանգամանքը, որ Երևանի դպրոցներում դեռ դասավանդում էին բավարար գիտելիքներ չունեցող ուսուցիչներ։ «Հոգաբարձուներ և ուսուցիչներ» ընդարձակ հոդվածաշարում քննադատվում են դպրոցների անորակ ուսուցիչները։ «Սրանց մեջ են,— գրում է թերթը,— հաճախ կամ համարյա բոլոր աղաները, գյուղի կուլակները, դանադան տեսակի «պառավելիներն» ու տացերն ընդհանրապես, որոնց սրտին մոտ չէ ժողովրդի կրթության գործը և որոնք բացի այդ շահագործում են իրենց պաշտոնն ու դպրոցը և հայտնապես կարելի է ասել, որ վերջին դիտումներով ու նկատումներով միշտ անհաշտ են ուսուցիչների ու ուսուցչական խմբերի հետ»[23]։ Թերթը «Պրոֆեսիոնալ ուսուցչություններ» հոդվածում առաջ է քաշում դպրոցները մասնագիտական ուսուցիչներով համալրելու պահանջը։ Մանկավարժական թեմաներով թերթի համար հոդվածներ էին գրում այնպիսի առաջադեմ մանկավարժներ, ինչպիսիք էին Առ. Բահաթրյանը և ուրիշներ։

«Հրազդանը» անդրադարձել է նաև արվեստի և գրականության հարցերին։ Այստեղ բարձր են գնահատվել Խ. Աբովյանի, Ռ. Պատկանյանի ստեղծագործությունները։ «Կարմիր թելը մեր նորագույն գրականության մեջ» հոդվածում Աբովյանի մասին գրված է. «Աբովյանը նկարագրել է հայ անփառունակ իրականությունը, առաջինն է եղել մեր բոլոր գրականագետներից, որ ձևակերպել է հայության արթնացած ինքնաճանաչությունը և հզոր, անկեղծ ձայնով կանչել ամբողջ հայությանը՝ թափ տվեք ձեզնից ստրկության ոգին, ստեղծեցեք ձեզ համար մի պատվավոր վիճակ»[24]։

Այսպիսով, «Հրազդան» թերթը ռեակցիայի ծանր տարիներին, իր կարճատև գոյության ընթացքում այս կամ այն չափով արձագանքել է ժամանակի հուզող հարցերին։ Եվ եթե

հասարակական, քաղաքական խնդիրների մեկնաբանումը չի կարողացել բխեցնել ժամանակի հեղափոխական ոգուց, ապա այդ այն պատճառով, որ ճիշտ չի կողմնորոշվել երևույթների դրության մեջ։

Իր չափավոր հայացքներով հանդերձ, «Հրազդան» թերթը հետաքրքրություն է ներկայացնում ժամանակի հայ պարբերականների շարքում։



ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

## «ՆՈՐ ՁԱՅՆ» (1911—1912), «ԿՌԻԱՆ» (1911—1912), «ՆՈՐ ՄԱՄՈՒԼ» (1913—1915) ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

1910 թվականից սկսած բանվորական շարժումներն ու գյուղացիական հուզումները նոր թափ են ստանում Ռուսաստանում։ «Սևհարյուրակային ռեակցիայի լիակատար տիրապետության շրջանը վերջացավ,— գրում է Վ. Ի. Լենինը։— Սկսվում է նոր վերելքի շրջանը»[1]։ Հեղափոխական շարժման նոր ալիքը լայն տարածում է գտնում նաև Անդրկովկասում, ինչպես և Հայաստանում։ Այստեղ մի շարք գյուղերում սկսվում է արդեն կազմակերպված շարժում կալվածատերերի դեմ, գյուղացիները հրաժարվում են հարկեր վճարելուց, բռնագրավում են կալվածատիրոջ հողը, այրում նրա խոտի դեզերը։ Քաղաքում բանվորներն իրենց բողոքն արտահայտում են գործադուլներով։ Գործադուլներ են բռնկվում արդյունաբերական ձեռնարկություններում, երկաթուղային կայարաններում, հանքահորերում և այլուր։ Գործադուլներն ու բողոքի ցույցերը աստիճանաբար վեր են ածվում քաղաքական պայքարի։ 1912 թ. ապրիլի 4-ին սիբիրյան տայգայում, Լենայի ոսկու հանքերում ցարական զինվորների կողմից բանվորների գնդակահարումը բողոքի ու ցասման արտահայտություններով համակեց համայն Ռուսաստանի աշխատավորությանը։ Երևանում բանվորագյուղացիական հուզումներին ճիշտ ուղղություն տալու համար անհրաժեշտ էր ուժեղացնել պրոպագանդիստական աշխատանքը, կազմակերպել ու ղեկավարել

հեղափոխական շարժումները։ Ղեկավարի դերում կարող էր հանդես գալ միայն բոլշևիկյան կուսակցությունը, իսկ նրա գաղափարները մասսայականացնելու գործում մեծ դեր ուներ բոլշևիկյան մամուլը։

Հայաստանում բոլշևիկյան մամուլի բացակայության պայմաններում խիստ զգացվում էր մի այնպիսի պարբերականի գոյության անհրաժեշտությունը, որն օբյեկտիվորեն պաշտպաներ աշխատավորության շահերը։ Մամուլի նման օրգաններ հանդիսացան «Նոր ձայն», «Կռան», «Նոր մամուլ» պարբերականները։ Այդ թերթերի ուսումնասիրությունը պատկերացում է տալիս Երևանում հասարակական առաջադիմական մտքի զարգացման մասին։

## «Նոր ձայն»
## (1911—1912)

1911 թ. սեպտեմբերի 19-ին Երևանում լույս է տեսնում «Նոր ձայն» առաջադիմական շաբաթաթերթը։ Առաջին տարում այն հրատարակվում է ընդամենը 9 համար, իսկ երկրորդ տարում՝ միայն մեկ համար։ Թերթի խմբագիր-հրատարակիչն էր Վահան Տեր-Աբրահամյանը։ Թղթակցում էին թերթին ժամանակի ականավոր հասարակական-քաղաքական գործիչ, մարքսիզմի հմուտ տեսաբան Արշավիր Մելիքյանը, հրապարակախոս Մուշեղ Բագրատունին, բանաստեղծ Հակոբ Հակոբյանը և ուրիշներ։

«Նոր ձայն» շաբաթաթերթը կոչված էր ծառայելու, ինչպես թերթն է գրում, գավառական կյանքի ծով կարիքների բավարարում տալու նպատակին։ «Փոքրիկ է բանակը գավառական գործիչների,— գրված է այնտեղ,— որոնց վիճակված է կռվել մի ուժեղ և ահավոր թշնամու դեմ-գավառի խորին տգիտության, անթափանց խավարի կործանիչ ուժի դեմ։ Եվ եթե մեզ հաջողվի սույն թերթի հրատարակումով ընդառաջ գնալ մասնավորապես գավառական կյանքի հրատապ խնդիրների լուսաբանության պահանջին, եթե մենք կարողանանք



գոնե չոկ հետաքրքրություն զարթեցնել անգիտ հասարակության մեջ դեպի հասարակական բնույթ կրող հարցերը, եթե մեզ հաջողվի գոնե գեթ խթան հանդիսանալ՝ այդ ուղղությամբ ավելի ուժեղ ու կարող ձայների երևան գալուն,— դրանով մենք լրացրած կլինենք մեր ձայնը, բերկրալից սրտով կատարած կհամարենք հասարակական կյանքին ծառայելու խորունկ գիտակցությունից և պարտականությունից բխած մեր միտումն»[2]։

«Նոր ձայն» շաբաթաթերթի լույս ընծայման առթիվ «Էրիվանսկիե օբյավլենիյա» թերթի խմբագրությունը հանդես է եկել ողջույնի խոսքով, ուր ասված է. «Անցյալ 17-ին լույս տեսավ Երևանում «Նոր ձայն» շաբաթաթերթի 1-ին համարը՝ խմբագրությամբ և հրատարակությամբ Վահան Տեր-Աբրահամյանի։ Շաբաթաթերթը իր արտաքինով, մինչև իսկ ներքինով գրավիչ տպավորություն է թողնում... Ցանկալի է, որ տեղական այն դասակարգը, որն իրեն ինտելիգենտ է համարում և գրականության ու լրագրության խոսքի նախանձախնդիր՝ միանան պ. Տեր-Աբրահամյանի հետ և մեջք-մեջքի տված առաջ տանեն այս «Նոր ձայնը»՝ հարուստ և անհրաժեշտ գավառական ձայն դարձնելու համար։ Սրտանց ողջունում ենք»[3]։

«Նոր ձայն» թերթը լույս էր տեսնում շաբաթը մեկ անգամ։ Թերթում զետեղված հոդվածների զգալի մասը նվիրված էր գյուղի առօրյա հոգսերի ու կարիքների լուսաբանմանը։

Թերթը արձագանքում էր ժամանակի հասարակական-քաղաքական, սոցիալական-տնտեսական կյանքում տեղի ունեցած այն նոր երևույթներին, որոնք արևմտաեվրոպական և ռուսական քաղաքակիրթ երկրներից մուտք էին գործում հայ իրականություն։

Կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացման հետևանքով Երևանի նահանգում որոշ բարեփոխումներ եղան արդյունաբերության բնագավառում։ Ստեղծվեցին արտադրական-փայատիրական ընկերություններ («Գինեգործական ընկերություն», «Կաթնարդյունաբերական ընկերություն»; «Պահածոների արտադրության ընկերություն» և այլն)։ Խոշոր արդյունաբերության զարգացման համար կարև-

վոր նախադրյալ հանդիսացավ երկաթուղու կառուցմա[ն]: Հայտնի է, որ երկաթուղու շնորհիվ լայն հնարավորություններ ստեղծվեցին քաղաքի տնտեսական կյանքում ռուսական կապիտալի ներթափանցման և գինեգործական արտադրանքների վաճառահանման համար: Այնուհանդերձ, բացակայում էր այն կապիտալը, որը կարող էր հնարավորություն ստեղծել խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ կառուցելու համար: Հասունացել էր սեփական հումքի բազայի վրա տեղական արդյունաբերությունը զարգացնելու պահանջը: «Երևանի նահանգի բնական հարստությունները»[4] հոդվածում այն միտքն է զարգացվում, որ չպետք է թողնել օտարերկրյա կապիտալիստներին շահագործելու մեր երկրի բնական հարստությունները: «Եթե մի քիչ մոտենանք այդ գործին,—գրում է թերթը,— կտեսնենք, թե ինչպես ճարպիկ արտասահմանցին ինքը կամ իր «մակլերը» շահագործել են ու շահագործում են մեր տնտեսությունը, մեր անգիտությունը ու այսօրվա մեր երկրի միլիոններ արժեցող հարստությունը խլում են մեր այսօրվա քաղցած գյուղացուց...»[5]: Թերթում չի մոռացվում կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացման հետևանքով տնտեսական ու հասարակական կյանքում մուտք գործած նորը: «Երեկ Երևանյան շրջանը տակավին ստրական անշարժության մեջ, ապրում էր նահապետական լճացման շրջանում: Այսօր նա տնտեսաարդյունաբերական և վաճառականական առաջադիմության կյանքով թևակոխում է եվրոպականացման պրոցեսը. սկսվում է գործարանային արդյունաբերությունը, գործում է շոգեմեքենան, տնտեսական արդյունաբերությունը իր արտահանությամբ հասնում է մինչև հեռավոր երկրների շուկաները, սկսել է կուլտուրական կյանքի երկունք, հողի մշակության եվրոպականացման սիստեմ և բնական է, որ այս հանգամանքներում զարթնում են հասարակական առօրյա բյուրավոր խնդիրներ, հրապարակ են նետվում նորանոր բազմաթիվ հարցեր, մտավոր շփում, պայքար, որ միայն ու միայն տեղական գործին ու շահերին նվիրված մամուլն է, որ պիտի ստանձնե այդ բոլոր խնդիրներին լուծում և ուղղություն տալու պատասխանատու դերը»[6]:



Հայտնի է, որ 1910 թ. Չինաստանում հեղափոխական շարժումը նոր վերելք է ապրում, ընդգրկելով նաև զինվորական շրջանները: «Նոր ձայն» թերթը անդրադառնալով Չինաստանում տարածում գտած հեղափոխական շարժումներին, այն կարծիքն է արտահայտում, որ Չինաստանում հեղափոխական շարժումները կհաղթանակեն, կտապալվի միապետությունը: «Հեղափոխական շարժումը բռնկել է,— գրում է թերթը,— և իբրև մի ահռելի հրաբուխ իր վերջնական ժայթքումով կործանելու է մանչուրական տոհմի վերջին շառավիղները. նրանց հետ և ստրկական այդ արտասովոր բռնակալության մնացորդները:

Առայժմ հաղթությունը հեղափոխականների կողմն է»[7]:

Հեղափոխական նոր վերելքի տարիներին «Նոր ձայն» թերթի էջերում տպագրվել է ականավոր մարքսիստ Արշավիր Մելիքյանը: Նա թերթի էջերը օգտագործում էր իր քննադատական խոսքն ասելու նաև այն գործիչների հասցեին, որոնք տուրք տալով բուրժուական գաղափարախոսությանը, իրենց հայացքներով փորձում էին հակադրվել մարքսիզմին և քարոզել սուբյեկտիվ իդեալիզմի ուղղությունները՝ մախիզմը, ագնոստիցիզմը: 1911 թ. Երևանում լույս է տեսնում դաշնակցական «թեորետիկ» Երվանդ Ֆրանգյանի «Ն. Կ. Միխայլովսկին որպես փիլիսոփա-սոցիոլոգ» գիրքը: «Նոր ձայն» թերթում մատենախոսության խորագրի տակ տպագրվում է Արշ. Մելիքյանի գրախոսական հոդվածը այդ գրքի վերաբերյալ: Հեղինակը քննադատում է Ֆրանգյանին այն բանի համար, որ նա փորձում է բարձրացնել Միխայլովսկու հայացքները և չըմբռնելով Մարքսին, վերագնահատել, քննադատել մարքսիզմը: Ելնելով սուբյեկտիվ սոցիոլոգիզմի դիրքերից, Ֆրանգյանը փաստորեն պաշտպանում է Մախի, Ավենարիուսի, Նիցշեի, Միխայլովսկու հետադիմական հայացքները: Արշ. Մելիքյանը հեգնանքով գրում է. «Ի դեպ, գիտեք ինչ պարոն Ֆրանգյան, մի փոքր բարեկամական խորհուրդ՝ կամացուկ ձեր ականջին ասված, որ ոչ ոք չլսի.— թողեք առայժմ քննադատել և խոսել մարքսիզմի մասին: դիմեցեք նրա ուսումնա-

արության, ով գիտե, հրաշք է, գուցե մի բան դուրս գա, թեև խոստովանում եմ շատ քիչ հույս կա»[8]։

Ուշագրավ է Լև Տոլստոյի մահվան տարեդարձի առթիվ Արշ. Մելիքյանի «Նոր ձայն» թերթում տպագրված հոդվածը։ Այստեղ բարձր է գնահատված Տոլստոյի գրական ստեղծագործությունների ճանաչողական արժեքը, նրա գրական ժառանգության քննարկմանը Հեղինակը մոտենում է մարքսիստ գրականագետի դիրքերից։ Նա Տոլստոյին համարում է աշխատավոր մասսաների շահերի ու հետաքրքրությունների, տիրող դասակարգի դեմ ուղղված բողոքի ու ցասումի արտահայտիչը։ «... ով որ չէր կամենում հավատալ, որ չկա այլևս ծերունին, որն իր հանճարեղ վրձինով ստեղծել էր գրական այնպիսի հոյակապ երկեր, որն իր անողոք գրչով մերկացրել էր իր հայրենիքի այնքան բացասական երևույթներն ու կողմերը։ Ցավում էին մանավանդ ռամկավար տարրերը, որովհետև է Տոլստոյը գիտեր հարվածել բարձր ու իշխող դասակարգի ապականությունը, բռնությունը և գիտեր համակրանք զարթեցնել դեպի բանվոր ու աշխատող ժողովուրդը.... Նա, որ ժխտում էր հեղափոխությունը և ժողովրդական քաղաքական շարժումները, մահից անմիջապես հետո կապվեց իր անունը մասսաների արթնացման նոր ցույցերի հետ»[9]։

Իր հոդվածում Արշավիր Մելիքյանը ներկայացնում է Տոլստոյի հայացքների ճշմարիտ պատկերը, բնութագրում նրան որպես մտածողի և որպես գեղագետի։ Տոլստոյին նա ցույց է տալիս իր ուսմունքի և ստեղծագործական մեթոդի միջև եղած հակասությունների մեջ։ Այսինքն, նկատում է, որ հեղինակը կամենալով բարեփոխված տեսնել կյանքը, վկայակոչում է բարի կամքին և ցանկությանը, միաժամանակ մերկացնում բռնությունը, հանդես գալիս շահագործվող ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերից։ Մելիքյանը գրում է. «Լինելով հանճարեղ գեղարվեստագետ և փիլիսոփա, իր քաղաքական իդեալներով ու հայացքներով Տոլստոյը միշտ եղել է և մինչև վերջ էլ մնացել է ուտոպիստ. կամենալով բարեփոխել և հեղաշրջել ժամանակակից մարդկության հասարակարգը, Տոլստոյը կոչ է արել միայն առանձին անհատի



բարի կամքին ու ցանկությանը, առանց ուշադրություն դարձնելու տնտեսական այն պայմանների և քաղաքական հիմնարկությունների վրա, որոնց մեջ ապրում է այդ նույն անհատը։ Ապա շարունակում է. «Բայց չնայած այդ բոլորին, չորրորդ դասակարգի իդեոլոգները չեն կարող առանց կսկծի հիշել, որ մի տարի սրանից առաջ հողին հանձնվեց դիակը այն մեծ մարդու, որը գեղարվեստի ամենափայլուն ներկայացուցիչներից մեկն էր, որը առանց վախի, առանց տատանումների օգտվում էր ազատ կերպով խոսելու և գրելու անկապտելի իրավունքից, մերկացնում էր բռնությունը, բարձրացնում էր իր ձայնը հանուն հետամնաց, խավար և շահագործվող ժողովրդի և այսպիսով աննկատելի կերպով հարյուրավոր թելերով շաղկապում էր իր հանճարի հմայքը ազատագրական շարժման հետ»[10]։ Գնահատելով Տոլստոյին, Մելիքյանը ելնում էր մարքսիստական գեղագիտության տեսանկյունից։ Հայտնի է, որ Վ. Ի. Լենինը իր «Լև Տոլստոյը որպես ռուսական հեղափոխության հայելի» հոդվածում գրել է. «Տոլստոյն ինքնատիպ է, որովհետև նրա հայացքների միագումարությունը, վերցված որպես ամբողջություն, արտահայտում է հենց մեր հեղափոխության, որպես գյուղացիական բուրժուական հեղափոխության առանձնահատկությունները։ Այս տեսակետից Տոլստոյի հայացքներում եղած հակասությունները այն հակասական պայմանների իսկական հայելին են, որոնց մեջ դրված էր գյուղացիության պատմական գործունեությունը մեր հեղափոխության մեջ»[11]։

«Նոր ձայն» թերթում բարձր են գնահատվել ժողովրդի արժանի զավակները։ Նրանցից Էմին Տեր-Գրիգորյանի մասին գրված է. «Էմին Տեր-Գրիգորյանն այնքան երկար ու ծանր տարիներ գործել է լուսավորության ջահը ձեռքին բռնած իր ժողովրդի խավարի մշուշով պատած ճանապարհի վրա։ Ո՞ւմ հայտնի չեն նրա խիզախ, անաչառ, անկողմնակալ գործունեությունը և քաղաքի շահերի վերաբերյալ հոդվածները»[12]։

«Նոր ձայն» թերթը ազգի բարօրության երաշխիքը տեսնելով ապագա սերնդի դաստիարակության գործի լավ կազմակերպման մեջ, լայնորեն պրոպագանդել է ժողովրդական կր-

թության սիստեմում մուտք գործած առաջավոր սկզբունքներն ու մեթոդները։ Պայքարը տարվում էր դպրոցը ժողովրդականացնելու, կրթությունն ու լուսավորությունն աշխատավոր մասսաների սեփականությունը դարձնելու համար։ «Նոր ձայն» թերթը հանդես էր գալիս ժողովրդական դպրոցների ցանցի ընդարձակման և բոլոր գյուղական վայրերում դպրոցներ հիմնելու պրոպագանդայով։ «Բուն ժողովուրդը,— գրում է թերթը,— դեռ անթափանց խավարի ու տգիտության ճիրաններում է և ցնցոտիների մեջ՝ իր հայացքը դեպի այդ երջանիկ կենտրոնները հառած՝ «դպրոց» է աղաղակում։ Եվ այդ այն կուսական բարեբեր հողն է, որ պիտի մշակեր մեր երիտասարդությունը ու մինչև օրս չէ մշակել բավականաչափ»[13]։

Դպրոցի գոյության պահպանման համար հայ ժողովուրդը չուներ հաստատուն միջոցներ։ Դպրոցը պահպանվում էր հոգաբարձուների և հարուստ-բարերարների նվիրատվություններից ստացած գումարներով։ Ուստի, թերթում բարձրացվում է դպրոցական մշտական տուրքի սահմանման հարցը։ Առաջարկվում է՝ յուրաքանչյուր համայնքից պարտադիր կարգով գանձել դպրոցական տուրք, քանի որ ինչպես թերթում էր գրված. «Եթե մի համայնք մտցնում է իր մեջ դպրոցական տուրք և ընդհանուր ուժերով հոգում է իր զավակների կրթության և դաստիարակության մասին, նա ընդառաջ է գնում կուլտուրական բարձր պահանջներին ու ապահովում իր հանրային բարոյական կյանքի զարգացման գործը»[14]։

Կրթություն ստանալու նպատակով գյուղից քաղաք էին տեղափոխվում մանկահասակ երեխաներ։ Նրանց բնակարանով և սննդով ապահովելու համար թերթը պահանջում էր ստեղծել աշակերտական առանձին ընկերություն։

Թերթում ուշադրության են արժանանում նաև մատաղ սերնդի գեղագիտական դաստիարակության խնդիրները։ Պահանջվում է, որ այդ գործով զբաղվեն ոչ միայն առանձին անհատներ, այլ լավագույն մասնագետներից կազմված ընկերություններ։



«Նոր ձայն» թերթում Թուրքահայաստանում և օտար երկրներում տեղի ունեցած հեղափոխական շարժումների մասին տպագրված համարձակ ելույթները, մարքսիստ գործիչների հոդվածների տպագրությունը անհանգստացնում էին տեղի ղեկավար մարմիններին։ Հետևանքը լինում է այն, որ թերթը հաջորդ տարում՝ 1912 թ. ընդամենը մեկ համար լույս տեսնելուց հետո փակվում է։

«Նոր ձայնը» թեև մի քանի համար է լույս տեսել, սակայն բարձրացրած հարցերի մեկնաբանման առումով իր հետքն է թողել հայ առաջադիմական մտքի զարգացման վրա։

## «Կռան»
## (1911—1912)

1911 թ. նոյեմբերի 13-ին Երևանում լույս է տեսնում «Կռան» հասարակական-տնտեսական և գրական-գեղարվես-




«Կռան» շաբաթաթերթի գլխագիրը

տական շաբաթաթերթի առաջին համարը։ Այս նոր պարբերականը խմբագրում է առաջադիմական հայացքների տեր Մուշեղ Բագրատունին։ Թերթին աշխատակցում էին Արշավիր Մելիքյանը, գրականագետ Արսեն Տերտերյանը, Երևանի թեմական դպրոցի ուսուցիչ Մակար Տեր-Սարգսյանը (Փանոսկիս), բժիշկ Արամ Տեր-Գրիգորյանը և ուրիշներ։

Առաջին տարվա առաջին համարի առաջնորդող հոդվածում խմբագիրը նշում է, որ ընթերցողի առաջ չի պարզելու թերթի ուղղությունն ու հիմնական սկզբունքները, քանի որ ժամանակին «գործնականապես ցույց կտա իր ինչ սկզբունքների և նշանաբանների ծառայելը, և թե հասարակական, բարոյական ու մտավոր զարգացման գործում՝ ինչ դեր ու արժեք ունենալը»[15]։

Քննադատության սուր սլաքը ուղղելով տիրապետող դասակարգի կամայականությունների դեմ, թերթը մերկացնում է նրա շահագործողական էությունը և մղակում պայքարի իր ձևերն աշխատավորության սոցիալական, հասարակական, քաղաքական կյանքի բարեփոխման համար։ Թերթն իր կոչման մասին բացահայտ գրում է. «Դուրս գալ հրապարակ և պայքար հայտարարել մի այնպիսի դասակարգի ու տարրի դեմ, որն այսօր հասարակական կյանքի փաստական տեր ու տնօրենն է, որի խոսքը շատ հաճախ օրենք է ազնիվ ու անգիտակից մասսայի համար, որին իր «հասարակական գործունեության» համար մեր միջավայրի ափական կուլտուրական հասարակությունը փառաց ի փառս է բարձրացրել, որի գործունեությունը իր «ազգօգուտ ծառայությամբ» իր մեջ է պարփակել մեր հասարակական կյանքի բոլոր էջերը։ Համարձակվել վար առնել նրանց դիմակները, փետրաթափ անել և նրանց «հասարակական գործունեության օգտավետությունը» իր ողջ մերկությամբ ցուցադրել հասարակությանը, ամեն անգամ նրանց խարազանել և հարկադրել ետ նահանջել գրաված դիրքերից,—այդ անկասկած մի խիզախ քայլ է։

Եվ այդ պայքարը «Կռանը» սկսել և տանում է»[16]։

Միանգամայն իրավացիորեն գտնելով, որ գավառի աշխատավորության համար, որին «որպես մի անլեզու հոտի հասանողը խուզում է իր մկրատի ուժի չափի» այլևս օգտակար չեն դատարկ խոսքերն ու քարոզները, թերթը առաջարկում է անհապաղորեն դիմել գործնական միջոցների։ Ապա հայտարարում է, որ թերթը մինչև վերջ հարազատ է մնալու դեմոկրատիզմի սկզբունքներին, անդավաճան շարունակելու է



իր սկսած պայքարը ժողովրդի շահերի պաշտպանության համար։

Անկասկած, դեմոկրատական ուղղություն ունեցող թերթն առաջին իսկ օրվանից հանդիպում է կառավարության և ունևոր խավի առնչությանը։ Իր հակառակորդների, ինչպես թերթն է գրում, «հասարակական գործիչների», սպառնալիքները համարում է «սպառնալիքներ, որոնք գալիս են ապացուցելու, որ մեր արձակած դեռ փորձնական նետերն իրոք հասնում են իրենց նպատակին և ծայրահեղորեն մեծ վնաս սպառնում տիրական և իշխանական ազդեցության...»[17]։

«Կռանը» թերթն իր առաջնորդող հոդվածներից մեկում բացարձակորեն հայտարարում է, որ լույս է տեսնելու աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանության համար, ժողովուրդ, որի հասարակական-տնտեսական և մտավոր-բարոյական կյանքն անխնա շահատակվել ու շահագործվել է հղփացած դասակարգի կողմից։ Թերթը ուրախությամբ արձանագրում է այն փաստը, որ Հայաստանի գավառներում աշխատավորությունն արդեն ինքնագիտակցության է գալիս, որ սկսում է ճանաչել իր արժանիքները, իր դերն ու տեղը հասարակական կյանքում, իր շահերը հասարակության մեջ, ամենակարևորը, ճանաչում է իր դասակարգային թշնամուն և նրա դեմ պայքարի նախապատրաստվում։ Հատկապես ընդգծվում է այն փաստը, որ կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով Հայաստանում ուժեղանում է դասակարգային շերտավորումը և հակամարտությունը դասակարգերի միջև։ Եվ միաժամանակ, ինչպես թերթն է նկատում, նրա ծոցում զարգանում են նրա իսկական հակառակորդները՝ կանգնած դասակարգային ամուր հողի վրա[18]։

«Կռանը» թերթի խմբագիր Մուշեղ Բագրատունին իր Ա. Նաբիմյան, Մե-Բուժի, Փալանդուզ Մկօ, Մար-Տօ, Կար-Դան, «Pessimist», «Ջաննիկ» և այլ ծածկանուններով ստորագրված հոդվածներում հարազատորեն նկարագրում է աշխատավոր գյուղացու սոցիալական, տնտեսական, իրավական թշվառ վիճակը։ Թերթը բացարձակորեն նշում է, որ գյուղացուն կեղեքում էին ոչ միայն վաշխառուները, այլև հոգևորականները,

դալավանները, շավուշները և «տղրուկ դասակարգի» մյուս ներկայացուցիչները։

«Գյուղացու ցավերից», «Գյուղական նամակներ», «Գյուղացու տնտեսությունը» խորագրերով տպագրված հոդվածներում քննադատության են ենթարկվում կուլակները, առևտրական խավը, մի խոսքով, ինչպես Թերթում է գրված. «փտած դասակարգերը»։ «Ցեխ, գռեհիկ վաշխառու և կուլակ դասակարգը,— գրում է Թերթը,— ներկայումս չի կարող և բնավ ընդունակ չի հանդիսանալու այն գիտակից, շրջահայաց և պիտանի սրտացավը, ինչ որ ներկայումս պահանջում է մեր արդեն առաջադիմող, դեպի կուլտուրական զարգացումը գնացող գավառական ժողովուրդը»։ Այս Թերթը նկատում է, որ գյուղի տերերը՝ տանուտերերը, մոռացած օրենք և խիղճ, անիրավացիորեն կողոպտում և հալածում են աշխատավոր գյուղացիությանը։ «... տանուտերերը իրենց օգնականների աջակցությամբ,— գրում է Թերթը,— գործի մի ասպարեզ են բացում, որտեղ արդարությունը նահատակված է, խիղճը Թաղված, Թույլը ամեն օր ծանակոծվում է և անպաշտպանների աչքի արտասուքը ծով է կտրում»[19]։

Գյուղում այլասերված էին բարքերը, մեծ չափերի էին հասնում կաշառակերության դեպքերը։ Աշտարակից ուղարկված հոդվածում գյուղացին բողոքի իր խոսքն է ուղղում գյուղի տերերի դեմ, գրելով. «Եվ վայ այն գյուղի հասարակությանը, որ մհալ չի դնի և չի «շահի» միրաբի սիրտը։ Նրա արտն ու անդաստանը ամառվա շոգերին կդատապարտվեն ծարավի ու ոչնչացման»[20]։

Հասարակական կյանքում ղեկավար դեր ստանձնած անհատները՝ դաշտապահը, ջրբաշխը բոլորն էլ կաշառակերներ էին և պատրաստ հասարակական շահը զոհաբերել «Թայֆայականին», անձնական, անհատական շահերին։

Գյուղում տիրող տգեղ բարքերն ու սոցիալական աղաղակող հակասությունները վերացնելու գործում մեծ դեր էր տրվում մտավորականությանը։ Դիմելով նրանց, Թերթը գրում է. «գործ-գործ և գործ է պետք մեզ և այդ ժամանակի անողոք պահանջը պետք է հատկապես կենտրոնացնել գավառում։ Ժողովրդի իրական օրերին, խաղաղ կուլտուրական զարգացման անկեղծ գործիչը մի ճանապարհ պիտի ունենա «դեպի գավառ»։ Այս գործում Թերթը բոլորովին հույսեր չի կապում «բարեգործ» բուրժուաների հետ, որոնք, ինչպես Թերթում է գրված, «Տարիների ընթացքում ծծել են և շարունակում են ծծել գյուղացու արյունը. ...որոնք մեծ եռանդով շարունակում են միջոցներ հնարել կողոպտելու՝ փող դուրս կորզելու բնությունից և իրենց նմանների ձեռքից բաշխված խեղճ, անճար գյուղացիներից»[21]։ Հույս չի կապվում նաև իբրև վերադաստիարակված ունևոր խավի կրթված զավակի հետ, քանի որ «կուլակը՝ կուլակ է, Թեկուզ նա լինի բարձրագույն կրթություն ստացածի մեկը»։ Հատկապես ընդգծվում է այն հանգամանքը, որ գյուղում նորաբողբոջ, իբր կրթված բուրժուաների երևան գալով էլ ավելի է բորբոքվում գյուղացիության ատելությունը հանդեպ տիրապետող դասակարգը։ Թերթը կանխագուշակում է, որ արդեն լցվել է նրա համբերության բաժակը և օրերից մի օր այն պայթելու է ու վերջ է դնելու նրա Թշվառ կյանքին։ «Եվ այսպես,— գրում է Թերթը,— դարեր շարունակ համբերությամբ կեղեքված աշխատավորության կուտակած, հոգնած ջանի վրա մի սոսկալի դրոշմ է դրոշմվում և մի մեծ Թույն է կուտակվում, որը անշուշտ վաղ Թե ուշ վերջ պետք է տա այդ խաբուսիկ հաղթանակին»[22]։

«Կռան» շաբաթաթերթում մեծ տեղ էին գրավում նաև արևմտահայ կյանքը լուսաբանող հոդվածները։ «Թուրքահայ խնդիրը», «Տաճկաստանի դրությունը», «Հայերի վիճակը Տաճկաստանում» (հեղինակ Լևոն Աղայանյան) և այլ հոդվածներում կենդանի գույներով ներկայացված է հայ ժողովրդի սոցիալական ու տնտեսական վիճակը Թուրքիայում։ «...Բայց Տաճկաստանի կառավարության արտաքին ձևի փոփոխվելու հետ,— գրում է Թերթը,— ներքին կառավարության եղանակը մնացել էր նույնը՝ Աբդուլ Համիդին հաջորդող Երիտասարդ Թուրքերը իրենք նույնպես մի մի Աբդուլ Համիդներ էին, լոկ այն տարբերությամբ, որ առաջինը իր անելիքը բացարձակ էր անում, իսկ վերջինները աղվեսային խորամանկությամբ»[23]։

Պատահական չէր, որ հեղափոխական վերելքի տարիներին Երևանում լույս տեսնող թերթը լայնորեն արձագանքում էր բալկանյան ժողովուրդների ազատամարտությանը: Այդ հանգամանքը միաժամանակ նպատակ ուներ բարձրացնելու ինչպես Թուրքիայում, այնպես էլ ցարական կառավարության լծի տակ գտնվող հայ աշխատավորության հեղափոխական ոգին: «Եվ Բալկանյան թերակղզու դարերի լլկված փոքրիկ ժողովուրդները,— գրված է այնտեղ,— այսօր ոտքի են կանգնել և հաշիվ են տեսնում իրենց իշխողների հետ՝ նրանք պետք է ծառանային ռազմատենչի ոճրագործ խելագարության ծնելիք նոր ապագայի ոճիրների դեմ և արդարությունը հաստատելու համար «ի զեն» կոչեին իրենց եղբայրներին»[24]: Եվ ընդհանրապես թերթը հայ ժողովրդի համար մեծ հույսեր է ակնկալում բալկանյան պատերազմի հաղթական ավարտի հետ. «Թերակղզին այժմ ազատամարտության վառարան է ներկայացնում, հեղափոխական մի հոյակապ ակտ հետևանք է այդ պատերազմը, ուր մարթավորվում է լեռան զավակը մյուս ազգությունների հետ՝ թոթափելու բռնակալի լուծը...: Մեծ պետությունները չեզոք դիրք բռնելով այդ խնդրում, թվում է թե նրանք ևս ընդունում են ազատատենչ փոքրիկ ժողովուրդների պահանջի իրավասությունը. սակայն այդ չէ նրանց չեզոքության պատճառը. նրանք ևս այդ կարմիր դաշտում մարթավորողների կարիքը ունեն՝ իրենց քաղաքական ուրույն նպատակներն ու շահերը առաջ մղելու: Եթե բալկանյան ժողովուրդները այդ անհավասար կռվում նույնիսկ հաղթվող դուրս գան, որ երբեք հավանական չէ թվում,— այնուամենայնիվ նրանց կողմն է բարոյական հաղթանակը. նրանց ճակատներն են զարդարվելու թույլի՝ ճնշող ուժեղին հասցրած ապտակի համար տրվող պանծալի պսակներով»[25]:

Թերթում լուրեր են տպագրվում Թուրքիայում սկսված հայկական նոր կոտորածների մասին: Մուշեղ Բագրատունին իրերի ընթացքը գունեղ պատկերներով ներկայացնելու համար դիմում է ֆելիետոնի ժանրին: Նա ներկայացնում է հայկական հարցի նկատմամբ արևմտաեվրոպական երկրների, ինչպես նաև հայ բուրժուանացիոնալիստական կուսակցու-



թյունների ունեցած վերաբերմունքը: Այսպես, քննադատելով ազգայնականների վարքագիծը, հայոց պատրիարքի անունից գրում է. «Այո՛, այո՛, հնազանդեցեք որ գան, վասնզի ես մենակ եմ, ազգը մնացած է անպաշտպան. մեր խոշոր գլուխները սկսած Նորատունկյաններեն մինչև վերջին բարապանը, ոմանք Օսմանյան կայսրության նախարար են, ոմանք պառլամենտին անդամ, ոմանք խոշոր պաշտոններուն մեջ, իսկ դաշնակցականք ալ իրենց հրատարակելով Օսմանլի, շրջաբերական հրատարակած են, որ ընդհանուր ուժերով պիտի կռվեն «Օսմանյան կայսրության թշնամիներուն դեմ»: Հարկավ, հայքս ալ անոր թշնամիներեն մին ենք, ուրեմն և դաշնակցականներուն թշնամին. ասոր համար ցարդ միայն քուրդերուն դեմ կը մարտնչինք, այսօր անոր ավելացած է նաև դաշնակցությունն»[26]:

Օգտագործելով առիթը, խմբագիրը քննադատական խոսք է ասում նաև արևմտաեվրոպական երկրների դիվանագիտության հասցեին: Միաժամանակ ճիշտ բնորոշելով նրանց գրաված դիրքը Հայկական հարցի նկատմամբ, հարց, որ նորից առաջ քաշվեց բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտության հետևանքով: Ինչպես հայտնի է, ռուսական կառավարությունը հովանավորող դիրք գրավեց դաշնակից սլավոնական երկրների հանդեպ և անգամ Օսմանյան կայսրության կազմում գտնվող մի շարք ազգությունների համար ազգային ինքնավարություն պահանջեց: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ը դիմելով Ռուսաստանին, խնդրեց նրա միջամտությունն ու օժանդակությունը: Հայ ժողովրդի անունից գրված դիմումներն ընդունելություն գտան միայն Ռուսաստանում: Եվ ահա թե ինչու թերթը, հուսախաբված արևմտաեվրոպական երկրների միջամտությունից, երախտագիտության խոսք է ասում ռուսական կառավարության հասցեին, գրելով. «Ժամանակը, քաղաքական բերմունքները իրենց բնույթով եղել են թելադրանք եվրոպական դիպլոմատիայի գործելակերպին՝ Հայկական հարցի նկատմամբ: Կար ժամանակ, որ ամբողջ Հայաստանը նույնիսկ հավասար գնահատություն չունեցավ. «Գերմանական մի մնացած զինվորի փտած ոսկորքի», իսկ Անգ-

լիան առարկեց, թե իր «նավերը չեն կարող լողալ Տավրոսի գագաթներում», կամ այլ քաղաքական հայացքներ՝ «Հայաստանի հովանավորությունը առանց հայերի»[27]։ «Բայց, այնուամենայնիվ,— շարունակում է թերթը,— հայ աշխարհի մարտիրոսված հայ ժողովրդի հուսալից աչքերը չեն դադարել անդադար նայելու դեպի Ռուսաստանին, դեպի արևելյան քրիստոնյաների հզոր Պաշտպանին և նրանից սպասել իրենց փրկությունը։

Թվում է, թե մոտեցել է ժամը և քաղաքական հանգամանքների թելադրությունը ճշմարտություն է տալիս Ռուսաստանին այսօր թերևս կատարելու իր պատմական միսիան»[28]։

Ռուսական կառավարությունը ստանձնեց Հայկական հարցի պաշտպանի դերը։ Նրա առաջարկած ծրագրի համաձայն Էրզրումի, Վանի, Բաղեշի (Բիթլիսի), Տիգրանակերտի (Դիարբեքիրի) և Խարբերդի վիլայեթները պետք է վարչականորեն միացվեին և կազմեին մեկ նահանգ (մարզ)։ Այս ծրագիրը Հայաստանի համար նախատեսում էր ազգային ինքնավարություն։ Ինչպես, ռուսական կառավարության այս ծրագիրը դիմադրության հանդիպեց Թուրքիայի և նրա թիկունքում կանգնած Գերմանիայի կողմից։ Գերմանիան, որ մտադիր էր զավթելու ամբողջ Մերձավոր Արևելքը, Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը դիտում էր որպես մի խոչընդոտ իր նպատակների իրագործման ճանապարհին։ Անգլիան և Ֆրանսիան երկդիմի քաղաքականություն էին վարում։ Պաշտոնապես արտահայտվում էին հօգուտ ռուսական նախագծի, բայց իրականում դեմ էին դրան։ Չնայած նման դիմադրությանը, Ռուսաստանը Հայկական հարցի շուրջ բանակցություններ սկսեց Թուրքիայի հետ։ 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց համաձայնություն։ Համաձայնագիրը ազգային ինքնավարության փոխարեն նախատեսում էր սոսկ ռեֆորմներ։ Նոր ծրագրի համաձայն Արևմտյան Հայաստանը պետք է բաժանվեր երկու առանձին վարչական միավորների՝ սեկտորների (նահանգների), որոնցից մեկն ընդգրկելու էր Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի



(Սվազի), մյուսը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթները։

Սակայն ռեֆորմների նույնիսկ այս չափավոր ծրագիրն անգամ 1914 թ. ամռանը, երբ բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը, թուրքական կառավարությունը չեղյալ հայտարարեց։ Պատերազմի առաջին իսկ օրերից Երիտթուրքերը սկսեցին բացահայտ նախապատրաստություններ անել հայկական նոր, մասսայական ջարդեր կազմակերպելու համար[29]։ Հայ ժողովրդին սպառնացող այդ սոսկալի աղետը կանխազգում էր նաև Մուշեղ Բագրատունին, որը գրում է. «Տաճկահայկական հարցը նորից հիշեցնում է 1895-ական թվականները։ Տաճկական լեռների մեջ իրենց բարբարոսական անպատժությամբ մնացած ցեղերը նորից հանդես են գալիս տաճկահայի կյանքը արյունոտելու, կարմրացնելու դարերից ի վեր մարտիրոսվող ժողովրդի արյունով»[30]։

Հայկական հարցի նկատմամբ թերթի գրաված դիրքը պարզ է։ Եղբայրական ժողովուրդների բարեկամության դիրքերից ելնելով, թերթը կոչ է անում բոլոր ճնշված, իրավազուրկ ազգերին միասնական ճակատով պայքարել թուրքական բռնակալ տիրապետության դեմ։

«Կռան» թերթն իր էջերում մեծ տեղ է հատկացրել նաև բարոյադաստիարակչական հարցերին։ Դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքները կանոնավորելու նպատակով առաջարկվել է Երևանում հիմնել ուսուցչական առանձին վարչություն, որի վրա և դնել ուսումնական ու դաստիարակչական աշխատանքներին վերաբերող ծրագրերի կազմման պարտականությունները։ Հոգաբարձությունն այլևս ընդունակ չէր այդ գործով զբաղվելու, քանի որ, ինչպես թերթում էր գրված, հոգաբարձությունը, որտեղ ընդգրկված էին գերազանցապես բուրժուա ու շահատակող դասակարգի ներկայացուցիչները, հեռու էր աշխատավոր ժողովրդի շահերը պաշտպանելուց։ Այն իր աշխատանքի ձևերով ու մեթոդներով հնացել էր և կյանքի համար միանգամայն անպետք ու անհամապատասխան դարձել։ Առաջարկվում էր մշակել նոր կանոնադրություն և այդ կանոնադրության համաձայն վերա-

նայել հոգաբարձության իրավունքներն ու պարտականությունները: Թերթի կարծիքով հոգաբարձական սիստեմին կարող էր փոխարինել դպրոցների ղեկավարման մեկ այլ, ավելի նպատակահարմար և առողջ գիտակցության վրա հիմնված ձև և ուղղություն»:

Հոգաբարձական սիստեմի գոյությունը կամա թե ակամա պահպանում էր դպրոցական ցանցում տիրող բուրժուական կեղծ բարեպաշտության ոգին, իշխող էին մնում բուրժուաբարերարներին ենթարկվելու, նրանց տգետ խորհուրդներն ունկնդրելու սովորույթները: Դրանք, ինչպես Թերթն է նկատում, XX դարի սկզբին լուսավորության հաղթանակի կատարելության մեջ արհամարհելի, բամահրելի և զզվանք հարուցանող երևույթներ էին: Միաժամանակ, հոգաբարձական սիստեմը տիրապետող դասակարգի ձեռքին հանդիսանում էր լավագույն զենք իր գաղափարախոսությունը տարածելու, աշխատավոր խավերին իր կողմը գրավելու համար: «... տիրապետող, շահագործող դասակարգերը,— գրում է Թերթը,— միշտ աշխատում են արթուն պահել «բարեգործական» խնամակալությունը մյուս բոլոր դասակարգերի վրա և այդպիսով նրանց կապել իրենց հետ»[31]: Այդ ամենից խուսափելու համար Թերթը առաջարկում է.

1. Վերացնել մուրացկանության սիստեմը, այսինքն՝ հոգաբարձական սիստեմը և մտցնել դպրոցական տուրքի գանձման սիստեմը:

2. Ամեն թեմ պետք է ունենա իր գործադիր մարմինը՝ տուրքի աղբյուրները ղեկավարելու համար: Այստեղ պահանջվում է դրամական գումարը հատկացնել այն վարչությանը, որին բաշխվելու են ուսուցիչների ռոճիկները և բոլոր ծախսերը:

3. Ամեն թեմում պետք է հաստատվի կրթական մասը ղեկավարող դիրեկցիա:

4. Կրթական մասի դիրեկցիան պետք է լինի ընտրովի և ընտրվի երեք տարին մեկ անգամ:

5. Ֆինանսական վարչությունը պետք է ենթարկվի հոգևոր բարձր իշխանությանը, իսկ գանձարանը լինելով ծխերի



սեփականությունը, անձեռնմխելի է լինելու թե հոգևոր իշխանության, և՛ թե մասնավոր անհատների համար:

Թերթի նպատակն էր դաստիարակել ժամանակի առաջադեմ ոգով շնչող, անարդարությունները բացահայտող և այդ անարդարությունների դեմ անողոք պայքար մղող սերունդ հասարակության համար: Հետևելով Ժ. Ժ. Ռուսոյի մանկավարժական հայացքներին, բժիշկ Արամ Տեր-Գրիգորյանը հանդես է գալիս երեխաների ազատ դաստիարակության հարցերի շուրջ գրված հոդվածներով: «Երեխաների բնատանեկան կրթության ձևը»[32] հոդվածում քննադատվում են հայկական ընտանիքներում տիրող դաստիարակության բարացած ձևերն ու մեթոդները: Հեղինակը (Ա. Տեր-Գրիգորյան) ուշադրություն է դարձնում հատկապես մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության վրա: «Ֆիզիոլոգիան կամ բնախոսությունը մեզ պարզ ասում են,— գրում է նա,— որ ֆիզիկական վարժությունները զարգացնում են ոչ միայն մեր մկանունքները, այլև մեր ուղեղը: Սա մի օրենք է, որ երբեք աչքաթող չպետք է անենք, երբ երեխայի կրթության գործը վերցնում ենք մեզ վրա: Մինչդեռ հայ ընտանիքներում և հայկական դպրոցներում ուսուցիչն ամբողջովին մտահոգված երեխայի մտավոր կրթությամբ, աչքաթող է անում նրա առողջության պահպանման համար այնքան կարևոր նշանակություն ունեցող ձևը, ինչպիսին է զբոսանքը: Այս առթիվ վկայակոչելով Ռուսոյին, գրում է. «Ռուսոն երեխայի կրթության սիստեմի համար շատ պարզ ձև է առաջարկում: Նա ասում է, որ մանկավարժների ու մայրերի նպատակը երեխայի կրթության գործում պետք է լինի՝ երեխայի համար բավականություններ ստեղծել»[33]:

Արամ Տեր-Գրիգորյանը «Բժշկի զրույցներից» ընդհանուր վերնագրով տպագրում է երեխաների առողջապահական գործի կազմակերպման վերաբերյալ հոդվածներ («Վարակումը երեխաների մեջ» և այլն):

«Կռանը» միաժամանակ լինելով գրական շաբաթաթերթ, իր էջերում անդրադառնում է նաև գրական աշխարհի նորություններին, կուլտուրայի ու արվեստի հարցերին: Ճիշտ է, Թերթն այդ բնագավառներում սոսկ արձանագրողի դերում էր



10—594

հանդես գալիս, այլ իր ակտիվ վերաբերմունքն էր ցուցաբերում ու իր կարծիքներն էր համարձակորեն արտահայտում։ Ընդ որում, յուրաքանչյուր գրական ու կուլտուրական նորույթ, պատմական կարևոր իրադարձություն իր արձագանքը չէր գտնում առանց նպատակի։ Այսպես, հայ տպագրության 400-ամյակի տոնակատարության առթիվ գրված է. «Ամենքը պետք է մասնակցեն այդ տոնին։ Բայց մասնակցեն ոչ թե գինով, արբեցողությամբ, այլ գրին, գրքին և տպագրությանը պատշաճ հասարակական, կուլտուրական հանդեսներով և այդ օրը պետք է դառնա մեր ներկա տպագրական գործի անմխիթար վիճակի բարվոքման, առաջադիմության և բարգավաճման համար մի շինարար, մի հեղաշրջիչ օր, որից ստացած լինենք մխիթարական շատ գործեր»[34]։

«Կռան» թերթում բարձր են գնահատվել ռուս մեծ գրող Լև Տոլստոյը, հայ դասականներ Գ. Սունդուկյանը, Հ. Հովհաննիսյանը, հրապարակախոսներ Ավ. Արասխանյանը, Է. Տեր-Գրիգորյանը, դերասաններ Ա. Վրույրը և ուրիշներ։ Լև Տոլստոյի մահվան առթիվ տպագրված հոդվածում նշված է. «Ճակատագրի որոշմամբ այլևս չկա այն մարդը, որի ձայնը ինչպես անդադրում զանգի ղողանջյուն, զարթեցնում էր անվրդով հասարակության ննջած միտքն ու խիղճը, հարկադրելով ամենքին մտածել, խորասուզվել մեր կյանքի առաջադրած «անիծյալ» հարցերի մասին, քարոզելով իր ամենահաղթ սիրո և հավիտենական ճշմարտության իդեալները»[35]։ Տոլստոյը գնահատված է այնպես, ինչպես նա իրոք եղել է։

Գ. Սունդուկյանին թերթը համարում է հայ նոր դրամատուրգիայի հիմնադիրը, որը ստեղծեց «ուրույն մի դպրոց, որին հետևում են մի շարք գրական դեմքեր, աշխատելով հայ բեմի վրա դնելու մեր ժողովրդի ռեալ կյանքը իր բոլոր լավ ու վատ, չար ու բարի կողմերով»։

«Կռանում» տպագրվել են Հ. Հովհաննիսյանի բանաստեղծություններից մի քանիսը («Մրրիկն անցավ, ցրվեցան ամպեր...», «Ապրել ու տանջվել, ապրել ու տոկալ...» և այլն)։

1912 թ. դեկտեմբերին փակվում է «Կռան» թերթը։ Եզրափակելով երկու տարվա անցած իր հրապարակախոսական ու-



ղին, խմբագիրը գրում է. «Մենք առանց նշանախեց անգամ փոխելու մեր հիմնական նպատակից ու սկզբունքներից, առաջ ենք գնացել. անկեղծ, անկաշառ, անկողմնապահ ու անաչառ մեր վերաբերմունքով դեպի հանրական կյանքի երևույթներն ու հասարակական ցավերը, մենք լավագույնը մեր համեստ ուժերի անդուլ աշխատանքից, մեր մտավոր-բարոյական ու հոգեկան կարողություններից նվիրել ենք հասարակական գործի խորանին, նրա հետ տալով, իհարկե, նյութական ահագին զոհաբերություններ»[36]։

Ինչպես նկատվում է, Մ. Բագրատունին նյութական զրկանքների ու հոգեկան ապրումների գնով կարողացել է պահպանել իր թերթը։ Այնուհանդերձ, նա չի վհատվել։ 1913 թ. նա վերաբացել է իր թերթը, հրատարակելով այն «Նոր մամուլ» անունով։

## «Նոր մամուլ»
## (1913—1915)

Եթե «Կռանում» Մ. Բագրատունին բացահայտորեն չէր պարզում իր նպատակները, չէր հայտարարում, թե որն է լինելու իր նախընտրած ծրագիրը, ապա «Նոր մամուլ» թերթի


ՆՈՐ-ՄԱՄՈՒԼ

«Նոր մամուլ» շաբաթաթերթի գլխագիրը

առաջին համարում (առաջին համարը լույս է տեսել 1913 թ. հունվարի 20-ին) համարձակորեն գրում է. «Ունենալով հանդերձ մեր քաղաքական որոշ հայացքները, սկզբունքները, «Նոր մամուլը» դավանական այս տարտամ, անորոշ, անկազմա-

կերպ և ինքնուրույնության դասակարգային ոչ մի ձևակերպում չունեցող միջավայրում պիտի դեռ հարթեր իր ճանապարհը դեպի ցանկալի նպատակը։ Այդ վսեմ նպատակի իրագործումը ծնունդ պիտի առնի հասարակության ինքնագիտակցությունից, գավառի մութ, խավար մասսաների ինքնաճանաչությունը և որ գլխավորն է, մեր երկրի տնտեսական արդյունաբերության, վաճառականական և գործարանային կյանքի հեղաշրջմամբ և մասսաների մտավոր զարգացման առաջադիմության գործից։ Բարձրանալով վաճառականությունը, երկրի տնտեսական, գործարանային և մեքենայական արդյունաբերական կյանքը, այն ժամանակ միայն որոշ դրական հողի վրա կկանգնի դասակարգային պայքարը և մեր անգույն հասարակական կյանքը կստանա դրական որոշ արտահայտություն»[37]։ Մեկ այլ հոդվածում թերթը խոստովանում է, որ լույս է տեսնելու արհամարհված ճշմարտության, անարգված ազնվության և հասարակական շահը ոտնահարողների դեմ կռիվ մղելու նպատակով։ «Նա,—գրում է թերթը,—պիտի հրապարակ գա հասարակական չարիքներ նյութողների բունը քանդելու, նրանց քողազերծանելու, հասարակական կյանքում տեղի ունեցող իրերն ու երևույթները իրենց մերկությամբ հրապարակի վրա դնելու, փչացած, այլանդակ իրականությունը, զարշ երևույթները և հասարակական օրգանիզմը այլասերող չարավոր վերքերը բացելու, և ամենքի տեսողության սեփականություն դարձնելու»[38]։

«Նոր ժամուլ» թերթում տպագրված հոդվածների մեծ մասը նվիրված է գյուղացու, հողի աշխատավորի սոցիալական և տնտեսական իրավիճակի քննարկման հարցերին։ «Գավառի ցավերից», «Նամակներ գավառից», «Գավառական պատ-տանյաններ» և այլ խորագրերով տպագրված հոդվածներում համարձակորեն ներկայացված են գյուղում տիրող սոցիալական աղաղակող հակասությունները, աշխատավոր գյուղացու թշվառ ու հալածված իրավիճակը։ Նման հոդվածների հեղինակներն էին Մ. Բագրատունին, Ա. Կոծինյանը, Գ. Սինանյանը և ուրիշներ։ Յուրաքանչյուր հոդված բողոքի մի առան-



ձին խոսք էր՝ ուղղված տիրապետող կարգերի, կուլակների ու ագաների դեմ։ Իհարկե, նման երևույթների համար հեղինակները հալածվել են։ Ահա թե ինչ է գրում թերթը. «Գավառի կյանքն իսկապես խեղդում է նրանց, ջարդվում է գրիչը, պապանձվում միտքը, որովհետև թունավոր բաժակը մինչև մրուրը դատարկել չեն համարձակվում շատերը։ Հերիք է որևէ թղթակցությամբ մերկացնել հասարակական ախտավոր մի երևույթ, վնասակար մի դեմք... Եվ ահա դրական ազնիվ խոսքի դեմ հանդես են գալիս ծեծ, զրպարտող թունավորում, վարկաբեկություն, անձի, պաշտոնի և դիրքի տապալում»[39]։

«Նամակներ գավառից» Դիլիջանից ուղարկված Ավագ Կոծինյանի հոդվածում պարզորոշ արտահայտված է կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացման հետևանքով գյուղում կատարվող դասակարգային շերտավորման պատկերը։ Հոդվածագիրն իրավացիորեն նկատում է, որ գյուղացու անհատական շահերն ու ձեռնարկությունները մրցության հարվածների տակ մեռնում են ապարդյուն և նա կամովին հողազուրկ է դառնում։ Նման հանգամանքի առաջն առնելու համար հեղինակը առաջարկում է գյուղացիությանը միավորվել և մեկ կոոպերատիվ ընկերության մեջ ընդգրկվել[40]։ Նա գտնում է, որ կոոպերատիվ ընկերությունների շնորհիվ գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ կօգտագործվի զարգացած տեխնիկա, հնարավոր կլինի տեղական հումքը մշակել սեփական միջոցներով։ Հայաստանում նույնպես կստեղծվի բազմաճյուղ տնտեսություն։ Միաժամանակ, առիթը օգտագործելով, նա ողջունում է Դիլիջանի 150 արհեստավորներին, որոնք միջնորդություն էին հարուցել կոոպերատիվ ընկերություն ստեղծելու համար։ Առավել կարևոր նշանակություն էր տրվում նաև կոոպերատիվ սպառողական ընկերություններին, որոնց շնորհիվ ռնալ նյութական օգնություն կարող էր ստանալ աշխատավոր գյուղացին։ «Ճարտական տնտեսելով մի, կամ մի քանի կոպեկներ, մենք կունենանք ապագայում մի փոքրիկ գումար և կսկսենք գործը», Երևանում, Ղամարլուում (Արտաշատ) արդեն բացվել էին նման տիպի սպառողական ընկերություններ։ Թերթը մեծ հույսեր էր

կապում կոոպերատիվ ընկերությունների հետ։ Այստեղ մանրամասն բացատրում էր, թե ինչպես էին ստեղծվում կոոպերատիվ ընկերությունները և ինչ նպատակների էին ծառայում դրանք։ Երբ խոշոր արդյունաբերությունը մուտք է գործում գավառ, մանր սեփականատերերը, ինչպես թերթն է գրում, «գարնան ձյան նման հալվում են»։ Իսկ եթե կոոպերատիվ ընկերությունները զարգանան արագ տեմպերով, ապա «միջակ, չքավոր դասակարգը իր միակ փրկությունը պիտի գտնի այդպիսի ընկերությունների մեջ»։ Նա հնարավորություն կունենա «փշրելու կապիտալի կուռ շղթաները»։ Իրոք, կապիտալիստական հասարակարգում կոոպերացիան լավագույն դեպքում կարող էր հանդիսանալ մի միջոց չքավոր դասի ինքնագիտակցության արթնացման, նրան դասակարգային կռվի նախապատրաստելու համար։ Հայտնի է, որ դեռ Կ. Մարքսը Առաջին Ինտերնացիոնալի ծրագրային փաստաթղթում նշել է, թե կոոպերացիայի հաջողությունները ապացուցում են, որ բանվոր դասակարգը ընդունակ է առանց կապիտալիստների վարելու խոշոր չափերի հասնող արտադրության կազմակերպումը։ Բայց միաժամանակ նա ընդգծել է, որ կապիտալիստական իրավակարգում կոոպերատիվ աշխատանքը որքան էլ գերազանց է իր սկզբունքով և օգտակար պրակտիկայում, այնուհանդերձ, այն ի վիճակի չէ կասեցնելու մոնոպոլիաների աճը, ինչպես նաև թեթևացնելու մասսաների թշվառության լուծը, քանի դեռ դուրս չի եկել առանձին բանվորների պատահական ջանքերի նեղ շրջանակներից։ Բանվոր դասակարգի ազատագրության իրական ճանապարհը և նրա մեծ պարտականությունն է՝ քաղաքական իշխանության գրավումը[41]։

Բոյաջյանի «Կայծ» թերթը «Կոոպերատիվ ընկերությունները» հոդվածում գրում է. «Սոցիալ-դեմոկրատիան ձեռք է մեկնում կոոպերատիվներին և պաշտպանում է նրանց միայն այնպիսի երկրներում, որոնք հասել են տնտեսական և քաղաքական զարգացման բարձր աստիճանի և որտեղ արդեն պրոլետարիատն էլ հասել է ինքնագիտակցության և զարգացած է դասակարգային կռիվը, բայց այդ դեպքում էլ չի ընդունում նրանց իբրև մի պանացեա (համադարման) իբրև մի միջոց,



որ պետք է տանի մեզ ամենակարճ, ամենախաղաղ ճանապարհով դեպի սոցիալիզմ, այլ նայում է նրանց իբրև դասակարգային կռվի միջոցներից մեկի վրա»[42]։

Մինչդեռ «Նոր ժամում» թերթում կոոպերատիվ ընկերություններին մեծ դեր է վերագրվում։ Կոոպերացիան թերթը համարում է կապիտալիզմի կործանարար հետևանքներից գյուղը փրկելու լավագույն միջոց։ Այսպես. «Վաղ, թե ուշ,— գրում է թերթը,— գավառն էլ կենթարկվի ամենակարող կապիտալիզմի հոշոտման, երբ ֆաբրիկաների ու զավոդների ծխնելույզները կախվեն մեր երկրի բոլոր անկյուններում, և այլևս արհեստավոր դասակարգը հնար չի ունենալ ազատվելու ընչաղուքի ցնցումներից ու մեծատուն փշրանքներից, կյանքի անապահովությունից։ Աշխատենք օր առաջ խուսափելու նրանից, գյուղացիական, արհեստակցական կոոպերատիվ խմբակցություններ կազմակերպելով»[43]։

«Նոր ժամում» թերթում միաժամանակ այն միտքն է առաջ քաշվում, թե տասնյակ տարիներ շահագործվելուց հետո վերջապես աշխատավոր մասսան հասավ այն գիտակցության, որ կարիքից, թշվառությունից ազատվելու ուժը միայն կազմակերպված ու միավորված պայքարի մեջ է։ «Տասնյակ տարիներ,— գրում է թերթը,— շահագործվելուց, հարստահարվելուց, ինքը քաղցած, ուրիշին կերակուրներով ապրեցնելուց հետո, հազիվ հազ շնչավոր մեքենան եկավ այն պարզ գիտակցության, որ ուժը միության մեջ է և նա է այն ուժեղ բազուկը, որ փշրելու է վերջ ի վերջո կապիտալիզմի կուռ շղթաները, որը պատրաստել է հենց ինքը՝ բանվորությունը իր ձեռքերն ու ոտքերը շղթայելու համար։

Չնայած բյուրոկրատիայի ճնշումներին ու կառավարության գործ դրած խիստ միջոցներին, տարիների ընթացքում ամբարված բողոքը, այսօր ուռճացել և ժայթքել է երկաթե վանդակ ունեցող կրծքերից և այդ իրավացի բողոքը արձագանք է գտնում յուրայինների սրտերում։

Ժամանակը պահանջում է իրենը։

Բաժակը լցվել է և թափվում է»[44]։

Խոսքն այստեղ տարերային, անջատ-անջատ բողոքներից ու ելույթներից հետո միավորված պայքարին անցնելու մասին է, պայքար, որ հեղափոխական նոր վերելքի տարիներին վեր էր ածվել գիտակցական, կազմակերպված շարժման։ Հայաստանում աշխուժացել էին բանվորական և գյուղացիական շարժումները։ 1910 թ. գործադուլ են հայտարարում Երևանի և Ալեքսանդրապոլի կայարանների երկաթուղայինները։ Գործադուլներ են բռնկվում Կարսի արհեստանոցներում, Ալավերդու հանքահորերում և այլուր։ Բանվորները միավորված ելույթներ են ունենում առաջադրելով իրենց պահանջները։ Կազմակերպված բնույթ են ստանում ելույթները նաև գյուղերում։ Գյուղացիները իրենց բողոքի ձայնն են բարձրացնում և դիմում գործնական քայլերի։ Նրանք հրաժարվում են հարկեր վճարելուց, առաջարկում են հողերի վերաբաժանման իրենց պահանջները։

Երևանում և նրա շրջակա գյուղերում նույնպես աշխուժանում են գյուղացիական շարժումները։ Քաղաքում գործադուլներ են անում և իրենց պահանջներն են առաջադրում գործարանային բանվորները, հիմնարկների ծառայողները, ինչպես և դպրոցական աշակերտները։ Հայտնի է Երևանի գործակատարների շարժումը։ Գործակատարները հանդես են եկել և հրապարակորեն առաջադրել իրենց պահանջները։ «Նոր մամուլ» թերթը անդրադարձել է այս շարժմանը։ Թերթում տպագրվել է «Ճորտեր» գեղարվեստական պատկերը (Հեղինակ Գևորգ Մկրտումյան), որտեղ նկարագրված է գործակատարների սարկական վիճակը։ Հարց ու պատասխանի ձևով շարադրված այս պատկերում գրված է. «Ի՞նչ է մեր և մեր գործակատարների դրությունը մեր տերերի առաջ։ Մի՞թե նույն գրաստները, ճորտերը չենք։ Անհամարձակ, կամազուրկ, բթնող, շողոքորթող, տերերի առաջ սողացող։ Ամենաստոր, վատթար տեսակի ճորտեր—զրկված,—բացականչեց օգնականը»[43]։ Իսկ թերթի թղթակիցներից մեկը՝ Իսահակ Տեր-Իսահակյանը գործակատարների շարժումը համարում է 1905 թ. հեղափոխության ազդեցության հետևանքներից մեկը։ «Ռուսական հեղափոխության ալիքների ցնցող ազդեցության հետևանքներից մեկն էլ Երևանի գործակատարների հարուցած աշխատանքի ժամերի խնդրի կարգավորելու հարցն էր...»,— գրում է նա։



Հեղափոխական նոր վերելքի տարիներին Երևանում գլուխ էին բարձրացրել ազգայնական տարբեր կուսակցությունները ու լիբերալ գործիչները։ Նրանք, հատկապես, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության անդամները կատարում էին իրենց ռեակցիոն դերը։ «Այսպիսով, այդ կուսակցությունը,— գրում է Ստ. Շահումյանը,— սիստեմատիկ կերպով խլացնում էր բողոքի ձայնը հայ պրոլետարիատի բերանում. ջանալով ընի մեջ խեղդել հայ բուրժուազիայի դեմ ուղղված ամեն մի պայքար, ամեն մի հեղափոխական շարժում Կովկասում և բնակչությանը բացառապես ու ամբողջապես զբաղեցնել թուրքահայերի ազատագրման ֆանտաստիկական և ավանտյուրիստական գաղափարով»[46]։

«Նոր մամուլ» թերթն իր պայքարի սուր ծայրը ուղղում է լիբերալ գործիչների և ազգայնական կուսակցությունների քայքայիչ գործունեության դեմ։ «Հայկական լիբերալիզմը,— գրված է այնտեղ,— 1905—1907 թթ. ենթարկվեց ձախողման կուսակցությունների այնպիսի արմատական և ջախջախիչ քննադատության, նրա դրությունը և դիրքը պատմական այդ կրիտիկական և անցողական շրջանում այնքան անորոշ, երերուն, երկդիմի էր, որ նա իբրև գաղափարական հոսանք վաղուց արդեն մեռել է և դժվար թե երբևից հարության առնի, իբրև զուտ ռամկավարական ուղղություն։ Գործնական առօրյա կյանքի մեջ նա կարող է դեռ դեր խաղալ շնորհիվ այն հանգամանքի, որ մենք ու մեր երկիրը անտեսապես շատ հետամնաց ենք և դասակարգային շերտավորումը և պայքարը մեծ չափերով նկատելի չեն մեր իրականության մեջ»[47]։

Արշավիր Մելիքյանը 1913 թ. «Նոր մամուլ» թերթում տպագրած իր «Կենտրոնական թերթերի հավակնությունները» հոդվածում բնորոշում է դաշնակցության օրգան «Հորիզոն» թերթը գրելով. ««Հորիզոն» և ուղղություն—կազմում են մի խառնուրդ, մի անհամ ու անաղ окрошка, մի կատարյալ չի-

լափիրամ, ամեն տեսակ հատանքների, խայտառակ աշխարհայացքներին»:

«Նոր ժամուլ» թերթն իր վերաբերմունքն է արտահայտում նաև Պետական դումայի հանդեպ: Հայտնի է, որ ընդհանրապես Պետական դուման որպես ներկայացուցչական հիմնարկություն կորցրել էր իր նշանակությունը ժողովրդի համար: Դումայում ընտրված էին ազնվականության և բուրժուազիայի ներկայացուցիչները, ուստի և այնտեղ արժանի լուծում չէին ստանում գյուղացիության և բանվորության հետաքրքրող հարցերը: Ինչպես Ստ. Շահումյանն է գրել. «Պետական դուման՝ իբրև իրավական հաստատություն՝ դարձավ բացարձակապես ռեակցիայի գործիք»[48]: Թերթը Պետական դուման որակում է որպես «բուրժուական և սևհարյուրակային կազմակերպություն»: «Նոր ժամուլը» քննադատական մոտեցում ցուցաբերելով Պետական դումայի և նրա կազմի հանդեպ, նշում է, որ այնտեղ բացի բուրժուական տարրերից, հասարակական այլ խավերի ներկայացուցիչներ մուտք գործել և այդ «ընտրյալների» շարքում տեղ գտնել չեն կարող: «...Մեր Դուման,— գրում է թերթը,— իր շատ նվազ բուրժուական ինտելիգենցիայի տոկոսով— զուտ առևտրա-վաճառականական տարրի մի ճամախմբում լինելով, իր գործունեության նույնքան առևտրավաճառականական տենդենցներով ու գունավորումներով, որպես վարչական մարմին, պարզ է, թե ինչ չափով արձագանք պիտի տա աշխատավորի ժամերի կանոնավորման խնդրին»[49]: Թերթը ժողովրդական լայն մասսաների մեջ այն միտքն է տարածում, թե Պետական դումայից աշխատավորը այլևս սպասելիքներ չունի, թե նա պետք է դիմի այլ, կոնկրետ ու իրական ճանապարհի:

Ինչպես «Կռանը», այնպես էլ «Նոր ժամուլ» թերթերը անդրադառնում են ռուս-թուրքական (1877—1878) պատերազմից հետո հայ ժողովրդի ճակատագրի հարցին: Հայտնի է, որ Բեռլինի վեհաժողովից հետո Թուրքիան չիրագործեց իր խոստումները, այլ, ընդհակառակը, ավելի ուժեղացրեց հայ ժողովրդի հանդեպ իր վարած հալածական քաղաքականությունը: Դեռ ավելին, ուժեղացան հետապնդումները հայ մտավորա-



կանների հանդեպ: Երիտթուրքերի կառավարությունը նախապատրաստում էր մի նոր հայկական ջարդ: Առաջին զոհը եղավ Ադանան: Թուրքերը հայերի դեմ էին գրգռում քրդերին ու մյուս ցեղերին: Այդ ամենի հետ մեկտեղ Թուրքիան տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամ էր ապրում: Միաժամանակ վրա հասավ Բալկանյան պատերազմը: Առաջին պատերազմն սկսվեց 1912 թ. հոկտեմբերի 9-ին, երբ Չերնոգորիան սկսեց ռազմական գործողությունները, ապա նրան հետևեցին դաշնակիցները՝ Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան[50]: Պատերազմում Թուրքիան պարտություն կրեց: Սակայն դաշնակիցների մեջ Մակեդոնիայի և Թրակիայի տերիտորիայի վրա գերիշխանություն հաստատելու հարցում ծագած տարաձայնությունները հանգեցրին Բալկանյան երկրորդ պատերազմի սանձազերծմանը: Պատերազմն ավարտվեց 1913 թ. օգոստոսի 10-ին Բուխարեստում կնքված հաշտության պայմանագրով[51]: Երբ սկսվեց Բալկանյան պատերազմը, բոլոր քրիստոնյա հպատակ ազգերը, հատկապես հայերը, իրենց բախտը կապեցին բալկանյան ժողովուրդների հաղթանակի հետ: Այդ հանգամանքը իր արձագանքը գտավ նաև «Նոր ժամուլ» թերթի էջերում[52]:

Բայց հայ ժողովրդի հույսերը չարդարացան: Բալկանյան պատերազմի ավարտից հետո թուրք չարագործներն ավելի ուժեղացրին հալածանքները հայկական գավառներում: Հայ քաղաքապետներն ուղերձ-հեռագրեր հղեցին թուրքական կառավարությանը: Այդ ուղերձներից մեկը հասցեագրված Մահմուդ Շևքեթ փաշային, կրճատված տպագրվել է թերթում: Այնտեղ նշված է. «Դեպի հայերն ունեցած ամոթալի և հանցավոր վերաբերմունքը հայ վիլայեթներն ուղղակի դեպի կործանում են տանում: Մինչև այժմ մենք լռում էինք, ի նկատի ունենալով Օսմանյան կայսրության ամբողջությանը վտանգ սպառնացող ծանր պատերազմը. այժմ այլևս լռել-կնշանակի հանցանք գործել»[53]:

Արևմտաեվրոպական երկրների դիվանագետների խոստումներից հիասթափված, հայ ժողովուրդն իր փրկության ելքը

որանում է իր մեջ, իր ուժի և բազկի մեջ։ «Նոր գավիթ» վերնագրով հոդվածում այն միտքն է հայտնվում, որ հայ ժողովրդի ու նրա զավակների նշանաբանը պիտի լինի պայքարի խրոխտ քայլերգը, որը նույն ուժգնությամբ պիտի հնչի Թուրքիայի սահմաններում և Կովկասյան լեռներում։ «Թող լավ գիտենան մեր զավակները,— գրված է այնտեղ,— .....որ մեր զորքերի նշանաբանը և քայլերգն է.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի.
Բայց երանի՜, որ յուր ազգի
Ազատության կըզոհվի...»[54]։

Մ. Նալբանդյանի այս բանաստեղծով էլ ավարտվում է հոդվածը։ «Ուժի դեմ ուժ, հարձակման դեմ դիմադրություն,— գրում է թերթը,— ահա թե ինչ է պահանջում գծում երկրի ներկա քաղաքական կացությունը և թուրք խուժանի կողմից պատրաստվող ավերածությունների պատասխանը»[55]։

Թուրքական կառավարությունից դեռ էլի ինչ-որ բան ակնկալող որոշ դիվանագետների քաղաքականությունը թերթը համարում է «... մեծ գերեզման սահեցելու մի գույժ և ոչ ազատության պատգամ»։

Զենքի ուժով օտարի լծից ազատվելու գաղափարը բացարձակորեն պրոպագանդվում է Փաշանդուզ Մկոյի (Մուշեղ Բագրատունու) մի շարք ֆելիետոններում։ Դրանցից մեկում գրված է. «Տարի է ի վեր շարունակ պոռացինք, սակայն խոսք մը չը կրցանք լսելի ընել եվրոպական դիպլոմատներուն։ Տարբեն միայն համոզվեցինք, որ անոնց գլուխներ պողպատե եղած են ու մեզի բաին, որ պոռալով անոնց բան մը հասկցնել երբեք չեր հաջողիր, այլ Թնդանոթ մը ունենալու է, ու շիփ շիտակ տրամագծելու է անոնց ուղեղին և բռնարկ բան մը արձակելու»[56]։

«Նոր մամուլ» թերթը անդրադառնում է նաև Առաջին համաշխարհային պատերազմի իրադարձություններին։ Հայտնի է, որ 1914 թ. վերջերին թուրքական զորքերը հարձակումներ



սկսեցին խաղաղ բնակչության վրա, ավերում էին տները, նախապատրաստելով մի նոր ջարդ։ Այդ մասին ահազանգում է և «Նոր մամուլ» թերթը, տպագրելով մի շարք հոդվածներ։ «Բաքու» թերթից արտատպում է մի հոդված, որտեղ գրված է. «Թուրքական քուրդերը անհամբեր սպասում են գարնան, եռանդով պատրաստվում են հանդես գալու, զինվում ու հավաքում են հացի ու ալյուրի պաշար։ Նրանք հավաքվում են Արարատի շուրջը և սպառնում ազգաբնակչությանը բացարձակապես, մահմեդական գյուղերը լի են նրանցով, նրանց պարագլուխներն արդեն բաժանել են մեր քաղաքներն ու գյուղերը»[57]։

Թերթը կանխանշում էր հայերի մոտալուտ կոտորածը, գրելով. «Կ. Պոլսի քրիստոնյա ազգաբնակչության, մանավանդ հայերի ու հույների գլխին դամոկլյան սրի նման կախված է կոտորածի սպառնալիքը»[58]։ Եվ իրոք, 1915 թ. ապրիլ ամիսը հայերի համար եղավ մեծ եղեռնի ամիս։ Սոսկալի կոտորածին հաջորդեց արտագաղթը։ Թերթը էջեր է նվիրել գաղթի նկարագրությանը։ «Գաղթը Բայազետից», «Հայ փախստական գաղթականները մեզ մոտ» և այլ թղթակցություններում ժողովուրդների գալուն են ներկայացվում թուրք բռնակալների ոճրագործությունները, միաժամանակ խմբագրությունը հորդորում է Երևանի բնակչությանը՝ խնամել ու ապաստան տալ գաղթած հայերին։ «Բայազետի ամբողջ հովիտը սկսած Կարաքիլիսայից մինչև Կարա-Բուլախ լցվել են գաղթականներով։ Նրանք գալիս են քանդված ու ավերված գյուղերից, նրանց երեխաների լացն ու կոծը մարդու մազերն են փշաքաղում, նրանք ապաստան, մի անկյուն են փնտրում, նրանց հոգին ու սիրտը քարացած է, նրանք խնամքի ու օգնության կարիք են զգում»։

Երևանի բնակիչների նախաձեռնությամբ իսկույն կազմակերպվում է «Եղբայրական օգնության կոմիտե», որի միջոցով իրականացվում է գաղթած հայերի խնամքի և սննդի գործը։

Թերթում խրախուսանքի են արժանացել այն գործիչները, որոնք ժամանակին հրապարակայնորեն պաշտպանել են

հայկական դատը, հայ ժողովրդի արդար իրավունքները։ Այսպես, բարձր է գնահատվել ֆրանսիացի հայտնի հրապարակախոս, հայ ժողովրդի դատի պաշտպան Պիեռ Քիյարի հասարակական գործունեությունը։ Հատկապես ընդգծված է ներկայացված այն հանգամանքը, որ նա լինելով «Մարդու և քաղաքացու իրավունքները պաշտպանող լիգայի» քարտուղարը և «Pro Armenia» թերթի խմբագիրը, մեծ աշխատանք էր կատարում ազգերի միջև բարեկամական կապի ամրապնդման ուղղությամբ, Նա Ֆրանսիայում և արևմտաեվրոպական երկրներում լայնորեն տարածում էր «ռուսասիրական և հայասիրական գաղափարներ»։ Նա հիմնադիրը և քարտուղարն էր «Ռուս ժողովրդի բարեկամների ընկերության»։

«Նոր ժամանակ» շաբաթաթերթն իր էջերում տեղ է տվել նաև գրականության, արվեստի, կուլտուրայի հարցերին։ Այն միանգամայն ճիշտ դիրքերից է գնահատել ռեալիստական արվեստը, արժեքավորել նրա դերը գրականության զարգացման և հասարակության բարոյաքաղաքական դաստիարակության գործում։ «Հասարակությունը ոգևորվում, կյանք ու շունչ է առնում,— գրում է թերթը,— գեղարվեստի մեջ տեսնելով իր սեփական կյանքը, հույզերն, պատկերը և թատրոնի նշանակությունն սկսվում է փոխվել նրա համար, բարձրանալ և արժեք ստանալ»[59]։ Որպես ռեալիստական արվեստի փայլուն օրինակ վկայաբերվում է Գ. Սունդուկյանի «Պեպո» դրաման, որը համարվում է կեղեքող դասակարգի դեմ ուղղված մի բողոք, դրամա, որ հանդիսանում է հայ նորագույն բեմի ամենագեղեցիկ զարդը։ «Եվ քանի դեռ կյանքում գոյություն ունի գոյության կռվի պայքարը, դասակարգային կռիվը, թույլի և ուժեղի մրցությունը,— գրում է թերթը,— «Պեպոն» էլ կմնա որպես կենդանի ու թարմ սկզբունք-պրոբլեմ կյանքի այդ պայքարի։ Եվ քանի կա հայ բեմը, «Պեպոն» կկազմի նրա զարդը, իսկ նրա հետ և մեր սրտերում պետք է ապրի Գ. Սունդուկյանի անմահ հիշատակը[60]»։

«Նոր ժամանակ» թերթում ուշադրավ տեղ է հատկացվել նաև դպրոցի և հայոց լեզվի զարգացման հարցերին։ Այդ հարցերի



շուրջ գրված հոդվածներում այն միտքն է բարձրացվում, թե դպրոցը և դաստիարակչական գործը իրենց բարձրության վրա կդրվեն այն դեպքում, երբ բարեփոխված կլինեն աշխատավոր ժողովրդի սոցիալական ու տնտեսական իրավիճակը և մարդկանց միջև եղած հասարակական փոխադարձ հարաբերությունները։ «Այն հասարակությունը,— գրված է այնտեղ,— որի գոյության անկյունաքարն է ազատությունը, ունի նույնպես ազատ ու խելացի հիմունքների վրա դրված դպրոց, իսկ այն միջավայրը, որը ամբողջապես համակված է բռնությամբ և հետամնացությամբ, թող երբեք չերազի լավ դպրոցի մասին, որովհետև դպրոցը արգասիք, արտացոլումն է նրան շրջապատող ռեալ կյանքի»[61]։

Հայոց լեզվին ու նրա նշանակությանը նվիրված առանձին հոդվածաշարում թերթն այն միտքն է հայտնում, թե մայրենի լեզուն այն միակ հիմնաքարն է, որի վրա հենված է ազգի կյանքը, ամբողջ կառուցվածքը, նրա մտավոր կարողությունների բոլոր արգասիքը։ Մայրենի լեզուն համարվում է ազգերի հոգու մնայուն պատկերը, նրա բյուրեղացումը։ Այդ իսկ պատճառով մատաղ սերնդին, ինչպես թերթն է գրում, «պետք է ավելի լայն միջոց տալ, ավելի լայն ասպարեզ բանալ նրա առաջ մայրենի լեզվի, մայրենի գիր ու գրականության, որով պիտի ավելի ամրապնդվեն նրա ապագա զարգացման և բարձր կրթության գործի հիմնաքարերը»[62]։

Մայրենի լեզվի, գիր ու գրականության զարգացման նպատակով առաջարկվում է. 1. Ստեղծել շքեղ մանկական գրադարան, 2. Հրապարակել ընտիր հայերենով գրված գեղարվեստական գրքեր, 3. Հիմնել հրատարակչական ընկերություն, 4. Ուշադրություն դարձնել ռուսաց և հայոց դպրոցներում լեզվի ուսուցիչների պատրաստման գործի վրա։

Ընդգծելով հայոց լեզվի կարևորությունը ազգային կյանքի զարգացման գործում, թերթը չի անտեսում մյուս լեզուների իմացության հարցը, հատկապես ռուսաց լեզվին տիրապետելու անհրաժեշտությունը։ Բարձրացվում է ինչպես մայրենի, այնպես էլ ռուսաց լեզուներին տիրապետելու պահանջը.

«Իր պետական լեզվի պահանջը նույնպես անհրաժեշտություն է, և որը հարկավոր է մեզնում լավ պատրաստվել գոյության կռվի համար, դա ոչ որ չի կարող ժխտել,— գրում է Թերթը։— Բայց մենք կավելացնենք այն էլ, որ ռուսաց լեզուն այն դուռն է, որտեղից ներս պիտի մտնի մեր կյանքում եվրոպական կուլտուրան ու քաղաքակրթությունը։ Ուրեմն որքան և անհրաժեշտ է արմատապես տիրապետել ռուսաց լեզվին և գրականությանը, նույն չափով և այդ գործը մեզ համար հանդիսանում է առանձին հոգացողության առարկա»[63]։

Մուշեղ Բագրատունու «Կռանն» և «Նոր մամուլ» առաջադիմական պարբերականները տարածվելով աշխատավոր լայն մասսաների մեջ, նպաստել են նրանց քաղաքական մակարդակի բարձրացմանը, արթնացրել նրանց մեջ դասակարգային ինքնագիտակցության զգացումը։

Մուշեղ Բագրատունու (Փալանդուզ Մկո) կյանքն ու գործունեությունը մինչև այժմ առանձին ուսումնասիրության չեն արժանացել։ Փորձենք ուրվագծել նրա կյանքի և գործունեության անցած ուղին և տալ նրա հասարակական ու քաղաքական հայացքների համառոտ պատկերը։

Մուշեղ Արսենի Բագրատունին ծնվել է 1870 թ. Աշտարակի շրջանի Կարբի գյուղում։ Սկզբնական կրթությունն ստացել է Շամախի քաղաքի քառամյա դպրոցում։ Հոր մահից հետո նրանց բազմանդամ ընտանիքը տեղափոխվում է Երևան։ Այստեղ Բագրատունին մասնակցում է սոցիալ-դեմոկրատների կազմակերպած ժողովներին։ 1904 թ. արգելված գրականություն տարածելու համար ցարական կառավարությունը նրան բանտ է նետում։ Բանտից ազատվելուց հետո 1905 թ. Բագրատունին ընդունվում է ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության շարքերը։ Նա 1905—1906 թթ. հեղափոխության օրերին գաղափարական լայն աշխատանք է ծավալում հեղափոխության օգտին։ Թղթակցում է Թիֆլիսում և Բաքվում լույս տեսնող բոլշևիկյան և սոցիալ-դեմոկրատական թերթերին։ «Կայծ» և «Նոր խոսք» բոլշևիկյան թերթերում նրա հոդվածները տպագրված են Խ. Նարիմյան, Խաննո, Խ.-Նար, Սարխոշ, Մէ-Բոմի



ստորագրություններով։ Մ. Բագրատունին իր քննադատական խոսքն ուղղում է հատկապես «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության։ «Սոցիալ-դեմոկրատիան և հայ մթնոլորտը» հոդվածում պաշտպանության տակ է առնվում ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը։ Սկզբնական շրջանում կազմակերպությունը ստիպված է լինում հաղթահարել մեծ դժվարություններ։ Բագրատունու հանդեպ թշնամաբար տրամադրված դաշնակցության ղեկավարները փորձում են խանգարել նրա աշխատանքները։ «Բնական է, որ դա (սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը),— գրում է Մ. Բագրատունին,— լինելով կատարյալ հակասությունը և հակապատկերը այն հոսանքի, այն ձևի և տրամադրության, որպիսին ստեղծել և մարմնացրել է «ազգային» նացիոնալիստ կուսակցությունների հակացողությունը, նրանց քաղաքական վարդապետությունը, բնական է, որ իր դեմ պիտի հարուցանե ներհակ տարրերի «քննադատական խստամիտ վերաբերմունքը», մի քննադատություն, որ ծնունդ է առնում ազգային շովինիզմի և հին փտած նախապաշարմունքների աղբյուրից»[64]։ Դաշնակցության ղեկավարները փորձում էին «հեղափոխական» և «սոցիալիստական» ֆրազաբանությամբ իրենց կողմը գրավել բանվորությանը։ Սակայն այդ նրանց չէր հաջողվում։

Մ. Բագրատունին բոլշևիկյան «Կայծ» թերթում տպագրած հոդվածներից մեկում բանվոր դասակարգի միակ հավատարիմ ու նրա գործը մինչև վերջ հետևողականորեն պաշտպանող կուսակցությունը համարում է սոցիալ-դեմոկրատիային։ Ահա ինչ է գրում նա. «Թող մի անգամ էլ ժողովուրդը հասկանա, որ եթե կա քաղաքական պայմանները ավելի աչալուրջ քննադատող, իր անելիքն ավելի որոշ և շրջահայաց կերպով ընդգծող մի կուսակցություն, դա միայն սոցիալ-դեմոկրատիան է. նա շատ լավ է հասկանում, թե ի՞նչ է անում, և ի՞նչ պետք է անի»[65]։ Բագրատունին դաշնակցությանն անվանում է «բուրժուա դասակարգը», գտնելով, որ նա ավելի շատ բուրժուական շարքերից բաղկացած լինելով, խուսափում է ու սարսափում դասակարգային կռվից։ Փաստերով հիմնա-

գրում է, որ միայն սոցիալ-դեմոկրատներն են ընդունակ պաշտպանելու ժողովրդի շահերն ու արդարացի պահանջները։ Նա գրում է. «Սոցիալ-դեմոկրատիան, որպես բանվոր դասակարգի կազմակերպություն, անպայման, ամեն դեպքում դուրս կգա շահագործող տարրի իրավունքները պաշտպանելու...»։ Այսպես շարունակելով, նա այն միտքն է հայտնում, որ դաշնակցությունը երբեք չի կարող աշխատավորության անկեղծ բարեկամը լինել, քանի որ այն ծնունդ առնելով բուրժուական ազգային գաղափարների արգանդից, այսօր ավելի շատ պաշտպանում է բուրժուա դասակարգին, քան թե նորածին աշխատավորների իդեոլոգներին։ Դաշնակցությունը մերժում է դասակարգային կռվի սկզբունքը, գտնելով, որ հայ ժողովրդի փրկությունը ազգային միության մեջ է։

Մուշեղ Բագրատունին միաժամանակ հայ աշխատավորությանը ծանոթացնում է դաշնակցական ավանտյուրիստների՝ գյուղերում կատարած դագիր գործերին։ «Գյուղական գլխավոր տանուտերը, քեդխուդան, տերտերը, պոլիցիականը և առհասարակ բոլոր շահագործող ու վաշխառու տարրերը,— գրում է նա,— որոնք առանց այն էլ կեղեքում ու ծծում էին ժողովրդի արյունը, կենտրոնականությունը, դաշնակցության կուսակցության կողմից առաջ քաշվեցին որպես ղեկավար տարրեր, և դրանց ձեռքերում կենտրոնացան բոլոր պաշտոնական իրավունքներն ու հրամանատարությունը»[66]։ Բոլոր այս հոդվածների համար Մուշեղ Բագրատունին հետապնդվել է ցարական կառավարության կողմից։ 1910 թ. ցարական ոստիկանությունը խուզարկում է Բագրատունու բնակարանը և հայտնաբերում ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության անդամների ցուցակը, արձանագրությունները[67]։ Մ. Բագրատունին բանտարկությունից խուսափելու համար թաքնվում է Թիֆլիսում, Բաքվում։ Այս քաղաքներում նա սերտ կապերի մեջ է մտնում Անդրկովկասի բոլշևիկ գործիչների հետ։ 1911 թ. նա վերադառնում է Երևան։ Բագրատունին, ինչպես հայտնի է, Երևանում լույս է ընծայում «Կայծ», ապա «Նոր մամուլ» շաբաթաթերթերը։ Դաշնակցության ղեկավարները չեն լռում, շա-



րունակում են հալածել նրան, անգամ փորձում են տեռորի ենթարկել։ 1914 թ. հուլիսի 20-ին դաշնակցական երկու չարագործներ Երևանի զբոսայգում հարձակվում են Բագրատունու վրա և փորձում կտրել նրա աջ ձեռքը, բայց դա նրանց չի հաջողվում։ Այդ առթիվ Արշավիր Մելիքյանը դաշնակցության հասցեին իր բողոքի խոսքն է տպագրում «Նոր մամուլ» թերթում։

Ուշագրավն այն է, որ այդ բոլորից հետո, Մ. Բագրատունին էլի շարունակում է հետևողականորեն քննադատել դաշնակցության գործունեությունը։ «Նոր խոսք» բոլշևիկյան թերթում նա գրում է. «Ազգային մութ և անդաստիարակ տարրերը մի առանձին թափով առաջ են մղվում, և համաձայն իրենց անդրանիկ ու հարազատ ծրագրի, դաշնակցությունը հայտարարում են ոչ դասակարգային կուսակցություն, այլ այն, ինչ որ է նա. այսինքն՝ ազգային-բուրժուական մի կազմակերպություն, որ տաճկահայ խնդրից դուրս ոչինչ չի ընդունում»[68]։

Մ. Բագրատունին դաշնակցության քննադատության հարցին մոտենում է ճիշտ դիրքերից, միանգամայն իրավացիորեն նկատելով նրա քայքայիչ աշխատանքը բանվոր դասակարգի հեղափոխական գործունեության մեջ։ «Կայծ» և «Նոր խոսք» թերթերը փակվելուց հետո, Մ. Բագրատունին նույն ոգով շարունակում է հոդվածներ տպագրել «Աշխատանք», «Խաթաբալա» դեմոկրատական պարբերականներում։ Այս անգամ արդեն նրա քննադատական խոսքը ավելի շատ ուղղված էր գյուղի տերերի, հոգևորականների հասցեին։ Այսպես, «Աշխատանքում» «Գլավնի» վերնագրով տպագրված վիպակում ծաղրվում է գյուղի գլխավոր (գլավնի) ընտրելու կարգը։ Թուլի-Փանոսը, որ ուզում էր տանուտեր ընտրվել, շրջում է գյուղերում և ինչ-ինչ միջոցներով կաշառում գյուղացիներին։ Պրիստավի հետ միասին, ահաբեկելով, վիրավորելով, արհամարհելով նրանց, ստիպում է ձայն տալ կաշառակեր, վաշխառու խարդախ անձնավորություն Փանոս-Մելիքովի օգտին։

Մուշեղ Բագրատունին այս «Գլավնի» վիպակի, ինչպես նաև «Աշխատանքում», «Խաթաբալայում» և մամուլի այլ օր-

գաններում տպագրած հոդվածների համար իր իսկ հարազատ գյուղում բավական թվով թշնամիներ է ձեռք բերում: «Մեր գյուղը,— գրում է նա,— երևակայեցեք, չեմ կարողանում մտնել, որովհետև վերիններն ու մի շարք պարազիտներ հրապարակով հավաքվում են և մի «բոլ» հայհոյում, սպառնալով ինձ պատկան գյուղի հողերը խլել և ծախել, չնայելով որ այժմ էլ խլել են և իրանք են ցանում»[69]:

Չնայած հետապնդումներին, Բագրատունին շարունակում է իր մերկացնող ելույթները գյուղում տիրող անիրավությունների դեմ: Գյուղացուն տանջում ու խեղճացնում էր նյութական, ինչպես և իրավական խեղճ վիճակը, նա դիմում էր մտավորականությանը, կոչ անելով՝ ուշադրություն դարձնել գյուղացու տնտեսական դրության բարելավման ու գիտակցական մակարդակի բարձրացման վրա: «Մանավանդ այժմ վերջապես,— գրում է նա,— երբ Կովկասը միանալով ընդհանուր Ռուսաստանի շարժման հետ, գտնվում է այնպիսի, երերուն վիճակի մեջ, երբ ժողովուրդները, բարձրացնելով իրենց գլուխները, կռիվ են մղում հին ռեժիմի դեմ և պատրաստվում են ապագա վերածնված Ռուսաստանի համար, անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել հայ գյուղացիական դասակարգի վրա, տրամադրել որոշ հողատիրական-տնտեսական, ծրագրեր, որոշ սոցիալ-կուլտուրական աշխարհայացք, հիմնվելով հայ գյուղացիական իրականության ուսումնասիրության վրա»[70]: Բագրատունին պահանջում է հողի համայնացում, նոր տեխնիկական միջոցների օգտագործում, գյուղացու իրավական և սոցիալական ազատություն: «Հող է պահանջում գյուղացիությունը, այդ պետք է տալ: Բայց դրա հետ նրան պետք է դնել այնպիսի պայմանների մեջ, որ չբռնաբարվի նրա իրավունքը, աշխատանքը»[71]: Եվ այն ժամանակ, ինչպես Բագրատունին է նկատում, երբ հողն ու արտադրական միջոցները կդառնան ընդհանուրի սեփականություն, ապա ինքնին ասպարեզից կհեռանա կապիտալը, այդ սոսկալի շարիքը, որի հիմքը աշխատանքի հարստահարությունն է:



Մ. Բագրատունին երգիծաբանի գրչով սուր խոսք է ասում կյանքի տերերի հասցեին «Խաթաբալա» ամսագրում: Ընդհանրացնելով իր խոսքը նրանց մասին, նա գրում է. «Եթե Մկոյին (Մ. Բագրատունի) իրավունք տային քաղաքի գործերին մասնակցելու, այն դեպքում ցույց կտայի, թե ինչ է կատարվում աշխարհում: Մի ցախավել կվերցնեի և չինովնիկներին, ապա գլավնուն քաշ տալով, ոսկեղեն շինությունը ցույց կտայի և կասեի այդ ոսկեղենով դումայի պատերն են նախշում, իսկ ժողովուրդը սոված է, ձվի համար մի շահի արժե»[72]:

Երգիծաբան Մուշեղ Բագրատունին ծաղրում է հոգևորականությանը, ընդգծում հատկապես այն հանգամանքը, որ ժողովուրդը նրանից այլևս ոչ մի սպասելիք չունի: Անտեղի բան է համարում նաև կաթողիկոսի ընտրության շուրջ ծագած վեճը: Իզմիրլյանը կընտրվի կաթողիկոս, թե Օրմանյանը, միևնույն է, չէ որ «բերթած կաշիներս նորից են բերթելու,— գրրում է նա,— սարի տուր, մեռնի տուր, ծնվի տուր, մկրտվի տուր, պսս ու պատիկ տուր, տուր հա տուր: Իմ ի՞նչ հաշիվնա. թե դրանց մենձը ով կլի»[73]:

Մուշեղ Բագրատունին երկու տարի շարունակ աշխատակցում էր «Խաթաբալային» անվճար: Խմբագիրը նրան հայտարարել էր, եթե խոսք բացվի հոնորարի մասին, թերթը կփակվի: Այդ իսկ պատճառով նա հրաժարվել էր հոնորարից:

1915 թ. Մ. Բագրատունին ակտիվորեն աշխատակցում է Թիֆլիսում հրատարակվող «Պայքար» թերթին, որտեղ տպագրած իր հոդվածներով մերկացնում է դաշնակցության կուսակցության հակաժողովրդական գործունեությունը:

1920 թ. դաշնակցական կառավարությունը Մուշեղ Բագրատունուն աքսորում է Բաշ-Գյառնի գյուղը, այնտեղից էլ Գարակասատան՝ բռնագրավելով նրա ունեցվածքը:

Հայաստանում սովետական իշխանության հաստատվելուց հետո, Բագրատունին վերադառնում է Երևան և ամբողջ եռանդով լծվում հարազատ երկրի տնտեսական-կուլտուրական շինարարության գործին: 1921 թ. Բագրատունին նշանակվում է Բաշ—Գյառնիի գյուղհեղկոմի նախագահ: ՍՄԿԿ

Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի արխիվում պահպանվում է Հեղկոմի նախագահ Մ. Բագրատունու զեկուցագիրը՝ Բաշ-Գյառնի գյուղում դաշնակ ավանտյուրիստների կատարած անմարդկային արարքների մասին։ Այդ զեկուցագրերից մեկում գրված է. «1921 թվականի ապրիլի 1-ի լույս գիշերը Բաշ-Գյառնի գյուղի բնակիչները պանիկայի ենթարկված դաշնակ ավանտյուրիստների ագիտացիայից, փախուստի մատնվեցին։ Սակայն ճանապարհին դաշնակների ձիավոր զորքերն անցան ժողովրդի վրայով, իրենց ետևից թողնելով սրի քաշված գյուղացիներին»[74]։ Որոշ ժամանակ անց Բագրատունին անցնում է մանկավարժական աշխատանքի և միաժամանակ շարունակում աշխատակցել թերթերին, ծավալելով հրապարակախոսական լայն գործունեություն։ Նա թղթակցում է «Մաճկալ», «Անաստված», «Խորհրդային Հայաստան» թերթերին։ Այդ նույն տարիներին նա գրում է «Կրոնի թույնը» գիրքը, «Շնագայլեր» երգիծական վեպը, «Շառ և Շառյառ» կինոսցենարը։

Մուշեղ Բագրատունին մահացել է 1945 թվականին։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

## «ԽՈՍՔ» ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԹԵՐԹԸ (1913—1914) ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1910 թ. սկսած, հեղափոխական նոր վերելքի տարիներին Ռուսաստանում գործադուլային շարժման մեծ ալիք


1913
ԽՈՍՔ
«ԽՈՍՔ»

«Խոսք» շաբաթաթերթի գլխագիրը

բարձրացավ։ Աշխուժացան հեղափոխական տրամադրությունները նաև Հայաստանում։ Այստեղ բոլշևիկները բանվորների աջակցությամբ լեգալ միջոցներով տարածում էին հեղափոխական գաղափարներն ու մարքսիստական միտքը ժողովրդական լայն մասսաների մեջ։ Երևանում հեղափոխական ակտիվ գործունեություն է ծավալում ականավոր մարքսիստ Աշավիր Մելիքյանը։ Նա 1913 թ. ձեռնամուխ է լինում «Խոսք» բոլ-

չինկյան թերթի հրատարակմանը։ Թերթը լույս էր տեսնում շաբաթը մեկ անգամ։ Խմբագիրը թերթում սոցիալական ու հասարակական հարցերի առաջադրման ու լուծման համար որպես ելակետ ընդունում է պատմական մատերիալիզմը և դասակարգային պայքարի թեորիան։ Պարզելով իր նպատակները ու թերթի հիմնական ուղղությունը, նա գրում է. «Կենսական խնդիրներին մոտենալու, շոշափելու և նրանց հասարակական արժեքը որոշելու համար պետք է ունենալ հայտնի սոցիոլոգիական և գիտական տեսակետ, մի կայուն և հաստատուն չափանիշ։ Մեր համոզմունքով այդ հայեցակետը կարող է լինել միմիայն պատմական մատերիալիզմը. դասակարգային պայքարի թեորիան, այդ արժեքաչափը կարող է լինել միմիայն՝ նյութական բարիքներ ստեղծող աշխատանքը»[1]։

«Խոսք» թերթում ճակատագրական անխուսափելիություն է համարվում այն դասակարգերի կործանումը, որոնց գոյության աղբյուրը շահագործումն է և ուրիշի աշխատանքի սեփականացումը։ Մարքսիստական հայեցակետից մոտենալով կյանքի պատմական զարգացման ընթացքին, թերթը գտնում է, որ յուրաքանչյուր սոցիալական, հասարակական, թե քաղաքական հարցի մասին պարզորոշ պատկերացում կազմելու համար պետք է նկատի ունենալ տնտեսական պայմանները և լրջորեն ուսումնասիրել տնտեսական կյանքը։ Ուրեմն հասարակության վերափոխման հիմքերը, ինչպես գտնում է թերթը, տնտեսական կյանքի մեջ են։ Դրա համար իսկ թերթը առաջարկում է գավառի երիտասարդությանը՝ պայքարել տնտեսական կյանքը բարեփոխելու, մարդկային հասարակության լավագույն ապագան կերտելու համար։ Ժամանակը և կյանքի սրարշավ ընթացքը հասարակական, տնտեսական և կուլտուրական կյանքի պայմանները արագ փոփոխման և ձևակերպման են ենթարկում, ստեղծվում է գործարանային արդյունաբերություն, գործում է հեղաշրջող և հեղափոխող շոգեմեքենան։ Այս ամենը, ինչպես թերթն է գրում, «անընդհատ մեծ թափով բերելու են կուլտուրական անհրաժեշտ ալիքներ, որոնք հեղաշրջելու են հասարակական, կուլտուրական կյանքը, ժողովրդի մտավոր ըմբռնումներն ու հոգեբանությունը։ Զար-



գացած հասարակական, տնտեսական կյանքն արթնացնում է հանրությանը շահագրգռող բյուրավոր հարցեր, հրապարակ հանում բազմաթիվ նորանոր խնդիրներ, ստեղծում մտքերի բախումներ»։

«Խոսք» շաբաթաթերթը խոստանում էր վեր հանել կյանքի ցավոտ հարցերը, բազմակողմանիորեն ուսումնասիրել ու լուսաբանել արդեն հասունացած ու հասունացող կարիքներն ու պահանջները։ Թեև, միաժամանակ, ընդգծվում է, որ մամուլը չի կարող իր դերը լիովին ու բացարձակ կատարել, քանի որ, ինչպես թերթում է գրված, «ընդհանուր քաղաքական մթնոլորտը ամպամած էր», «արտաքին պայմանները հեղձուցիչ են, հասարակական կյանքը անհամարձակ սահմանված է և լավագույն դեպքում դրված նեղ, կուլտուրական շրջանների մեջ»։ Այսինքն, մամուլը ազատ չէ, այն գտնվում է գրաքննչական կոմիտեի հսկողության տակ, պետական օրգանները, տեղական պաշտոնյա անձինք ուշիուշով հետևում են մամուլի բարձրացրած հարցերին, արգելում յուրաքանչյուր ազատ միտք, առաջադիմական գաղափար։ «Կաշկանդված լեզվով և բերանով, բնականաբար,— գրում է թերթը,— մամուլը լայն չափերով չէ կարող անել այն, ինչ նրա սրբազան պարտականությունն է հասարակական կյանքի վերաբերմամբ»[2]։

Խմբագիրը՝ Արշավիր Մելիքյանը միաժամանակ շեշտում է այն միտքը, որ մամուլը կստանա խոսքի և մտքի ազատություն միայն այն ժամանակ, երբ «մարդկային փոխհարաբերությունները իրենց վրա կկրեն ռամկավարության ազատ սկզբունքների անջնջելի դրոշմը, երբ հիրավի հրապարակում կգործի ազգաբնակչության լայն և ստորին խավերի շահերին ու պահանջներին արձագանքող դեմոկրատիան»։ Իսկ այդ բանին հասնելու համար դեռ հաղթահարելու շատ խոչընդոտներ ու դժվարություններ կան։ Օգտագործելով առիթը, Մելիքյանը կոչ է անում՝ պայքարել և հասնել այն բանին, որ քաղաքական ու հասարակական կյանքն անցնի ռամկավարական սարքերի ձևերը։ Այս գործում մեծ դեր և նշանակություն է տրվում ռամկավարական սկզբունքներով առաջնորդվող մամուլին։ Նման մամուլի դերը ավելի ու ավելի է մեծանում, քանի որ

հինը, բուրժուական մամուլը օրեօր կորցնում է իր նշանակությունը, բուրժուազիայի իդեոլոգիան սնանկանում է։ «...կյանքը և ժամանակը առաջ են բերել նոր դասակարգեր,— գրում է թերթը,— նոր պահանջներ։ Պետք է վերջ տալ բուրժուա-ինտելիգենտային մտածելակերպին, պետք է այրել հին աստվածները և նոր հողի վրա հիմնել մի նոր կերտվածք»[3]։

«Խոսք» թերթի խմբագիրը և նրա շուրջ համախմբված աշխատակիցները ձգտում էին հնարավորության սահմաններում ընթերցողներին հասցնել մարքսիստական բոլշևիկյան ճշմարիտ խոսքը։ Թերթում տպագրվել են ժամանակի սոցիալիստական և հասարակական կյանքը մարքսիզմի տեսանկյունից լուսաբանող հոդվածներ։ Դրանցում անց է կացվում այն միտքը, որ հասարակությունը բաժանված է երկու հակամարտ դասակարգերի, որոնք իրար դեմ տնտեսական ու սոցիալական հարատև պայքար են մղում և որ, «ուրիշների աշխատանքի շահագործումը ստեղծում է այնպիսի հիվանդություններ, որոնց կատարյալ բուժումը կարող է տեղի ունենալ հասարակական-արմատական կերպարանափոխություններով և հիմնական հեղաշրջումով»։

«Խոսք» թերթը այն համոզմունքն է արտահայտում, որ հասունացել են մարդու շահագործումը մարդու կողմից վերացնելու դարեր շարունակ մարդկային միտքը տանջող հարցի լուծման բարենպաստ պայմանները։ «Եվ այն, ինչ երկար դարերի և բազմաթիվ սերունդների մտորումների և անհավասար կռվի գրգռող և մղիչ ուժն է եղել, այն, ինչին բնազդորեն կամ գիտակցորեն ձգտել են մարդկային մտքի և մարդկային ոգու լավագույն և փայլուն ներկայացուցիչներից շատ շատերը, այն, ինչի համար հաճախ պայքարել ու պարտվել են ժողովուրդների հոծ ու սակավ զանգվածները, այն, ինչ, իբրև հեռավոր իդեալ, թափառող կրակի պես դեպի իրեն էր գրավում հանդուգն ու համարձակ հսկաներին-այսօր նա մոտենում է պատմական փաստ դառնալու վայրկյանին, որովհետև նրա համար ստեղծվում են և զարգանում են նպաստավոր և բարեհաջող տնտեսական պայմաններ, որովհետև գոյություն ունի մի այնպիսի հուժկու դասակարգ, որը



օրհասական անհրաժեշտությամբ, ուղի-շավիղ նրան պիտի իրականացնի»[4]։

Հեղափոխական պայքարում պրոլետարիատի հեգեմոն դերի հարցում թերթը քննադատում է լիբերալ նարոդնիկության տեսաբան Ն. Կ. Միխայլովսկուն։ Նրա մահվան 10-ամյակի կապակցությամբ տպագրված հոդվածում հեղինակը ընդգծում է այն հանգամանքը, որ Միխայլովսկին հասարակության զարգացման գործում չնչին դեր էր վերագրում բանվոր դասակարգին։ «Հետագա պատմական դեպքերը և քաղաքական անցքերը,— գրված է այնտեղ,— ցույց տվեցին, որ Միխայլովսկին սխալվել է։ Եվ դա բնական էր. նա անհատապես մեղավոր և պատասխանատու չէր, որ չըմբռներ կապիտալիզմի զարգացման և պրոլետարիատի նշանակությունը»[5]։

Արշավիր Մելիքյանն իր թերթում բարձրացնում է այն միտքը, որ բանվոր դասակարգը հեղափոխական իրադարձությունների աշխուժացման պայմաններում ավելի ու ավելի ընդունակ է դառնում իր առջև դրված խնդիրներն իրականացնելու համար։ Հանձին բանվոր դասակարգի, նա տեսնում է մարդկության լավագույն ապագան կերտողին։ «Արդյունաբերական և գործարանային աշխատավոր զանգվածները,— գրում է նա,— ամեն ջանք գործ են դնում կազմակերպվելու պրոֆեսիոնալ և կուսակցական միությունների շուրջ, որովհետև նրանք պատրաստվում են ապագա պայքարի համար, որը պահանջելու է տոկունություն, ուժ և կամքի հաստատակամություն»[6]։ «Խոսքը» միաժամանակ անդրադառնում է նաև մտավորականության անելիքների հարցերին, գտնելով, որ կապիտալիզմի զարգացման սկզբնական շրջանում բուրժուական մտավորականությունը առաջադեմ էր այնքանով, որքանով պայքար էր մղում հնի դեմ՝ նորի հաղթանակի համար։ Այդ շրջանում նա ծառայում էր արթնացող բուրժուազիային։ «Հայ նախկին մտավորականությունը,— գրում է թերթը,— բուրժուական ինտելիգենցիան կատարեց իր դերը և հաղթանակը տանելուց հետո պահանջ զգաց հանգստանալու։ Նա այժմ հանգստանում է։ Նրա համար չկա

նախկին իդեալիզմը, չկա նախկին գաղափարական ոգևորությունը և հափշտակությունը։ Հայ իրականության տնտեսական կյանքի աստիճանական զարգացումը և հեղափոխական շարժումներն ապացուցեցին, որ այդ մտավորականությունը բուրժուազիայի մի բաղադրիչ մասն է։ Միաժամանակ պարզվեց, որ նա շահագրգռված չէ հայ բանվորության, հայ գյուղացիության աղքատ ու չքավոր մասի հետաքրքրություններով։ «...Հայ գյուղացիության աղքատ և չքավոր մասն ունի այլ պահանջներ, հայ բուրժուազիան երգում է այլ երգ։ «Քայքայվեց ժամանակի յուղը», քայքայվեցին հայ ինտելիգենցիայի շաղկապող և չցթայող օղակները։ Այժմ մենք ունենք տարբեր ինտելիգենտներ տարբեր դավանանքներով, ներհակ տենչերով»[7]։ Ուրեմն, եզրակացնում է Թերթը, մտավորականությանը դիմելիս ու նրան ապավինելիս պետք է անպայման ընտրություն կատարել։ Երևս պետք է թեքել այն մտավորականներից, որոնք տոգորված լիբերալ և բուրժուական մտածողությամբ, տարվում են զանազան բարենորոգչական և ծիսական գործերով, բայց ոչ բուն ժողովրդի շահերի պաշտպանությամբ։ Թերթը նրանց համարում է «ռենեգատներ»։ Նրանք այլևս պիտանի չեն իրենց ազգին։ Ազգի կենսունակությունը հիմնված է ռամկավարական սկզբունքների վրա։ Այդպես է եղել սկզբից մյուս ազգերի մոտ և այդպես էլ շարունակվում է։ «Հունաստանը ուժեղ էր իր աթենական դեմոսով,—գրում է Թերթը,—Հռոմը՝ իր պլեբեյով, Նորագույն խոշոր պետությունները՝ իրենց դեմոկրատիայով»[8]։ Ապա շարունակում է. «Կենսունակության և քաղաքակրթության զարգացման համար անհրաժեշտ է, որ մեր բոլոր հիմնարկությունները և ձեռնարկությունները համակված լինեն անշեղ ռամկավարության և աշխարհականացման ոգով։ Սա մի հարկադրական և անխուսափելի պայման է»[9]։ Սակայն, ինչպես նկատում է Թերթը, անհաջող ռամկավարականները, այսինքն մարտնչող մատերիալիստները զրկված լինելով սեփական օրգան ունենալու հնարավորությունից, իրենց գաղափարները տարածելու համար հարկադրված օգտագոր-



ծում էին բուրժուական և մանրբուրժուական պարբերական հրատարակությունները։ Այդ դեպքում, ինչպես Թերթում է գրված, որքան ցավոտ, որքան էլ փայլուն լիներ մի մատերիալիստի հոդված, այնուամենայնիվ, բուրժուական թերթերի էջերում նա լուծվում էր անհամ և տաղտուկ շաղակրատության ովկիանոսում և բոլորովին կորցնում էր իր հմայքը և ազդեցությունը։ Այդ իսկ պատճառով Թերթում բարձրացվում է ռամկավարական առանձին օրգանի լույս ընծայման պահանջը, մի պահանջ, որ անխուսափելի անհրաժեշտություն էր ներկայացնում։

Արշավիր Մելիքյանի «Նոր» Թերթը հասարակական և քաղաքական հարցերին անդրադառնալիս անպայման ելնում էր կուսակցական դիրքերից։ «Փորձով վաղուց արդեն ապացուցված է,— գրում է նա,— որ քաղաքական պայքարի և ուղղությունների ընդհարման ժամանակ մարդիկ հարկադրված են լինում հարել այս կամ այն հոսանքին. առանց կուսակցական գունավորման թերևս նշանակում է ընդհանրապես առանց գունավորման»[10]։ Խմբագիրը ղեկավար սկզբունք ընդունելով պատմական մատերիալիզմն ու դասակարգային պայքարի թեորիան, պահանջում էր բոլոր հարցերը (քաղաքական-հասարակական, թե տնտեսական) քննարկել կուսակցական դիրքերից։

Պրոպագանդելով բոլշևիկյան կուսակցության պատգամները, Թերթը գրում է. «Եղբայրություն չէ կարող լինել այնտեղ, որտեղ կա դասակարգային հակամարտություն. հավասարություն չէ կարող լինել այնտեղ, երբ մարդս դեռ շարունակում է շահագործել իր նմանին. ազատություն չէ կարող լինել այնտեղ, որտեղ մեկը մյուսին կաշկանդել է տնտեսական ու քաղաքական կապանքներով»[11]։ Հիշենք Վ. Ի. Լենինի խոսքերը. «Փողի իշխանության վրա հիմնված հասարակության մեջ, մի հասարակության մեջ, որտեղ աղքատության են մատնված աշխատավորության մասսաները և պորտաբույծ կյանք են վարում մի բուռն հարուստներ, չի կարող իրական և իսկական ազատություն լինել»[12]։

Կապիտալիստական հասարակարգին բուժում չկա։ Նա պետք է վերափոխվի արմատապես։ Այդ վերափոխման համար կան արդեն համապատասխան ուժեր, ինչպես Թերթն է գրում. «վիրաբույժներ», որոնք իրենց «նշտարով կհեռացնեն վտանգավոր պալարը»։ Այդ «վիրաբույժները» իհարկե, բանվոր դասակարգն էր ու գյուղացիությունը, որոնց համատեղ ջանքերով իրականացվելու էր աշխատավոր ժողովրդի դարերի երազանքը։ Գործի հաջող ավարտի համար Թերթը միաժամանակ գտնում է, որ ժողովուրդը՝ ինքը պետք է ձգտի մասնակցել իր երկրի ներքին գործերին, ցուցաբերի ինքնուրույնություն, տիրապետի ռամկավարական իրավունքներին և սկզբունքներին, որպեսզի այլևս գործիք չդառնա, ինչպես Թերթում է գրված, քաղաքական զանազան բախտախնդիրների ձեռքին։ Իսկ դրա համար հարկավոր էր նաև բոլորովին չեզոքացնել եկեղեցու դերը, հեռացնել ժողովրդին նրա ազդեցությունից։ «Մեզ հարկավոր է աշխարհականացում,— գրում է Թերթը,— մեզ հարկավոր է քաղաքականապես հասունացած ժողովուրդ։ Ժամանակն է գիտակցել, որ մի ժողովուրդ կարող է և եկեղեցուց դուրս գոյություն ունենալ, իբրև մի ուրույն կուլտուր-քաղաքական ամբողջություն»[13]։

Թերթը հոգևորականությանը համարում էր «քաղաքակրթության խոչընդոտ մի դասակարգ, որը պետք է մի կողմ նետվի»։ Հոգևորականությունը դեմ էր ընդհանրապես ժողովրդի ընտրական սկզբունքին։ Մինչդեռ, Թերթը հորդորում էր մասսաներին՝ տիրապետել ընտրական իրավունքներին, ակտիվ մասնակցել հասարակական գործերին, իմանալ ղեկավարել ու կարգավորել իր ներքին կյանքը։ Իսկ դրա համար հայ ժողովուրդն արդեն հենց ուներ որոշ ունակություններ։ Նա դարեր շարունակ ապրել էր ծխական համայնքներում։ Ծխական համայնքը պահպանվում էր ընտրական սկզբունքների հիման վրա, սկզբունքներ, որոնք իրենց մեջ պարունակում էին դեմոկրատիզմի տարրերը։ «Ժողովրդի ինքնագործունեության և ինիցիատիվի ավելի լավ ձև, քան այս է,— գրում է Թերթը,— չի կարող լինել, և սա է, որ պակաս ենք շեշտելու, իբրև մի խո-



շոր դրական երևույթ, որով դաստիարակվել է մեր ժողովուրդը»[14]։

«Մշակ» Թերթն իր էջերում ուշադրության կենտրոնում պահելով գավառի կյանքը, դիմում է Թղթակիցներին, գրելով. «Տալ գավառի հարազատ պատկերը իր պես-պես գույներով, ներկայացնել վստահելի տվյալներով գյուղացու տնտեսական վիճակը, պարզել գյուղացու հոգեբանությունը նրա առօրեական կյանքից, վարմունքից, կենցաղից, նիստուկացից, միով բանիվ, գյուղացու ամբողջ կեցությունից»[15]։ Ապա շարունակում է. «Բավական չէ տգիտությունը գիտել, պետք բացորոշ կացուցանել պատճառները, պետք հնարավորություն տալ դարմանի մասին մտածելու»[16]։ «Մշակում» տպագրված Թղթակցություններում գյուղում տիրող հիմնական չարիքներից մեկն է համարվում նաև տնտեսական հետամնացությունը։ Հայկական գյուղում դեռ օգտագործվում էր հողի մշակման հնացած եղանակը, որը «բավարարություն չէր տալիս գյուղացու կարիքներին»։ «Այսպիսով, նյութական բարօրությունը,— շարունակում է Թերթը,— թեպետև ոչ եզակի, բայց և այնպես, ամենազգալին և ղեկավարող ֆակտորն է մեր գյուղական կյանքում»[17]։ Նյութական դրության բարվոքման դեպքում կարելի է փրկել գյուղացիությանը բարոյական անկումից, ինչպես և զարկ տալ գիտության և արվեստների ծաղկմանը։ Դրա համար Թերթը գրում է. «Եղբայրակցություն. կապիտալ ներմուծել, կազմակերպել արդյունաբերության ուժերը տնտեսական կյանքի բոլոր հատվածներում և ձեռնարկել տնտեսական վերանորոգություն— ահա րոպեի պահանջը»[18]։ Գյուղի տնտեսությունը ժամանակի զարգացած տեխնիկայի կիրառմամբ, գիտության վերջին խոսքի համաձայն վերակառուցելու համար առաջին հերթին անհրաժեշտ է գյուղացու հոգեբանության վերափոխում։ Սակայն հայկական գյուղում ամեն մի նոր երևույթ դեռ սովորության համաձայն ծաղրվում էր։ «Փորձիր մի լավ մեքենա մտցնել գյուղ և ասել օգտակար է,— գրում է Թերթը,— ոչ ոք չի հավատա»։ Գյուղում իշխում էին հարբեցողությունը, ծուլությունը, սուտը, կեղծիքը։ Մեծ չա-

րիչ էր ներկայացնում ազատությունը։ Հայ գյուղացին չգիտեր պայքարել բնության ուժերի դեմ, բարին, թե չարը նա հեզությամբ ընդունում էր իբրև երկնքից իջած մի պարգև, իբրև մի փորձություն։ «Նա (գյուղացին) չի ըմբռնում իր աշխատանքի հասարակական նշանակությունը, իր սեփական մկանների ներգործական դերը և այդպիսով դառնում է դիմազուրկ, ամբողջապես ուրիշի բարեհաճությունից կախում ունեցող մի դասակարգ»։

Աղքատությունից դուրս գալու ելքը գյուղացին հաճախ գտնում էր գաղթի մեջ։ Գյուղացիությանը գաղթի ճանապարհից հետ պահելու նպատակով թերթը տպագրում է այն հուսահատական նամակները, որ գրում էին իրենց հարազատներին՝ բազմաչարչարհից Ամերիկա մեկնած հայ շինականները։ Լոս-Անջելեսից Գարեգին Մարգարյանը գրում է. «Ամերիկայի գործերի մեջ չի ճարվի որևիցե մի անվնաս գործ. առավոտը, որ գնում ենք գործի, Աստված ապաշխարելով, իրար հետ բարեմաս ենք անում, և գնում ենք գործի, հույս չենք ունենում, թե իրիկունն իրար կտեսնենք։ Երանի այն օրը, երբ կպրծնենք այս անգութ, արնախում երկրից և մեր կյանքը արժան կըտեսնենք Շիրակու ապառաժ լեռ քարերին, այն օրն շատ երջանկություն կլինի ինձ»[19]։

«Խոսք» թերթը համարձակորեն մերկացնում էր կապիտալիստական կարգերը, նշում, որ այդ կարգերի «անկյունաքարն է մասնավոր սեփականությունը և ուրիշների աշխատանքի շահագործումը և սեփականացումը»։ Թերթը ձգտում էր ժողովրդական մասսաներին հասցնել այն գիտակցությունը, թե բուրժուական բարեգործությամբ չի փոխվի նրանց դրությունը։ Այն լոկ խաբելու միջոց է տիրապետող դասակարգի ձեռքին։ «Ավելի զզվելի և ավելի նողկալի տեսարան, քան բուրժուական բարեգործությունը,— գրում է թերթը,— դժվար է անգամ երևակայել։ Աջ ձեռքով սերմանում են չարիք և մահ, իսկ ձախ ձեռքով ողորմություն են տալիս իրենց իսկ մակաբույծ և անպետք գոյության զոհերին. աջ աչքը հառում են ուրիշի առողջությունից և քրտինքից քամած հեշյան մետաղին



և դրամագլխին, իսկ ձախ աչքից կաթեցնում են կոկորդիլոսի կեղծ պատիր արցունքի շիթեր. առանց դիմակի՝ նզովվում են ժողովրդի ստորին խավի աշխատավոր ձեռքերը և հաճախ արյան ճապաղիքների մեջ են խեղդում նրանց արդար բողոքը և տրտունջը, իսկ դիմակ ծածկած՝ յուղոտ ձայնով քարոզում են մարդասիրություն և մայրախնամ քնքուշ վերաբերմունք դեպի մերձավորը»[20]։ «Խոսքի» № 17-ը ամբողջովին ուղղված է տիրապետող կարգերի դեմ։ Դիմելով «բարեգործ» բուրժուաներին, թերթը գրում է. «Ձեզ է՞լ, ձեր մարդասիրությունն է՞լ, ձեր կարգերն է՞լ պետք է արմատապես կերպարանափոխել, այդ ժամանակ միայն մենք չենք ունենա ո՛չ թոքախտավոր, ո՛չ արբեցող, ո՛չ անառակ կին։ Սպիտակ ծաղիկների դեմ ալ-կարմի՛ր վարդեր»[21]։ Ինչպես Ս. Պ. Աղայանն է գրում. «Արշ. Մելիքյանի գրած այդ առաջնորդողը փաստորեն մի դատավճիռ էր բուրժուական կարգերին, հեղափոխական պաթոսով գրված մի կոչ։ Հեղինակը համոզված է գոյություն ունեցող կարգերը տապալելու, ցարիզմի փտած իրավակարգը խորտակելու և աշխատավորությանը հյուծող բոլոր չարիքները վերացնելու անհրաժեշտությունը»[22]։

«Խոսք» թերթի այդ նույն համարում տպագրված են ինչպես բանվորների, այնպես էլ գյուղացիության թշվառ իրավիճակը պատկերող հոդվածներ։ «Տարին տասներկու ամիս,— գրում է թերթը,— առավոտ, թե կեսօր, գարու կամ ցորենի հետ խառն, միևնույն ցամաք հացն է նրանց կերակուրը. ամիսներով տաք կերակուրի երես չեն տեսնում. թեյը, պանիրը, միսը, յուղը, կարագը և այլ մթերքներ միայն շատ հարուստների սեղանի վրա կպատահեն։ Սննդի պակասության պատճառով հայ գյուղացին հյուծվում, մաշվում է ֆիզիկապես»[23]։

«Հայ գյուղերի տնտեսական վիճակը» հոդվածաշարում քննադատվում են կուլակներն ու գյուղի մյուս «դոզբաները»։ Ինչպես գյուղացին իր մթերքը քաղաք տեղափոխելու և շուկա հանելու միջոցներ չունենալու պատճառով կես գնով հանձնում է այն միջնորդ կուլակին։ Վերջինս կոպեկ-կոպեկ,



12—394

կամ մաս-մաս է տալիս գյուղացու հասանելիք գումարը։ Սկսվում է քաշքշուկը։ Այդ հանգամանքն էլ դառնում է շահագործման մի ձև կուլակի ձեռքին։

Առաջնորդող հոդվածներից մեկում այն կարծիքն է հայտնվում, թե կապիտալիզմի զարգացումն ու առևտրաարդյունաբերական նորանոր շուկաների ստեղծման քաղաքականությունը զարկ են տալիս միլիտարիզմի առաջխաղացմանը, որը և ստեղծում է բոլոր միջազգային խնդիրները զենքի ուժով և պատերազմներով լուծելու սպառնալիքը։ Սուր քննադատության է ենթարկվում իմպերիալիզմի զավթողական քաղաքականությունը։

Կապիտալիզմի զարգացման հետևանքով գյուղում, թե քաղաքում երևան են գալիս մանր վարկի ընկերությունները։ Թերթը քննադատաբար է անդրադառնում այդ ընկերությունների դերին և նշանակությանը։ Մի կողմից այդ ընկերությունը համարվում է լավագույն միջոց քաղաքի և գյուղի կարիքավոր դասերին դրամ տրամադրելու և նրանց կեղեքիչ վաշխառուի ցանցից ազատելու համար։ Սակայն մյուս կողմից նշում է, որ այն ունենում է իր վնասակար ազդեցությունը։ Գյուղացին վերցնելով դրամը, հաճախ այն չի ծառայեցնում իր նպատակին և ընկնում է պարտքերի տակ։ Կամ նա ստանալով գումարը, օգտագործում է առևտրի համար։ «Եվ այսպիսով,— գրում է թերթը,— «մանր վարկի ընկերությունը» մի նոր տեսակի շահագործման է ուժ տալիս առևտրի միջոցով ի վնաս մանր գյուղացիության»[24]։ Եվ երբ ժամանակին բոլոր թերթերը խրախուսական խոսքեր էին տպագրում մանր վարկի ընկերության հասցեին, բոլշևիկյան «Խոսք» թերթը վերապահումներով էր անդրադառնում այդ հարցին, գրելով. «...այն չափազանց լավատես հայացքը, որը ընդհանուր է «մանր վարկի ընկերության» վերաբերմամբ, գյուղացիության և հատկապես մանր գյուղացիության շահերի տեսակետից, խորազնին չէ և ոչ էլ իրականությանը համապատասխանող»[25]։

Արշավիր Մելիքյանը նույն վերապահումներով մոտենում է նաև կոոպերացիայի դերին և նշանակությանը։ Նա իր թեր-



թի միջոցով նախ ծանոթացնում է կոոպերատիվների սկզբնավորման պատմությանը, կոոպերատիվ աշխատանքի կազմակերպման հիմնադիր, ուտոպիական սոցիալիզմի նախահայր Ռ. Օուենի տեսությանը։ Օուենը քարոզում էր ազատ համայնքի գաղափարը, համայնք, ուր մարդիկ պետք է ապրեին միասին, ուր պետք է յուրաքանչյուրից պահանջվեր իր ուժերի և ունակությունների համապատասխան աշխատանք, ուր վարձու աշխատանքի փոխարեն սկիզբ էր դրվելու կոոպերատիվ աշխատանքին։ Ապա մեկ այլ հոդվածում Մելիքյանը անդրադառնում է ֆրանսիացի ուտոպիստ Ֆուրյեի հայացքներին։

Անդրադառնալով կոոպերացիայի վերաբերյալ տեսության ծագման և զարգացման պատմությանը, մարքսիստ տեսաբանը քննադատական դիրքերից է մոտենում հարցերին։ Նա գտնում է, որ Ռ. Օուենի, Ֆուրյեի կողմից առաջ քաշված սոցիալական աղաղակող հակասությունները համայնքով հարթելու գաղափարը ուտոպիա էր, ուստի և ժամանակին մատնվեց անհաջողության։ Ահա թե ինչ է «Խոսք» թերթում նա գրում. «Այդ համայնքների աշխատանքների նպատակն և ձևն այն է, ինչ որ մենք կոոպերացիա ենք կոչում. աշխատել բոլոր անհատական հակումների, տանել նյութական և հոգեկան կարիքների համապատասխան անսահման պատասխանատվություն, կամավոր և ազատ միացում, ընդհանուր կյանք, խնայողություն, ընդհանուր կուլտուրական և առողջապահիկ միջոցներ և այլն-ճիշտ օուենյան մտքերը։ Այսինքն, Արշ. Մելիքյանը գտնում է, որ կոոպերացիաների միջոցով իրավահավասար կարգերի հասնելու մասին կարծիք հայտնել, նշանակում է կրկնել Օուենին, արտահայտել նրա մտքերը։ Հայտնի է, որ կոոպերացիաների մասին թեորիաները գնահատելիս Վ. Ի. Լենինը գրել է. «Ո՞րն է հին կոոպերատորների ծրագրերի ֆանտաստիկությունը, սկսած Ռոբերտ Օուենից։ Այն, որ նրանք երազում էին, թե սոցիալիզմը խաղաղ վերափոխության կենթարկի արդի հասարակությանը՝ առանց հաշվի առնելու այնպիսի հիմնական հարց, որպիսին է դասակարգային պայքարի, բանվոր դասակարգի ձեռքով քաղաքական իշխանությունը

նվաճելու, շահագործողների դասակարգի տիրապետությունը տապալելու հարցը։ Ուստի մենք իրավացի ենք, գտնելով, որ այդ «կոոպերատիվ» սոցիալիզմը ամբողջովին ֆանտաստիկա է, ինչ-որ ռոմանտիկ, նույնիսկ գռեհիկ բան կա այն երազանքներում, թե ինչպես բնակչության պարզ կոոպերացման միջոցով դասակարգային թշնամիներին կարելի է դասակարգային գործակիցներ դարձնել և դասակարգային պատերազմը վերածել դասակարգային հաշտության (այսպես կոչված՝ քաղաքացիական հաշտության)»[26]։

Արշավիր Մելիքյանի թերթի նպատակն էր լայնորեն պրոպագանդել դասակարգային պայքարի գաղափարը, որքան հնարավոր էր այդ պրոպագանդայով հեղափոխական պայքարի շուրջ ներգրավել բանվորներին ու գյուղացիությանը։ Թերթի էջերում տեղ էին գրավում Երևանում, Կովկասի և ռուսական քաղաքներում տեղի ունեցած գործադուլային շարժման վերաբերյալ լուրերը։ 1913 թ. հուլիսին Բաքվի նավթահանքերում սկսված գործադուլը տևում է երկու շաբաթ։ Բանվորներն այստեղ հանդես են գալիս իրենց պահանջներով։ Խարկովի համալսարանի ուսանողները գործադուլ են կազմակերպում և պահանջում արտաքսված ուսանողներին թույլ տալ մասնակցելու քննություններին։ «Խոսքի» էջերում գործադուլային և հեղափոխական շարժումները սոսկ պասիվ ձևով չեն արձանագրվում, այլ հեղինակի ու խմբագրի մեկնաբանությամբ։

Արշավիր Մելիքյանի «Խոսք» թերթը չէր սահմանափակվում միայն արևելահայ կյանքի լուսաբանմամբ, այնտեղ առանձին էջեր էին հատկացվում նաև արևմտահայ կյանքի հրրատապ հարցերի քննարկմանը։ Այն իր քննադատական խոսքն էր ուղղում երիտթուրքերի կառավարության հասցեին։ Պաշտպանելով հայերի գրաված դիրքը օսմանյան պառլամենտական ընտրությունների ժամանակ, թերթը արդարացնում էր նրանց պահանջները։ Այնտեղ բացարձակ հայտարարվում էր, որ երիտթուրքերի կուսակցությունը հայերին խաբել է, պառլամենտում քսան տեղի փոխարեն նրանց հատկացնելով տասը։



Հայտնի է, որ երիտթուրքերի սահմանադրությունից սպասվող հույսերը չարդարացվեցին։ «1908 թ. հուլիսի հեղափոխությունից և Աբդուլ Համիդի գահընկեցությունից հետո տրամադիր էինք կարծել,— գրում է թերթը,— որ սկսվում է թուրքական պատմության մի նոր դարաշրջան... Եվ սակայն հիասթափություն...։

Երիտասարդ թուրքերը ստանձնելով կառավարության ղեկը և մտցնելով սահմանադրություն, փոխանակ առաջ գնալու, սկսեցին նահանջել»[27]։ Նրանց օրոք ևս հայկական հարցն իր լուծումը չստացավ։ Ընդհակառակը, ինչպես թերթում է գրված, սպանությունները, իսլամացման դեպքերը, բռնությունները շատացան...։ Ուշագրավն այն է, որ հարցի լուծման համար առաջադրվում էր այն դեղատոմսը, որ առաջադրվել էր արևելահայերի համար։ Այսինքն, որ հայ ժողովրդի բախտը և՛ արևելահայ, և՛ արևմտահայ հատվածներում կապված է Ռուսաստանում բռնկված հեղափոխական շարժման հաղթանակի հետ, հեղափոխություն, որ կործանելու էր միապետության շղթաները, սահմանադրական պատրանքները և ստեղծելու էր իրավահավասար, ժողովրդի շահերը հարազատորեն ու լիովին պաշտպանող կարգեր։ Ահա թե ինչու, թերթում սուր ձևով արտագրվում է Պետերբուրգի զինվորական-իրավաբանական ակադեմիայի պրոֆեսոր Վ. Դ. Գլեբովի դասախոսությունը, որտեղ ասված է. «Հայկական հարցը ռուսական հարց է, և մենք պիտի աշխատենք լուծել այն։ Տաճկահայաստանի հարցի լուծումը իր՝ Տաճկաստանի ձեռքով, նրա օգուտն է, հակառակ դեպքում՝ նրա լուծման համար մենք պիտի հրապարակ գանք, որովհետև այլևս սառնասիրտ դիտել դեպի մի կուլտուրական և աշխատասեր ժողովրդի մարտիրոսությունը,— մենք չենք կարող. դա մեր մարդկային և մարդասիրական իրավունքն է։ Ռուս հասարակությունը և ռուս լավագույն ինտելիգենցիան այդ է ցանկանում, այն ինտելիգենցիան, որի ներկայացուցիչներն էին Գերցենն ու Օգարյովը, որոնք իրենց զոհաբերեցին, որպեսզի կյանք տան քաղաքակիրթ ռուս նոր գյուղացիության, ինչպիսին էր Գարշինը, որ հանուն Բուլղա-

բիայի ազատագրության մասնակցից պատերազմին. այդ է պահանջվում և մեզնից այժմ»[28]։

Ինտերնացիոնալիզմի գաղափարների պաշտպանության դիրքերից են քննարկվում հայ ժողովրդի ոչ միայն սոցիալական ու քաղաքական կյանքի ազատագրման, այլ նաև հոգևոր ու բարոյակրթական վերածնության հարցերը։ Ժողովուրդը ինքը պետք է իր ձեռքը վերցնի հոգևոր կուլտուրայի և մշակույթի զարգացման գործը։ Այդ է պահանջում Թերթը, երբ անդրադառնում է մատաղ սերնդի ու աշխատավորների դաստիարակության խնդիրներին։

Թեև եկեղեցին ու նրա պաշտոնական ներկայացուցիչներին էր վերապահված կրթական հաստատությունների ղեկավարման իրավաբանական դերը, սակայն դրան զուգընթաց ժողովրդական մասսաներին տրված էր դպրոցական գործերին ակտիվ մասնակցելու լայն իրավունք։ Սակայն, ինչպես նկատում է Թերթը, այդ իրավունքը չէր օգտագործվում ժողովրդական մասսաների կողմից։ «Բուն ժողովրդական տարրը,— գրում է Թերթը,— իր լայն խավերով, որի անունից սիրում են մեզնում այնքան շատ խոսել, իրոք, փաստապես վտարված է մեր հասարակական և դպրոցական գործերի ասպարեզից։ Հանուն նրա, մեր այդ գործերի ասպարեզում գերիշխում են կղերականությունն ու բուրժուազիան և ամրապնդում իրենց տիրապետությունը մասսայի վրա»[29]։ Դպրոցների պահպանման համար ամեն անգամ բուրժուա-բարերարներից նյութական միջոցներ հայթայթելը համարվում էր «ախտավոր երևույթ և չարիք»։ Այդ հանգամանքը իսկ մեռցնում էր ժողովրդի մեջ գիտակցական և ինքնուրույն մոտեցումն իր կուլտուրական գործոնների պահպանման հանդեպ, ինչպես նաև նրա մոտ արմատավորում այն միտքը, թե «հասարակական հիմնարկությունները, որոնցից օգտվում ու շահվում ինքն է սակայն, ապրել են ու պիտի ապրեն մուրացկանությամբ, առանց իր՝ գեթ այն ցույց տված գթասրտական վերաբերմունքի և պարտականության»[30]։



Ժողովրդի մոտ դպրոցական գործի զարգացման հանդեպ պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով Թերթը առաջարկում է «Հայ դպրոցների գոյության կայուն հիմնաքարերը խարսխել հայ ժողովրդի անխտիր բոլոր դասակարգերի և խավերի լայն աջակցության վրա»։ Մերժվում է բարեգործների և բարեգործական ընկերությունների աջակցությունը և փոխարենը առաջ քաշվում դպրոցական տուրքի մուծման լավագույն միջոցը, «ծխական դպրոցական տուրքի սկզբունքի իրականացումը ամենալավագույն միջոցն է ժողովրդի մեջ զարթեցնելու ինքնագիտակցություն և ինքնօգնություն։ Իսկ մեզ ամենից առաջ հարկավոր է մեր ժողովրդի ինքնագիտակցությունն ու ինքնօգնությունը»։ Ուստի, առաջարկվում է բարձրացնել ծխական համայնքի ու նրա կողմից ընտրված հոգաբարձական խորհրդի դերն ու նշանակությունը կրթական գործում։ Բարձրացվում է նաև Գևորգյան ճեմարանում նույնպես հոգաբարձական խորհուրդ ստեղծելու հարցը։ Ճեմարանի ղեկավարության մեջ պետք է ընդգրկվեին կրթված, բանիմաց, մասնագետ ուսուցիչներ։ «Անցել է արդեն,— գրում է Թերթը,— խնամակալությունների դարը, այն դպրոցներն, ուր սովորում են ժողովրդի զավակները և որոնք պահվում են այդ նույն ժողովրդի տված նպաստներով և արդյունքով, պատկանում են ոչ այլ ոքի, քան այդ նույն ժողովրդին։ Բուն ժողովրդի գերիշխանությանը պետք է տեղ տալ»[31]։ Թերթը հանդես էր գալիս ժողովրդի ձեռքով պահպանվող ու ժողովրդի համար գործող կրթական հաստատությունների ստեղծման ու զարգացման պահանջներով։

Ինչպես կրթական գործի կազմակերպման, այնպես էլ գրականության ու արվեստի քննարկման հարցերին Թերթը մոտենում էր դեմոկրատիզմի դիրքերից։ Առանձին հոդվածներ են նվիրվում գրքերի քննարկմանն ու տեսությանը, հայ գրողների ստեղծագործությունների վերլուծությանը։ Այստեղ բարձր գնահատական է տրվում հայ մեծ հայրենասեր ու ժողովրդասեր նահատակ Աբովյանին։ Տպագրվում է Դորպատի կայսերա-

կան համալսարանում վեց տարի ուսանելու մասին նրա իսկ ձեռքով գրված փաստաթուղթը։ Այստեղ հարց է բարձրացվում հնարավորին սահմաններում հայ մեծ վիպասանի վերջին օրերի և նրա անհետացման մասին ճշգրիտ տեղեկություններ հավաքելու վերաբերյալ։

Գրականության հարցերի շուրջ գրված տեսական հոդվածներում քննադատվում են «արվեստը արվեստի համար» սկզբունքի կողմնակիցները։

Պրոլետարական կուլտուրայի և գրականության հարցերին է նվիրված Արտաշես Կարինյանի Պետերբուրգից ուղարկված հոդվածը։ Հեղինակը ուրախությամբ նշում է այն փաստը, որ տարիներ շարունակ ընկճված, հալածված բանվորությունը աստիճանաբար կազմակերպվում է, բարձրացնում «իր շարքերի միջոցն ու մարտական կորովը»։ Այդ ամենն իսկ իրենց անդրադարձումն են գտնում գրականության բովանդակության և զարգացման ուղիների վրա։ Նրան փոխարինելու է գալիս նոր՝ պրոլետարական գրականությունը։ «Հասարակական կյանքի վերակենդանությունը,— գրում է նա,— բանվորական առաջամարտը, ռամկավարական լայն խավերի քաղաքական արթնացումը այն անհրաժեշտ ֆոնն է, որի վրա և բարգավաճում, ուժեղանում է ռեալիստական ստեղծագործությունը»[32]։

Արշավիր Մելիքյանի «Խոսք» թերթն իր մարտաշունչ ոգով գրված հոդվածներով մոբիլիզացնում էր բանվորների և հայ գյուղացիության հեղափոխական ուժերը, վճռական մարտի նախապատրաստում նրանց։ Եվ հենց այդ հեղափոխական ոգու համար էլ թերթի հրատարակությունն արգելվում է։ Թիֆլիսի գրաքննական ատյանի կարգադրությամբ գրավվում է «Խոսք» թերթի 1914 թ. № 17-ը։ 1914 թ. մայիսի 3-ին լույս է տեսնում թերթի № 18-ը, որտեղ հայտարարված է այն մասին, որ ապրիլի 28-ին, գիշերվա ժամը 12-ին ոստիկանությունը խուզարկել «Խոսքի» խմբագրատունը և վերցրել մնացած համարները։ Կազմվել արձանագրություն։ Թերթի № 17-ը գրավված էր լրագրավաճառներից և ընթերցարաններից։ № 17-ում, ինչպես նշվեց, կոչ էր արվում տապալել տիրապե-



տող կարգերը, պայքարել նոր, շահագործումից ազատ հասարակարգ կառուցելու համար։ Մամուլի գործերի Թիֆլիսի կոմիտեն 1914 թ. 2 մայիսի թվակիր նամակով հայտնում է Թիֆլիսի դատական պալատի դատախազին այն մասին, որ նույն թվականի ապրիլի 27-ին Երևանում լույս տեսած «Խոսք» թերթի № 17-ում տպագրված առաջնորդողից նկատվում է, որ թերթը ունի հակապետական ուղղություն։ Եվ կոմիտեն կարգադրություն է արել բռնագրավել թերթի այդ համարը։ Այստեղ հայտնվում է, որ կոմիտեն միաժամանակ խնդրում է՝ դատարանի առաջ հարց հարուցել այդ համարի բռնագրավման հաստատման մասին և խմբագրին՝ Արշավիր Մելիքյանին դատական կանոնագրության 129 հոդվածի համաձայն ենթարկել դատական պատասխանատվության։ Թիֆլիսի դատական պալատը հաստատում է «Խոսք» թերթի № 17-ի բռնագրավումը և գործի հարցաքննումը նշանակում է Երևանում։ Մինչև գործի լսելը Արշավիր Մելիքյանը կալանքի տակ է առնվում[33]։ 1914 թ. հունիսի 20-ին լույս է տեսնում թերթի վերջին 25-րդ համարը, որից հետո այն փակվում է։ 1918 թ. սեպտեմբերի 22-ին Արշավիր Մելիքյանը Երևանում վերսկսում է հրատարակել «Խոսք» թերթը։ Այն լույս է տեսնում որպես ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեի օրգան։ «Խոսքը» կոմունիստական նոր բջիջներ ստեղծելու ուղղությամբ մեծ աշխատանք է կատարում։ Այն դառնում է հեղափոխական ուժերի մարտական օրգանը։ Սակայն 1919 թ. մարտի 22-ին նորից փակվում է։ Այս անգամ արդեն ընդմիշտ։

Այսպիսով, «Խոսք» թերթը թեև բացահայտ հանդես չէր գալիս որպես բոլշևիկյան օրգան, բայց օգտագործելով լեգալ հնարավորությունները, այս կամ այն ձևով մարքսիստական միտքը հասցնում էր իր ընթերցողներին։ Այդ իսկ տեսակետից, այն իր արժանի տեղն է գրավում հայ բոլշևիկյան մամուլի պատմության մեջ։

«Խոսք» թերթի խմբագիր, ականավոր հեղափոխական գործիչ Արշավիր Մելիքյանը ծնվել է 1879 թ. փետրվարի 9-ին (հին տոմարով՝ հունվարի 28-ին), Երևանի նահանգի Աշտար-

Դարալագյազի գավառի Փաշալու գյուղում։ 1899 թ. ավարտում է Երևանի արական գիմնազիան և մեկնում Խարկով։ Ընդունվում է Խարկովի համալսարանը։ Սակայն հեղափոխական շարժումներին մասնակցելու համար 1901 թ. հեռացվում է համալսարանից։ Այնուհետև նա ընդունվում է Ցյուրիխի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը, և ապա՝ 1905 թ. ավարտում է Նյուշատելի (Շվեյցարիա) ակադեմիայի գրականության ֆակուլտետը։ Արտասահմանում եղած ժամանակ նա կարողանում է տիրապետել գերմաներենին, ֆրանսերենին, հունարենին։ Այստեղ նա ծանոթանում է Կ. Լիբկնեխտի, Ռ. Լյուքսեմբուրգի, Ժան Ժորեսի, Ա. Բեբելի, Գ. Պլեխանովի և շատ ուրիշ նշանավոր գործիչների հետ։ Նրա կյանքում կարևոր դեր է ունենում հատկապես Վ. Ի. Լենինի հետ ունեցած ծանոթությունը։ Նա առաջիններից էր, որ պաշտպանում էր Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունը, քննադատելով մախիստների իդեալիստական հայացքները։

Արշ. Մելիքյանը 1906 թ. ընդունվում է ՌՍԴԲԿ շարքերը և 1911 թ. հաստատվում Երևանում։ Այստեղ նա սկզբում անցնում է ուսուցչական աշխատանքի Գայանյան օրիորդաց ուսումնարանում։ Միաժամանակ ծավալում է հեղափոխական մեծ գործունեություն։ «Խոսք» թերթի միջոցով մարքսիստական միտքն ու հեղափոխական գաղափարները տարածելու համար, ինչպես արդեն նշվել է, Արշ. Մելիքյանը բանտարկվում է։ Բանտից ազատվելուց հետո նա սկսում է պայքարը իմպերիալիստական թալանչիական պատերազմը քաղաքացիականի վերածելու լենինյան թեզիսները կենսագործելու համար[34]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո Արշ. Մելիքյանը մեծ աշխատանք է կատարում Հայաստանում սովետական կարգերի հաստատման ուղղությամբ։



1920 թ. Արշ. Մելիքյանը մեկնում է Մոսկվա և հանդիպում ունենում Վ. Ի. Լենինի հետ։ Նա նշանակվում է Ժողկոմխորհի արտասահմանյան մամուլի ռեֆերենտ։

Արշ. Մելիքյանը 1921 թ. տեղափոխվում է Թիֆլիս։ Այստեղ նա ծավալում է ժուռնալիստական լայն գործունեություն, գրում է հոդվածներ հայ հասարակական մտքի զարգացման և անցյալի ժառանգության մարքսիստական վերագնահատման վերաբերյալ։ 1922 թ. նա հրավիրվում է «Կարմիր աստղ» թերթի խմբագրությունում աշխատելու, որպես թերթի խմբագրի տեղակալ։ Նա միաժամանակ թղթակցում է «Պրոլետար», «Մարտակոչ» և այլ թերթերի։ Արշ. Մելիքյանը կատարել է նաև դասախոսական բեղմնավոր աշխատանք. 1924—1932 թթ. դասախոսել է Անդրկովկասյան կոմունիստական համալսարանում, 1932—1936 թթ.՝ գյուղատնտեսական բարձրագույն դպրոցում։ Արշավիր Մելիքյանն իր գիտամանկավարժական բեղմնավոր աշխատանքի համար արժանացել է պրոֆեսորի կոչման։

1936—1937 ուստարում նա դասախոսություններ է կարդացել Երևանի պետական համալսարանում, ավանդելով գրականություն, պատմություն, պատմական և դիալեկտիկական մատերիալիզմ։

Նշանավոր գիտնականը, մարքսիստ տեսաբանը, հեղափոխական գործիչը հեղինակ է մի շարք տպագիր և անտիպ աշխատությունների։ Նրա գրչին են պատկանում «Հայոց պատմություն», «Դասակարգային կռիվը հայոց պատմության մեջ», «Նյութեր հայ հասարակական կյանքի և մտքի պատմության» (ձեռագիր) և այլ գործեր։ Ուշագրավ են նաև նրա գրականագիտական հոդվածները («Քննադատները Պուշկինի մասին», ինչպես և Րաֆֆու, Թումանյանի, Չարենցի և մյուսներին նվիրված հոդվածներն ու դասախոսությունները)։

Գիտնական հեղափոխականի կյանքը ընդհատվեց 1937 թվականին։

## ԱՄՓՈՓՈՒՄ

Նախահոկտեմբերյան տարիներին Երևանում լույս տեսած պարբերականները բազմակողմանիորեն լուսաբանել են Երևանի նահանգի աշխատավորությանը հուզող գրեթե բոլոր հարցերը։ Անցած դարավերջում հրատարակված մամուլի օրգանները («Պսակ», «Առողջապահական թերթ», «Երևանի հայտարարություններ», «Էրիվանսկիե օբյավլենիյա») ստեղծել են առաջադիմական մամուլի այն լավագույն ավանդույթները, որոնք շարունակվել ու զարգացվել են XX դարի առաջին երկու տասնամյակում Երևանում լույս տեսած պարբերականների էջերում։ Հեղափոխական շարժման վերելքի ու վայրէջքի տարիներին հայ խմբագիրները գործել են ավելի «թափ» հայացքով, տոգորված ժամանակի նորաշունչ գաղափարներով։ Այդ տարիներին Երևանում լույս տեսած «Նոր ձայն», «Կռունկ», «Նոր մամուլ» թերթերը գյուղի և քաղաքի աշխատավորության մեջ արթնացրել են դասակարգային ինքնագիտակցության զգացումը։ Այդ թերթերը միաժամանակ մերկացնելով հայ ազգայնական կուսակցությունների կեղծ, երեսպաշտ գործունեությունը՝ օգնել են աշխատավորությանը հեռու մնալու նրանց կուսակցությունների պրոպագանդած գաղափարների ազդեցությունից։ Իսկ բոլշևիկյան «Ճակատ» և «Խոսք» թերթերը հեղափոխական գաղափարները հասցրել են ընթերցող լայն մասսաներին, համոզել հեղափոխական պայքարի միջոցով ցարական միապետության տապալման անհրաժեշտությանը։

Այսպիսով, նախահոկտեմբերյան շրջանի Երևանի պարբերական մամուլը իր ուժերի ներածին չափով բավական նպաստ է բերել հայ ժողովրդի սոցիալական-տնտեսական, հասարակական-քաղաքական, ինչպես և մշակութային կյանքի առաջընթաց զարգացման գործին, մնայուն հետք թողնելով հայ հասարակական մտքի և մամուլի պատմության մեջ։



## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

[1] Կազմակերպության մասին տեղեկությունները քաղված են ՀՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվում պահվող Երևանի նահանգի ոստիկանական վարչության գործից (ֆոնդ 115, ց. 1, գ. 12), Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում եղած Ա. Աթանասյանի արխիվից, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) արխիվային բաժնում պահվող Հ. Տիգրանյանի «Իմ հիշատակարանը» ձեռագիր գործից (ձեռագիր 9264), Վ. Ա. Պարսամյանի Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, Թ. Խ. Հակոբյանի Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), Երևան, 1963, Վ. Ս. Երկանյանի Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970 գրքերից, և օգտագործվել է Հայ ժողովրդի պատմություն, հատ. 6, Երևան, 1981։

[2] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Աշոտ Աթանասյանի արխիվ, թղթ. 62, էջ 8։

[3] Երևանի «Հայաստան-ազգասեր» կազմակերպության անդամ Վաղարշ Պապաջանյանի բնակարանը խուզարկելիս հայտնաբերվել է Թաիրովայի «Հայրենասերների միություն» խմբակի հայտնի կոչը (տե՛ս Վ. Ա. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, էջ 260)։

[4] Տե՛ս ՀԿԿԿԱ, Եզյանի ֆոնդ. Լ. Տիգրանյանի 26/12—80 թվակիր նամակը։

[5] Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 108։

[6] «Պսակ», 1880, № 38։

[7] ՎԿՊԴԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1883։

[8] «Коммунист», 1941, № 22, տե՛ս նաև [illegible] Իշխանյան, Հայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Երևան, 1962, էջ 42։ «Պսակ» թերթի բովանդակ բնութագիրը տրված է Թ. Հ. Հակոբյանի «Մեր քաղաքի անցյալից էջեր» հոդվածում («Երեկոյան Երևան», 1968, 2 հուլիսի)։

9 Ամսագրի գործերի գլխավոր վարչությանը ներկայացված ծրագրում նշված են նաև «Քաղաքականություն», «Տնտեսություն», «Գիտ. և հասարակ» բաժինները, որոնք արգելվել են գրաքննչական մարմինների կողմից (տե՛ս ՀՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 776, ց. 12, էջ 2)։

10 «Փորձ», 1880, № 2։

11 Նույն տեղում։

12 «Մշակ», 1880, № 49։

13 Ս. Ն. Սարինյան, Հայ տնտեսագիտական մտքի քննական վերլուծություն (XIX դ. 70—90-ական թվականներ), Երևան, 1964, էջ 130։

14 Հայ նոր գրականության պատմություն, հատ. 3, Երևան, 1964, էջ 35։

15 «Փորձ», 1883, № 1։

16 Վ. Ա. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմություն, Երևան, 1958, էջ 261։

17 «Փորձ», 1883, № 7։

18 Նույն տեղում։

19 Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), Երևան, 1963, էջ 208։

20 Արսեն Թոխմախյանը ծնվել է 1843 թ. Վանի վիլայեթի Արճեշում գյուղում։ Ավարտել է Վարագա վանքի ժառանգավորաց վարժարանը։ Մասնակցել է Վանի «Միություն ի փրկություն» գաղտնի կազմակերպության հիմնադրմանը (1872)։ 1878 թ. որպես ուսուցիչ աշխատել է Վերին Ագուլիսում։ Լինելով ազգային-ազատագրական շարժման ակտիվ գործիչ, 1882 թ. վերադարձել է Վան՝ ազատագրական պայքար կազմակերպելու նպատակով։ Մի քանի անգամ ձերբակալվել է թուրքական կառավարության կողմից։ Հետապնդումներից խուսափելու համար նա անցել է Պարսկաստան, որտեղ, ամռանը, 1892 թ. ս. Նախիջևանի գավառում (Մակուի մոտ) սպանվել է (տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հատ. 4, Երևան, 1978, էջ 196)։

21 «Փորձ», 1883, № 7։

22 Նույն տեղում, № 2։

23 Մ. Հ. Մխիթարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Երևան, 1976, էջ 82։

24 «Փորձ», 1883, № 9։

25 Նույն տեղում, № 7։

26 Նույն տեղում։

27 ՀԿՊՊԱ, ֆ. 480, ց. 1, գ. 1332։

28 Նույն տեղում, գործ 379։

29 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 251։

30 «Փորձ», 1880, № 35։

31 «Փորձ», 1883, № 9։



32 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1972, էջ 370։

33 «Փորձ», 1883, № 9։

34 Ա. Հ. Զուրաբյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, էջ 330։

35 «Փորձ», 1880, № 1։

36 «Փորձ», 1880, № 1։

37 «Փորձ», 1880, № 1, Միքայել Նալբանդյան, Երկ., հատ. 2, Երևան, 1980, էջ 315, 323։

38 «Փորձ», 1880, № 1։

39 Նույն տեղում։

40 «Փորձ», 1882, № 10։

41 Նույն տեղում, 1881, № 14։

42 Նույն տեղում, 1882, № 1։

43 Նույն տեղում։

44 Նույն տեղում, 1881, № 40։

45 Նույն տեղում, 1882, № 11։

46 Նույն տեղում, 1881, № 7։

47 Նույն տեղում, № 24։

48 Նույն տեղում, № 26։

49 Պարկ-Հող-Հայրենիք։

50 Զոմախ-փայտ-ջաղացիկ-զավազան։ Պարիկ և Զոմախի նման բացատրությունները տվել է Աշոտ Աբրահամյանն իր ձեռագիր հիշողություններում (տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Աբրահամյանի արխիվ, թղթ. 71, էջ 5-ի հակառակը)։

51 «Փորձ», 1880, № 1։

52 Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850—1870 թթ., 1955, էջ 252։

53 «Փորձ», 1880, № 1։

54 «Փորձ», 1880, № 1, Միքայել Նալբանդյան, Երկ., հատ. 2, Երևան, 1980, էջ 322։

55 Միքայել Նալբանդյան, Երկ., հատ. 4, Երևան, 1983, էջ 70։

56 Նույն տեղում, էջ 54։

57 «Փորձ», 1881, № 2։

58 Նույն տեղում, № 6—11։

59 Նույն տեղում, 1882, № 14—17։

60 Նույն տեղում, 1881, № 5։

61 Նույն տեղում։

62 Նույն տեղում, 1880, № 2։

63 Նույն տեղում։

64 Նույն տեղում։

65 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 6, Երևան, 1981, էջ 761։

66 «Փորձ», 1882, № 11։

67 Նույն տեղում։

68 Նույն տեղում, 1881, № 30։

69 Նույն տեղում, 1880, № 15։

70 Նույն տեղում։

71 Նույն տեղում, 1882, № 2։

72 Նույն տեղում, № 11։

73 Նույն տեղում, 1882, № 24։

74 Այդ տարիներին Երևանում գործում էին սիրողների թատերական խմբեր, որոնց ուժերով բարեգործական նպատակներով բեմադրվում էին ինչպես թարգմանական (Մոլիերի «Տարտյուֆը» և այլ պիեսներ), այնպես էլ Մ. Տեր-Գրիգորյանի, Է. Տեր-Գրիգորյանի վոդևիլները, ֆարսերը։

75 «Փորձ», 1880, № 40—41, 1881, № 1—5, № 19—22։

76 Նույն տեղում, 1882, № 31։

77 Նույն տեղում։

78 Նույն տեղում, № 12։

79 Նույն տեղում, 1880, № 4։

80 «Մշակ», 1880, № 49։

81 «Փորձ», 1881, № 33։

82 Նույն տեղում, 1883, № 2։

83 «Մշակ», 1880, № 72։

84 «Փորձ», 1883, № 5։

85 Նույն տեղում, 1880, № 31։

86 «Մշակ», 1880, № 21։

87 «Փորձ», 1883, № 7։

88 Նույն տեղում։

89 Վասակ Գալպաքչյանի կենսագրական տվյալները վերցված են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող Աշոտ Աթանասյանի արխիվային ֆոնդից (տե՛ս Աշոտ Աթանասյան, Հիշողություններ, թղթ. 71, էջ 1—6)։ Նրա կենսագրական տվյալները առաջին անգամ են գիտական շրջանառության մեջ դրվում։

90 ԼեՌ, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 387։

91 «Հայկական աշխարհ», 1879, № 1։

92 ԼեՌ, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 389—390։

93 Նույն տեղում, էջ 391։

94 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Աշոտ Աթանասյանի արխիվ, Հիշողություններ, թղթ. 49, էջ 22։





1 Ս. Ս. Փարսադանյան, Հայ բժշկության պատմությունից, Երևան, 1958, էջ 19—21։

2 Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917), Երևան, 1963, էջ 371։

3 «Փորձ», 1881, № 31։

4 Նույն տեղում, № 29։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, № 31։

7 Տե՛ս ՍՍՀՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 776, ց. 17, գ. 73, էջ 1։

8 «Մեղու Հայաստանի», 1880, № 95։

9 Կովկասի քննչական կոմիտեի կողմից ամսագրի լույս ընծայման վերաբերյալ տրված թույլտվության մեջ «աշխարհիկ ոճով» բառերի փոխարեն գրված են «հանրամատչելի շարադրանքով» բառերը (տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 776, ց. 17, գ. 73, էջ 2)։

10 «Առողջապահական թերթ», 1882, № 6, էջ 183։

11 Նույն տեղում։

12 «Մշակ», 1881, № 165։

13 «Առողջապահական թերթ», 1881, № 1, էջ 10—12։

14 Նույն տեղում, № 2, էջ 39։

15 «Առողջապահական թերթ», 1884, № 12, էջ 227։

16 Նույն տեղում, № 2—3, էջ 67։

17 «Առողջապահական թերթ», 1883, № 12, էջ 423։

18 Նույն տեղում, էջ 10։

19 «Առողջապահական թերթ», 1882, № 2—3, էջ 37։

20 Նույն տեղում, էջ 74։

21 «Առողջապահական թերթ», 1884, № 8—9, էջ 195։

22 Նույն տեղում, 1881, № 3, էջ 76—85։

23 Նույն տեղում, էջ 85։

24 «Առողջապահական թերթ», 1883, № 8—9, էջ 369։

25 Նույն տեղում, 1882, № 4, էջ 100։

26 Նույն տեղում, 1881, № 6, էջ 198։

27 Նույն տեղում, 1883, № 2, էջ 221։

28 Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917), Երևան, 1963, էջ 433։

29 Լևոն Տիգրանյան, Իմ հիշատակարանը (ձեռագիր), Մաշտոցի անվան Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան), ձեռագիր 9264։

30 Լևոն Տիգրանյան, Իմ հիշատակարանը, էջ 6։



13—894

31 Նույն տեղում, էջ 35։
32 Նույն տեղում, էջ 42։
33 «Լումա», 1905, № 5, էջ 5—33, № 6, էջ 54—86։
34 Լեոն Տիգրանյան, Իմ հիշատակարանը, էջ 194։
35 «Արձագանք», 1882, № 29, էջ 461։
36 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1968, էջ 93—94։
37 Լեոն Տիգրանյան, Իմ հիշատակարանը, էջ 195։
38 «Մշակ», 1882, № 199։
39 Նույն տեղում, № 227։
40 Նույն տեղում, № 229, № 230։
41 Նույն տեղում։
42 Նույն տեղում, № 229։
43 Նույն տեղում, № 130։
44 «Մեղու Հայաստանի», 1883, № 8։
45 Նույն տեղում, № 9։
46 Նույն տեղում, № 45։
47 Նույն տեղում, № 9։
48 «Մուրճ», 1899, № 6, № 9—13։
49 «Մուրճ», 1895, № 1—4։
50 «Արարատ», 1894, № 6—12։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1 «Երևանի հայտարարությունները», 1884, № 1։
2 Նույն տեղում, № 6։
3 Նույն տեղում, № 12։
4 Նույն տեղում, № 39—41։
5 Նույն տեղում, № 44—46։
6 Նույն տեղում, № 45—46։
7 Նույն տեղում։
8 «Երևանի հայտարարությունները», 1885, № 1։
9 «Երևանի հայտարարությունները», 1884, № 13։
10 Նույն տեղում, № 35—36։
11 Նույն տեղում, № 29—30։
12 Նույն տեղում, № 54։
13 Նույն տեղում, № 55։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում, № 55։
16 Նույն տեղում, № 61։
17 Նույն տեղում։



18 ՍՍՀՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 776, ց. 17, գ. 79, էջ 4։
19 Նույն տեղում, էջ 3։
20 Նույն տեղում, ֆ. 776, ց. 12, գ. 55, էջ 5։
21 ՀՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ, Էմին Տեր-Գրիգորյանի ընտանեկան ֆոնդ (ֆ. 423, ց. 1, գ. 21, էջ 6)։
22 Նույն տեղում, էջ 8։
23 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1908, № 1։
24 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1912, № 1—2։
25 Նույն տեղում։
26 Երևանում ջրանցքի կառուցման հարցն առաջին անգամ բարձրացվել է 1888 թ.։ Այդ տարիներ շարունակ ձեռնարկության արժեք։ Բաղդասար Մելիք-Աղամալյանի քաղաքագլուխ նշանակվելուց հետո 1901 թ. հարցը նորից բարձրացվել է և կոնցեսիայով տրվել ինժեներ Ա. Բարոնին։ Վերջնականապես հարցը լուծվել է 1912 թ.։
27 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1912, № 1—2։
28 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1909, № 28։
29 Նույն տեղում, № 29։
30 Նույն տեղում, № 38։
31 Նույն տեղում, № 22։
32 Նույն տեղում։
33 Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917), Երևան, 1963, էջ 438։
34 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1913, № 76։
35 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1910, № 8։
36 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1914, № 36։
37 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1913, № 14։
38 Նույն տեղում, № 80։
39 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1915, № 40։
40 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1916, № 2։
41 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1917, № 9։
42 Էմին Տեր-Գրիգորյանի կյանքի և գործունեության մասին տեղեկությունները վերցված են նրա անձնական արխիվից, որը մեզ մոտ սիրով տրամադրել է նրա թոռը՝ Էմին Տեր-Գրիգորյանը։ Այժմ այդ նյութերը հանձնվել են ՀՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվին, որտեղից նույնպես օգտվել ենք։
43 Հովակիմ Տեր-Գրիգորյանը եղել է ժամանակի կրթված ու զարգացած անձնավորություններից մեկը։ Նա ավարտել է Երևանի հոգևոր սեմինարիան և երկու տարի դասավանդել նույն ուսումնական հաստատությունում։ 1863 թ. լեզու և կրոն է դասավանդել Աստրախանի Հայոց Աղաբաբյան ուսումնարանում։ 1868 թ. Էջմիածնի սինոդը նրան նշանակել է Վաղա—

բաղի հայկական կոնսիստորիայի ավագ։ 1872 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս։ Սինոդի գանձապահ Մանկունուն նիկոլայական փողերը վատնելու մեջ մեղադրելու համար աքսորվել է Կարմիր վանք (Նոր Նախիջևան)։

Հովակիմ Տեր-Գրիգորյանը մահացել է 1886 թ.։

44 «Հուշարար», 1908, № 4, էջ 60։

45 «Անշողի թուղթը» պիեսը Էմին Տեր-Գրիգորյանը գրել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում սովորելու ժամանակ։ Պիեսը հաջողությամբ բեմադրվել է նաև ուսանողական իշխանության տարիներին։

46 «Հուշարար», 1908, № 4, էջ 63։

47 1876 թ. Էմին Տեր-Գրիգորյանը ընկերակցում է Ջ. Գևորգյանին այն պայմանով, որ աշխատավարձի մի մասը թողնելով նրան, հինգ տարի հետո տպարանը սեփականացնի։ 1880 թ. գրաքննության և մամուլի մասին եղած կանոնադրության 58-րդ կետի համաձայն նրան թույլատրվում է ձեռք բերել այդ տպարանը։

48 «Մեղու Հայաստանի», 1878, № 19։

49 ՀՍՍՀ ԿՊՊԱ, Էմին Տեր-Գրիգորյանի ընտանեկան ֆոնդ (ֆ. 422, ց. 1, գ. 27, էջ 2)։

50 «Թատրոն», 1895, № 2, էջ 146։

51 «Գրական թերթ», 1934, № 33։

52 Լեո, Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը, Վենետիկ, 1904, էջ 159։

53 Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, թատերական բաժին, Էմին Տեր-Գրիգորյանի ֆոնդ, թղթ. 67—86։

54 «Լուսաբեր», 1907, № 339, էջ 8։

55 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1909, № 3։

56 Նույն տեղում, № 11։

57 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1911, № 44։

58 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1916, № 12։

59 Տե՛ս Էմին Տեր-Գրիգորյանի արխիվ, «Իմ նախասովետական գործունեությունը Երևանում» տետր։

60 «Տարազ», 1899, № 3, էջ 52։

61 Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, թատերական բաժին, Էմին Տեր-Գրիգորյանի ֆոնդ, թղթ. 67—86։

62 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1911, № 84։

63 «Հուշարար», 1912, Ա գիրք, էջ 26։

64 Տե՛ս Էմին Տեր-Գրիգորյանի անձնական արխիվ, «Իմ նախասովետական գործունեությունը Երևանում» տետր։

65 Նույն տեղում։

66 «Գրական թերթ», 1934, № 33։

67 Նույն տեղում։



## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

1 «Բանվոր» թերթը 1900 թ. լույս է տեսել 22 համար, իսկ 1901 թ.՝ 1 համար։

2 «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 35։

3 Նույն տեղում, էջ 37։

4 Գ. Բ. Ղարիբջանյան, Լենինը և Անդրկովկասը, գիրք 2, Երևան, 1973, էջ 59։

5 «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք առաջին, Երևան, 1959, էջ 167։

6 Նույն տեղում։

7 ՀՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ (ՀԿՊՊԱ), ֆ. 94, ց. 8, գ. 101, էջ 1։

8 Նույն տեղում, էջ 3։

9 «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք առաջին, Երևան, 1959, էջ 167։

10 Նույն տեղում։

11 Նույն տեղում։

12 «Ճակատ», 1907, № 2։

13 Վ. Ի. Լենին, Երկերի լրակատար ժողովածու, հատ. 15, էջ 26։

14 «Ճակատ», 1907, № 2։

15 Վ. Ի. Լենին, նշվ., հատ. 14, էջ 147։

16 «Ճակատ», 1907, № 2։

17 Նույն տեղում։

18 Վ. Ի. Լենին, նշվ., հատ. 15, էջ 31։

19 «Ճակատ», 1907, № 4։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, № 3։

24 Տե՛ս, Большая советская энциклопедия, т. 4. М., 1971, с. 361

25 Խ. Հ. Բարսեղյան, Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն, Երևան, 1956, էջ 160։

26 Пятый (лондонский) съезд РСДРП. Протоколы, Москва, 1963 г., с. 888.

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1 Վ. Ի. Լենին, նշվ., հատ. 21, էջ 219։

2 Մ. Վ. Արզումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ուսուցումը

շարժումները Հայաստանում 1905—1917 թվականներին, Երևան, 1959, էջ 25։

3 Ս. Սպանդարյան, Երկեր, հատ. 1, Երևան, 1959, էջ 130—131։

4 ՀՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ (ՀԿՊՊԱ), ֆ. 19, ց. 2, գ. 724, թղթ. 8։

5 «Հրազդան», 1908, № 4։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում, № 15։

8 Նույն տեղում, № 5։

9 Նույն տեղում, № 13։

10 «Հրազդան», 1909, № 11։

11 Նույն տեղում, № 13։

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում, № 14։

14 Խ. Գ. Նուրանյան, Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ, 1890—1920, Երևան, 1961, էջ 439։

15 «Հրազդան», 1909, № 15։

16 Նույն տեղում։

17 «Հրազդան», 1908, № 3։

18 Վ. Ի. Լենին, Երկ., հատ. 19, էջ 382։

19 «Հրազդան», 1909, № 4։

20 Նույն տեղում։

21 «Հրազդան», 1908, № 14։

22 Նույն տեղում։

23 «Հրազդան», 1909, № 14։

24 «Հրազդան», 1908, № 11։

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

1 Վ. Ի. Լենին, Երկ., հատ. 20, էջ 90։

2 «Նոր ձայն», 1911, № 1։

3 «Էրիվանսկիե օբյավլենիյա», 1911, № 6։

4 «Նոր ձայն», № 6։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում, № 1։

7 Նույն տեղում, № 4։

8 Նույն տեղում, № 8։

9 «Նոր ձայն», 1911, № 7։

10 Նույն տեղում։

11 Վ. Ի. Լենին, Երկ., հատ. 17, էջ 253։

12 «Նոր ձայն», 1911, № 5։



13 Նույն տեղում, № 1։

14 Նույն տեղում, № 2։

15 «Կանչ», 1911, № 1։

16 «Կանչ», 1912, № 49/56։

17 Նույն տեղում, № 50/57։

18 «Կանչ», 1911, № 4։

19 «Կանչ», 1912, № 20/27։

20 «Կանչ», 1911, № 1։

21 «Կանչ», 1912, № 23/30։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, № 37/44։

24 Նույն տեղում, № 39/46։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, № 46/59։

27 Նույն տեղում, № 44/51։

28 Նույն տեղում։

29 «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1972, էջ 421—423։

30 «Կանչ», 1912, 38/45։

31 Նույն տեղում, № 32։

32 «Կանչ», 1911, № 2։

33 Նույն տեղում, № 3։

34 «Կանչ», 1912, 6/13։

35 «Կանչ», 1911, № 1։

36 «Կանչ», 1912, № 44/51։

37 «Նոր մամուլ», 1913, № 1։

38 Նույն տեղում, № 35։

39 Նույն տեղում, № 15։

40 Նույն տեղում, № 18։

41 К. Маркс и Ф. Энгельс, соч., 2 изд., т. 16, с. 10

42 «Կայծ», 1906, № 22։

43 «Նոր մամուլ», 1913, № 18։

44 Նույն տեղում, № 34։

45 Նույն տեղում, № 13։

46 Ստ. Շահումյան, Երկ., հատ. 1, էջ 369։

47 «Նոր մամուլ», 1913, № 26։

48 Ստ. Շահումյան, Երկ., հատ. 2, էջ 279։

49 «Նոր մամուլ», 1913, № 16։

50 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Երևան, 1981, էջ 501։

51 Նույն տեղում, էջ 502։

52 «Նոր մամուլ», 1913, № 7։

53 Նույն տեղում, № 8։

54 Նույն տեղում, № 22։

55 Նույն տեղում, № 18։
56 «Նոր ժամանակ», 1915, № 1։
57 Նույն տեղում, № 2։
58 Նույն տեղում, № 14։
59 Նույն տեղում։
60 Նույն տեղում, № 38։
61 Նույն տեղում, № 4։
62 Նույն տեղում։
63 Նույն տեղում։
64 Տե՛ս «Կայծ», 1906, № 13։
65 Նույն տեղում, № 3։
66 «Նոր խոսք», 1906, № 3։
67 Տե՛ս Փայլանդյան Միք., [illegible], Երևան, 1979, էջ 4։
68 «Նոր խոսք», 1906, № 7։
69 «Աշխատանք», 1906, № 21, էջ 35։
70 Նույն տեղում, № 1։
71 Նույն տեղում, № 103։
72 «[illegible]», 1907, № 46/47։
73 «[illegible]», 1908, № 29։
74 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4033, թղթ. 1, գ. 1096։

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

1 «Խոսք», 1913, № 1։
2 «Խոսք», 1914, № 25։
3 Նույն տեղում, № 15։
4 Նույն տեղում, № 2։
5 Նույն տեղում, № 4։
6 Նույն տեղում, № 16։
7 Նույն տեղում, № 3։
8 Նույն տեղում, № 5։
9 Նույն տեղում։
10 Նույն տեղում, № 9։
11 Նույն տեղում, № 14։
12 Վ. Ի. Լենին, Երկ., հատ. 12, էջ 124—125։
13 «Խոսք», 1914, № 19։
14 Նույն տեղում, № 3։
15 Նույն տեղում, № 4։
16 Նույն տեղում։
17 «Խոսք», 1913, № 1։
18 Նույն տեղում։
19 «Խոսք», 1914, № 18։
20 Նույն տեղում, № 17։
21 Նույն տեղում։
22 Ծ. Պ. Աղայան, Արշավիր Մելիքյան, Երևան, 1969, էջ 16։
23 «Խոսք», 1914, № 17։
24 Նույն տեղում, № 4։
25 Նույն տեղում։
26 Վ. Ի. Լենին, Երկ., հատ. 45, էջ 443—444։
27 «Խոսք», 1914, № 20։
28 Նույն տեղում, № 13։
29 Նույն տեղում, № 14։
30 Նույն տեղում, № 2։
31 Նույն տեղում, № 14։
32 Նույն տեղում, № 23։
33 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4056, ց. 1, գ. 92, էջ 2—3։
34 Ծ. Պ. Աղայան, Անկոտրում հեղափոխականն ու ականավոր գործիչը, «Սովետական Հայաստան», 14 մարտի 1979 թ., № 62։

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


Աբդուլ Համիդ II 22, 122, 123, 139, 181
Աբեղյան Մ. 95
Աբովյան Խ. 39, 67, 125, 183
Ագաթոյան Լ. 139
Ազիզյան Ա. 84
Աթանասյան Ա. 10, 45, 48, 189, 191
Աթանասյան Ն. 92
Ալավերդով Կ. 103, 106, 111
Աղամալյան Տ. 124
Ալաջյան Ս. 6, 177, 201
Աղափիրյան Գ. 67
Ամատունի Մ. 67
Ամիրախալարի իշխան 81
Ամիրխանյանց Ա. 43
Ամիրյան Գ. 83
Անանե 69
Անկարյան Վ. 67
Աշագյանց Խ. 67
Ավենարիուս 131
Արասխանյան Ավ. 146
Արզումանյան Մ. 7, 197
Արծրունի Գր. 23, 24, 53, 78, 79
Արծրունի Վ. 60
Արղության 124
Արմենյան Ա. 95
Աբելյան Գ. 67
Աֆանասյան Ս. 68
Աֆրիկյան Ե. 57
Աֆրիկյան Կ. 84
Աֆրիկյան Վ. 118

Բաբայան Ա. 53, 62, 92
Բագրատունի Մ. 128, 135, 137, 140, 143, 147, 148, 156, 160—166
Բահաթրյան Աշ. 125
Բայազիդյան Ա. 38
Բարդանեցի Վ. 103
Բարխուդարյան Գ. 67
Բարսեղյան Խ. 7, 197
Բեբել Ա. 186
Բեկկեր Ի. 121
Բեկնազարյան Ս. 33, 57
Բոգատիրյով Վ. 105
Բրամնիկով 37
Բուլչույան 102

Գալստյան Թ. 189
Գարշին Վ. 181
Գեղամյանց Վ. 77
Գերցեն Ա. 181
Գուլամիրյանց Ա. 12
Գուլանյան Խ. 198
Գեորգ IV կաթողիկոս 40
Գեորգ V կաթողիկոս (Սուրենյանց) 141
Գևորգյան Բ. 40
Գևորգյան Զ. 12, 13, 93, 196

Դելյանով Ի. 33
Դեմիրճյան Դ. 99
Դոդոխյան Գ. 67
Դոնդուկով-Կորսակով Ա. 11

Դուրյան-Արմենյան 95

Եզյան Կ. 11, 65
Եղիազարյան Բ. 83, 84
Եղիազարյան Հ. 83
Եղիազարյան Վ. 11, 69
Երզնկյան Գր. 16, 31
Երիցյան Վ. 189

Զուրաբյան Ա. 102
Զուրաբյան Ս. 191

Էգիլխանյան Կ. 65
Էգիլխանյան Մ. 65
Էնգելս Ֆ. 199
Էսկիրոս Ա. 28

Թամամշյան Ա. 84
Թոխմախյան Ա. 16, 46, 190
Թորգոմյան Վ. 44
Թումանյան Հ. 187
Թումանով 67

Ժորես Ժ. 186

Իզմիրլյան Մ. 123, 185
Իշխանյան Բ. 46
Իշխանյան Ս. 189

Լալայանց Հ. 46
Լեմախա Ե. 102
Լենին Վ. Ի. 107—109, 115, 116, 122, 127, 133, 173, 179, 186, 187, 197, 198, 200, 201
Լեո (Ա. Բաբախանյան) 95, 192, 196
Լիբկնեխտ Կ. 186
Լյուքսեմբուրգ Ռ. 186

Խատիսյան Գ. 64, 67
Խրիմյան Մկրտիչ (Հայրիկ) 23, 69
Խուդաբաշյան Ս. 36, 77
Խումարյան Ա. 102

Կաբոյան Ա. 101
Կամսարական Կ. 69
Կանդուրալյան Գ. 117, 124
Կանտ 45
Կարապետյան Հ. 7
Կարինյան Արտ. 184
Կևանյանց Բ. 102
Կոզիկյան Գ. 101
Կոմիկյան Ա. 148, 149
Կորոլենկո Վ. 113

Հակոբյան Ա. 92, 93
Հակոբյան Ի. 15, 63, 86, 189, 190, 193
Հակոբյան Հ. 138
Հակոբյան 64
Հաար 55, 56
Հեթում Հ. 16, 33, 35
Հովհաննիսյան Ա. 11, 53, 60, 62
Հովհաննիսյան Գ. 11
Հովհաննիսյան Հ. 64, 65, 146

Ղարաջյան Գ. 101, 106
Ղարիբջանյան Գ. 197
Ղորղանյանց 50

Մալխասյան Ա. 103
Մախ Է. 131
Մազաղաշվիլի 102
Մանկունի Վ. 40, 41
Մասեհյան Հ. 11, 63
Մարգարյան Գ. 176
Մարքս Կ. 112, 131, 150, 189
Մյասնիկյան Ալ. 106, 131—133, 135, 153, 163, 167, 169, 171, 173, 177—180, 184—187
Մելիքյան Մելիք (Գեղաուշյա) 101, 102

Մելքիսեդեկ եպիսկոպոս 23
Մելիք-Ադամալյան Հ. 195
Մելյան Ա. 36, 38
Մելյան Հ. 93
Մելյան Ն. 62
Մելյան Փ. 62
Մելքումյան 102
Մեհրաբով Մ. 20
Միխայլովսկի Ն. 131, 171
Միրաքյան Մ. 103
Միրզոյան Մ. 88
Միրզոն 83
Միրիմանյանց Ա. 62
Միրիմանյան Գ. 67
Մխիթարյան Մ. 19, 190
Մկրտումյան Գ. 152
Մհերյան Բ. 11, 16, 18, 33
Մոլիեր Ժան-Բատիստ 192
Մովսյան Ա. 104
Մուրացան (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան) 78

Յաղուբյան Զ. 104
Յանովսկի 35

Նազարբեկյան Փ. 67
Նազարյան Ստ. 67
Նալբանդյան Մ. 25, 29, 30, 156
Նավասարդյան Բ. 52
Ներսիսյան Մ. 6, 11, 21, 29, 189—191
Նինուաշվիլի Վ. 104
Նիցշե Ֆր. 131

Շայլիկով 12
Շախթախթինսկի Մ. 107
Շահազիզյան Ա. 53, 62
Շահումյան Ստ. 102, 116, 153, 154, 199
Շիլլեր 58
Շումսկի 92

Շուստով 113
Շեյխ Մահմուդ փաշա 155

Չանտուրիա Ա. 102
Չարենց Եղիշե 187
Չմշկյան Գ. 97

Պապաջանյան Վ. 10, 12—14, 17, 18, 26, 36, 40, 45, 48, 192
Պալյանց Գր. 46
Պատկանյան Ռ. 67, 68, 125, 194
Պատկանյան Ք. 67
Պարսամյան Վ. 189, 190
Պետրովսկի 14, 25
Պլեխանով Գ. 186
Պլետնյով Վ. 181

Ջալալյան Ռ. 11, 68

Ռամինյան Ա. 67
Ռուսսո Ժան Ժակ 38, 145

Սադովսկի 92
Սանասարյան Մ. 63
Սարուխ 113
Սարինյան Ռ. 7, 15, 190
Սաֆրազյան 78
Սեդրակյան Ա. 45, 46
Սիմոնյան Փ. 38, 67
Սինանյան Գ. 148
Սոկոլովսկի Գ. 103, 106, 112—114
Սպանդարյան Ս. 116, 195
Սունդուկյան Գ. 146, 158

Վարդանյան Տ. 11, 13
Վարժապետյան Ն. 23
Վեյտլինգ Վ. 111, 112
Վիրխով Ռ. 53
Վրույր Ա. 93, 146



Տեր-Աբրահամյան Վ. 128, 129
Տեր-Գրիգորյան Ա. 145
Տեր-Գրիգորյան Գ. 53
Տեր-Գրիգորյան Է. 73, 74, 78, 80—82, 84—86, 91—100, 133, 146, 192, 195, 196
Տեր-Գրիգորյան Հ. 91, 193, 196
Տեր-Գրիգորյան Մ. 192
Տեր-Զաքարյան Ս. 11, 68—69
Տեր-Իսահակյան Ի. 152
Տեր-Հակոբյան Ա. 117
Տեր-Հովհաննես 64
Տեր-Հովսեփյան Լ. 102, 104
Տեր-Մարտիրոսյան Ս. 87
Տեր-Մելքիսեդեկյանց Ս. 23
Տեր-Միքայելյան Հ. 67
Տեր-Սարգսյան Մ. 135
Տերտերյան Ա. 135
Տիգրանյան Ա. 88
Տիգրանյան Լ. 11, 16, 49, 51, 53—56, 58, 60—65, 67—71, 81, 193, 194
Տյուսար Ս. 38, 39

Տոլստոյ Լ. Ն. 132, 133, 146

Րաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան) 11, 187

Փարսադանյան Ռ. 7, 193
Փափազյան Հ. 67
Փիլոսյան Հ. 101
Փիրումյան Մ. 67
Փիլար Պիեռ 158

Օգարյով Նիկ. 181
Օրբելի Վ. 36
Օրմեսկի 11
Օրմանյան Մ. 165

Օուեն Ռ. 179

Ֆիլոն 45
Ֆոյերբախ 45
Ֆրանգյան Ն. 131
Ֆուրյե Շ. 179

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն . . . . . . . . . . 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Երևանի առաջին պարբերականը «Պսակ» շաբաթաթերթը (1880—1884) 10

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Լևոն Տիգրանյանի «Առողջապահական թերթ» ամսագիրը (1881—1884) 49

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

«Երևանի հայտարարություններ» (1883—1885) և «Էրիվանսկիե օբյավլենիյա» (1900—1917) պարբերականներ . . . 73

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

«Կայծ» բոլշևիկյան թերթը (1907) . . . . . 101

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Երևանի մամուլը ստոլիպինյան ռեակցիայի տարիներին («Հրազդան», 1906—1909) . . . . . . . . 115

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

«Նոր ձայն» (1911—1912), «Կռան» (1911—1912), «Նոր մամուլ» (1913—1915) առաջադիմական պարբերականներ . . 127
«Նոր ձայն» (1911—1912) . . . . . . . 128
«Կռան» (1911—1912) . . . . . . . . 135
«Նոր մամուլ» (1913—1915) . . . . . . . 147

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

«Խոսք» բոլշևիկյան թերթը (1913—1914) մարքսիստական գաղափարների տարածման գործում . . . . . 167
Ամփոփում . . . . . . . . . 186
Ծանոթագրություններ . . . . 189
Անձնանունների ցանկ . . . . . . 202

ՍԻՎԱ ՍՈՒՐԵՆԻ ՆԱԶԱՐՅԱՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

(1880—1917)

Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. Ղազարյան
Նկարիչ՝ Յու. Հ. Առաքելյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ն. Գործակալյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Մ. Մանուչարյան
Սրբագրիչ՝ Ջ. Գ. Նարանյան

ИБ № 911

Հանձնված է շարվածքի 27. 08. 1986 թ.: Ստորագրված է տպագրության 6. 02. 1986 թ.: ՎՖ 06535: Չափը 84×108 1/32: Թուղթ № 1: Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր տպագրություն: Փայմ. 10,92 մամ.: տպագր. 13,0 մամուլ: Ներկ. մամուլ 10,92: Հրատ.-հաշվարկ. 8,97 մամուլ: Տպաքանակ 700: Հրատ. № 6611 Պատվեր № 894: Գինը 1 ռ. 10 կ.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն,
375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.:

Издательство АН Арм. ССР,
375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան,
375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Типография Издательства АН Арм. ССР,
375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.